վախճանվում է նաև Հերովդեսը, և Օգոստոսը Հրեացիների ազգապետ է նշանակում՝ նրա որդի Աբրեղայասին<sup>2</sup>: Եվ ոչ շատ օրեր Հետո վախճանվում է Օգոստոս կայսրը և նրա փոխարեն թագավորում է Տիրերիոսը:

Այդ ժամանակ Աբգարը քաղաք է կառուցում այնտեղ, ուր նախկինում Հայոց պահապան<sup>3</sup> գուռն էր, Եփրատի անջրը<sup>4</sup>, ընդդեմ Կարիոսի<sup>5</sup> (ինսպասիոսի)<sup>6</sup> <30>: և կոչում է Եղեփա, Ըմբլինից այնտեղ է տեղափոխում իր սքրուները, կուսերին (53) ու մեհյանների վարժարանի մասայանները: Դրանից Հետո մեռնում է<sup>7</sup> Աբշավիրը և Պարսից վրա թագավորում է նրա՝ որդի Արտաշեսը: Աբգարը գնալով Արևելք խաղաղություն է Հաստատում նրանց մեջ՝ որովհետև Արտաշեսը կամենում էր ժառանգարար թագավորել, սակայն նրա եղբայրներն ընդդիմանում են՝ Կարենը, Սուրենը և իրենց բույր Կոչմը, սակայն Արտաշեսը [կարողանում է] շրջափակել նրանց, քանզի խիստ անմիաբանություն կար Պարսից զորքի մեջ: Աբգարը Համոզում և խաղաղեցնում է նրանց՝ սահմանելով Հետևյալ կարգը. թագավորելու է Արտաշեսն իր ժառանգներով, իսկ նրա եղբայրները կոչվելու են Պահլավներ՝ իրենց քաղաքի և մեծ ու բարերեր աշխարհի անունով, նաև Պարսից բոլոր նախարարությունների մեջ Համարվելու՝ են անենապատվավորները, որպես իսկական թագավորական սերունդներ: Նաև երզումով դաշինք է Հաստատում նրանց մեջ, որ եթե Արտաշեսի ցեղից տղամարդիկ սպառվեն<sup>8</sup>, թագավորելու

[իրավունքը] նրանց կանգնի: Եվ նրանց թագավորող ցեղից դուրս որոշել նրանց երեք՝ առՀմբրը, անվանելով Կարենի Պահլավ, Սուրենի Պահլավ և բորժը Ապահապետի՝ Պահլավ, նրա անուննու տանուտերության կոչմամբ որոշելով, որովհետև նա Արեաց ՀամբըհՀանուր սպարապետի կինն էր: Եվ ասում են, թե սուրբ Գրիգորը Սուրենյան Պահլավից է [սերված], իսկ Կամսարականները՝ Կարենյան<sup>9</sup>:

Երբ Աբգարը վերադարձավ Արևելքից և<sup>4</sup> եկավ իր Եղեփա քաղաք, միաբանեց Պատրիարքների արքայի Հետ, նրանց օգնական զորք տվեց, որպեսզի Հերովդեսի<sup>10</sup> գեղ պատերազմեր, [նրա] գտեր անբազանքի պատճառով՝ այնտեղ Հերովդեսի զորքերը սաստիկ ջարդ կրեցին՝ Հայոց քաղերի օգնությունը, կարծես թե աստվածային տոթինությունը վրեժխնդիր էր լինում [ձովհաննես] Արշալույս սպանության Համար<sup>11</sup> <31>:

Այդ՝ ժամանակներում Փյունիկացիների, Պաղեստինացիների<sup>12</sup>, Ասորիների և Միջագետքի վրա կայսեր Հազարապետությունյան ստրուտներն իշխանակից Ստորգեի որդի Մաստեոսը<sup>13</sup> (Սոր) Արտողների Նշանակվեց: Աբգարը իր զվարճություններից երկուսին՝ Աղծնիքի րոջնիս Մար-ԻՀարին<sup>14</sup>, Ապահունիքի նահապետ Շամազարամին և իր<sup>15</sup> Հավատարիմ Անանին ուղարկում է նրա մոտ Բեզբորիքիմ քաղաքը<sup>16</sup>, բացառելու Համար իր Արևելք գնալու պատճառը, որ էր

<sup>1</sup> Տե՛ս Խոր. Բ. 25:

1. Խոր. Բ. 26:

2. Չ՝ արքունուտ:

3. Տ.՝ քաղաք ի պահպանութիւն: Չ՝ քաղաք գամար պահպանութիւն:

4. Չ՝ և փրատու:

5. Խոր. Ի Կասարիւմ:

6. Չ՝ մուսիք:

7. Խոր. Բ. 27:

8. Չ՝ և ցեղաբազ տեսանեց:

9. Չ՝ բախարաբայ որպէս գի ի վնիկ:

10. Չ՝ գի թիզգուտ լինելից արտապետ պատու պատանանցի: Խոր.՝ գի թե վնիկ (կամ թե գնդ վնիկ) տպուկ գարմից Արտաշեսի ի պատանանց: Տ՝ տպուկ:

<sup>11</sup> Տե՛ս Խոր. Բ. 29: Այստեղ խոսքը վերաբերում է Արեւն թագավորի գամբը:

1. Տ՝ ցեղս որոշուա երեք կոչմամբ: Խոր.՝ և պարտապոց ցեղ ի ետա թագաւորեցիլ ցեղս որոշիլ գեղաս երեք, կոչմամբ...

2. Չ՝ սպարապետ:

3. Չ՝ գլխամարտական ի կարենեան: Տ՝ գլխամարտական ի Պահլու Կարենեան:

4. Խոր. (Բ. 28)՝ գլխաւոր Գրիգոր ի Սուրենեան Պահլաւ է գլխամարտական:

4. Ի Չ. պարտաք՝ և:

5. Խոր.՝ ընդ Հերովդէի: Տ. սաս և գի՛ն՝ ընդ Հերովդէի:

6. Խոր. Բ. 29:

7. Չ՝ ընդ յայն:

8. Ի Տ. պարտաք՝ և Պաղեստինացի:

9. Տ՝ Մարիւսու:

10. Չ՝ գմար Հայ:

11. Ի Չ. պարտաք՝ իր:

12. Տ՝ Բեզբորիքի: Խոր. ուղարկուց և Կ՛նթբորիքի:



Արտաշեսի եւ իր եղբայրների միջեւ Հաշտություն Հաստատելը: Գալիս գտնուած են նրան Ելիւթերոսյոզիտ<sup>1</sup> [քաղաքում], որը մեծարանքով է ընդունուած նրանց եւ Արզարին պատասխան է Հղում, թե այդ բանի Համար կայսրը թող բուրթովին չկատկածի: Իսկ նրանք<sup>2</sup> Հետ գառնայիս էլան Երուսաղեմ տեսնելու Համար մեր Փրկիչ Բրիտտոսին, լսած լինելով նրա սքանչելագործությունների Համբավը, որոնց ականատես լինելով, վերադարձին պատմեցին Արզարին: Դրա վրա զարմացած Արզարը<sup>3</sup> ճշմարտապես Հավատաց նրա Աստծո Որդի լինելուն եւ աղաչանքի թուղթ տվեց տանել նրան (իմա՝ Բրիտտոսին), որպիսիս նա գա եւ բժշկի իբրևն ցավերից<sup>4</sup>, որ մարդկանց կողմից բժշկելու<sup>5</sup> Հնար չեն զով: Այս բանը վկայում է նաև այնատարանական այն խոսքը, թե. «Կային նաև Հեթանոսներից ոմանք նրա մոտ եղողներից»<sup>6</sup>: Փրկիչը Հրամայում է Թովմա՝ Առաքյալին<sup>8</sup> զրելու թղթի պատասխանը: Արզարի սուբհանդակ Անանը բերում է այդ թուղթը<sup>9</sup> եւ դրա Հետ միասին նաև կենդանադիրը փրկչական պատմելի, որը գտնվում էր Եղեռացիների ՈւռՀա<sup>10</sup> քաղաքում<sup>11</sup> (54), մինչև, Հունաց արքա Լեկիֆորի<sup>12</sup> օրերը, որը նա Աբբահամ մետրոպոլիտի ձեռքով տարավ Կոստանդնուպոլիս (55):

Բայց մեր Փրկիչ Համբառնայուց Հետո Թաղետուր<sup>13</sup> յոթնասուն (ըստ Խոր. տասներկու, Բ. 33) [առաքյալներից] մեկը, Թովմա առաքյալի Հրամանով եկավ Արզարի մոտ եւ բժշկեց նրան, սա Հավատաց կենդանի Աստծուն ինքը եւ Եղե-

ասցիների ամբողջ քաղաքը: (Արզարը)<sup>14</sup> Վախճանվում է՝ թագավորելով (լր) երեսունուութ տարի: Եղեսիայում թագավորում է նրա որդի Անանուր, որը սպանեց Աղղեին, սա իր փոխարեն<sup>15</sup> Առաքյալից նշանակված էր Եղեսիա քաղաքի [տիրակալ], որով կտրում է նրա (իմա՝ Աղղեի) երկու ոտքերը, երբ նստած էր վարդապետական այժուին: Իսկ Թաղետոս առաքյալը անցնելով Սանատրուկի մոտ՝ նահատակվում է նրա ձեռքով Արտաք գալաուս: Բայց Հայոց վիճակվեցին նաև Թովմա Առաքյալն ու Բարդուղիմեոսը<sup>16</sup>, որը նահատակվեց մեզ մոտ, Աբարիոն<sup>17</sup> քաղաքում: Իսկ Աղղեի մահվան վրեժը լուծվեց Արզարի որդուց, քանզի մարմարյա այուը փուլ եկավ նրա վրա, ջարդեց նրա ոտքերը եւ նա մահացավ: ՈւռՀային իսկույն տիրանում է Սանատրուկը<sup>18</sup>, որը Արզարի թեոթրլին էր եւ սկզբնապես<sup>19</sup> կարգված էր Հայոց թագավոր: Քանի որ Մծրին քաղաքի շինվածքը երկրաշարժից խարխված էր, ուստի քանդեց եւ վերստին նորոգեց ավելի պայծառաստեք ու կրկնակի պատնելով պարսպապատեց: Սա Պարսից Արտաշես արքայի տասներկուերորդ տարում թագավոր դառնալով՝ ապրեց (յ) երեսուն տարի եւ մահացավ որսի ժամանակ, մեկի տեսք<sup>20</sup> պատահամար փորին<sup>21</sup> դիպչելով, կարծես սրբուհի գտելը<sup>22</sup> շարչարանքների վրեժը Հատուցանելով (Տես՝ Խորենացի, Բ. 35):

Իսկ Սանատրուկի մահվանից Հետո Հայոց վրա թագավորում է Երվանդը<sup>23</sup> Պարսից արքա Դարեհ վերջինի ութերորդ<sup>24</sup> տարում, սա կտորում է Սանատրուկի բոլոր որդի-

1. Տ.՝ յելեթերոսյոզիտ:  
2. Խոր.՝ Կոստ:  
3. Տ.՝ Արզար:  
4. Տ.՝ ի ցուսոց- Չ.՝ ի ցուսոց:  
5. Խոր. Բ. 30:  
6. Հովհ. ՏԲ. 20:  
7. Չ.՝ սատ եւ զին՝ Թուսայ, Թուսայ...

8. Խոր. Բ. 31:  
9. Չ.՝ գոս Թուցիս:  
10. Առ Խոր. չիք՝ ՈւռՀայ:  
11. Խոր. Բ. 32:  
12. Չ.՝ նիկիֆուսայ:  
13. Տ.՝ սատ եւ զին՝ Թաղէտուր:

1. Թաղար այսպիսի բառ Տ.՝  
2. Խոր. Բ. 33:  
3. Չ.՝ փոխառելով:  
4. Խոր.՝ Բայց մեկնեցուս Հայոց եւ Բարդուղիմեոս առաքելու: Չ.՝ բարդուղիմեոս:  
5. Խոր.՝ Մկրտանուս:  
6. Անգ. Բ. 34:  
7. Տ.՝ ՈւռՀայոց:

8. Չ.՝ յուսոյ:  
9. Խոր. Բ. 35:  
10. Տ.՝ մոտու՝ նոսի ուրուր:  
11. Չ.՝ փարաուսի:  
12. Խոր. Բ. 36:  
13. Տ.՝ սատ եւ զին՝ Եղիսեղ:  
14. Տ.՝ յելեթերոսյոզ:

ներին, բայց մտում է միայն մանուկ Արտաշեսը, որին առնելով նրա ստնտունն՝ և դայակ Սմբատը, անցնում են Պարսից Դարեհ արքայի մոտ և անուշանում մանկանը<sup>1</sup>։ Կասկածանքից երկմտելով Երվանդը՝ Վեսպասիանոսի<sup>2</sup> և Տիտոսի թագավորության ժամանակներում, Հռոմայեցիներին իրեն թիկունք ունենալու Համար նրանց է Հանձնում Միշդազետը և այդ կողմից այլևս վտանգ չէր զգում։ Եվ այդուհետև վերացավ Հայոց իշխանությունը Միշդազետից, և Հայաստանից ավելի շատ<sup>3</sup> Հարկեր էր վճարում Երվանդը։ Իսկ Հռոմայեցիների զործակալները մեծապես զարդարում են Եղեսիա քաղաքը, նրանում<sup>4</sup> Հաստատում են զանձատները, Հավաքում են բոլոր դիվանները և Հիմնում են երկու զպրոց՝ մեկն ասորական և մյուսը Հունական<sup>5</sup>։

Մրա օրերում արքունիքը Արմավիրից<sup>6</sup> տեղափոխում են դեպի արևմուտք, միակուսր ապառաժ մի բլրի վրա, որը շրջափակված է Երասխ գետով, իսկ դեմ Հանդիման Հոսում է Ախուրյանը. բլուրը պարսպապատում են և [քաղաքը] անվանում Երվանդաքար<sup>7</sup> (56)։

[Երվանդը] Արմավիրից այնտեղ է<sup>8</sup> տեղափոխում ամեն ինչ, բայց կուռքներից, դրանից դեպի Հյուսիս՝ մոտ (իս) քառասուն ասպարեց Հեռու, Ախուրյան գետի վրա մի փոքր քաղաք շինեց և անվանեց Բագարան. այնտեղ բազիլիկները Հաստատելով յուր եղբայր Երվազին քրմապետ է կարգում<sup>9</sup> այնտեղ։

Երբ մեծանում է Արտաշեսը, Սմբատը Պարսից արքայից օգնական՝ զորք է խնդրում, որպեսզի գա և Արտաշեսին թագավորեցնի Հայոց վրա։ Այդ բանը լսելով՝ Երվանդն իր մոտ է կուտակում Հայոց և Վրաց զորքերը և պատերազմի են բռնվում այնտեղ, որին Մարաց մարզ են ասում, Ախուրյան գետի վրա, որը գտնվում է Երվանդի քաղաքից (յ) երեք Հարյուր ասպարեց Հեռավորության վրա։ Երվանդը պարտություն կրելով՝ փախստական ընկնում է իր քաղաք Երվանդաքար. նրան Հեռավանդելով Արտաշեսն ու իր<sup>2</sup> զորքերը, սպանում են իր ամրոցում։

Թագավորում է Արտաշեսը Պարսից Դարեհ արքայի<sup>3</sup> քսանհիններորդ<sup>4</sup> տարում։ Արտաշեսը զնում է մի տեղ, ուր Երասխն ու Սևծամորը խառնվում են<sup>5</sup>, այնտեղ բլուրին Հավանելով, քաղաք է կառուցում և իր<sup>6</sup> անունով կոչում Արտաշատ. Երասխն էլ շատ օգտակար է լինում նրան մայրիկների<sup>7</sup> փայտով։ Եվ ամենայն վայելչությունները Երվանդի քաղաքի, որոնք Արմավիրից էին տարված և նրանք էլ, որ ինքն էր ստեղծել, փոխադրում է Արտաշատ<sup>8</sup>։ Այնուհետև Հրամայում է դյուղերի և ազարակների սահմանները որոշել, քանցի բազմամարդացրեց մեր Հայոց աշխարհը, և կամուտ բազմաթիվ ազգեր<sup>9</sup> բերելով բնակեցնում է լեռներում, Հովիտներում<sup>10</sup> ու դաշտերում։ Եվ սահմանների նշանները Հաստատում է Հեռեխյալ կերպ. Հրաման է տալիս քարերը տաշել քառակուսի ձևով, մեջերը<sup>11</sup> պնակաձև փոս անել և թաղել Հողի մեջ և նրանց վրա քառակուսի կոթողներ<sup>12</sup> կանգնեցնել՝ գետնից փոքր ինչ բարձր<32> :

1. Ձ. ստու և աննայությունը՝ անզորի։  
 2. Խոր. Բ. 37։  
 3. Խոր՝ բայց թիկուն ասելը կուտակումը գլխավորելով՝ օգնել փոստի ի թագապարթևան Վեսպասիանոս։ Ձ.՝ օգնել փոսեկր.՝ ասպետակո։  
 4. Տ.՝ Հարիս ասեղացոյն։ Խոր.՝ Հարիս ասուկեղացոյն, կամ՝ Խառ ասեղացոյն։

5. Տ.՝ ի նա։  
 6. Խոր. Բ. 38։  
 7. Ձ.՝ փոխի արքունիքը արևորայ։  
 8. Խոր. կոչել զայս քաղաք երուանդաքարս։ Անդ Բ. 39։  
 9. Տ.՝ տեղ։  
 10. Խոր. Բ. 40։

1. Տ.՝ որ յարձականութիւն։ Ձ.՝ ցարս սղու-կանութիւն։  
 2. Խոր. Բ. 44-46։  
 3. Խոր. Բ. 47։  
 4. Տ.՝ ի յուն և ինկերոց։  
 5. Ձ.՝ արտաշէս ուր խառնելի։  
 6. Ձ.՝ իւր ստուն։

7. Ձ.՝ մեծաստու լիմ.՝ մայրեաց։  
 8. Խոր. Բ. 49։  
 9. Խոր.՝ կանուտս բարբառ անկող յազգայն սպարեց։  
 10. Ի Տ. սպարեց՝ և ի Շախու։  
 11. Ձ.՝ ցմբի։  
 12. Ձ.՝ անկարտաբու։

Արա վրա նախանձեղով Սասանի որդի Արտաշիրը Հրամարտում է նույնատեսակ պատրաստել Պարսից աշխարհում եւ կուրջի յուր անունով, որպէսզի չհիշվի այլեւս Արտաշեսի անունը: Բայց ասում են նաեւ, թէ Արտաշեսի ժամանակներում չէր մնացել մեր Հայոց աշխարհում անշակ տեղ՝ ոչ լեռնային եւ ոչ էլ դաշտային, այնքան որ շենացել էր [ամբողջ] երկիրը: Արա օրերում էր, որ սահմանիցին շարաթովա օրերի, ամիրաների եւ տարիների շրջանները\* (57). Նաեւ մեր աշխարհի ծովակների վրա նավագնացութիւն ստեղծելը. կամուրջները, ձկնորսական<sup>2</sup> գործիքները սրա ժամանակ են Հորինում: Եվ ոչ բոլոր տեղերում էր, որ մինչեւ [Արտաշէսը] երկրագործութիւն գոյութիւն ուներ, այլ Հյուսիսային ազգերի նման շարվականերութեամբ (իմս՝ Հումաներութեամբ) էին ապրում<sup>3</sup>: Նա փոխճանձում է՝ թագավորելով (իսա) քառասունմեկ տարի<sup>4</sup>:

Ապա թագավորում է նրա որդի Արտավազը<sup>5</sup>, որը սակավ օրեր Հետո Արտաշատ քաղաքի կամբջով անցնելիս, կենձեր եւ վայրի էշեր որսալու ժամանակ, Հանկարծ աղաղակում է ինչ-որ ցնորբից խնկազարված, վայր է ընկնում ձիուց մի խորխորատում եւ խորատույր<sup>6</sup> լինելով անհայտանում: Թագավորում է Արտաշեսի որդի Տիրանը Պարսից Պերոզ Ա. արքայի երրորդ տարում: Սա երկու ձի է ունենում առավել թեթեւաշարժ Պիգատուից եւ այլեւի արագագնաց, որոնց ոչ թէ զետեի վրայով սուրացող, այլ օդագնաց էին Համարում: Սա երբ դնացել էր Եկեղյազ<sup>7</sup> գավառի կողմերը, մեռնում է ճանապարհին ձյան Հյուսիսի<sup>8</sup> տակ մնալով՝

Թագավորելով (իսա) քառանմեկ տարի<sup>9</sup>: Տիրանին Հայօրդում է իր երայր Տիրքան Վերջինը Պարսից Պերոզ<sup>10</sup> արքայի քառնեւ չորսերորդ<sup>11</sup> տարում<33>\* եւ երկարակյաց լինելով մահանում<sup>12</sup> է (իսր) քառասուներկու տարեկանում:

Թագավորում է նրա որդի Վաղարշակը՝ իրեն Համանուն<sup>13</sup> Պարսից արքա Վաղարշակի (յ) երեսուներորդ<sup>14</sup> տարում: Սա մի մեծ ավան է կառուցում Բասնի գավառում, որտեղ իրար<sup>15</sup> են խառնով Երասխն ու Մուրց գետերը եւ յուր անունով կոչում Վաղարշական. որովհետեւ այնտեղ էր մեկ նրան իր մայրը, երբ որ գնում էր Այրարատ<sup>16</sup> ձմեռանոց(ից)<sup>17</sup><34>: Սա պարսպով պատեց նաեւ Վարդգեսի<sup>18</sup> ամբակուռ ավանը՝ Քասախ գետի վրա. որովհետեւ Վարդգեսը Երվանդ Ա. Սակավակյացի<sup>19</sup> քրոջ ամուսինն էր՝ Հայկազյան<sup>20</sup> դարմից, որն այս ավանը Հիմնեց: Իսկ այժմ Վաղարշը պատեց պարսպով ու Հզոր պատվարով եւ անվանեց Վաղարշապատ, որ նաեւ Նոր քաղաք է [կոչվում]: Եվ մահացավ թագավորելով (ի) քսան<sup>21</sup> տարի: Բայց եւ ասում են, որ սա մահվանից Հետո<sup>22</sup> էլ դեռեւս ապրում է իր [թողած] բարի անվամբ, քան շատերը թուլամորթ թագավորներից, որովհետեւ Հենց սրա օրերում Հյուսիսային ազգերի բազմութիւնները՝ ինչպիսիք ու Բասիլներն<sup>23</sup> ասեմ, դուրս են գալիս<sup>24</sup> Շորս դռնից, իրենց առաջնորդ եւ թագավոր ունենալով ոմն Վնասեպ ՍուրՀապի<sup>25</sup>, զային անցնում են Կուր

\* Ըստ Երեմիայի՝ չորրորդ տարում Բ. 64:

\*\* Ի Հանուսոց՝ Տե՛ս Խոր. Բ. 45:

1. Խոր. Բ. 62:

2. Տ.՝ Պերոզ:

3. Չ.՝ Ի ԻՒ. երրորդ:

4. Խոր. Բ. 64:

5. Չ.՝ Համանուն:

6. Խոր.՝ Կրտսեւ եւ Կրկու ամի:

7. Տ.՝ Ի Պարսի:

8. Չ.՝ յարսյառու:

9. Չ.՝ փաղցկեմ:

10. Տ.՝ սակուսկեցիկ:

11. Չ.՝ Հայկազյաց:

12. Չ.՝ ամ մի:

13. Խոր.՝ ամեկ կնայ եւ յես:

14. Տ.՝ Բաղարշոց.՝ Չ.՝ յարսոց:

15. Չ. ասա եւ ցինի՝ յոչայ.՝ Տ.՝ կրտսեւ:

16. Չ.՝ սուրՀազկով:

\* Տե՛ս Մաթի. 757 թայտու. էջ 334:

1. Խոր. Բ. 56:

2. Չ.՝ աշխարհեւ. որսոց:

3. Խոր. Բ. 59:

4. Խոր. Բ. 60:

5. Տ. ամենայն ուրեք՝ Արտավազ:

6. Տ.՝ խորատուցայ:

7. Խոր. Բ. 61:

8. Չ.՝ Կիկեցայ.՝ Խոր.՝ Երեղեաց Կամ Եկեղեցայ:

9. Չ.՝ Հայասոց.՝ Խոր.՝ Հիւսիսոց. կամ Հիւսայ:

զետի՞ այս կողմը: Նրանց դեմ է դուրս գալիս Վաղարշը զինվորների մեծ բազմությամբ եւ քաջակորով մարդկանցով: Բավական երկար տեղ Հետապնդում է նրանց եւ անց է կենում ճորս կապանը: Այնտեղ թշնամիները Համախմբելով երկրորդ անգամ ճակատամարտ կազմեցին<sup>2</sup>. Թեպետ եւ Հայոց քաջերը նրանց Հալածեցին եւ փախուստի մատնեցին, սակայն Վաղարշը սպանվեց կորովածիղ պեղեղափորների ձեռքով:

Եվ թագավորութունը վերցնում է նրա որդի Սուրբովը Պարսից Արտավազն<sup>3</sup> արքայի երրորդ տարում: Եւ անմիջապես<sup>4</sup> Համախմբում է Հայոց զորքերը, անցնում է մեծ լեռը՝ իր Հոր մահվան վրեժը առնելու: Սրով ու զեղարդներով Հայածելով այդ Հզորագույն ազգերին, նրանց բոլոր ամենապիտանի<sup>5</sup> մարդկանցից Հարյուրից մեկին պատանդ է վերցնում եւ, որպես իր<sup>6</sup> տերության նշան, Հեյլենական գրով՝ Հուշարձան է կանգնեցնում:

Այս [նույն] ժամանակներում Սասանի որդի Արտաշիրը սպանում է Պարսից արքա Արտավազին եւ թագավորում է ինքը<sup>7</sup>: Այս բանը լսելով Հայոց արքա Սուրբովը<sup>8</sup> Հայտնում է Հռոմայեցիոց Փիլիպպոս կայսեր եւ նրանից օգնական զորք խնդրում: [Փիլիպպոսը] նրան օգնական մեծաքանակ<sup>9</sup> զորք է տալիս Մելիպտոսից եւ անապատից մինչեւ Պոնտոսի ծովափերն<sup>10</sup> ընկած [երկրներից]: Եվ նա ունենալով այնչափ մեծ բազմություն, շարժվում զնում է Արտաշիրի վրա, պատերազմում է, փախուստի մատնում նրան եւ

խում նրանից Ատրեստանն ու արքայանիստ շատ այլ երկրներ<sup>1</sup>: Սուրբովից փախչելով Արտաշիրը Հասնում է մինչեւ Հնդկաց աշխարհը <35> եւ չափազանց անհանգստացած՝ բազում խոստումներ է անում նախարարներին, թե որեւէ մեկը իրեն ազատի (աստ՝ բժշկի) նրանից՝ զեղերի օգնությամբ կամ թե զաղտնապետ սրով խողխողելով, ապա զանազան պարզեւներ է խոստանում, ինչպես նաեւ ընդհանուր Արյաց աշխարհի վրա իր ձեռքի տակ երկրորդը լինելու պատիվով: Դրանով Հրապարակած Անաիդ, որը Սուրենյան Պահլավի ցեղից էր, Հանձն է առնում Սուրբովին սպանել, ուստի զաղտնական լինելու պատրվակով Արտաշիրից փախատական գալիս է Սուրբովի մոտ:

Երբ Անաիդ գալիս<sup>2</sup> Հասնում է Արտաղի դաշտը, նրա կացարանը<sup>3</sup> պատահում է սուրբ Թադեոս առաքյալի գոան կողքին, իսկ սրակապանը (ինս՝ առաքասար) խորանի ներսում<sup>4</sup> Հանգստարանի մոտ էր. Հենց այստեղ է, ստում են, տեղի ունեցել մեր մեծ սուրբ Լուսավորչի մոր Հղիությունը:

Անաիդ Հայաստանում երկու տարի անցնելուց Հետո՝ երրորդ տարում սպանում է Սուրբովին, որը թագավորեց (իւր) քառասունութ<sup>5</sup> տարի:

Այնուհետեւ Արտաշիրը Համարձակորեն արչավում է մեր երկիրը, փախուստի է մատնում Հոււնաց զորքին եւ մեր աշխարհի բազմաթիվ<sup>6</sup> կողմեր գերում ու ավերակների է վերածում. ապա մեր երկիրը իր ձեռքի տակ նվաճելով՝ սահմանադիր փոսեր<sup>7</sup> է փորել սաղխ: Իսկ Սուրբովի մահվանից Հետո Արտավազը, որ Մանդակունիների տոհմի նախարարն էր, վերցնում է Սուրբովի որդի Տրդատին եւ

1. Տ.՝ ընդ Կուր գետով:  
 2. Տ.՝ արկեցին:  
 3. Տ. ստո եւ փիթի՝ Արտուան, Արտուանայս:  
 4. Տ.՝ եպի Շտոցի:  
 5. Տ.՝ ամենցուրեքի պատանեացի:  
 6. Տ.՝ փերոց:

7. Սուր. Բ. 65:  
 8. Սուր. Բ. 69:  
 9. Տ. ամենայն ուրեք՝ Սուրբովայ-՝ Սուր.՝ Սուրբովու եւ Սուրբովայ:  
 10. Ի Տ. պահապեղ՝ բազումս:  
 11. Տ.՝ ցեովաքին:

1. Սուր. Բ. 72:  
 2. Տ.՝ փոսեր:  
 3. Տ.՝ պատուհի նեւս օխարանի:  
 4. Տ.՝ նեղապարսի:

5. Սուր. Բ. 74:  
 6. Տ.՝ ցուլով:  
 7. Տ.՝ սահմանադրութիւն փոս:

փախստական ընկնում է Հունաց՝ աշխարհը: Իսկ Բունդա-  
րը<sup>2</sup>, որը պարսկական<sup>3</sup> ազդից էր, եւ նրա<sup>4</sup> կին Հավաստայալ  
Մոփին, որը մեր Լուսավորչի սանտուն էր, առնելով մանուկ  
Գրիգորին փախստական գնացին<sup>5</sup> Գամրաց՝ աշխարհը, կե-  
սարացիների քաղաքը՝ սնուցանում էին Պահլավիկ՝ մանկա-  
նը եւ Քրիստոսի Հավատքով՝ ուսուցանում:

Խոսքովի սպանութիւննից Հետո Արտաշիրը, տիրելով  
մեր աշխարհին (իդ) քաննելիցք տարի, վախճանվում է,  
Պարսից թագավորութիւնը թողնելով իր<sup>6</sup> որդի Շապուհին,  
որը թարգմանվում է արքայի որդի<sup>7</sup>:

Իսկ Տրդատը մեծանալով Հռոմայեցիների աշխարհում,  
քաջութիւն քաղմախիվ գործեր ցույց տվեց. նա նրկու վայ-  
րենի ցուլերի եղջյուրներից բռնելով մեկ ձեռքով բռնած  
պոկում է եւ վիզ(եր)ը օլորելով ջրանջախում: Ձիարշավի  
ժամանակ մեծ կրկես(խոս)ում<sup>8</sup>, ցանկանալով [կատքը] վա-  
րել, Հակատակորդի<sup>9</sup> ճարպկութիւննից սահեց, վայր ըն-  
կավ, սակայն իսկույն կառքից բռնելով կանգնեցրեց, որը  
ստննելով բոլորը զարմացած մնացին<sup>10</sup>:

Այսպիսով ինչ որ կա Արշակ Քաջի թագավորութիւննից  
մինչեւ այստեղ պատմված<sup>11</sup> մեծ պատմագիր Մովսես<sup>12</sup> Տա-  
րոնեցուց է՝ Բագրեւանդի եւ Արշարունյաց եպիսկոպոսից<sup>13</sup>,  
որ մեր խորի<sup>14</sup> ավարտաբանութիւնն է, եւ մահը Հայոց  
Խոսրով արքայի:

1. Խոր. Բ. 76:

2. Խոր.՝ Բուզգար:

3. Ի Տ. պարսկալէր, սփնայ ի բուրջու, իսկ

Բունդար:

4. Տ.՝ եւ կին ոմն:

5. Չ. եւ Տ.՝ ցնաց:

6. Չ.՝ Պարսիաց:

7. Տ.՝ պահլավիկ:

8. Խոր. Բ. 80:

9. Տ.՝ իւրոյ:

10. Խոր. Բ. 77:

11. Տ.՝ կրկեսխոս:

12. Տ.՝ Հակատակորդին:

13. Խոր. Բ. 79:

14. Ի Տ. պարսկալէր՝ ստացու:

15. Չ.՝ մովսէս:

16. Չ.՝ եպիսկոպոսի:

17. Տ.՝ աշխարհիս:

## Մտեգիւանո Տարոնեցու պատմութիւնը պատմագրական գրվածքների մասին

ԵՐԿՐՈՐԻ ՀԱՆԴԵՍ

### ԵՐԿՐՈՐԳ ԱՂԻԻ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ԳԱՆԿԸ

**Ա.** Տրդատի տիրակալութիւնի եւ նրա սերնդից Արշակունի  
թագավորների մասին. Հայաստանի լուսավորութիւնը  
սուրբ Գրիգորի ձեռքով եւ թե ովքեր են նրա սերնդից  
Հայոց Հայրապետներ:

**Բ.** Արշակունի թագավորներից Հետո եկած Հայոց իշխան-  
ների մասին եւ Հայոց այն Հայրապետների, որոնք Հա-  
ջորդեցին սուրբ Գրիգորի սերնդին:

**Գ.** Պարսից Սասանյան՝ թագավորները, նրանց անուններն  
ու ժամանակները:

**Դ.** Տաճիկների ամիր-ալ-մուսնիները<sup>2</sup> եւ թե ինչեր  
տեղի ունեցան նրանց օրերում:

**Ե.** Ուրիշ գրվածքներից. Տաճկաց ամիր-ալ-մուսնինե-  
րի եւ նրանց երկակի անվանումների մասին:

**Զ.** Հունաց կայսրները. նրանց անուններն ու ժամանակնե-  
րը Կոստանդիանոսից այս կողմ:

1 Չ.՝ Հաստափք

2 Տ.՝ Հաստոփ

Տրդատի սիրակալության և նրա սերնդից  
Արձակունի թագավորների մասին.  
Տալասասանի լուսավորությունը սուրբ Գրիգորի ձեռքով  
և թե ովքեր են նրա սերնդից  
Հայոց հայրադեմներ

Սկզբներից սկիզբը այս պատմության նախաստեղծ մարդուց՝ մեր նախահայր Ալյամից սկսած աստվածային գրվածքներից կարճ ի կարճո՞ թաղվածարար, անցած զնացած ժամանակներն ու թվականները Համառոտ<sup>1</sup> կերպով ճշգրտությունը նշանակելով Հասցրի՞ք մինչև Տրդատի թագավորության ժամանակները, որը Քրիստոսի Հավատով՝ պայծառացած առաջին թագավորն էր: Իսկ երկրորդ գլուխը սույն գրվածքի և սկիզբը դնում ենք մեր երկրորդ Հորն ու Հայաստան աշխարհի առաջին Լուսավորչին, մինչև նրանց վերացումը: Ապա նաեւ Հետագա իշխանների Հաջորդականությունը, մինչև Բազրատունյաց թագավորությունը և Պարսից Սասանյան թագավորներն ու մինչև նրանց վերացումը Հերակլի կողմից: Եվ ապա Տաճկաց ամիր-ալ-մուսնիների մասին, թե՛ որքան ժամանակ տեսցին և թե նրանց՝ օրերում քաջարի մարդկանց կողմից արիության ինչ գործեր կատարվեցին. կամ՝ թե ճգնազգեցիկ մարդկանցից ովքեր Աստվածային շնորհներով պայծառացան, և թե որոնք վարդապետներից ու՞մ ժամանակ Հանգեա

եկան [իրեն] ճարտասաններ և պոետիկոսներ<sup>2</sup> (իմա՛ ստեղծագործողներ) շնորհաշատ. թե որ ժամանակ խաղաղություն կամ խռովության ղեկավար եղան<sup>3</sup> մեզանում<sup>4</sup>: 36> :

ԱՀա, Հետադարձելով Տրդատի թագավորության առաջին տարին գտանք, որ այդ եղել է Դիոկղետիանոսի երրորդ<sup>5</sup> տարում և Պարսից Շապուհ Ա արքայի<sup>6</sup> երկրորդ տարում (59): Երբ նա եկավ Հասավ Կեսարիա, Հայոց նախարարներից շատերը նրան ընդառուջ գնացին: Եվ Տրդատի թագավորության առաջին տարում սուրբ Գրիգորը անտանելի չարչարանքների ենթարկվեց Հանուն Քրիստոսի Հավատքի և խոր վիրապը նետվեց:

Իսկ քաջ Տրդատը արագորեն<sup>7</sup> բազմաթիվ ճակատամարտեր է տալիս նախ Հայաստանում, ապա Պարսկաստանում<sup>8</sup>. Պարսից քաջակորով զորականները փորձով զիտե նալով Հակայի ուժի սաստկությունը՝ բազմաթիվ նետեր արձակելով ձիուն վիրավորեցին և սատկացրին, որը գետնին զարկվելով արքային ցած զորեց: Բայց նա ոտքի կանգնելով և Հեռիտան<sup>9</sup> Հարձակվելով՝ իր փոխարեն թշնամիներից շատերին գետնին է զլորում և մեկի ձին բռնելով [թուշում է վրան] և արիարար աշտանակում: Դարձյալ երկրորդ<sup>10</sup> անգամ կամավորապես ձիուց իջնում է<sup>11</sup> և սուսերով Հարձակվելով ցրում է փղերի երամակը: Եվ այսօրինակ քաջագործություններով<sup>12</sup> երկար մնաց Պարսկաստանում ու Ատրեստանում և Տիգրոսից էլ այն կողմը անցավ<sup>13</sup>:

Տրդատի [չաՀակալության] տանՀինգերորդ<sup>14</sup> տարում

1 ԻՑ. պակասը՝ թի  
2 Տ.՝ նոյնն

3 Տ.՝ աննայն  
4 Ձ.՝ ճգնազգեցիկ արք

<sup>5</sup> Այստեղ՝ նաՀաստկությունը. պետք է ին՝ նի՛ շահաստկությունը:  
1. Ձ. պիտակալու. կամ՝ պիտակալոր  
2. Ձ.՝ թյնն  
3. Ձ.՝ յերկրորդ  
4. Ի Ձ. պակասը՝ արքայի  
5. Ձ.՝ ստուգապես

6. Ձ. սաս և պի՛նի՛ զպորս  
7. Ձ.՝ գտաստկություն  
8. Ձ.՝ Հեռի  
9. Ձ.՝ ի յերրորդումն  
10. Ձ.՝ Հեռի  
11. Խոր. Բ. 82:  
12. Ձ.՝ Հեղտասաններուց



Հոփսոմյանք եւ Գայանյանք՝ սուրբ կույսերը, աստվածապաշտութեան պատճառով Գիտիղտրիանոսից Հարածված, գալիս են Վազարչապատ քաղաքը եւ մարտիրոսական շարչարանքներ կրում Տրդատ արքայից, որի Հետեւանքով էլ աստվածատուր պատուհաս ընկավ Տրդատի եւ մեր Հայոց աշխարհի վրա: Եվ նույն՝ ժամանակ աստվածաշնորհ Հայտնութեամբ՝ սուրբ Գրիգորը զուրս է գալիս վերապից եւ յուստօր վարդապետութեամբ սկիզբ է դնում տառապանքների ապաշխարութեամբ (աստ՝ բժշկութեամբ) եւ Հինգ օր՝ շարունակ [ժողովրդի] ամբողջ բազմութունը ծոմապահութեամբ ունկնդրում էր սուրբ Գրիգորի վարդապետութունը, որն էլ Հննց Առաջավոր [իմա՝ Մեծ] պահքն է, որ ամեն տարի՝ պահում են մինչեւ այսօր. բացի նրա վարդապետութեան մնացած (կ) վախճուն օրերը եւս:

Իսկ երբ Տրդատը Հռոմ գնաց սուրբ Գոստանդիանոսի մոտ (60), Շապուհը մեր աշխարհի նկատմամբ չարիք է նյութում. եւ նրա խորհրդով՝ Հյուսիսային՝ ազգերի բազմութունները արշավում են մեր երկրի վրա: Նրա խտրերից Հրապուրված՝ Սիլուսյաց՝ սոճմի նահապետը ապստամբում է արքայի դեմ եւ ամբանում Ողական ամրոցում: Իսկ մեծն Տրդատը զեռ Հննց Նոր արեւմուտքից գալով անմիջապես Սիլուսի՝ մոտ է ուղարկում ճննազն Մամզունին՝<sup>10</sup>, որը գալով ստապատիր խտրերով խարում է նրան, եւ երբ որ նա տարված էր երեկեր որսալով, նետահար անելով սպանում է նրան: Այդ բանը լսելով [Տրդատ] արքան՝ ապստամբի փոխարեն նախարար է կարգում Մամզունին, նրա

անունով Տարոնը անվանելով Մամզունյան՝ տունը՝:

Տրդատ թագավորն այնուհետեւ Հայաստանի՝ բոլոր [գորքերով] իջնում է Գարգարացիների դաշտը, Հյուսիսականներին Հանդիպելով ճակատամարտ է տալիս եւ, երբ երկու կողմերն իբրար են խառնվում<sup>8</sup>, նա Հսկայաբար Հարձակվելով ձեռքի արագութեամբ երկու մասի է ճեղքում թշնամիների բազմութունը. եւ՝ անՀամար մարդիկ նրա Հարձանքից զետիւն էին թափալըրո՞ք լինում, գործրինակ Հնուտ ձկնորսի լիբը ցանցից՝ ձկները զետիւն թափվին ու խայտային զետիւն վրա: Այդ տեսնելով Բասիլների՝ թագավորը յուստօրույց Համնում է արքայի մոտ, Հետեւի կողմից ուժգնապես նետում է պարանը, Հարմար՝ կերպով անց է կացնում նրա ձախակողմյան<sup>10</sup> ուսով, որովՀետեւ [աջը] սուսերով<sup>11</sup> բարձրացրած էր մեկին [Հարվածելու]: Նա [իմա՝ Տրդատը] կրում էր պահպանակներով պինդ զրահ, որի վրա նետերը Հեռք էլ չէին թողնում: Եվ [բասիլների թագավորը] որովՀետեւ չկարողացավ ձեռքով շարժել Հակալին, պարանը երկվար լանջով գցեց, տակայն չկարողացավ այնպես շուտ մարակել ձիւն<sup>12</sup>, որքան որ Հսկան ածապարելով անմիջապես ձախ ձեռքով բռնելով պարանը<sup>13</sup> զեպի իրեն քաշեց սաստիկ ուժով եւ երկսայրի սրով Հաղորութեամբ<sup>14</sup> Հարվածելով կտրեց մեջտեղից կես արավ մարդուն ու նրա Հնու միասին ձիւն պարանոցն ու գլուխը (61): Իսկ զորքերը այս բանը տեսնելով բոլորը փախուստի դիմեցին:

1 Զ՝ Հոփսոմյանք եւ Գայանյանք  
2 Իմա՝ եւ ի նմին ամբ  
3 Զ՝ յայտնութեանք  
4 Տ՝ ի Հինգ օր  
5 Զ՝ ամ ամբ: - Տ՝ յամենայն ամբ

6 Տ՝ ի խորհրդ  
7 Զ՝ Հիւսիսային  
8 Զ՝ սգիտնեաց - սգիտեն  
9 Խոր. Սյուլ  
10 Տ՝ Մամզուն

1 Զ՝ Մամզունյան  
2 Խոր. Բ. 84:  
3 Տ՝ Հայաստանեայ  
4 Տ՝ եւ ի խոնքի  
5 Ի Տ՝ պակասը՝ եւ  
6 Տ՝ Թառալըր  
7 Խոր. այսպես ուժի գրասեղ. սրբնով խն ի գեղեցիկ ցանցորդ էր Ակարք իկվիթ թափեալ ցանցոյն: - Զ՝ Ակարք

8 Տ՝ Բարապայ  
9 Զ՝ արագ: - Խոր՝ արագ կամ ճակ  
10 Տ՝ Բախ կողմունի  
11 Խոր՝ գի էր վերադարձեալ գննե ամբ ուժից սուսերով:  
12 Տ՝ յուստօրույց: - Զ՝ մարդկեայ գերբուստի  
13 Խն Խոր. չիք՝ պարանն  
14 Զ՝ ի ճակ

Բայց Տրդատը այնտեղից մեծ ավարով վերադառնում է ապա ամբողջ Հյուսիսը միարանելով դիմում է դեպի պարսից աշխարհը՝ Արտաշիրի որդի Շապուհի վրա: Նա յուրաքիններից չորսին կարգում է գորավար. Միհրանին, Հառուս քրիստոնեական հավատքի, նշանակում է Վրացիների առաջնորդ (որովհետև Հենց այդ ժամանակ էր, որ Վրաստանցիք հավատացին կենդանի Աստուծու, իրենց Միհրանի առաջնորդությունով, սուրբ Հովհաննիս<sup>1</sup> ընկերակիցներից մեկի՝ Նունիի ձեռքով) և Բագարատ ասպետին և Ռշտունյաց՝ նահապետ Մանածիհրին<sup>2</sup>: Տրդատի արքայությունն ստան և յոթերորդ<sup>3</sup> տարում Հայոց հայրապետական ակնոսին եկավ սուրբ Գրիգորը (62) և (յ) երեսուն<sup>4</sup> տարի այնտեղ պաշտովցե. իսկ Տրդատի տիրապետության (խէ) քառասունյոթերորդ տարում Ռատակերս<sup>5</sup> Գրիգորի կրտսեր<sup>6</sup> որդին, Հանդերձավորված կազմ ու պատրաստ ուղարկվեց Կեսարացիների քաղաքը՝ Հայաստան աշխարհի համար ձեռնադրվելու, որը հայրապետական ակնոսին<sup>7</sup> նստեց յոթը տարի: Սա Մովսեց աշխարհի նոգան<sup>8</sup> գյուղաքաղաքում կառուցեց մեծ եկեղեցին: Սա երբ լսեց Ջորջորդ Հայքի իշխան Արքեդայոսի անտառակ ընթացքի մասին, Հանապազօրյա Հանդիմանում էր նրան: Իսկ նա հարմար ժամանակի սպասելով՝ սուրբ Հայրապետ Ռատակեանի (իմա՝ Արիստակեսին) Մովքի ճանապարհին Հանդիպելիս սուսերանհար է անում նրան և ստապլում գետին: Բայց ինքը, որպեսզի թագավորը չիմանա, փախստական ընկնում է Կլիկիայի

1 Չ. յոթ իւր տեղով  
2 Սուր. Բ. 86:  
3 Չ. բողոքականաց: - Իսկ անուս չարորդի գորտաքրին, որը չի՛նք պատմագրքս մեր՝ է՛ Կա՛հուս նահապետ Անտառունաց: - Տես Սուր. Բ. 85:  
4 Չ. մանածիհր

5 Տ. յոթին և տասներորդ  
6 Չ. երեսուն ամ  
7 Չ. ստու և զինի՝ բոլորտեղիս  
8 Տ. կրտսեր  
9 Ռ. պատկա՛ռք՝ զոմիտ  
10 Չ. ի գեղապալաքրին խաղազ գ փ

Տարսոն՝ [քաղաքը]<37>: Նրա [Արիստակեսի] մարմինը սարկավագները վերցրին և տարան թաղեցին Եկեղյաց գավառի Թորդան գյուղում: Իսկ Տրդատի (ծղ) Հիսունչորսերորդ տարում Գրիգորի երեց որդի Վրթանանին<sup>9</sup> կարգում է (ս՛վ) Մեծ Հայքի կաթողիկոս, որը Հայրապետության ակնոսին տիրեց (ժե) տասնհինգ<sup>4</sup> տարի:

Իսկ Հայոց Տրդատ արքան Քրիստոսի հավատն ընդունելուց Հետո, բոլորանվեր առաքինություններով պայծառացած, ամբողջ Հայաստանը ցանկանում էր քրիստոնեական կրոնով զարգանալ: Սակայն մեր ազգի ամբարտապան և խստատիրոս մարդիկ չարատեսությամբ ընդդեմացան<sup>5</sup> թագավորի կամքին. ուստի և զեն նետեց երկրավոր պատեր, երկնավորի Հետևից<sup>6</sup> զնաց՝ արագ Հասնելով Քրիստոսի սուրբ ճգնավորի տեղը, որին Մանյա այլք են կոչում և այնտեղ մանելով դռնում է լեռնաբնակ: Բայց նրա Հետևից նախարարները մարդ են ուղարկում, Հոտ են կանչում, խոստանում են նրա ցանկությունները վարկի, և նա էլ նորից թագավորությունը շարունակում: Իսկ երբ որ սուրբը չի համաձայնվում<sup>7</sup>, նրան մահվան ըմպելիք են տալիս, որպես Սոկրատին մոլեխնեղը [սովին] կամ որպես կատաղած երբայեցիք<sup>8</sup> լեռի խոտնած ըմպելիքը ավին մեր Աստուծու (իմա՝ Քրիստոսին): Եվ այսպես վարվելով նրանք իրենց Հոգում Հանգցրին աստվածապաշտության բազմափայլ ճառագայթիլ. և զրկվեցին նրա ճառագայթների լուսեղեն շնորհներից, որը թագավորեց (ծղ) Հիսունվեց տարի<sup>10</sup>:

1 Սուր. - ի Տարսոս  
2 Սուր. ի Թիլիս (առակի)  
3 Տ. ստու և զինի՝ վրթանուս: - Չ. վրթանուս և նա և վրթանուս  
4 Չ. անս ԻՀ: - Սուր. Բ. 91:  
5 Չ. բարեբոլորտեան... չարաբոլորտեան ազգս

մեր... - Տ. յնդիմանաց  
6 Չ. երկնայ  
7 Տ. Մանեայ սյրն կոչեն  
8 Չ. ոչ Հասնեաց  
9 Չ. Շորայեցիքի  
10 Սուր. Բ. 92:

Տրդատի վախճանվելու լուրը երանելի Հայրապետ Վրթանեսին է՝ Հասնում Տարոն զավտուի Աշտիշատի եկեղեցում Չատկի Հսկման տոնի օրը. և Հայաբվում են լուսան բնակիչները տիկնանց (63) տիկնոջ (իմա՝ թագուհու) սաղրանքով, ցանկանում են սպանել նրան, որովհետև Հանապազօրյա Հանդիմանում էր նրան: Եվ՝ Հայրապետը դուրս գալով տեսնում է նրանց բոլորին աներեսույթ կապանքներով կապկապված. Հարցնում է պատճառը, ազատ է արձակում նրանց, իսկ ինքը անցնում զնում է Եկեղյաց զավառը՝ 38:

Բայց երբ տարածվում է Տրդատի մահվան՝ նույն Համբավը, Վրթանեսի՝ ավագ որդի Գրիգորիսին, որը Աղվանից կողմերի եպիսկոպոսն էր, բարբարոսներն սպանում են Սահարուկի զավեղով, որը այդ աշխարհի իշխանն էր՝ Արշակունյաց ազգից. նրան ձերբին սոճատակ են՝ տալիս Վատնյան դաշտում, Կասպից՝ ծովի մերձակայքում. սարկավազները վերցրին նրա դին, բերեցին Փոքր Սյունիք և (թաղեցին)՝ Ամարաս՝ ավանում՝ 39:

Իսկ Սանատրուկը թագավոր դառնալով՝ ինքը՝ զբաղվում է նաև. Փայտակարան քաղաքը և մտածում էր տիրել ամբողջ Հայաստանին<sup>11</sup>: Այս բանը տեսնելով Բակուր մեծ իշխանը, որը Աղձնիքի բռնիչն<sup>12</sup> էր, նույն բանն անել ինքն էր խորհում, ուստի և բարեկամության ձևք մեկնեց<sup>13</sup> Պարսից Որմիզդ արքային: Բայց Հայոց մնացած նախա-

րարները Հայաբվեցին մեծն Վրթանեսի մոտ և պատվավոր իշխաններից երկուսին՝ առաքեցին Կոստանդինուսի որդի Կոստանդինոս՝ կայսեր մոտ, որպեսզի օճնական զորք ուղարկի և Հայաստանում՝ թագավորեցին Տրդատի՝ որդի Խոսրովին: Սա լուս է նրանց և Անտիոքոսին մեծ զորքով ուղարկում է (Հայաստան): Նա գալիս թագավորեցնում է Խոսրովին և Մանածիհրին Հարավային զորքերով ու կիլիկիացիներին՝ գնդով ուղարկում է Բակուր բռնիչի վրա: Իսկ ինքը՝ Անտիոքոսը՝, առնում է իր Հետ Հայոց ամբողջ մնացած զորքին, բոլոր Հունականներով միաձախնում Հարձակվում է Սանատրուկի վրա: Բայց վերջինս, որ Փայտակարան քաղաքն ամբողջությամբ լցրել էր պարսկական զորքերով, Աղվանքի նախարարների Հետ միասին, փախչում է՝ Պարսից արքայի մոտ: Եվ Հայոց զորքերը նրանց երկիրը ավարի առնելով վերադառնում են այնտեղից՝: Իսկ Մանածիհրը գնալով՝ Հարավային կողմով՝ ջախջախում է Բակուր բռնիչին ու նրա ամբողջ զորքը և պարսիկներին, որ նրա օճնականներն էին, Հալածեց այնտեղից: Եվ բազմաթիվ զերիներ է առնում Մծբինի կողմերից<sup>10</sup>, որոնց թվում են Հակուր մեծ եպիսկոպոսի ու թըր սարկավազներին<sup>11</sup>. նրանց Հետևեց զալով Հակուրը<sup>12</sup> խնդրում է ազատ արձակել զերիներին, սակայն Մանածիհրը չի Համաձայնվում, և Հակուրը գնում զինում<sup>13</sup> է արքային: Սրա վրա<sup>14</sup> զայրացած Մանածիհրը Հրամայում է ութը սարկավազներին ծովը նետել:

1 Այսպես թուղթ բառ Ս.

2 Չ. քոք

3 Թոր. Գ. 2: - Փայտ. Գ. 3:

4 Տ.՝ մահուան

5 Տ.՝ Աղվանիսի

6 Տ.՝ ընդարձակ

7 Չ.՝ կողմից

8 Զրույց (Քաղեցին) է՝ փամբայնի մեղել

յուրեք բառ Թոր. Գ. 3: - Տ.՝ բերայ (Հանդուցին) է՝ Փոքր Սյունի յԱմարան ուստի

9 Չ.՝ յամարան

10 Չ.՝ յինքան ունի

11 Թոր. Գ. 3:

12 Տ. առտ և զգի՝ բռնիչս

13 Չ.՝ ձեռն եղ

1 Չ. և Թոր.՝ երկուս

2 Թոր. Կոստանդոս

3 Ի Չ. պակասը՝ Հայոց

4 Թոր. Գ. 4-5

5 Չ.՝ կիլիկիայի

6 Տ.՝ Անտիոքոս

7 Չ.՝ փամբայնի: - Թոր.՝ փամբայն:

կամ՝ փաթեանակի

8 Թոր. Գ. 6:

9 Չ.՝ երթայ

10 Ի Տ. պակասը՝ կողմից

11 Տ.՝ ընդ որս և զարկուպապոս: - Թոր.՝ սարկուպապոս ութ

12 Տ.՝ Եակուր

13 Տ.՝ և յոց Հուսեանի՝ գեմ նրայ

14 Չ.՝ ընդ որս

Այդ բանը լսելով մեծն Հակոբը սաստիկ բարկութիամբ վերադառնում է իր տեղը, ինչպես Մովսեսը՝ փարավոնի երեւից. ապա՝ բարձրանում է մի լեռան վրա, որտեղից երևում էր ամբողջ գավառը եւ անիծում է Մանաճիհրին ու նրա գավառը: Եվ ահա չուշացան Աստծո զատաստանքը. Մանաճիհրը Հերովդեի նման արագորեն սատակեցավ եւ աշխարհն այն զրկեց պողարերութիւնից, երկինքն էլ նրա վրա պղնձյա դարձավ. ծովն էլ Հակոտակվելով բարձրացավ ծածկեց անդաստանների՝ սահմանները. եւ այս բաները լսելով Խոսրով՝ արքան սաստիկ զայրացած Հրամայում է ազատել գերիներին: Ապա սուր Հակոբի այս աշխարհից փոխվելուց Հետո, Մանաճիհրի ժառանգորդը՝ զեղեցիկ ապաշարութիամբ, Հորդաստո արտասուքներով ու Հառաչանքով՝ նրա բարեխոսութիամբ գտավ բժշկութիւն իր եւ գավառի՝ [Համար]:

Այդ, Պարսից Որմիզդ արքայի երկրորդ եւ Կոստանդի գահակալութիան ու թերրոջ տարում նրա օժանդակութիամբ թագադրում է Խոսրովը. սակայն, իր Հոր նման, սարկութիան ու քաջութիան ոչ մի գործ չկատարեց. որովհետեւ թեպետեւ մարմնով փոքր էր, բայց ոչ Այեքսանդր՝ Մակեդոնացու Հասակի չափով, որն ընդամենը երեք կանգուն Հասակ ուներ<sup>1</sup>. նա միմիայն մի քաղաք կառուցեց. Գեղամա լեռների ստորոտում եւ արքունիքը տեղափոխեց<sup>2</sup> մի ուսան, շինեց մի զովատուն ապարանք, որն ըստ պարսկերեն լեզվի Դվին է կոչվում<sup>3</sup> եւ թարգմանվում է բլուր: Եվ քանզի այդ ժամանակ Արեսը (Հրատր) ուղեկցում էր Արեգակին

եւ ջերմ օդը պղտորվելով դարչաՆոտութիւնն՝ էր տարածում, դրա Համար էլ Արտաշատի բնակիչները կամավոր Հանձն առան այդ տեղափոխութիւնը<sup>4</sup>: Արա օրերում Հուսիսային Կովկասի ժողովուրդները միաբանելով անՀամար բազմութիամբ՝ գրեթե երեք բյուրով<sup>5</sup>, արշավեցին մինչեւ մեր աշխարհի միջնամասերը, եկան Հասան Վաղարշապատի դռներին եւ չըճապատեցին [քաղաքը]: Նրանց՝ վրա Հանկարծակի Հարձակվեցին Հայոց զորքերը եւ պատեքով մղեցին Օշական առապրում: Բայց նրանցից մի փոխարի Հակա, մարմնի բոլոր մասերը կնյա թաղիքով տարածածվված<sup>6</sup> շահատակութիւն էր սկոտում մեր զորքերի մեջ եւ ոչինչ<sup>7</sup> չէին կարողանում անել նրան, որովհետեւ նրկակով Հարվածեիլս կնյա թաղիքը ոլորվում էր: Այդ ժամանակ քաջակորով Վահան Ամասունին դառնալով դեպի կաթուղիկ եկեղեցին ասում է. «Օգնի՛ր ինձ, Աստված, ինչպես Դավթի պարսաքաբը դիպցիր Գոլյաթի ճակատին, իմ նիզակն էլ ուղղորդ դեպի այս՝ զորավոր Հական»<sup>8</sup>: Եվ նրա խնդրանքն իրոք տեսչայով. նա միւս գավառի կողմից Հարվածելով գետնը սապակեց ամեհի Հակային. դրանից սարսափած թշնամիները փախուստի դիմեցին: Եվ այստեղից վերադառնալով Մոփաց աշխարհը՝ Բագաբատը, առանց նախանձի, Հաստատուպեա վկայում է այդ արքայի [տառջ]: Դրա Համար էլ արքան ճակատամարտի տեղը՝ Օշականը<sup>9</sup> նրան է պարգևում: Բայց թագավորը դրանից Հետո երկար<sup>10</sup> չի ապրում, վախճանվում է՝ թաղավորելով իւր տա-

1 Իտր. զՄեգակն  
2 ԻՉ. եւ սու Խոր. պատեքի՝ եւ  
3 Տ. սեղատասանայ  
4 Տ. սաս եւ գինի՝ Խոսրովո  
5 Խոր. եւ Չ.՝ ժառանգ որդի

6 Խոր. Գ. 7:  
7 Չ.՝ բուն վնակերտային  
8 Չ.՝ չափ  
9 Չ.՝ վախճան  
10 Չ.՝ կողմ

1 Չ.՝ ժառանգուտութիւն: - Խոր.՝ ժառանգուտութիւն  
2 Խոր. Գ. 8:  
3 Խոր.՝ երկու բերքոք: - Տ.՝ բերքոք  
4 Չ.՝ որդի  
5 Խոր.՝ թագուս կանայս բոլորով ամենեւին պարտածեկեցայ. կամ պարս-

ժամեայ  
6 Տ.՝ մեկ ոչ կարկին  
7 Տ.՝ ոչ կան: - Խոր.՝ սակս  
8 Չ.՝ այստեղի  
9 Խոր. Գ. 9:  
10 Տ.՝ երկարայ

րի: Վերջրին նրա մարմինը եւ տարան թաղեցին Անիում, իր հոր՝ մոտ:

Իր ինքնակալութեան տասնևյոթներորդ<sup>2</sup> տարում Օզրստու Կոստանդինոսը<sup>3</sup> թագափոխեցնում է Խոսրովի որդի Տիրանին եւ ուղարկում Հայաստան: Իսկ մեծն Վրթանեսը, իր եպիսկոպոսութեան (ժե) տասնևհինգերորդ տարին լրանալուց հետո, փոխվում է այս աշխարհից, Տիրանի կերպով տարում: Եվ նրանից հետո Վրթանեսի որդի Հուսիկին ուղարկում են Գամիրքի քաղաքը (իմա՝ Կեսարիա) Հայոց Հայրապետ ձեռնադրելու համար. սա Հայաստանի Հայրապետական աթոռին նստեց վեցը<sup>4</sup> տարի<40>:

Իսկ Տիրանը թշնամանում է երանելի Հուսիկի՝ հետ՝ Իրեն մշտապես հանդիմանելու, նաև Հուլիանոսի պատկերի համար, որը արքան կանգնեցնել տվեց Մոփաց գավառի եկեղեցում, որը եւ երանելի Հուսիկը սոսնակոխ անելով կտրատեց<sup>5</sup>, եւ Հրամայեց [Տիրան արքան] ճիպոտահար անել նրան, եւ այնքան գանձահարեցին մինչև ավանդեց հողին: Նրա վախճանելուց հետո ծերունի Դանիել քորնպակապոսը (իմա՝ քահանա), որը եղել էր սուրբ Գրիգորի աշակերտը<sup>7</sup>, եզովեց Տիրանին, զրա վրա չարացած Տիրանը Հրամայեց խեղդամահ անել նրան. եւ թաղեցին նրան Հայաց դափառ կոչված մենաստանում: Իսկ երանելի Հուսիկի մարմինը տարան Թորգան գյուղը՝ իր հոր մոտ:

Տիրանի երկրորդ<sup>8</sup> տարում [Հայրապետական] աթոռին Հաջորդում է Փառնեհուհուհու, որը Տարոնի Աշտիշատից<sup>10</sup> էր,

մի գովական տղամարդ, եւ նստեց չորս՝ տարի: Այդ նույն ժամանակներում Պարսից Շապուհ արքայի կողմից մեծ զորքով զորավար է գալիս Հայաստան եւ ստապատիր խոսքերով՝ իր մոտ է կանչում Տիրանին, կուրացնում է նրա աչքերը Ապահունյաց գավառի մի դուռում, որը Արձկաղն՝ են կոչում, ինչպես որ Բյուզանդն է պատմում Հայոց երկու լուսավորիչների փոխարեն, որոնց ինքն էր կուրացրել<41>:

Տիրանից հետո թագափոխում է նրա որդի Արշակը յոթը<sup>9</sup> տարի<42>: Սա իր տիրակալութեան չորրորդ<sup>9</sup> տարում պատրաստեց կազմակերպեց սուրբ Գրիգորի՝ որդի Վրթանեսի որդի Հուսիկի որդի Աթանազիանի որդի Ներսեսին եւ մեծաքանակ զորքով առաքեց Գամիրքի երկիրը Հայոց՝ Հայրապետ ձեռնադրելու<sup>6</sup> համար, որը Հայրապետական աթոռին տիրեց (յդ) երեսուշորս տարի<sup>6</sup>: Նրա օրերում էին [սպլում] Հայոց զորքերի սպարապետ Վաչեի որդի Վասակը, որը եկեղյաց գավառում Վասակակերտը<sup>10</sup> կառուցեց, եւ Վասակի որդի քաղն Մուշեղ Մամիկոնյանները: Սա (իմա՝ Արշակը) չարավորուզող Տիրիթի զբաղառուքին Հավատալով սպանում է իր եղբորորդի Գնեյին՝ նրա կին Փառանձմին նախանձելու պատճառով, որը Սյունյաց Անդոկ իշխանի զուտարն էր: Այս աղետալի [զործերի] համար սուրբ Ներսեսը<sup>11</sup> նըզվեց Արշակին ու ամբողջ Հայոց աշխարհը<sup>12</sup> եւ ինքը հեռացավ դնաց Հունաց երկիրը, իր փոխարեն թողնելով Բագրեւանդա ինաղ եպիսկոպոսին, որը ծնունդով Կարին գավառի Մարգաց<sup>13</sup> գյուղից էր, որի շտեմարաններն ա-

1 Տ.՝ առ Հայրի: - Խոր. առ Հայր իր: - Խոր. 9, 10:  
2 Չ.՝ եւ յոթ եւ ի տասներորդ  
3 Չ.՝ Կոստանդինոս: - Խոր.՝ Կոստանդոս  
4 Խոր. 9, 11: - Փառաս. 9, 12:  
5 Տ. առ եւ վիճի՝ Յուսակայ

6 Չ.՝ փոխեց եւ մտերեց  
7 Տ.՝ որ էր տարիներույ  
8 Խոր. 9, 14:  
9 Չ.՝ ի գնի  
10 Խոր. ի տասներորդ ամի

1 Չ.՝ յաշտիւս: - Խոր.՝ յԱշտիւսայ: - Տ.  
Փառնեհուհ  
2 Չ.՝ յարկերոց  
3 Չ.՝ որկայն: - Փառաս.՝ Անուղ  
4 Խոր. 9, 17: - Փառաս. 9, 20:  
5 Խոր. (Գ. 35)՝ առ երեսուն  
6 Խոր.՝ յարցող տի

7 Խոր. 9, 20:  
8 Չ.՝ մեծապեղ  
9 Փառաս. 9, 3-4:  
10 Չ.՝ Վազկիր  
11 Չ.՝ անկեղեց ուրիշ՝ Կերպով կամ Կերպով  
12 Խոր. 9, 22-23, Փառաս. 9, 15:  
13 Փառաս.՝ Մարգալայ

առատորոյն Հորդում էին ըստ մեծն Եղիայի նմանութեան՝ <43> :

Այդ ժամանակներում Պարսից Շապուհ արքան զայլս է Ատրպատական եւ իր մտտ է կանչում Աբշակին: Բռնելով կայում է՝ նրան եւ ուղարկել է տալիս ինորասան՝: Այդ բանը տեսնելով նրա կինը՝ Փառանձեմը, փախտական ընկնում է Արտագերս ամրոցը: Իսկ Պարսից արքան Մերութան՝ Աբքրուեռուն Հայոց իշխան Հաստատելով ինքը վերադառնում է Պարսկաստան: Ապա Մերութանը պաշարում է Արտագերս ամրոցը, գրաւում է այն եւ Փառանձեմին, ըստ պարսկական սովորութեան, սայլի ցցի վրա է Հանում (64) <44>: Այս ամենը, երբ լսում է մեծն Երեսեք, Թեոդոս ինքնակալին առաջում է անտես չառնել Հայոց երկիրը: նրա պաշտատանքը Հասկանայով Թեոդոս մեծը կանչում է Աբշակի որդի Պապին, որը պատանդ՝ էր արքունի դուստր, թագադրում է նրան, Անատոլիտս՝ զորավարին մեծաբանակ զորքով օգնական է (տալիս)՝ եւ Հայոց Երեսե Հայրապետի Հետ ուղարկում Հայաստան: Նրանք գալիս Մերութանին ու Պարսից զորքերին՝ հալածում են երկրից: Եվ այնուհետեւ մեր երկիրը Պապի ձեռքի տակ Հաստատվեց լոթը տարի՝:

Այդ ժամանակներում Անատոլիա զորավարը, ստանալով արքունիքի Հրամանը, գալիս է մեր աշխարհը, չըջում է բազմաթիվ տեղերում, Հաճելի է գտնում Վարդտ արգաստրեր, Չրատատ եւ բերրի գալատուս՝ կառուցել քաղաքը, Համարելով այն իրրեւ կենտրոնական վայր՝, ոչ այնքան Հե-

ռու այն տեղերից, որտեղից բխում են Եփրատի մի քանի աղբյուրներ՝ եւ Հանդարտագնաց առաջնայով ծովանում են ու ճահճի տեսք ստանում: Այնտեղ անՀամար քանակութեամբ ձկներ եւ բազմապիսի ճարակավոր թռչուններ են բազմանում, որոնց ձկերով՝ միայն լի ու լի՝ կերակրվում էին բնակիչները: Եվ ճահճներէ՝ ափերի շամբերն ու երեզնուտների առատութիւնը, եւ գլաչում անձան խոտի՝ թանձրութիւնը, եւ սերմնավոր պտուղների առատաբերութիւնը, լեռները նույնպես լիքն են կեղակարաչա, որոճացո՞ւ երեններով: Մեծ քանակութեամբ բազմանում են այնտեղ եղջերավոր ընտանի՝ անասուններ՝ Հաղթահասակ, խոչոր, սեվամ՝ գիրացած եւ պարարտ: Եվ գեղեցկամիտ լեռան ստորոտում Հալանում է մի տեղ, որտեղ բազմաթիվ ձանր ու ականակիտ աղբյուրներ են բխում, այնտեղ հիմնադրեց քաղաքը: Նրան չըջափակեց խոր փոսով, անկողախոր Հաստատեց պատվարի հիմքը, որի վրա աՀագին բարձր աշտարակներ կառուցեց եւ դրանցից առաջինը Թեոդոսի անունով կոչեց՝ ի պատիվ Թեոդոսի: Ապա նրա մյուս կողմում՝ չինեց նալիքի ցուկների նման ժայռավոր <45>՝\* աշտարակներ եւ զոգավոր՝ խորշերով անցքեր, որոնք նայում են դեպի լեռները. նույնպես եւ՝ դեպի Հյուսիսային՝<sup>10</sup> դաշտը, եւ արեւելյան, եւ արեւմտյան կողմերից նայող բոշորածեւ աշտարակների կանգնեցրեց: Եվ՝՝ քաղաքը կենտրոնում մի բարձրավանդակի վրա բազմապատիկ մթերանցներ չինեց եւ անվանեց Ավգոստինոս՝ ի պատիվ Ավգոստո-

1 2՝ կայք  
2 Խոր՝ Խուժտատան  
3 3՝ ամենայն ուրի՝ Մեճտանի - 2՝  
Մերութան կամ՝ Մեճտան  
4 2՝ որ էր պատակը  
5 Խոր. ստան եւ գինի գորգաբարդ կոչել Յէ-

բիտ կամ ակրկոմախոս  
6 Թուրք սյապիւն ըստ Տ.  
7 2՝ զբոքի  
8 Խոր. Գ. 34-37  
9 2՝ ընդ գուտաթին  
10 Տ՝ իրրեւ միջոց վարկուցեպ զգայրի

\* Մայիս. Թուրք. Ժայռանեւ. տես նրա 325  
բացատ. Խոր. Գ. 59:  
1 3. ստան եւ գինի՝ աղբյուրը, աղբյուր...  
2 2՝ որոց ի մուշե  
3 2՝ եւ գեղեցկամաթիկն - Խոր՝ գեղբոք  
4 2՝ խոչոր  
5 2՝ ի կէն... կեղակարաչա եւ որոճացը: -

Տ՝ էրկոց  
6 2՝ եւ ամառու եւ պալաթը  
7 2՝ յոթ՝ սեւ ցանեկ - Խոր՝ յոյս ցուցանեկ  
8 2՝ եւ անց  
9 2՝ եւ ստանց գոգոսոս  
10 2՝ որպէս եւ ընդզէլ գուշոնի Հյուսիս  
11 Ի Տ. պարսակը՝ եւ



սի<sup>1</sup>: Եվ շատ այլ տեղերից անհայտ ուղիներով ուրիշ Զբեր բերեց մտքրեց<sup>2</sup> քաղաքը. նաեւ գնեքերով ու պահպանան գնդերով լցրեց քաղաքը եւ անվանեց Թեոդոսպոլիս<sup>3</sup>, որպեսզի քաղաքի հիշատակութեամբ անմահ լինի այդ անունը: Իսկ Զբերուկ ընտզ աղբյուրների վրա վիճառաւ քարերով Հարկեր կառուցեց<sup>4</sup>:

Իսկ Պապը ամոթխալի արտերով պղծագործութեամբ<sup>5</sup> էր գրադվում եւ բազում անգամ Հանդիմանութիւն էր ստանում սուրը ներսեայից: Ուստի չարացած Պապը նրան մահվան գնդ է խմցնել տալիս Եկեղայց զամուտի Խնա գյուղում եւ զրկում կյանքից\* <46>: Նա Հայրապետական աթոռին նստեց (ը) երեսունչորս տարի: Այդ բանը լսելով Կեսարիայի սուրբ Հայրապետ Բարսեղը նզովում է Պապին ու նրա բոլոր յուրայիններին, երզմամբ Հաստատում է, որ այլեւս Հայոց կաթողիկոսը ձեռնադրութիւն չստանա Կեսարիայում. եւ նրա նզովքը շուտով կատարվում է: Բայց Պապը Հայոց կաթողիկոս է կարգում Ապահունայց զամուտից ոմն Շահակի\*\* առանց Կեսարիայի մետրոպոլիտի Հրամանի. սա Մանազկերտ գյուղից էր եւ Հայրապետեց չորս տարի:

Իսկ Անատոլիոս քաջ զորավարը նույն ժամանակ բռնում է Պապին, շղթայում երկաթեա կապանքներով եւ ուղարկում կայսեր մոտ: Սակայն [կայսրը] նրան նույնիսկ տեսութեան չարժանացրեց, այլ Հրամայեց ծովը<sup>6</sup> գցել: Եվ Հնեց նույն ժամանակ թագավորեցնում է ոմն Վարդազատ Արչակունու՝ մանկական Հասակի, որը թագավորեց չորս

տարի: Սա Հայոց կաթողիկոս կարգեց Շահակի<sup>1</sup> եղբայր Զավնին, որը [Հայրապետ] մնաց չորս<sup>2</sup> տարի:

Իսկ Վարագդատից Հնտո թագավորում են Պապի որդիներ Արչակը եւ Վաղարշակը Հինգ տարի: Արանց վեցերորդ տարում բաժանվեց մեր Հայոց թագավորութիւնը. Արչակը տիրեց Հունական կողմում, իսկ Վաղարշակը Պարսկական կողմին, Արարատյան<sup>3</sup> աշխարհին: Արանց օրերում Հայոց կաթողիկոս Զավնից Հնտո եկավ նրա եղբայր Ապուրապեանը նույն գյուղից, տիրեց Հինգ<sup>4</sup> տարի: Իսկ Վաղարշակից Հնտո, Պարոնից Շապուհ արքայի Հրամանով, Հայոց արեւելյան մասում թագավորում է Արչակունի Խոսրովը երեք տարի: Սա Հայոց<sup>5</sup> կաթողիկոս կարգեց Միծն ներսեայի որդի սուրբ Սահակին, որը Հայրապետական աթոռին նստեց (ծ) հիսուն տարի<sup>6</sup>:

Սակայն երեք տարի<sup>7</sup> Հնտո, չարախոսներին լսելով, նույն Շապուհ<sup>8</sup> արքան զրկում է Խոսրովին իշխանութիւնից: Եվ նրա փոխարեն Հաջորդում է Վռամշապուհը<sup>9</sup> նրա եղբայրը, որը թագավորեց (ծե) տասնեւհինգ<sup>10</sup> տարի:

Եվ ահա այնպես պատահեց, որ Պարսից Արտաշիր<sup>11</sup> արքայի երկրորդ տարում եւ Հայոց արքա Վռամշապուհի Հինգերորդում, երբ երանելի Մաշտոցը<sup>12</sup>, որը Տարոնի զավառ<sup>13</sup> Հացեկաց գյուղից էր, Վռամշապուհ արքայի եւ Սահակ մեծ Հայրապետի ձեռքով, մի քանի ընկերակիցներ<sup>14</sup> Հնտ միասին, որոնց Սահակն էր ուղարկել<sup>15</sup> նրա մոտ, Գա-

\* Տե՛ս՝ Մայիս 299 քառուս. նոր.՝ 9 38:  
 \*\* Տե՛ս՝ նոր. Գ. 39, Փայ. Ե, 29, 32:  
 1 Չ.՝ պատմիկ, պատմաւ: - նոր. Ա. գորտոսի  
 2 Չ.՝ մտադր  
 3 Տե՛ս՝ գիճկատուրջի  
 4 նոր.՝ յինեաց: - նոր. Գ. 59:

5 նոր.՝ զպղծագործ էր  
 6 Ի Չ. պակասէ՛ր լինել: - նոր.՝ յանդիման  
 նեայ կտարելք  
 7 նոր. Գ. 38:  
 8 Տե՛ս Փաւստ. Ե. 29:  
 9 Տե՛ս նոր. Գ. 39: - Փաւստ. Ե. 29, 32:

1 Տ.՝ Աստուկայ  
 2 նոր. Գ. 40:  
 3 Չ.՝ քարայրտանան  
 4 նոր. Գ. 41-42  
 5 Ի Չ. պակասէ՛ր Հայոց  
 6 նոր. (Գ. 67)՝ անս լիտւն եւ մի  
 7 Ի Չ. պակասէ՛ր մտաց: - նոր. (Գ. 50)  
 զԵ՛ս անս Հինգ  
 8 Տ.՝ Շապուհ արքայէ  
 9 Չ.՝ գիճկատուրջ  
 10 նոր. (Գ. 67)՝ քան եւ մի ան: - նոր. Գ. 42, 49, 50  
 11 Չ.՝ արպաշի  
 12 Չ.՝ մաշտոցի  
 13 Չ.՝ ի գառնին  
 14 Չ.՝ ընկերովք  
 15 Տ.՝ անկեղովք

նիեյան նշանազերեով Հայերեն դպրոթյունը Հորինեց: Եվ դրանից Հետո դարձյալ նույն Վասնչապուհի վեցերորդ տարում, որը Վասն-Կրման՝ արքայի առաջին տարին է (65) վերստին աստվածատուր նշանազերեով նույնը եղանակելով՝ ամբողջացնում է, որնցով և դպրոթյուններն<sup>2</sup> ու Աստվածաշունչը գրքերը ուղղում-թարգմանում են, ինչպես որ պատմում են Կորյունն ու Ղազարը<sup>3</sup> (իմա՝ Փարպեցին): Եվ Հայոց դպրոթյան սկզբնավորումը եղավ սկիզբը մեծ գիտություն ու անժխտելի խնդություն ըստգովելով երկրների Համար: Քանզի ոչ միայն Հայոց, այլև Վրաց ու Աղվանից, Ասածո խնամակալությունը, գրեթե ամբողջ երանելի Մեսրոպ<sup>4</sup> վարդապետի՝ ձեռքով<sup>47</sup>:

Վասնչապուհը վախճանվում է փառքով [պսակված] նրա փոխարեն Կրմանը թագավորեցնում է կրկին անգամ Խոսրովին, որին ինքն էլ գրկել, և մնաց մեկ տարի: Արանից Հետո Հազկերտը ոչ թե նրանցից, այլ իր որդի Շապուհին է թագավորեցնում Հայաստանում, որը, սակայն, իր Հոր մահվանից Հետո սպանվեց նրանց մեծամեծների կողմից<sup>5</sup>: Եվ մնաց մեր Հայոց երկիրն առանց թագավորի երկար տարիներ<sup>6</sup>: Այդ մասին Հետաքրքրվելով իմացանք, որ անիշխանության ժամանակը եղել է (ժա) տանեմանկ<sup>6</sup> տարի: Հովսեփը և Ենիքիլը՝ Սահակի արքայակները (իմա՝ գործակիցները) այս նույն ժամանակներում ուղարկվում են Ասորեստան, այնտեղից էլ Հունաստան՝ ուսումնասիրելու<sup>7</sup> Վարդապետական<sup>10</sup> գրվածքները:

1 Չ.՝ փառքով կրման

2 Չ.՝ եղանակելով... դպրոթյուն

3 Տես Կորյունի Մեփրեմի: Ղազար Ա.

10-11: - Չ.՝ որդե՛ կորին պատմել և

Ղազար

4 Տ. Մեսրոպ

5 Խոր. Գ. 53-54:

6 Չ.՝ ի նացուց իսկ մեծամեծաց

7 Խոր. Գ. 56:

8 Խոր.՝ ան երկն

9 Չ.՝ ի պարտութիւն

10 Խոր. Գ. 60:

Դրանից Հետո Պարսից Վասն արքայի Հրամանով թագավորում է Արտաշեսը, որը նույն Արտաշիբն է, վեց տարի: Մեսրոպը, որ նաև Մաշտոց է կոչվում, այդ սքանչելի և քահանա, նախագաղ<sup>8</sup> և ուսուցիչ Հայկական նշանազերի ու դպրոթյան, Հենց այս ժամանակներում Հանդես գալով՝ Հավիճորեն պայծառացավ: Իսկ մեծ քահանայապետ Սահակը, որը սուր Գրիգորի սերնդից էր, սուրբ Գրքերը Հունարեն լեզվից Հայերեն լեզվի դարձնելով թարգմանում է, Եղնիկի Հետ միասին, սուրբ Ղեւոնդիոսի և ուրիշների ամենաստույգ<sup>9</sup> օրինակները, որոնք բերվեցին Կոստանդիական քաղաքից<sup>9</sup>: Սա նորոգեց նաև սուրբ<sup>4</sup> կուսանաց տաճարը, որ կործանվել էր Շապուհ<sup>5</sup> թագավորի կողմից. և սրբուհի Հուրիսիմին աներեսույթ եղած տեղը, Ասածո ողորմածություն շնորհիվ, Հայտնի եղավ<sup>6</sup>: Սա էր<sup>7</sup>, որ նախքան իր քահանայապետ դառնալը, գիշերային տեսիլքում<sup>8</sup> երեւաց իրեն Արախուանյաց թագավորության\* <48> վերանալը և քահանայապետության դադարում սուրբ Գրիգորի սերնդից, սպա և ուրիշ ոմանց կողմից այդ նույն վիճակին<sup>9</sup> տիրանալը: Բայց որոշ ժամանակ դրանից Հետո, ասում է, կրկին [սլոտի] Հառնի թագավորությունը և վերստին նորոգվի քահանայապետությունը իրենց տուժակիցների մեջ՝ նախապես<sup>10</sup> սահմանված կարգով:

Այս նույն ժամանակներում միաբանվեցին Հայոց նախարարները, չարախոսում էին Արտաշիբից<sup>11</sup> նրա անառակ ցանկատիրության պատճառով. խնդրում էին Հեռացնել

\* Խոր. Գ. 66, Ղազար Ա. 17:

1 Տ.՝ նախագաղ

2 Չ.՝ ի ստուգ

3 Խոր. Գ. 58, 61:

4 Տ.՝ սուրբ

5 Տ.՝ ի Կապուհ

6 Տ.՝ գտակ եղև

7 Ի Տ. պակասք՝ է

8 Չ.՝ տեսիլք

9 Տ.՝ փնտհեղ

10 Խոր. Գ. 66: - Ղազար Ա. 17:

11 Աստ և ի ստորին՝ գարտաշեն, արտա-

շիտ...

երան թագավորութունից եւ պարսիկ բերել մեր աշխարհին տիրակալ:

Բայց նա ասում է. «Քալ լիցի ինձ իմ անմեղ ոչխարին անօրին գայլի բերանը տալ եւ իմ Հիվանդ գառին այլոց առողջ գազանի Հնտ փոխանակել, որի առողջութունն ինքնին մեծամեծ չարիքներ կարող է պատճառել»: Դրա Համար Հայոց նախարարները՝ նրան Հակառակվելով, երան գնացին Պարսից Վլամ արքայի մոտ, և Տարակտում էին իրենց Արտաշիր թագավորից եւ սուրբ Մահակին՝ Հայրապետութեան Համար չար նախանձի պատճառով: Պարսից Վլամ արքան Համարում է Հայոց նախարարների [ասածները] եւ Հրամայում է անիմիտիս արքունի դուռը կանչել Հայոց Արտաշիր թագավորին եւ սուրբն Մահակին. ապա Արտաշիրին բռնում եւ կապանքներով ուղարկում է Խուժաստան, իսկ սուրբ Մահակին Հրամայեց գահընկեց անել Հայրապետական՝ աթոռից: Եվ նախարարների խնդրանքով տալիս՝ է նրանց կաթողիկոս ոմն (66) ասորի Արդիշային՝ Հակորիկ չարափառ (իմա՝ Հուլիանիտ աղանդի պատկանող), որը մեկ տարի էլ չմնաց: Նրան Հաջորդում է ոմն Ծմուելը<sup>1</sup>, դարձյալ նույն՝ ազգից՝ նրանից ավելի վատթար. սա եւս երկու տարի Հնտ փախճանվեց: Սրանից Հնտ էլ անվեհեր (իմա՝ ամբարիշտ) ոմն Սուրմակը, որը սուրբ Մահակին մասին չարախոսողն էր, Բզնունցյաց գավառի Արծիկ գյուղից եւ մնաց յոթը տարի: Սա մտնում է Հայրապետների թվահամարում. իսկ Արդիշոն ու Ծմուելը չհաշվեցին<sup>2</sup>:

Այս ամենը տեսնելով էր, որ մեծ վարդապետ Քերթողաչայը՝ Մովսեսը ծայն բարձրացնելով աղաղակում էր. «Ող-

բա՛մ գրեզ, Հայոց աշխարհ, որովհետեւ վերացան քեզանից թագավորդ ու քահանայդ: Ողբա՛մ գրեզ, Հայաստանայց եկեղեցի, որովհետեւ վերացավ քեզանից խորհրդականդ՝ ու մարգարեդ», ինչպես որ ժրաջան մանուկ Երեմիա մարգարեն ողբում էր Հրեական ազգի կործանումը եւ տաճարի անապատանալը:

Ապա եկավ սուրբ Մահակը եւ սակավ մի ժամանակ անցկացրեց Բագրեւանդ գավառի Բլուր գյուղում եւ Աստծո կամբով այնտեղ վախճանվեց: Նրա ոսկորների նշխարները վերցնելով, նրա թորը (պարեւ է լինի՝ թորի կինը)\*, Մամիկոնյան տիկինը, որին Դիտրիկ՝ էին անվանում<sup>3</sup>, տարավ ամփոփեց Տարոն գավառի Աշտիշատ գյուղի Հանգստարանում. սա Հայրապետական աթոռին նստեց (ծ) Հիսուն տարի<sup>4</sup> <49>: Սակավ օրեր անց վախճանվում է նաեւ Հայոց մեծ վարդապետ Մեսրոպը՝ Քաղաքապաշտի (?) Վաղարշապատում, որի աճյունը ամփոփեցին Օշական կողջված՝ գյուղում:

Այստեղ դադարում է Հայոց թագավորութունը Արշակունյաց ցեղից, որ սկզբնավորվել էր Եգիպտոսի թագավոր Պաղոմնոս Եվրեպեսուս<sup>5</sup> Երկրորդի (ժր) տասներկուերորդ տարուց՝ եւ դադարեց Հունաց Թեոդոս թագավորի (Մ) քսանչորսերորդ տարում. եւ ընդամենը Հայոց՝ թագավորութունը (իմա՝ Արշակունյաց) տեսեց՝ (չծթ) Հինգ Հարյուր Հիսունիներ տարի (67)<sup>6</sup> <50>:

\* Ըստ Խոր.՝ Բրեյլու  
1 Խոր. Գ. 63-64:  
2 Տ.՝ եզ  
3 Չ.՝ չուէլ

4 Տ.՝ ի նոյն  
5 Տես Խոր. Գ. 64-65:  
6 Չ.՝ մովսէսի քեղապաշտի

\* Տես Մալխ. 39 եւ 67 ռոպորտութուն.  
\*\* Խոր. Գ. 42 (67)  
\*\*\* Խոր. Գ. 56 հրուանակ տարի  
1 Խոր. Գ. 68:  
2 Խոր.՝ Դաւրիկ  
3 Չ.՝ անուանել  
4 Խոր.՝ անս յիսուն եւ մի

5 Խոր.՝ Գ. 67  
6 Չ.՝ եղգատես  
7 Տ.՝ ամ է  
8 Չ.՝ թագաւորութեան ազգին Հայոց ողբ-  
յալունեաց  
9 Չ.՝ կայեաց

Արժանուրթի քաղաքներէից հետո եկած Հայոց իշխանների մասին եւ Հայոց այն հայրադէսների, որոնք հայտնուեցին սուր Գրիգորի սերնդին (68)

Իսկ Հայոց Արտաշիր թագաւորի մահվանից Հետո Հայոց նախարարները Հաւարգիցին եւ սուրբ Վարդանին, որը Մամիկոնյան տոհմից էր եւ սուրբ Սահակի թոռը, Հաստատեցին իրենց սպարապետ: Այնուհետեւ երբեմն Պարսից թագաւորութեանն էին Հնազանդվում եւ երբեմն էլ ապստամբում էին, ինչպէս որ մեզ ուսուցանում է եղիշն վարդապետի պատմութիւնը:

Սուրմակի մահվանից Հետո Հայոց Հայրապետները Հաւաքվում են եւ փնտրելով գտնում են ոմն Հովսեփ քահանայի, որը Վայոց ձոր գաւառի Հողոյիմ<sup>2</sup> դուղից էր եւ եղև էր մեծն Մարտիի աշակերտներից, եւ Վարդանի Հրամանով նստեցնում են կաթողիկոսական աթոռին. սա մնաց երկու տարի: Նա գումարեց Եւհայաբանի ժողովը, ուր տուգանքներով կանոններ<sup>3</sup> սահմանեցին: Իսկ սուրբ Վարդանը ի մի Հաւաքելով Հայոց բոլոր նախարարներին (ժթ) տասնուհին տարի եւ<sup>4</sup> պատերազմ է մղում Պարսից Հաղկերտ արքայի դեմ ու նահատակվում Հանուն սուրբ ուխտի եւ բրիտանական Հովաքի<sup>5</sup> Արտազ գաւառի Ավարայրի դաշտում:

Վարդանի պատերազմից Հետո երկու տարի անց սուրբ Ղեւոնդյանը, Հովսեփ<sup>6</sup> Հայրապետի Հետ միասին նահա-

1 Տ.՝ եւ եր երբեմն զի  
2 Տ.՝ Հարցանայ  
3 Տ.՝ կանոն

4 ի Տ.՝ գաղաթե՛ր եւ  
5 Տ.՝ Հուստայ  
6 Տ.՝ դեւոնդյանը յովսեփու

տակվեցին Հրոտից ամսի քսանեւթեցին, նույն Հուլիսի<sup>1</sup>, կիրակի օրը: Այդ բանը մենք ստուգեցինք եւ գտանք կատարված<sup>2</sup> թագաւորների տարիների մատչանում նշված, Հաղկերտի տասնհինգերորդ եւ Մարկիանոս Անիծայի (69) երրորդում: Իսկ Վարդանի մահվանից Հետո տասը տարի մեր երկիրը անտերութեան մատնվեց, բազմացան Հայաձանքն ու խոտովութունները. թեւեւ Հաղկերտը իր չար խորհուրդներից<sup>3</sup> փոքր-ինչ Հնադարտված, ամբողջ մեղքը ուրացող Վասակի<sup>4</sup> վրա է բարդում եւ Հրամայում է նրան քարշ տալ մեծ անարկանքով: Այնուհետեւ նրա որդի Պերոցը թագաւորելով, կապանքներից ազատ է արձակում Հայոց նախարարներին: Եվ Հայոց սպարապետութիւնը ստանձնում է Վարդանի որդի Մանգնոսը՝ քսան տարի:

Իսկ Տեր Հովսեփից Հետո Հայրապետական աթոռին նստեց<sup>5</sup> Տեր Գյուսար, որը Վանանդ գաւառի Ութման դուղից էր եւ մնաց տասը տարի: Այս ժամանակներում էր ապրում Հայոց մեծ փիլիսոփա<sup>6</sup> Մովսեսը\* <51>, որը Հետորական արվեստի Հիւմբը դրեց Հայոց մեջ. եւ ճշնահանգերձ Անտոնը, որ նույն ինչը՝ Թաթեպն է, սրանց Հետ, սասում է, թողեցին ամեն ինչ Հանուն Քրիստոսի սիրու, իր քահանա եղբայր\*\* Վարդանի Հետ միասին, գնացին ամենաճակակ<sup>7</sup> վայրերը, գազանների ու վիշապների Հետ բնակվեցին՝ այն նույն տեղը, որը այժմ Գազանաձակեր կամ Թաթեպի վանք է կոչվում:

Պերոցի քսանեւհինգերորդ տարում Հայերը ապստամբում են Պարսկաստանի դեմ, արշունահեղ պատերազմով

\* Իր Մովսեսը՝ Հայտնի չէ...

\*\* Չի բացատրվում նաեւ, որ ինչի արժու, երբ երբոր, պատմաւոր մաս (Դ. կդ)

Վերջն փոստը եղված չէ:

1 Տ.՝ Հրոտի... յուլիոսի

2 Տ.՝ եւ յ3 ամս

3 Տ.՝ խորհուրդն

4 Տ.՝ գլխուսկան

5 Տ.՝ արձակուրդ

6 Տ.՝ կայտու

7 Տ.՝ փիլիսոփան

8 Տ.՝ գեղարկ

դիմադրում են Վարդանի եղբայր Հմայակի որդի Վահանի գլխավորությամբ: Ահա սրա եղբայրներն էին քաջարի Վասակը, Արտաշեսն ու Վարդ պատրիկը, որ ուսուցանում է քեզ Ղազար Փարպեցին՝, նրանց խրատներով եւ պաշտպանությամբ առաջնորդում էր Հնեց ինքը՝ իմաստասեր Հանճարով սուղեցուն երանելի Հայրապետն Նովհան Մանդակունին՝, որը Տեր՝ Գյուտեց Հետո Հայրապետական աթոռին նստեց վեցը տարի՝: Այս ժամանակներում երանելի Տեսաճթազը, որը Արշարունյաց զավատի Կառցո՞ գյուղից էր, քաջարաբ մարտիրոսացավ, նահատակվեց Պարսից զորավար Զարմիր Հազարավոխտի՞ ձեռքով: Նրա նշխարները Հանգուտն են Շիրակ զավատի Բեռնոնս կոչված գյուղի եկեղեցում, որին էլ Տեսաճթազ են ասում՝:

Իսկ Պարսից Վաղարշ արքան լսող լինելով իր բարի խրատատուներին՝ խոսքերին Հայաստանը բարերարությամբ դարձյալ նվաճում է եւ բարձրապատիվ մեծարանքներով Հաշտություն է Հաստատում: Եվ իբրեւ այդ Հաշտության երաշխիք՝ [անցյալում եղածը] մոռացություն<sup>10</sup> տալու մտրահակ է կնքում: Եվ առավել չափով Վահանին Հարգելով, Անդեկանի ձեռքով նրան է վստահում Հայոց աշխարհի մարզպանությունը, որը տիրեց<sup>11</sup> երեսուն տարի:

Այս նույն ժամանակ<sup>12</sup> Մովսեսի եղբայր Մամբրեն, որի Համար ասում են, թե երրորդն էր Համարվում փիլիսոփա-

նների՝ մեջ, վերադառնում է Հայաստան, նաև Մովսեսի աշակերտ Դավիթը՝ Հարք զավատի Հերեան գյուղից: Սրանց օրերում էր ապրում երանելի Հովհան Մանդակունին, որը Արշամունյաց զավատի Ծախնոս՞ գյուղից էր, Հայոց Հավատի [վերարձրյալ] բազմաթիվ կարգեր սահմանեց. ցերեկվա եւ գիշերվա քարոզները, մկրտության կարգերը, սարկավազները, քաճանայինը, եպիսոպոսինն ու եկեղեցու օրհնությունը<sup>3</sup>, պատարագամատուցյցն ամբողջությամբ, որը ասում են, թե Աթանասի դրածն է: Եվ կամոքն Աստծո ինքն էլ վախճանվեց:

Նրանից Հետո կաթողիկոս եկավ Տեր Բարեկեր Վանանդ զավատի Ութմոս՞ գյուղից՞ երեք տարի՞:

Նրանից Հետո՞ Տեր Սամվելը, Բզնունյաց զավատի Արժկե(ն) գյուղից՞՝ տասը տարի:

Եվ նրանից Հետո՞ Տեր Մուշեն, Կոտայք զավատի Ալյաբերո՞ գյուղից՞ ութը տարի:

Եվ նրանից Հետո՞ Տեր Աահակը, Հարք զավատի Եղեղական՞ գյուղից՞ Հինգ տարի:

Եվ նրանից Հետո՞ փիլիսոփա Տեր Քրիստափորը, Բազրեանդ զավատի Տիրառնա<sup>10</sup> գյուղից՞ վեց<sup>11</sup> տարի:

Իսկ Վահանը Աստծո եկեղեցիները նորոգում ու լուսազարդում է, միաբանության պաշտոնյաներին<sup>12</sup> մեծարում է եւ մեր աշխարհը բարեղեն է դարձնում<sup>13</sup>: Իր իշխանության

1 Չ. աստ եւ ի տարե՛ն՝ փարպեցի

2 Չ. աստ եւ քի՛ն՝ յուճ

3 Տ.՝ Տեր Գիւտի

4 Ի Չ. յանկեղն էր աստ բան մի ողջին՝ «ճխարք սրտս ի յիսով... որ սեռանթազ ասեմ», քոր մեք եղար սակու մի տարեւ, զմի՛ բառից՞՝ «ի ցրտվարեն Գարսից»։ - Տես Գրում. Վարդանյան Բարձրբերդցույ լԺԹ 90:

5 Չ.՝ ի Կոչոց

6 Ի Ջու Միհրան Հազարաւոխտայ։ - Չ.

Ի գառն միհրն Հազարաւոխտայ

7 Ի Տ. պախաւէր, սիւսեղս ի բաղնիք՝ ել՝

խարք սրտայ

8 Չ.՝ բաղնիքառուցն

9 Տ.՝ նշանս

10 Չ.՝ մուրացութեան

11 Չ.՝ ստեփանայն

12 Չ.՝ մարզպանութեան, որպէ՛ս անայր

13 Տ.՝ յայնմ

1 Տ.՝ երրորդ գտակ փիլիսոփայ

2 Տ.՝ Մանուկայ

3 Տ.՝ եւ գրժութեան

4 Տ.՝ յն.թուայ

5 Հրատարակութեան անոց ամբողջութեան կաթողիկոսացն Հարք եւ քոնուսակ եղեմն լսու աշխարհ պատանակաւ ըստ ան՝ ի վերջն յայտ քոչոց, ի Վանիկ կաթողիկոսայ։

6 Ի Չ. պախաւէր՝ անք

7 Տ.՝ ի գեղեկէն

8 Ու՛ճ. կաթի՛ Ալյաբերդից

9 Ու՛ճ. կաթի՛ Եղեղական

10 Չ.՝ սիրաւոյ

11 Ի Չ. աստ եղեղն էր Հասուտան յարցութեան նշխարայն ու Թաղարի, ու Աստվանայ եւ ու Լուսաւորչեան քոր մեք թաղար քոս կարգին, որպէ՛ս Տ. անք։

12 Չ.՝ պաշտոնայն

13 Տ.՝ ունկեղով

ժամանակ Հայաստանի մեծ կաթողիկէ եկեղեցին նույնպե՛ս՝ դարձյալ մեծապէս նորոգում է, կրօնավորները դասկերբ բազմացրեց, որին Սուրենի անսպաս եւ անվանում, եւ նրանց վերակացու կարգեց ճարտասան եւ պատմագիր Դարգար Փարպեցուն: Սա Ալանաց նույնպէս արգելեց Հանդիսացալ (70): Այս նույն օրերին էր, որ արեգակը լրիվ խափարեց, որից Հնոտ սաստիկ սո՛վ եղաւ: Եվ Վահանը վախճանվում է փտաբով պսակված՝ թողնելով իր փոխարեն իր՝ եղբայր Վարդ պատրիկին՝ չորս տարի: Վահանի օրերում էր, որ Հայտնաբերվեցին սուրբ Թաղեւոս Առաքյալի, Սանդուխտ կույսի եւ մեր՝ Լուսավորիչ սուրբ Գրիգորի նշխարները:

Տեր Բրիտափորեց Հնոտ այդ օրերում՝ Հայոց Հայրապետ եկալ սուրբ՝ Դեռնդը Արեբանի գալտաի Փոքր Առեստա գյուղից՝ (իս) քանանիկ տարի: Այնուհետեւ Վարդ պատրիկից՝ Վահանի եղբորից Հնոտ Հայոց վրա տիրեցին պարսիկ մարդկաններ (ժա) տանանիկ տարի:

Այդ ժամանակ Բազրեւանդ գալտաի եպիսկոպոս Մովսես ճարտասանի աշակերտ եղբաւ Անդեղազին ճարտասանական դասերն է բազմապատկում: Եվ ապա եկալ Հայաստանին իշխան Մեծ՝ Գեռնելին՝ երեսուն տարի: Սրա յոթերորդ տարում Հայոց կաթողիկոսական աթոռին նստեց Տեր Ներսեսը՝ Բազրեւանդ գալտաի Աշտարակ գյուղից՝ ինը տարի: Սա իր Հայրապետութեան չորրորդ տարում եւ Մեծի իշխանութեան՝ տաններորդում Դպին քաղաքում՝ ժողով դումարեց՝ 52: ժողովում ամենապիտաւորներն էին Սյու-

նյաց եպիսկոպոս Պետրոս՝ քերթողը եւ Ներշապուհ Տարեւեցին, եւ՝ կարգեցին Հայոց թմականությունը՝ Հուսաի նրանոս կայսեր, որը սուրբ Սոփրան՝ կառուցեց, (ժդ) տասնեւչորրորդ եւ Պարսից արքա Կալատի որդի Խոսրովի (իդ) քսանչորսերորդ տարում: Այս նույն թմականին սուրբ Հեզիարուզիսը՝ վախճանվեց ի Բրիտոսոս: Իսկ Հայերը Հնեց այդ ժամանակ եւ այդ տարում անձառնվեցին Լուսնաց Հեռ Հաղորդությունից: Դա Լուսնաց թմականութեան (յզ) երեք Հարյուր չորս տարում էր, Փիլիպպոս կայսեր յոթերորդ տարվանից (71):

[Այսպիսով] Քրիչի ծննդից մինչեւ Դովին ժողովն՝ ու Հայոց թմականությունը (իս) նոր տոմարը) կազմում է ամբողջը (չձդ) երեք Հարյուր Հիսուներեք տարի. իսկ սուրբ Գրիգորի լուսավորությունից, որը մեր Հայոց աշխարհի աստվածամանաչութեան սկիզբն է, (մձբ) երկու Հարյուր Հիսուներկու [տարի է լինում]:

Տեր Ներսեսից Հնոտ Հայոց կաթողիկոս եկալ Տեր Հովհաննեսը՝ Գաբեղենից գալտաի Սյունձեղնո՞ւ՝ գյուղից, Թաթուլի վանքի՞՞ վանականներից՝ (ժ) տանն էհինգ տարի: Եվ սրանից՝ Հնոտ Տեր Մովսեսը՝ Արազածոտն՝ գալտաի Եղիվարդ գյուղից, (յ) երեսուն տարի: Այս Մովսեսն էր, որ սուրբ Կաթողիկոս՝ վանքի երեց Կյուրիոնին ձեռնադրեց Վրաց կաթողիկոս. սակայն Կյուրիոնը Մովսեսի վախճանվելուց քիչ ժամանակ ասալ բաժանվեց՝ ուղղափառ Հաճա-

1 2. պոզոս  
2 Ի Տ. պոկուսե՞ր՝ սոքոս  
3 3 Տ. սաս եւ գին՝ տրի, սոփ  
4 5. եղեթուսիս  
5 2. ի ժողով  
6 2. յոմաննս  
7 3. կաթ. Անձեթուս  
8 2. վանոց

9 3. կաթ. սոս 17:  
10 Ի 2. պոկուսե՞ր՝ սոքոս  
11 2. սոքոսանն: - Տ: սաս եւ գին Կ-  
մնայն ուրի՞ Արազածոտոց: - Աճ Կ-  
գաթ այսպէս յաս ուղղաթուրթեան, գր  
ուրի 2. ամնայն ուրի գինի:  
12 2. կաթուլիկի  
13 Տ: երկուսոցոց

1 Տ. նոյն  
2 Ի Տ. պոկուսե՞ր՝ սոքոս  
3 Տես յէջ 81, նաև 10:  
4 2. յայտով  
5 2. սուր Դեռնդ

6 2. վարգիս  
7 2. Հարտասանաց յազմացոց  
8 Տ. սաս եւ ամնայն ուրի՞ Մեծ  
9 2. իշխանութեան խոյոյ  
10 2. ի բազարին



տից<sup>1</sup> և ընդունեց Քաղկեդոնական դավանանքը:

Իսկ Տեր Մովսեսը բազմաթիվ անգամներ աստվածային խրատներով կշտամբում էր նրան, բայց ոչինչ չօգնեց. և ինքը վախճանվում է<sup>2</sup>: Ինչ վերաբերում է իշխանական կարգերին, ապա Միլէթեմ Գեունուց Հեսո շայտց աշխարհին տիրեցին պարսիկ մարզպաններ<sup>3</sup> 53>:

Նախ Դեհնապուհը, որը չնամուրթյունը<sup>4</sup> շատցրեց և Որմզդական Հուրը վառեց Ռշտուհրում<sup>5</sup>, ստիպում էր բրիստոնյաներին կրակին երկրպագել<sup>6</sup>, որի պատճառով շատերը մահացան: Եվ նրանից Հեսո<sup>7</sup> պարսիկներից ոմն Վարազդատ<sup>8</sup> նրա տոհմից. նրա ժամանակ չափազանց շատ մարդամահեր եղան<sup>9</sup> սաստիկ տանջանքներով: Ապա սկսեցին երկնքից Հրափայլ և արնազույն ահեղ նշաններ երեւալ<sup>6</sup>, որ երկարաձողվելով Հյուսիսային կողմից, անցնում էին արեւմուտքից մինչև արևելք, սյունաձև ցրվանալով ամեն դիշեր<sup>7</sup> ութ ամբա շարունակ:

Այնուհետև Պարսից Խոսրով արքան յուր ազգական ոմն Սուրենին, որ կոչվում էր նաև Ծիհւովր-Վշնասպ<sup>8</sup>, ուղարկում է Հայոց Հազարապետ: Սա եկավ տիրեց մեր երկրին<sup>9</sup> խոտաղոյնա Հարստահարելով Հայոց նախարարներին. շնանում էր ազատների կանանց Հեսո, թույլ չէր տալիս տղամարդկանց տեր կանգնելու իրենց կանանց: Դրա Համար Վասակի որդի Վարդան ըզեշխը, Մամիկոնյան տոհմից, Հույժ զայրացած, Հարմար ժամանակի սպասելով, սուսերահար է անում<sup>10</sup> Սուրեն մարզպանին (և)<sup>10</sup> երկիր տա-

պալում<sup>1</sup> Խոսրովի թագավորության քառասունեկերորդ<sup>2</sup> տարում, որը Հուստինիանոսի<sup>3</sup> թագավորության յոթնետորդ տարին է<sup>4</sup>, արեգի ամսի քսաներկուսին, որը փետրվարն է, երեքշաբթի օրը (72): Եվ Հայոց իշխանները միասնաբար ապստամբում են Պարսկաստանի դեմ, ձեռք են մեկնում Հույներին<sup>5</sup> և նրանց Հեսո միասին սաստիկ պատերազմ են մղում [պարսից] դեմ: Իսկ Վարդանն առնելով իր ընտանիքն<sup>6</sup> ու այլ պայազատների, փախչում Հանտում է Հունաց աշխարհը, թագավորանիստ Կոստանդնուպոլիս քաղաքը: Գնում ներկայանում է Հուստինիանոս թագավորին, որը սուր Սոփիան կառուցեց, Հաղորդվում է նրա Հեսո նրանց Հավատքով, որի պատճառով էլ սուրբ Սոփիայի սվազ դուռը կոչվեց նրա անունով և մինչև և օրս էլ անվանում են դուռն Հայոց:

Եվ սրանք են ժամանակները կոիվների ու երկպառակության<sup>7</sup>, անհամար սպանությունների, ունեցվածքի գերմարումթյան<sup>8</sup>, խռովությունների, կապանքների ու նեղությունների, պակասությունների, դաման սովի<sup>9</sup>, սրի ու մարդամահերի, ավանների ավերածույթի, շինությունների Հրդեհումների և<sup>10</sup> բազմաթիվ երկյունների անհամար վնասների, որ Հասնում էր երկու կողմերից. մոտացված էր աստվածապաշտությունը<sup>10</sup>:

Իսկ Տեր<sup>11</sup> Մովսեսից Հեսո Հայոց կաթողիկոսական դահին նստեց Տեր Արբաշանը՝ Ռշտունյաց գավառի Աղբաթան գյուղից, Սմբատ Բագրատունու կարգադրությամբ, ո-

1 2՝ Հուստոյ  
2 2՝ վախճանայ  
3 2՝ շեղութիւնան  
4 2՝ աննան ուրեք՝ յուտննիս, ըշուտննիք--  
5 2՝ երկրպագանկ

6 5՝ երեի  
7 2՝ դիշեր  
8 2՝ նիւովրնասպ  
9 2՝ անեղ  
10 Քաղաք սյունն ըտտ Տ.

1 2՝ ամի իս. երրդ - Տ. յամի քառասուն  
և միերորդի  
2 2՝ յուստինուս  
3 2՝ էր  
4 2՝ ետուն յուստինուս  
5 2՝ գնախոս  
6 2՝ մարտից, երկպատակութեանց  
7 2՝ գերութեանց սովից  
8 2՝ սովից  
9 2՝ պարսուէր՝ և  
10 2՝ սաստանապաշտութեան  
11 2՝ արք

ըր Խոսրովի՛ Հրամանով Հայաստանի մարզպանն էր: Այս Ամբաստը պատերազմ մղելով Վրկանաց աշխարհում, գտնում է այնտեղ Հայոց աշխարհից գեղի տարված ազգերի՛ (իմա՝ Հայազգի), որոնք բնակեցրած էին Թուրքաստանի անպատում, որը Սագաստան է կոչվում եւ մոռացել էին իրենց լեզուն ու հայերեն դարտւթյունը: Նրանց տեսնելով Ամբաստը շատ է ուրախանում եւ Հարել անունով մի քահանայի նրանց Համար վարդապետ է կարգում, որից ուսանելով Հայերեն դարտւթյունը՝ մինչևս այսօր սուրբ Գրիգորի՛ Հովաքորին կանգնած են: Եվ Աբրահամ Հայրապետն էլ բազում ջանքերով հոգ էր անում՝ Վրաց աշխարհի Համար, սակայն չկարողացավ Հետ դարձնել նրանց իրենց [խոսոր] ուղուց, ուստի աստվածային սրով Հատեց եւ ամենայն Հայոց միարանությամբ նզովեց [նրանց]: Բայց Մորիկ կայսրը ոմն Հովհանի կաթողիկոս է կարգում Հունական բանուում, իսկ Աբրահամը նստում էր Դիլինում: Ապա Աշտո անունով մեկը, ուղարկված Պարսից Խոսրով արքայից, (և)՝ Հալածում է Հույներին, գրավում է Հաշտակների կիթրիճ (?) քաղաքը, Կարին՝ քաղաքը նույնպես, գերում է Հովհան կաթողիկոսին՝ եկեղեցու՛ ամենայն սպասավորներով Հանդերձ եւ տանում է Ահմատան շահաստանը՝, սա տիրեց աթոռին (ժգ) տասնեւվեց տարի՛: Իսկ Աբրահամը՝<sup>10</sup> վախճանվում է՝ Հայրապետական՝<sup>11</sup> ամբողին նստելով (իգ) քահաներեք տարի: Սուրենի սուսերահար լինելուց Հետո Պարսից թագավորն այլևս պարտիկ մարզպան չի ուղարկում Հայաստան, այլ

Հայ նախարարների խնդրանքով մեր աշխարհին տիրակալ է Հաստատում Դավիթ Սահառունուն, որը Պարսից Խոսրով արքայի որդի Որմիզդի Հրամանով Հայոց Հագարապետության պաշտոնը վարեց երեսուն տարի: Սրա տասներկուերորդ տարում երեսուցե<sup>5</sup> Արդլայի որդի Մահմետը՝ (կը) վաթսուներեթ թվականին՝, եւ Իսմայելի՛ թագավորության սկզբը լինում է (Հը) յոթնասուներկու թվականին: Իսկ Տեր Աբրահամից՝ Հետո Հայոց կաթողիկոս եկավ Տեր Կոմիտասը՝ Արտազատոս գավառի Ազից գյուղից եւ նստեց ութը տարի՝<sup>55</sup>: Սա էր, որ գեղեցկագիր շինվածքներով՝ վերահասուցեց սրբուհի Լուսինեի՛ Հանգստարանը, քանզի արդեն խարխված էր սուրբ Սահակի օտաջին կառուցածը: Սրա ժամանակ փայլեց վարդապետությամբ Հովհան Մայրազոմեցին՝, որին էր Կոմիտասը Հավատ բնծայել կաթողիկոսությունը: Նա զրել է երեք՝ աշխատություն, որոնց վրա, սակայն, չի վերադրել իր անունը՝ վախճանվով թե ժողովորդը չընդուներ. մեկը անվանեց «Ուրաս վարուց»<sup>6</sup>, մյուսը՝ «Հավատարմատար» եւ երրորդը՝ «Նոյնմակ»:

Այնուհետև նստեց Տեր Քրիստափորը՝ ազատ արբահամյան բարձից, Ապահունյաց գավառից, վեց՝ տարի: Սրան աթոռից գահընկեց արին, որովհետև խոտովթյուններ էր սերմանում իշխանների միջև. Հետագայում ուրիշ պատճառներ էլ էին նշում՝ Ապա՝ Տեր Եղըր Նիգ գավառի Փառամակերտ գյուղից, ստար տարի: Սա երբ զնացել էր Կարին քաղաք զիմավորելու Լերակ կայսեր, իր Հետ չէր

1 Ձ: Խոսրովայ  
2 Ձ: քաղաք  
3 Տես Յովհ. Կաթ. զը. ժէ:  
4 Ձ: քաղաք մեծացանայ  
5 Ի. Տ. սղոթաւէ՛ր եւ  
6 Ձ: կարեայ

7 Ձ: սղոթաւորք եկեղեցան  
8 Տ: եւ սղոթաւ ի Համատան  
9 Ձ: անս ց: - Եովհ. Կաթ.՝ անս քանս եւ վեց  
10 Տ: Աբրահամայ  
11 Տ: կարեայ զաթոռս անս

1 Ձ: ի նը.  
2 Ձ: խամայիթ  
3 Ձ: սըր  
4 Տ: յիսուանով  
5 Ձ: Լուսինեի  
6 Ձ: մայրազոմեցի: - Տ: մայրազոմեցի

7 Տ: գեղիս  
8 Ձ. սաս յաւեայլ՝ ի մրն գեղեղեցի աս յիկանայ: - Տես Եովհ. Կաթ. ժի:  
9 Եովհ. Կաթ.՝ անս երկու  
10 Տես Սեք. ԲԸ: - Եովհ. Կաթ. ժէ:

տարել սուրբ Գրիգոր [եկեղեցու] փակակալ Հովհաննիս (ի-  
մա՛ Մայրազոմեցուն), որը այդ ժամանակներում աստվա-  
ծարանական գրվածքների՝ իմացությամբ ամենակատա-  
րյալն էր, այլ իր Հետ էր վերցրել դիտությամբ ոմն կիսակա-  
տարի: Հասնելով ժողովատեղին՝ Հերակլը պահանջում է՝  
Հավատո ձեռնարկը: Բայց նրանք, որովհետև տգիտ էին  
աստվածային գրվածքների իմացության մեջ, խարվում են  
Առչների խորամանկությամբ, նվզում են բոլոր հերձվա-  
ծողական ազանդները, բացի Բաղդղոսի ժողովից: Հա-  
ղորդվում են [նրանց Հետ] նրանց օրենքների Համաձայն և  
մեծապատիվ փառքով վերադառնում: Ուտի և [Եզրը]  
Հավատի փոխարեն Կողբը ժառանգություն ստացավ:  
Նրան ընդառաջ՝ գնաց եկեղեցու ամբողջ միաբանությունը,  
բայց Հովհանը չգնաց: Իսկ երբ Եզրը դրա Համար մեղադ-  
րում է նրան, նա պատասխանում է. «Քավ լիցի ինձ Հա-  
ղորդվել նրա Հետ, որը մեր Հավատի ցանկը քանդեց»: Ա-  
պա բռնությամբ նրան սենյակը տանելով՝ Եզրը ասում է.  
«Ինչո՞ւ ես խրոխատեմ և ընդվզում ու չես ուզում տե-  
նել մեզ»: Իսկ նա ասում է. «Ոչ մի խրոխտանք ինձ մոտ  
չկա՞, այլ կամենում եմ ճշմարտությանը շատագուց լինե-  
լայց դու հիբավի Եզր կոչվեցիր, քանզի եզր Հանելով տր-  
հեցիր Հայոց՝ եկեղեցու Հավատը, մեր Հայրերի Հավատքի  
սահմանները՝ քանդեցիր, առաքելական ցանկը՝ խրամա-  
տով պատեցիր և Լեւոնի մարդաբալանի տոմարը կործանե-  
ցիր»: Եվ այս բոլորն ասելով՝ անարգանքով Հեռացավ նրա  
մոտից: Նա Հեռացավ գնաց բնակվեց Մայրո՞ մանրում, ա-

1 Ի Տ. դասակարճ գրոց  
2 Ձ. խեղբը  
3 Ձ. սաս և զինք՝ ընդ յուսոյ  
4 Տ. ոչ գոյ յիս  
5 Տ. գՀայաստանայս

6 Տ. քանից քահանայ: - Ձ. քակե  
քահանայ  
7 Ձ. ցցանցն  
8 Եովհ. Կաթ. ի Մայրոց վասն

կայն Եզրը այնտեղից Հայածում է նրան, փանքն անվանում  
Մայրո գոմ՝, Հովհաննիս էլ՝ Մայրազոմեցի՞: Բայց նա գնում  
է Գարդման՝ և առաքելաճան՞ Հանդիսավորությամբ ա-  
վարտում իր կյանքը: Սրա մասին տարածել են՝, թե իբր  
Հերձվածողական ազանդ է ներմուծել եկեղեցի, սակայն նրա  
արածը չէ, այլ նրա աշակերտներից ոմն Սարգիս անունով է  
արել այդ, որին Հովհանը Հեռացրեց՝ իր մոտից՝<sup>1</sup> <56>:

Գավիթ Սահառունուց՝ Հետո Հայոց իշխան եկավ Թեո-  
դորոս Ռչտունին՝ (իև) քանհինգ տարի. իսկ Եզրին Հաղոր-  
դում է Տայրի եպիսկոպոս Ներսեսը: Սա Արտաշատի վերա-  
պի վրա կառուցեց սուրբ Գրիգորի վկայարանը, ինչպես  
նաև սուրբ Գրիգորի Հրաչապայծառ եկեղեցին՝ Վաղարշա-  
պատի՞ առապարի վրա՞ զանազանակերպ Հորինվածքնե-  
րով՞<sup>2</sup> (իմա՛ Չվարթնոցը):

Այս նույն ժամանակներում Տանկաց ամիրապետը  
դուրս գալով Սիրն անապատից մեծ զորքով, Հարավային  
կողմից անցավ ծովը և դիմեց զեպի արևելք՝ զեպի Սինդ,  
զեպի Պարսկաստան, զեպի Սազատան՝<sup>3</sup>, զեպի Սրման ու  
Հնդկաստան և ավերեց ու զրեց, վերացրեց բոլոր թագա-  
վորութիւնները, բացի Հռոմեականից՝<sup>4</sup>: Այս ամենը տե-  
նելուց Հետո Ռչտունյաց տեր Թեոդորոսը<sup>5</sup>, որը Հայոց գո-  
բավարն էր, ուրիշ Համախոհների Հետ միասին Հեռացան<sup>6</sup>  
Հռոմեական կայսրից և Հնազանդվեցին տանիկներին:

1 Տ.՝ մայրազոմ: - Եովհ. Կաթ.՝ Մայրեզոմ  
2 Տ.՝ մայրազոմեցի: - Եովհ. Կաթ.՝ Մայրե-  
զոմեցի  
3 Ձ. ի գարման  
4 Տ.՝ առաքելախն  
5 Ձ.՝ Համարի  
6 Ձ.՝ Հարսանոց  
7 Եովհ. Կաթ.՝ մԸ:  
8 Ձ.՝ ստահունոց

9 Տ.՝ գորոյն Գրիգորի Վաղարշապատու  
առապարին  
10 Ձ.՝ արևմտմով  
11 Ձ. ի գարս և ի սազատան, ի սեյ...  
12 Տ.՝ Հռոմէացոցն  
13 Ձ.՝ Թէլուսիս  
14 Տ.՝ որ էր գորավար՝ Հայոց և այլոց Հա-  
մախորհեց (միաբանութեամբ) ի յոց  
կոչեալս:

Բայց Հերակլիթ թոռ Կոստանդին կայսրը մեծ զայրույթով գալիս է Հայոց վրա՝ Հոխորատով ամբողջութեամբ մեղսեղից բնաջինջ անել: Նրան ընդառաջ է գալիս Ներսես Հայրապետը, Համոզելով խաղաղեցնում է, ապա միասին գնում են Դվին քաղաքը, որտեղ կայսրը Հոռոմ քահանաներին հրամայում է եկեղեցիներում պատարագ՝ մատուցել. և նույն զավանդութեամբ իրար Հետ Հաղորդվում են կայսրն ու կաթողիկոսը: Դրանից շատերը գայթակղվեցին, որովհետև ութ օր շարունակ խորհրդի նստեց կայսրը, իրենց սովորութեան Համաձայն. բայց ճաշկերտյթի ժամանակ նա՝ արժատարՀանքի արժանացրեց Հայոց ազատանուն: Իսկ կայսրը վերադառնում է՝ Կոստանդնուպոլիս և իր զորքերից վերահացու թողնում Հայոց աշխարհում:

Այնուհետև ապստամբ վիշապը, չարագործ ղեւը, ատփածամարտ գազանը չէր դադարում իր խորամանկ շարախորհրդություններից, այլ անբուն աչքերով յուր մեջ երկնում էր զանազան Հայածանրերը Հայաստան աշխարհի Աստծո եկեղեցիների դեմ. քանզի Հերակլիթ թոռ Կոստանդինոսի՝ որդի Կոստանդինի՝ թագավորութեան տարիներին՝ սուրբազրեց իր բնական կախարհութեան աշրությունը՝ պշտորել մանկանց եկեղեցիների Հավատքը, իրեն գործակից դարձնելով Հայաստան աշխարհում գտնվող Հուռնական զորքերին, որովհետև օչ մի ղեկավար՝ Հայերը չէին ընդունում Տիրոջ արյան ու մարմնի Հաղորդությունը Հոռոմների Հետ: Եվ ահա նրանք ամբաստանագիր՝ են գրում Կոստանդնուպոլիս Կոստանդին թագավորին ու [նրանց] Հայ-

րապետին, թե. «Իրբն անօրեն ենք Համարված այս մեր աշխարհում, որովհետև անարժան են՝ դիտում Քրիստոս(ի) Աստծու ժողովը Քաղկեդոնի և տոմարը Լեւոնի, նզովում են նրանց ու այն բողոքին, որոնք նրանց օրինակով են խորհում Հավատի վերաբերյալ»: Այնժամ թագավորը, Հայրապետի Հետ միասին, հրամայում է Հրովարտակ զրել Հայաստանի սրբասեր կաթողիկոս Ներսեսին և Հայոց բոլոր եպիսկոպոսներին. Ռշտունյաց տեր մեծն Թեոդորոսին, որը մեր աշխարհի իշխանն ու բոլոր զորքերի զորավարն էր, նաև Հայոց աշխարհի բոլոր իշխաններին, որպեսզի Հոռոմների Հետ Հավատքի՝ միարանություն Հաստատեն և չմերժեն այն ժողովն ու տոմարը. և եթե զանմի իշխաններից Թրեւէ մեկը, որը կընդգրվեմանս՝ [այս] հրամանին, կըրկվի պատվից ու իշխանությունից, և նրա ամբողջ ինչքն ու ունեցվածքը արքունիք կընանգրավվի, ինքն էլ կտարվի թագավորի դուռն և այնտեղ պատասխան կտա՝: Այնտեղ մի ժարդ կար, որը Բագրեւանդ զավատի Բագավան գյուղից էր, ուսանել էր փիլիսոփայական արվեստը, և նրա անունը Դավիթ էր. հրամայում է նրան Հայաստան ուղարկել, որպեսզի զնա վերացնի Հակառակությունը և միաբանություն Հաստատի:

Եվ Հավաքվեցին աշխարհի բոլոր եպիսկոպոսներն ու իշխանները Դվին քաղաքում, Հայոց քրիստոսասեր և ճշմարտապատում կաթողիկոս Ներսեսի և մեր աշխարհի բարպաշտ իշխան ու զորավար Թեոդորոս Սահառունի՝ պատրիկի մոտ, որը Ռշտունյաց տերն էր, տեսան այնտեղ թագավորի հրամանն՝ ու լսեցին փիլիսոփայի խոսքը՝, որ ու-

1 Զ.՝ գոտորոգո  
2 Եովհ. Մաթ.՝ ԿՊ՝  
3 Զ.՝ իսկ զնայեալ կայսրն  
4 Զ.՝ Կոստանդի

5 Զ.՝ Կոստանդի - Սեր.՝ Կոստանդինայ  
6 Զ.՝ սյամ: - Զ.՝ տե: - Սեր ուղարկե-  
ցար ըստ Սերճոսի  
7 Զ.՝ արտոմարութիւն

1 Սեր. ուղարկոյն ունի՝ անտրոսան  
2 Զ.՝ Հուստոց  
3 Զ.՝ ընդգրկեցի  
4 Զ.՝ արայեմն

5 Զ.՝ պատհի  
6 Զ.՝ զհրաման  
7 Զ.՝ թանի փիլիսոփայն: - Զ.՝ պատն փիլիսոփայն յխորհույ: - Սեր.՝ պատն փիլիսոփայն

սուցանում էր երկու բնությունների բաժանմամբ վարդապետությունը՝ ըստ Քաղկեդոնի ժողովի<sup>1</sup> 13՝:

Եվ երբ լսեցին, Հանձն չառան փոխել սուրբ Գրիգորի ճշմարիտ վարդապետությունը Լեւոնի տոմարի Համաձայն: Ահա ամենքին էլ Հանձնի եղավ այդ ձևով պատասխան տալը [նրանց] խոսքերին և ցույց տալ իրենց ճշմարիտ Հավատի Հիմքերի՝ Հաստատուն լինելը, որ ընդունել էին Խրենց՝ առաջին և Հարազատ վարդապետներից: Բոլորը աղաչակ բարձրացնելով ասում էին. «Ավելի լավ է մեզ՝ մեռնել, քան թե սուրբ Գրիգորի վարդապետությունը փոխարինել Քաղկեդոնի ժողովի և Լեւոնի՝ տոմարի [զավանածի] Հետ»: «Ճշմարիտ Հույս է թվում մեզ՝ ամենքես իսկ, ով որ ցանկանում է ուղիղ ճանապարհը չըջախայնել՝ (ընթանալ), ինչպես առաքյալի խոսքն է ուսուցանում» (73): «Արդ աղաչում եմ ամեն բանից առաջ ընդունել աղոթքներս, պաղատանքներս, խնդրածներս, զհուճեակությունս բոլոր մարդկանց Համար, մանավանդ թագավորներին և բոլոր իշխանների Համար, որպեսզի Հանդարտությունը ու խաղաղությունը անցկացնենք մեր կյանքը՝ բոլորանվեր աստվածապաշտությունը ու սրբությունը»:<sup>2</sup> «Ահա, թեպետև մեր անարժան լինելը անասանան է, սակայն ի [վերուստ] մեզ Հրամայվածը շտապում են շուտափույթ կատարել (74)՝ աղոթել՝ բոլոր մարդկանց Համար, առավելապես քո աստվածընտիր թագավորության փառքի Համար, նաև բոլոր իշխանների ու զորքերի և Համընդհանուր սարսուխերի՝ աստծուց պահպանվող, ուր՝ Աստծո նկատմամբ սերը լի-

վին կատարյալ է և աստվածային պարզեւատուր չնորհնե-րը ձեր բոլորի վրա Հայտնի երևում են: Քանզի ահա մեծ և Հզորագույն թագավորությունը, բոլոր թագավորու-թյուններից առավել, որը ոչ թե մարդկային ձեռքով, այլ աստվածային աջով է պսակված, որին ոչ ոք և երբեք չի կարող փոխարինել, բացի միմիայն՝ Քրիստոսի թագավորու-թյունից: Սուրբ և ճշմարիտ քահանայապետություն՝ աստվածային շնորհով լցույն, նախարարներ և զորքեր բրիտանասեր, և ժողովուրդներդ բոլոր բազմությունները՝ Քրիստոս Աստծո ժողովուրդն են, իսկ մենք ձեր աստ-վածասեր թագավորության՝ փառքի լույսով պայծառացած, անխախտի Հավատով կայուն մնացել էինք դառնաչունչ և զմեզակ անօրեն Պարսից թագավորների մեջ: Տրովհետև երբ որ վերացրին թագավորությունը, կրաստի մասնեցին մեր աշխարհի բոլոր նախարարներին և զորքե-րին, սրախոյտող արեցին մեր բոլոր տղամարդկանց՝ ու կա-նանց, զերեվարեցին դյուղերի՝ ու քաղաքների բազմու-թյուններին, մնացածների վրա էլ սուսրբ՝ չորացնելով բազմաթիվ անգամներ շանք և թագավորն իրանց զեպի ժո-րությունը դարձնել, բայց չկարողացան [Հավատից] շար-ժել: Անօրենները ամաչեցին նույնիսկ՝ իրենց ունայնամ-տությունից, քանզի բրիտանեական՝ Հավատի նշանն իսկ ավելի զորավոր է, քան Հեթանոսների բոլոր թագավորու-թյունները. մինչև և որ Հրաման եղավ անօրենների թագա-վոր Կալատից և նրանից Հետո՝ էլ՝ նրա որդի Խոսրովից,

1 Զ: Հիմնադրություն

2 Սբ. 19

3 Ի Տ. սրբաբանի մեջ

4 Ի սուրբ արքայ սուր ցուտու՝ որ զսուկեակն է Կաթինե Հոտոտարանի: - Տես Ի Մատ. 73:

5 Ի փառաբանի մեջն յառկոյր՝ (և):

6 Տ: սրբապատի

7 Թուզի Պոլ. սու Տիմոթ. առաջին Բ. 1-2:

8 Տ: անկեպով

9 Զ: որ

1 Զ: միայն

2 Զ: մերոց աստուածասեր թագավորու-

թյունը

3 Զ: գայրս

4 Զ: զեղից

5 Տ: իսկ մնացելուց սուր և վերայ չորս-

ցուցույ

6 Զ: յառկոյր աստ՝ զիտ

7 Զ: և ամաչեցին ևս անօրենքին: - Տ:

Սուսե ամաչեցին անօրենքին

8 Տ: բրիտանեական

9 Տ: կորին

թիւ. «Յուրբարանցյուր՝ որ թող իր Հավատք պահի եւ այսու-  
հետեւ ոչ որ չհամարձակի նեղել Հայերին, ամենքն էլ մեր  
ճառաներն են եւ մարմնով մեղ են ճառայում, իսկ Հոգեւոր-  
բի Համար՝ ով որ Հոգին է դատում, նա գիտեմ, եւ նրանք  
[գիտեն]:»

«Այնուհետեւ դարձյալ Որմզդի որդի Խոսրովի՞ օրե-  
բուժ, Երուսաղեմի գերութիւնից Հետո, Խոսրով արքան  
հրաման տվեց արեւելյան կողմերի եւ Ատրեստանի բոլոր՝  
եպիսկոպոսներին Հավաքել արքունի դուռը. «Լսում եմ,  
ասում է, թե քրիստոնյաները երկու Հակառակ կողմերի են  
բաժանված եւ մեկը մյուսին է անարգում, որովհետեւ մի-  
մյանց իրավացի չեն Համարու՞մ, ուստի թող միարանու-  
թյամբ բոլոր մի տեղ Հավաքին»: Եվ եկան այնտեղ գու-  
մարվեցին ամենքը՝ եպիսկոպոսները, քահանաներն՝ ու այն  
կողմերի բոլոր Հավատացյալները: Եվ նրանց վրա վերակա-  
ցու կարգեց Սմբատ Բագրատունուն, որը նաեւ Խոսրովչ-  
նում էր կոչվում եւ արքունի բժշկապետն էր: Այնտեղ գե-  
րության մեջ էր գտնվում նաեւ Երուսաղեմի Զաքարիա  
Հայրապետը եւ ուրիշ բազմաթիվ իմաստասերներ, որոնց՝  
գերեզմարել էր Ալեքսանդրիա քաղաքից: Նրանց Հրամայում  
է Խոսրով արքան արդարամտորեն քննել իմանալ եւ ուղիղ  
ու ճշմարիտը ներկայացնել արքային: Երբ Հավաքվեցին բո-  
լորը արքունի դահլիճում, մեծ վեճ ու աղաղակ եղավ այն-  
տեղ, քանզի որ ոմանք ուղղափառության՝ դավանանքն ու-  
նեին եւ նախկին թագավորների զրոյ՝ ու կնիքով Հայոց աշ-  
խարհի Հավատքի՞ տակ էին միավորված. ոմանք նուստորա-

կաններ էին, ոմանք՝ էլ Սեւերիտյաններ եւ շատ այլ խառ-  
նիճաղանջ աղանդները՝ բազմութիւններ: Այնտեղ էր նաեւ  
Հրեապետը՝ իր Համազգայիններով, որ ստաջ անցնելով  
ամբաստանութիւն էին անում իրենց՝ բնական սովորու-  
թյան Համայն. «Չպետք է կոչել, ասում են, այն մարդուն  
Աստված»<sup>1</sup> (75): Եվ բազատում են նրա սասածները թա-  
գավորին: Թագավորը Հարցնում է. «Ո՞ւմ Հրամանով է նա  
եկել այնտեղ, թող գանահարեն նրան ու թող գնա, որտեղից  
եկել է»: Այդպես նաեւ մնացած բազմաթիվ աղանդները,  
բացի միայն նիխիականից՝, Կոստանդնուպոլսից, Եփեսոս-  
սիւրից եւ Քաղկեդոնիսից, որոնք Հրամայեց՝ քննել:

«Այդ ժամանակ այնտեղ էին գտնվում երկու մարդիկ,  
Հավատարիմ այրեր. Հայոց աշխարհի եպիսկոպոսներ, Մա-  
միկոնյանները՝ եպիսկոպոս Կոմիտասը եւ Ամատունիների  
Մատթեոսը, որոնք ուղարկված էին<sup>10</sup>, որպեսզի թագավո-  
րին տեղեկացնեն մեր աշխարհում տիրող բռնութիւնների  
մասին. նրանք իրենց Հետ վերցրել էին սուրբ Գրիգորի  
պատրաստի պատմութիւնները եւ ուրիշ<sup>11</sup> վարդապետա-  
կան պատմութիւններ: Թագավորը Հրամայում է Հայտնել,  
թե որ թագավորների օրերում<sup>12</sup> են տեղի ունեցել այդ ժո-  
ղովները: Ասացին, թե նիխիական<sup>13</sup> ժողովը Կոստանդնու-  
սի օրոք տեղի ունեցավ, Կոստանդնուպոլսի՝ Մեծն Թեո-  
դոսի, Եփեսոսի՝ Թեոդոս Փոքրի<sup>14</sup> եւ Քաղկեդոնիսի՝  
Մարկիանոսի»<sup>15</sup>: Պատասխան տվեց թագավորն ու ասաց.

1 Ձ.՝ ցիբարանցյուր  
2 Ձ.՝ խոսրովայ  
3 Ձ.՝ Կողմի գտնված  
4 Տ.՝ չհամարք

5 Ձ.՝ իրբուրք  
6 Ձ.՝ գրք  
7 Տ.՝ յուզարատութեան  
8 Տ.՝ Հուստոսյ

1 Ի Տ. քաղկեդոնի՝ ոմանք  
2 Ձ.՝ խառնաճաղանջ աղանդայ  
3 Տ.՝ Հայրապետ  
4 Ձ.՝ Համազգործ  
5 Տ.՝ Իբոց  
6 Տ.՝ սաս  
7 Ձ.՝ ցիկեդական  
8 Ձ.՝ Հրամայեց  
9 Ձ.՝ Մամիկոնից

10 Ձ.՝ գոր... էր  
11 Տ.՝ գայլ  
12 Ձ.՝ աւուրք  
13 Ձ.՝ նիխիա  
14 Ձ.՝ Եփեսոսի առ Թեոդոսի փոքր,  
Կոստանդնուպոլսի առ Մեծ Թեոդոսի  
15 Ձ.՝ սաս ունեց գէտասուածն՝ սթը Քաղ-  
կեդոնիսի բնուոնեկն էր... գոր Տ. գնի  
սպաւո մի խոսոյ. - Տես յէջ 96, Եւս. 3:



«Երեք թագավորների հրամանները (այստեղ՝ տեսականուերը) ինձ ավելի ճշմարիտ են թվում, քան թե մեկինը»: Եվ թագավորը նետորի մասին զբամաներից տեղեկանալով, թե ով է, որտեղացի է կամ որ ժողովից, թե ինչպես եղավ դա եւ՝ թե ինչեր խոսեց, հրամայում է նետորականներին դուրս Հանել և ստյանից արտաքսել:

Նույն ձեւով Հարց ու փորձ արեց Քաղկեդոնի ժողովի մասին, թե ովքեր էին այնտեղ գլխավորները, և թե իրականում ինչպես ընթացավ այդ ժողովը: Պարզաբանեցին նրան ամեն ինչ և եւ՝ սասցին, թե. «Ներկայինն ու Կոստանդնուպոլսինը՝ Հնեց իրենք՝ Կոստանդնուսն ու Քեոդոս Մեծ թագավորներն՝ էին. բայց Եփեսոսինը՝ Կյուրեղ Ալեքսանդրացի եպիսկոպոսը՝, Քաղկեդոնինը՝ ոմն Քեոդորեսոս՝ եպիսկոպոս, որը նետորինն էր քարոզում, նաև Աննա այնուով կաթողիկոսը՝, այլև ուրիշ բազմաթիվ եպիսկոպոսներ ու քահանաներ նրանց իշխանություններից, Արուստանից, Խուժաստանի կողմերից և ուրիշ աշխարհներից:

«Այդ պատճառով ինքուով արքան հրամայում է քանդել նրանց բոլորի եկեղեցիները. «Եթե Քաղկեդոնից ընդունելի էր, ապա այս թղթերն ինչո՞ւ չտարալի, ստում է՞, նաև այն՝<sup>10</sup>, ինչը ևս ճշմարիտ Համարեցի (իմա՝ նույնպես չտարալի), ուրմն երեք սուրբ ժողովներից՝<sup>11</sup> էլ դուրս է (76): Եվ սպանում է նրանց բոլորին սրով աստակեցնել, եթե՝<sup>12</sup> Հետ չզառնան իրենց մարտությունից և չկանդենն արքունական ուղիղ ճանապարհին՝<sup>13</sup> (77):

1 Տ.՝ թույն  
2 Ի Տ.՝ պոլսոսը՝ և  
3 Ի Տ.՝ պոլսոսը՝ և  
4 Տ.՝ եթե ներկայն և Կոստանդնուպոլսին  
5 Ի Տ.՝ պոլսոսը՝ Քոստանդնուպոլսին  
6 Տ.՝ Արևելյան կողմից Կոստանդնուպոլսին  
7 Տ.՝ Քաղկեդոն

8 Սեր. ու զբարեցնե ունի սասո՝ «Էր անց կրակ տեսանեաց կրակն զիբանս»: 9 Ի Ձ.՝ պոլսոսը՝ սոմ  
10 Տ.՝ սոմ  
11 Տ.՝ ժողովին: ՝ Տես թիվ 95: Մաս. 4:  
12 Տ.՝ թի  
13 Տ.՝ պոլսոսն: ՝ Տ.՝ պոլսոսն: ՝ Տես ի ծած. 77:

«Իսկ նրանց, որ Քաղկեդոնիեն՝ էին [ղավանում]՝ Իրեբիային՝, Ազվանքի կաթողիկոսին, որը Փայտակարանում էր՝ արքունի դասնը, և շատ ուրիշ քաղաքների եպիսկոպոսներին ու քահանաներին՝ Հունաստանի կողմերից եկած և այն իշխաններին, որոնք եկել էին Պարսից թագավորին ծառայելու Համար, նույնիսկ չկաքարը՝ (78) Հրամայեց սալ: Այնուհետև խնդրում է երկու կողմերի՝ գլխավորներին Հետևար (իմա՝ երզնմապոր, պրս.) սալ առ այն, որ ներկայանը Կոստանդնուպոլսի օրոք եղավ, (և)՝ Կոստանդնուպոլսինը՝ Քեոդոս Մեծին, Եփեսոսինը՝ (որը)՝ Քեոդոս Փոքրի և Քաղկեդոնինը՝ որ՝ Մարկիանոսի օրոք, և երբ այս բոլորը քննեց ու վերահասու եղավ, այն ժամ սասց. «Հապա նրանք (իմա՝ երեքը) ինչո՞ւ չսասցին երկու բնությամբ է բաժանված, ինչպես որ սրանք են ստում. Հայտնի է, ուրմն, որ մենք ևս պարտավոր ենք երկուսի բաժանել. երկու ընդունելի թագավորությունը և ոչ թե մեկ, և եթե որե՛ն է մեկը քննի [մարդկային] բնությամբ, ապա ևս նույնպես երկու բնություն ունեն, թեևնաև մեկնույն Հորից և մորից են, թեև Հոգի և մարմին են: Աստվածությունը, սակայն, որ ամենայն տեղ է, եթե ինչ որ ցանկանում է լինել կամ անել, բայց չի կարողանում, Հապա էլ ինչո՞ւ է Աստվածություն [կոչվում]:

«Այնուհետև Հրամայում է Հարցնել Երուսաղեմի Զարթիա Հայրապետից և էլի շատերից՝, որոնց Ալեքսանդրիա քաղաքից էր բերել, թե. «Ո՞վ է ճշմարիտը. արդարև սասցեք և երզնեք: Իսկ նրանք՝ պատասխան սալով ստում

1 Տ.՝ սաս յուսեցր ի փակագի՝ (ուճկին զբուսանութիւն) 5 Ի Տ.՝ պոլսոսը՝ և  
2 Տ.՝ վերջ 6 Ի Տ.՝ պոլսոսը՝ որ  
3 Տ.՝ զմիտարար: ՝ Տ.՝ դիտարար: ՝ Սեր.՝ չփայլարար: ՝ Տես ի Մաս. 78:  
4 Տ.՝ ինտար ի տէրանց կողմանց: ՝ Ձ.՝ 9 Տ.՝ նաքա

են. «Երբեք Աստծո առջև խոտորնակի ճանապարհով չենք գնացել եւ՝ ոչ էլ նա է բարիությամբ խոտորնակի ընթացել մեզ Հետ<sup>1</sup>: Բայց ահա Աստծո երկվորյան մասին ձեր առաջ ճշմարիտն ենք ասում. Ճշմարիտ՝ Հավատն այն է, որը երանելի Կոստանդինոսի ժամանակ Նիկիայում Հաստատվեց, եւ նրան Համամիտ<sup>2</sup> են Եւ Կոստանդնուպոլսիներ, Եւ Եփեսոսիներ, եւ նրանց Հետ էլ ճշմարտությամբ միաբան Հայոց Հավատն է: Իսկ Քաղկեդոնի տեսակետը նրանց Հետ միաբան չէ, ինչպես որ ձեր բարերարությունը արդեն գիտի<sup>3</sup>:

Այդ թագավորը Հրաման է տալիս քննել արքունի դիվանը, որտեղ փնտրեցին եւ գտան տեսողակներ<sup>4</sup> զբված ճշմարիտ Հավատի վերաբերյալ, որոնք միաբան են Հայոց<sup>5</sup> աշխարհի զավանանքին, որը կնքված էր Կապատ արքայի եւ նրա որդի Խոսրովի մատանիով: Այդ պատճառով Խոսրով արքան Հրաման է տալիս, թե. «Այն բոլոր քրիստոնյաները, որոնք իմ իշխանության ներքո են, պետք է ընդունեն<sup>6</sup> Հայոց Հավատը: Եվ նրա Հետ միաբան<sup>7</sup> լինեն Ասորեստանի կողմերում եւ Կայելով (79)<sup>8</sup> մետրոպոլիտոս<sup>9</sup> ու տասը ուրիշ եպիսկոպոսներ<sup>10</sup>, նրանց Հետ էլ միաբան նաև աստվածասեր Եփրեմ<sup>11</sup> թագուհին եւ քայն Սմբատն ու մեծ բժշկավարը: Իսկ ուղղափառ խոստովանության պատճենը Խոսրով արքան Հրամայում է կնքել իր մատանիով եւ պահել արքունի գանձատանը: «Եվ այժմ, երբ Աստված<sup>12</sup> Հանց մեզ Հավատի թագավորությունից եւ արժանի արավ ծառայելու

ձերդ երկնաբնակ թագավորությանը, որքա՞ն, ուրեմն, աստվել քան աստվել արժանի է խաղաղությամբ վայելել, որով եւ՝ պարտավոր ենք աղթել եւ խնդրել Քրիստոս Աստծուց՝ անչարժ եւ Հաստատուն պահել ձեր բարեպաշտ եւ աստվածասեր թագավորությունը եւ մոտ մինչեւ Հավոտյանս, ինչպես երկնքի Հարատեւությունը երկրի՝ վրա»... (80):

Իսկ կայսեր զիպուց Հետո ներքեսը, վախճանյալ իշխանների զայրույթից, փախչում է Տալք՝ իր Հայրենի գավառը: Եվ վեց տարի անց, Թեոդորոս զորավարի վախճանվելուց Հետո, վերադարձավ Հայաստան: Թեոդորոս Ռչտունու իշխանության այս նույն օրերում, (ձյ) ութսունվեց թվականին տաճիկներն առաջին անգամ երեւացին<sup>13</sup> Հայոց աշխարհում, Օմար ամիր-ալ-մուճնիայի<sup>14</sup> Հրամանով, որը երկրորդն էր Մահմեդից Հետո, իսկ (դե)<sup>15</sup> իննսուհինգ թվականին զարձյալ բազմաթիվ զորքերով եկան տաճիկները, գրավեցին Դվին քաղաքը, դերեցին (եռ) երեսուհինգ հազար մարդ, եւ այնուհետեւ տիրեցին Հայոց, Վրաց եւ Ազգանից երկրներին:

Ասկայն մեր Հայոց աշխարհը դուրս է գալիս տաճիկների տիրապետության տակից Հնազանդվում է կայսեր, եւ ներքեսի խնդրանքով Հայոց Հրամանատար (իմա՝ կառավարիչ) է դառնում Համազասպը (ճդ) Հարյուր չորս թվականին: Այդ բանը լսելով՝ ամիրապետը զայրացած կոտորում է<sup>16</sup> Հայոց պատանդներին՝ թվով (ոչէկ)<sup>17</sup> Հազար յոթ Հարյուր յոթսունուսուկոթ մարդ:

1 Ի Զ. պահանջ՝ եւ

2 Դեւ. ԻԶ, 27-28:

3 Տ.՝ Հասար հնարիտ

4 Չ.՝ մարտնի

5 Չ.՝ անասր է այս

6 Սեր. ունի զայս բան ստեղծել՝ եւ գտի

գտել պիկիտոն Հասար հնարիտ, եւ

թ փրոց Հասար ըստ միաբանութեան

Հասար աշխարհի Հայոց

7 Տ.՝ գ Հասար Հայոց կայցին

8 Տ.՝ մարտն էին՝ Սեր.՝ մարտնի

9 Տ.՝ Կամպաշով՝ Սեր.՝ Կամիշով

10 Չ.՝ մետրոպոլիտ

11 Չ.՝ եպիսկոպոս

12 Չ.՝ յիշէն

13 Տ. յոթերոր տոս՝ սոյժ

1 Ի Զ. եւ սու Սերվոսի պահանջը Հասարանի՝ սոյման է մեզ վայելել ի խաղաղութեան քր եւ

2 Սեր. 19.

3 Չ.՝ էլ

4 Չ.՝ մտայ ամիրապետայ

5 Չ.՝ Ի Դ. ամի

6 Տ.՝ կոտորեաց

7 Տ.՝ 777՝ Սեր. եւ Բովհ. Կաթ.՝ 1775:

Իսկ ինքը նույն ժամանակ սպանվում է իր զորքերի կողմից. սակայն Իսմայելի՝ այն զորքերը, որ ձեռնադատում էին, միաբանեցին կայսեր Հետ, Հավառացին Քրիստոսին եւ մկրտվեցին՝ (ժգո)՝ առանձնվեց Հազար Հօգի: Համագասպի կախանվելուց Հետո ներսնը նախարարների Հետ միասին խնդրում է ամբրապետից Համագասպի եղբայր Գրիգոր Մամիկոնյանին, որը Հենց նրա մոտ էլ պատանդ էր, նշանակել Հայոց իշխան. սա կառուցեց՝ Աբուճի կաթողիկեն: Ներսնի՝ [աթոռակալութունը] տեսւմ է տասը տարի. նրան աթոռին Հաջորդում է Անաստասը (ճի) Հարյուր քսան թվականին. սա ներսնի սենեկապետն էր, Մասյաջտուն՝ թագաւոի Ակոսի՝ գյուղից, որը եւ Ակոսի եկեղեցին վայելու՜ շինվածքով գաղղարեց: Սրա օրերում Հենց սուրբ Դավիթը Հովատաց:

Անաստասը մտածեց Հայաստանի Համար, ուրիշ ազգերի նմանությունյամբ, անչարժ տոմար Հաստատել եւ Հրամայեց Անանիա Նիրակացուն՝ կարգադրել քրանջիկ տեսքով քրոնիկոնը՝ (Ժամանակաւորությունը), որտեղ էլ Հաստատվում է մեր անչարժ տոմարը՝: Եվ Անաստասը՝ մինչդեռ խորհում էր ժողով գումարել եւ եպիսկոպոսներով Հաստատել քրոնիկոնը, եւ՝ վախճանվում է՝ աթոռին տիրելով վեց տարի: Սրա օրերում էր [ապրում] Փիլոն Թրակացին, որը Սոկրատի պատմութունը թարգմանեց Հայերեն լիզվով:

Նրանից Հետո եկավ Տեր՝ Իսրայելը՝ Վանանդ զալաոի Ութմա գյուղից, տասը տարի: Սրանից Հետո էլ Տեր Սահա՝

կը, որը Ջորաբորի Արքունահեն գյուղից էր եւ նստեց (ին) քսանՀինգ տարի: Սրա Հինգերորդ՝ տարում Գրիգոր իշխանը պատերազմում է Խաղիթների դեմ եւ սպանվում (ճ)՝ Հարյուր երեսուն թվականին:

Ապա (ճի) Հարյուր երեսունՀինգ թվականին Աշոտ Բագրատունին Հայոց իշխան եկավ երեք տարի: Այս ժամանակներում ասատիկ ավերմունք ու Հայածանք Հասան մեր Հայոց աշխարհին, որովհետեւ (ճը) Հարյուր երեսունչորս թվականին Հյուսիսային զորքերը տիրեցին Հայոց, Վրաց եւ Աղվանից աշխարհներին, որոնք Խաղիթը են կոչվում, եւ պատերազմում սպանվում են Հայոց եւ Վրաց՝ իշխանները: Իսկ Հուստինիանոսն իր թագազարության երրորդ տարում չափազանց շատ զորք է ուղարկում Հայաստան. Հրով ու գերեզմարությամբ բարուքանդ արին քսանՀինգ զավառներ եւ ութը Հազար երկ էլ գերեցին ու վաճառեցին: Ապա Հաջորդ տարի էլ ուրիշ զորքեր ուղարկեց՝ (խո) քառասուն Հազար Հոգի: Եվ մեծ խռովութուն էր տիրում մեր Հայոց աշխարհում, որովհետեւ տաճիկ զորքերը զալիս գերում են մի չարք՝ զավառները: Աշոտ իշխանը դուրս է դալա նրանց դեմ պատերազմի: Այստեղ էլ սպանվում: Իսկ Հայոց իշխաններից ոմանք անձնատուր՝ են լինում Տաճկաց՝ զորքին: Սակայն չորրորդ տարվա սկզբներին ինքը՝ Հուստինիանոսը մեծ բանակով շարժվում զալիս է Հայաստանի վրա՝ Արարտակ՝ <57> կոչվող լեռան կողմից՝ եւ իր զորքերը երեք մասի բաժանելով՝ ուղարկում է դեպի Հայաստան՝

1 Տ. անձնայն ուրիշ՝ իսմայելի  
 2 Սեր. Լե. Ա. - Յոզ. Կաթ. Ժթ:  
 3 Իսմ. Գրիգոր Մամիկոնյան - Չ. շինույ  
 4 սաս եւ ի սարքն՝ ներսնի  
 5 Տ.՝ Մասյաջտուն  
 6 Չ.՝ սկուռույ  
 7 Տ.՝ վայելուչ շինույ

8 Չ.՝ չրոնիկոն  
 9 սաս եւ ի սարքն՝ քրոնիկոն  
 10 Տ.՝ գումար  
 11 Չ.՝ սնատու  
 12 Ի Տ. սպիտակը՝ եւ  
 13 Ի Տ. սպիտակը՝ անը

1 Յոզ. Կաթ.՝ իսմայելորում ամբ  
 2 Չ.՝ ճի. թվին  
 3 Տ.՝ սպանին գերեզման Հայոց ի պատերազմին եւ զՎրացն: - Չ.՝ եւ վրաց: - Յոզ. Կաթ. Ի:  
 4 Չ.՝ սպիտու գուստու: - Թուր՝ ոչ անգուստ  
 5 Չ.՝ անձնատուր  
 6 Չ.՝ Հայոց  
 7 Չ.՝ ի կողմ մի: - Տ.՝ ի կողմ  
 8 Չ.՝ թագաճ  
 9 Չ.՝ Հայոց այլայլին

Վրաստան եւ Արզնանք. սպա կանչում է իր մոտ այդ երկրների բոլոր իշխաններին, եւ նրանք ոչ թե իրենց կամքով, այլ Հարկադրաբար գնում են նրա մոտ: Իսկ նա իշխաններից ամանց իր Հեռ վերցնելով, մի քանիսի որդիներին էլ իր բեւ պատանդ՝ առնելով, որոնց թվում նաեւ Հայոց կաթողիկոս Սահակին՝ Հինգ եպիսկոպոսներով Հանդերձ, պահում է իր մոտ. մնացած իշխաններից ամանց արքունաշուք պատարագով պատվում եւ Հաստատում է այդ երկրներին կուսակալ՝ Կապույտբոցի՝ կոմս եւ Երբակի տեր Ներսէզին՝ Հայոց իշխան, պատրիկ էքսարխոս Վարազդատին՝, որը թագավորի երկրորդն էր, կարգում է Արզնանի իշխան. երեսուն Հազար զինվոր էլ իշխաններին օգնական է թողնում եւ ինքը վերադառնում Կոստանդնուպոլիս<sup>59</sup>:

Ներսէ Համասրականը Հայոց իշխան մնաց չորս տարի: Սրա օրերում փիլիսոփայական արվեստով Հռչակվում է Արշարունյաց քորեպիսկոպոս Գրիգորիւր<sup>60</sup>, որը ներսէ<sup>61</sup> Կամասրականի խնդրանքով՝ ընթերցված(ք)ներթ՝ մեկ նոթյունների գիտությունը պայծառացրեց (81): Նրանից Հետո՝ (ճխ) Հարյուր քառասուն թվականին Հայոց իշխան է նստում Սմբատ Բագրատունի Բյուրապոլյանը եւ տիրում քսան տարի: Այնուհետեւ Հայոց նոսրեկան եկավ Արդա ա նունով մեկը, բռնեց Հայոց իշխաններին եւ տարավ Դա մակոս: Սրա ձեռքով նահատակվեց սուրբն Դավիթը՝ Դվին քաղաքում: Բայց այս նույն օրերում՝ տեղի է ունենում Վարդանակերտի կռիվը, որտեղ կոտորվում եւ բնա-

ջինջ է լինում Իսմայիլի ամրոցը զորքը: Տաճիկների զորապետն Օկրան Կամասրականներից վտարված գնում է այդ դույժը Հաղորդելու ամիրապետին, որը սաստիկ զայրացած, մեծաքանակ զորք է ուղարկում Հայաստան՝ Հրդեհելու, քանդելու, կործանելու Աստոծ եկեղեցիները Հայաստանի:

Արդայի կոսմից զերված Հայոց Սահակ կաթողիկոսը, որ իբրեւ պատանդ պահվում էր Դամասկոսում, Օկրայի սպառնալիքները լսելով՝ թույլատրեց ինքն էլ խնդրում նրա մոտ գնալու, միգուցե կարողանա [չար մտքերից] նրան Հետ դարձնել: Եվ նա թույլ է տալիս: Բայց երբ Հասնում է Խառան, Հիվանդանում է եւ իր վերջին խոսքերում զրով Հայտնում է Օկրային, որ սա Հիշի ժողովուրդների մահն ու դժոխաց տարատորք<sup>2</sup>, նաեւ իր օտար աշխարհում մահանալը. սպա Հրամայում է, որ այդ Հրովարտակը զնեն իր աջ ձեռքում, որպեսզի երբ Օկրան գա, վերցնի: Իսկ Օկրան, երբ լսում է սուրբ Հայրապետի մահը, Հրամայում է պահել մինչեւ իր զայր. եւ երբ եկավ ու տեսավ Աստոծ մարդուն, նրա ձեռքը թափ տալով ողջունում էր՝ Սալամ ալեք աեւ լով: Եվ նա պաղատանքով շարժում է իր ձեռքը՝ սուրբ Հոգու ազդեցությամբ: Դրանից արաբախած՝ վերցնում է նամակն ու կարդալով ստում. «Այս քո խնդրանքը կկատարվի, ո՛վ Աստոծ մարդ». ու նրա մարմինն ուղարկում է Հայաստան, Հետն էլ՝ խաղաղության զայնպիսի, որով խոստանում է ներել նրանց Հանցանքները (82):

Իսկ Տեր Սահակից Հետո (ճժր) Հարյուր Հիսունութը թվականին նրա աթոռին Հաջորդում է Եղիան՝ Բզնունյաց Աղիովիտ եպիսկոպոսությունից, Արճեչ գյուղից, տասներեք<sup>3</sup> տարի: Սա Արդւմելիքի՝ Հրամանով Պարտավ քաղա-

1 Տ.՝ պատանդ

2 Տ.՝ իշխան

3 Տ.՝ կառուցուում: - Չ.՝ կողորդեց: - Մեր աշտին եկաք բոս ընկերքու անայ կրկնորք ձեռագրին նախինն Հրատարակին եւ բոս օրինակն Բրտակի: -

(Տես ի օւոս. Թարգմ. Աստվան, չԷն 82. Մեւ. 58.)

4 Չ.՝ վազատ

5 Չ.՝ ներսէի: - Տ.՝ ներսի՛

6 Չ.՝ գր ընթերցանաց

7 Տ.՝ սուր

1 Չ.՝ տարտուոս

2 Չ.՝ արտուցեալ: - Թու՛ր՝ արտուցեալ

3 Յոգ Հ. Կաթ. ՄԼ.

4 Չ.՝ արզմեյոց

քում ժողով գումարեց եւ Աղվանքի ներսն Բակուր զկաթողիկոսին՝ ուղարկել տիեզ ամիրապետի մոտ, քանի որ ճգտում էր Աղվանքը քաղիկոսնիկ դարձնել:

Նրանից Հետո նստում է Տաշիրը զավտար Օձուն գյուղից մեծ փոխտոփա Տեր Հովհաննեսը՝ (ժա) տաննեմակ տարի: Սա Ամրատի իշխանութեան օրերում Հարքի սահմանազխի Մանազկերտ քաղաքում Հայաստանի բոլոր եպիսկոպոսների ժողով գումարեց, որոնք Հետ էին նաև Արշարունիքի քորեպիսկոպոս Գրիգորիս փոխտոփան եւ Ասորոց վեց եպիսկոպոսներ՝ Հակոբիկ տանից (իմա՝ աղանդից)՝ Իրոնց պատրիարքի կարգադրութեամբ, որպեսզի այս աշխարհի երեսից սրբն քաղիկոսնական երկարնակ խոստովանութունն ու պատիվբանը, որ խմորով ու ջրով ապականում է սուրբ Խորհուրդը, այլև ձկով, ձկնով ու դինիով՝ քառասնորդաց՝ պահքն ու այլ օրերի Համար սահմանվածները, որոնք Եզրի օրերից՝ մինչև եւ այժմ մնացել էին մեր Հայոց աշխարհի Հունական մատում: Այս բոլորն իրբեւ Հին թթխմոր բոլորովին մերժեցին. սահմանեցին Հավատի խոստովանութուն՝ մի բնութեամբ մարմնացած Բանն Աստծո եւ առանց խմորի ու ջրի կատարել սուրբ Խորհուրդը եւ պահոց օրերը սրբութեամբ տանել մինչև վերջ. բայց միայն Հիվանդների եւ մարմնասեր իշխանների Համար թողեցին շաբաթն ու կիրակին՝ ի բայց սոյալ կեղեցու մանկանց ուխտի եւ Քրիստոսի ճգնավորների [օրերը]: Եվ ինքը՝ Հովհաննեսը, խիստ պեղեցիկ էր տեսքով, լիցուն ամենայն առաքինութիւններով. կրում էր այծենի զգեստներ, որի վրայից էլ պայծառերանց Նյութերով օծված Հագուստներով պճնազարդվում էր. եւ խարտոցով աղացած սուր մանրափոշին՝ անուշահամ յուրերով՝ շաղված, փչում էր ծաղկազարդ այլերներով մորուքին: Հովհաննեսի այս վայելչագեղութիւնը տեսնելով՝ Վլիթ ոստիկանը դնում եւ պատմում է Բաղդասի ամիրապետին: Իսկ նա խիստ տենչալով տեսքին նրա, կանչում է արքունի դուռը եւ ցանկանում էր սովորական զարդերով պճնված երեսալ՝ իրեն. բայց նա իր վիճականմ ու բարձր Հայացքով, առավել փայլուն եւ մաքրամաքուր զգեստավորված, ծագկուն ալիխառն սակփունջ՝ մորուքը Հարդարած եւ սակեկար՝ զավազար ձեռքին մտնում է արքունիք:

Նրա վրա Հիացած ամիրապետը մեծաշուք պատվով Հրավիրում է նստել եւ Հարցնում է, թե ինչու՞ եւ այդպես պճնազարդվի. չէ՞ որ ձեր Քրիստոսն ու նրա աշակերտները պատվիրեցին շատ չնչինով բավարարվել եւ աղքատ լինել: Իսկ նա պատասխանում է. «Այն Քրիստոսը թեպետեւ աստվածային փառքը յուր մարմնով ծածկեց, սակայն արտաքին նշանները նրան անողորմ եւ Հարկու էին ցուցանում. եւ աշակերտներն էլ նույն նշաններն՝ ընդունելով՝ տեսնողներին ահ էին ներշնչում: Բայց որովհետեւ մեր մեջ զնալով նվազեց այդ բաղմամբի նշանների ցուցադրանքը, այդ պատճառով էլ ահարկու Հանդերձներով սՀաս դիտողներին Աստծո երկյուղի վախն ենք ազդում, ինչպես որ դուք՝ թագավորներդ մարդկանց աչքին ահարկու երեսուր Համար եք սուկեմամուկ՝ ծիրանիով պճնազարդվում: Իսկ եթե ցանկանում ես իմ Հանդերձանքը՝ տեսնել, աՀա, նայի՛ր

1 Ձ.՝ եւրով  
2 Ձ.՝ ստն եւ ի ստորե՝ մուրացն, մուրուս  
3 Տ.՝ երեկ  
4 Տ.՝ սակփունե

1 Տ.՝ գիտթողիկոս  
2 Տ.՝ աղվանէկն  
3 Ձ.՝ քրտասնորդացն

4 Ձ.՝ յուրուս  
5 Ձ.՝ կիրակէ  
6 Ձ.՝ տեսանելով

5 Տ.՝ ցամփկար  
6 Ձ.՝ ցուցանէ  
7 Տ.՝ ցնոցն տեսնելով՝ նշանքն  
8 Տ.՝ սակփունեկ  
9 Ձ.՝ պղճաս

տես միայն»։ Եվ ամեն ինչ դեն նետելով՝ ջուլցադրեց իր [մարմնի վրայի] մեծածավալ քուրճը։ Դրա վրա զարմացած ամիրապետը յոթնապատիկ պճնազարդում է նրան եւ մեծաբանակ գանձերով՝ ուղարկում Հայաստան<sup>1</sup>։

Իսկ Ամրատից Հետո Հայոց իշխան եկավ Վասակի որդի Աշոտ Բազրատունին՝ (ժե) տասնեւհինգ տարի։ Մրվան ա-միր-ալ-մուսնիայի<sup>2</sup> օրերում սրան կուրացնում են Մամիկո-նյանները՝ իշխանության Համար ունեցած նախանձի պատ-ճառով։

Եվ նրանից Հետո՝ նրա<sup>3</sup> որդի Ամրատը, (իր) քսաներկու տարի (83)։

Իսկ Հայրապետների կարգը Հետեւյան է. Հովհաննեսից Հետո կաթողիկոս եկավ Տեր Դավիթը<sup>4</sup> Կոտայքի<sup>5</sup> գավառի Արամոնյաց<sup>6</sup> դյուղից, (ժզ) տասներեք տարի։ Եվ նրանից Հետո, (ճզ) Հարյուր իննսուն թվականին՝ Տեր Տրդատը, Վանանդ գավառի Ութմսո դյուղից, (իզ) քսաներեք տարի։

Եվ նրանից Հետո՝ Տեր Տրդատը Դասնավանք<sup>7</sup> դյուղից, երեք տարի։

Եվ ապա՝ Տեր Միտը Բավոնի<sup>8</sup> դյուղից, ութ տարի։

Սրա օրերում տեղի ունեցավ Թալինի կոտորածը, ուր սպանվեց (չ) յոթ Հարյուր եւ զերի տարվեցին Հազար երկու Հարյուր Հօզի։

Եվ սրանից Հետո (միա) երկու Հարյուր քսանմեկ թվա-կանին՝ Տեր Եսային, Նիզ գավառի Եղիպատրոս<sup>9</sup> դյուղից, տասներեք տարի։ Սա միամորիկ որդին էր մի այրի կնոջ, որ

1 Զ.՝ գանձի  
2 Եովհ. Կոթմ. ԻԲ.  
3 Զ.՝ ամբ մուսնայ  
4 Տ.՝ նորա  
5 Զ.՝ կուտից

6 Տ.՝ սրամունեցու. - Եովհ. Կոթմ.՝ Արամե-  
նից  
7 Եովհ. Կոթմ.՝ Ի Դասնաւորից  
8 Զ.՝ Ի բուսնայ. - Եովհ. Կոթմ.՝ Բուսնանայ  
9 Եովհ. Կոթմ.՝ յԱղաղատրոսի գեղջէ

աղքատության պատճառով մուրացիկ լինելով, ծծկեր՝ մանկան Հետ տարվեց կաթողիկոսաբանի տունը, բայց եր-բեք շենքից՝ ներս չմտավ, այլ ջրտին ու խորշակին տառա-պելով սպասավորում էր եկեղեցու դռանը։ Եվ երբ քահա-նաները Հարցնում էին, թե. «Ինչո՞ւ ես այդքան տանջ-վում», - նա պատասխանում էր. «Ար՞թե չեք Հասկանում, որ՞ կաթողիկոսության Համար եմ սնուցանում իմ որդյա-կին»։ Եվ նա ուսանելով նույն եկեղեցում՝ նախ Գողթնում եպիսկոպոս է ձեռնադրվում եւ ապա՝ Հայոց կաթողիկոս։

Սրանից Հետո՝ Տեր Ստեփանոսը Դվին քաղաքից՝ երկու տարի։

Եվ սրանից Հետո՝ (մի) երկու Հարյուր քառասուն թվա-կանին, Տեր Հակոբը վեց<sup>10</sup> տարի, որը Ոստանից էր եւ ապա-բանքի<sup>11</sup> կյուրապալատը։

Եվ ապա Տեր Սողոմոնը, Գասնի դյուղաքաղաքից՝ մեկ տարի։

Եվ ապա Տեր Գեորգը, Արագածոտնից, Աշտարակ դյուղից՝ երեք տարի։

Եվ ապա՝ Տեր Հովսեփը, որը Կարին էր կոչվում, Արա-գածոտն գավառի սուրբ Գրիգորի<sup>12</sup> դյուղից՝ (ժա) տասնե-մեկ տարի<60>։

Եվ ապա Տեր Դավիթը, Մազազ գավառի Կակազ<sup>10</sup> դյուղից՝ (իե) քսանեւհինգ<sup>11</sup> տարի։

Եվ նրանից<sup>12</sup> Հետո Տեր Հովհաննեսը, Կոտայքի գավառի

1 Տ.՝ արևոխայ  
2 Զ.՝ եւ ոչ մտու շեղ արվաւ  
3 Ի Զ.՝ պոպուսե՛ր զի  
4 Եովհ. Կոթմ.՝ ամիս վից  
5 Եովհ. Կոթմ. 1Ի4.  
6 Զ.՝ կուրապալատին  
7 Զ.՝ գեղաքաղաքին. - Եովհ. Կոթմ.՝ քա-  
ղաքաղաքին  
8 Զ.՝ եւ զինի սորայ  
9 Զ.՝ Գոթիսոյ  
10 Հովհ. Կոթմ.՝ Կակազայ  
11 Եովհ. Կոթմ.՝ ամս քսան եւ եպիւն. - Տեա  
Հովհ. Կոթմ. 1Ի4, 1Ի5.  
12 Տ.՝ եւ սուրբ



Ովայից՝ գյուղից՝ (իր) քաններկա տարի: Մրա ժամանակ  
Մամունիկ ամիրան եկավ Հայաստան:

Իսկ ըստ իշխանների կարգի այսպես է. Աշոտը՝ որդի Սմ-  
բատից Հնտո՝ նրա որդի Աշոտը, որ Մսակեր էր կոչվում՝  
քան տարի: Սա Կամսարականների տոհմից Արշարունյաց  
զավառը դանձադին առավ եւ արքունիքը Կողովտից Ար-  
շարունիք փոխադրեց:

Նրանից Հնտո եկավ նրա որդի Սմբատը, որը Ապարաս  
կոչվեց, երեսուն տարի: Սա մանկուց պատանդ էր՝ Սամա-  
րայում, արքունի դռանը, Հարուն՝ [այ] Ռայտի օրերում.  
սակայն (մեկ) երկու Հարյուր յոթնասուսունհինգ թվականին  
ազատ արձակվելով գալիս է Հայաստան եւ Արշարունյաց՝  
զավառում կառուցում է մի ձեռակերտ, որն անվանում է  
Աղբհկույս: Մրա օրերում, (մղ) երկու Հարյուր իննսուն  
թվականին, Խալթ իրն Եղիտը Հայաստանի ամիրա եկավ եւ  
բազմությամբ անցավ Վրաստան. բայց մահացավ Զավախ-  
բում, Խոզարիը կոչվող գյուղում:

Այս ժամանակներում, Տեր Հովհաննեսի Հայրապետու-  
թյան եւ Հայոց (յ) երեք Հարյուր թվականին ամիրայետ  
Ջափրը՝ Արուսեթ անունով մեկին ոստիկան է ուղարկում:  
Սա գալիս է Տարոն, ձերբակալում է Բագարատ իշխանին եւ  
ուղարկում Ջափրի մոտ: Բայց Տափրտ լուսնի ընակիչները  
ի մի Հավաքվելով, խռանամբոխ բազմությամբ Հարձակ-  
վում են, սպանում ոստիկանին ու նրա ամբողջ զորքին:  
Մնացածները դնում են եւ գույժը Հասցնում Ջափրին: Նա  
առյուծաբար զազանացած մեռնում է եւ՝ անհամար զորք

Հավաքում, տալիս է ընդոծին (իմա՝ որդեգիր-սպասավոր)  
ուն Բուդայի ձեռքը եւ ուղարկում Հայաստան: Հրամայում  
է նրան մեր աշխարհի իշխաններին իր մոտ ուղարկել,  
նրանց զորքերին՝ կոտորել. իսկ եթե որեւէ մեկը Մուհամե-  
տի Հավատն ընդունի, պատիվներ տալ եւ իր Հնտ տանել:  
Սա գալիս է Տարոն, կալանքի է վերցնում Բագարատի ե-  
րեք՝ որդիներին, առհասարակ կոտորում է խուլթեցիներին՝  
Վաչգիեակ կոչված լուսնի վրա: Առաջ շարժվելով բռնում է  
Հայոց թուր իշխաններին, նաեւ Արժրուշտյան Աշոտ իշխա-  
նին՝ Դերեկիկի Տորը. Աշոտ թագավորի Հայր եւ Հայոց  
սպարապետ Սմբատին, Սյունյաց Վասակ իշխանին եւ՝  
Գարգմանի իշխան Կարիճին, Խաչենի Ատրեմբեհ Հիշա-  
նին, Աղվանքի Ետայի իշխանին եւ Սևուրյաց Ստեփանոս  
իշխանին, որին Կոն էին կոչում. սա Բրիտանոսից պսակն ըն-  
դունեց՝ նահատակությամբ Սամարա քաղաքի արքունի  
դռանը: Մրանց թուրքին եւ շատ ուրիշները՝ երկաթյա կա-  
պանքներով քշեց տարավ Սամարա՝ ու մեր ամբողջ երկիրը  
գերեց:

Չեռք մեկնեց նաեւ եկեղեցուն՝ իրենց մուր պաշտա-  
մունքին՝ դարձնելու մտադրությամբ. սպա ընտրեց դեռա-  
հասներին ու վայելչատեսներին, բանտային խոշտանգում-  
ների ենթարկեց, [տախպում էր] ուրանալ Բրիտանոսին:  
Բայց նրանք քաժությամբ տարան նախատիքն ու չարչա-  
րանքը, գեղարաններն ու բազում տանձանքները, իրենց ցա-  
վերն արհամարհեցին, անպատ կամբով դիմանում էին եւ  
մահը խնդրությամբ էին ընդունում: Դրա Համար կատարած

1 Տ.՝ միայն  
2 Չ.՝ ստոթ  
3 Ի Տ. գրված է՝ էր  
4 Չ.՝ ի սամարայ-- յուսուբ ընտանին եւ

Հարունյ - Տ.՝ Հարոնյ  
5 Չ.՝ արշարունյաց  
6 Չ.՝ խոտայի  
7 Ի Չ.՝ գրված է՝ եւ

1 Չ.՝ զոր  
2 Չ.՝ վերն  
3 Ի Տ. գրված է՝ եւ  
4 Տ.՝ բազում

5 Չ.՝ սամարայ, սամարայ  
6 Ի Չ. պակտը՝ որիսայ  
7 Չ.՝ հղանայ

բռնավորը հրամայում է բոլորին կոտորել. և նրանք կատարյալ քաղութիանը պահեն ընդունեցին Քրիստոսից:

Արանց մեջ էին նաև յոթ տղամարդիկ, որոնց գլխավորին Աստուծ էին կոչում, որը Աղքատի՛ գավառի Ոսկրան՛ գյուղից էր. և որովհետև չափազանց զվարթատեսք էին և կովի մեջ էլ կարի քաջագույն, ուստի նրանց մյուսների հետ չսպանեցին, այլ ձգտում էին ուրացություն պարտադրել. սակեղեն և արծաթեղեն անհամար գանձեր էին տալիս, խոստանում էին արքունիքի կողմից գյուղեր և զերդաստաններ [նվիրել]: Սակայն քաջ նահատակները առավել քան պայծառանում էին՝ խոստովանությամբ դեպի Քրիստոսը. ուստի և սաստկապես զարթացած բռնավորը դառը տանջանքներով խոչտանգում էր նրանց, որը մարդկային լեզուն չի բավականացնում պատմել: Բայց անմահության հույսը, սերը Քրիստոսի նկատմամբ և մարտիրոսանալու ուրախությունը թեթեւացնում էին՝ նրանց անհնարին տանջանքները<sup>1</sup>. և զգաճանցած բռնակալը հրամայում է խաչել նրանց: Իսկ սուրբ Աստուծ խաչակալայտի՛ վրա պրկվելով քաջալերում էր իր ընկերներին՝ ասելով. «Ար՛ք՝ երկնչեք, եղբայրներ՛, որովհետև թեպետև տանջվում ենք, սակայն զբանով Հաղորդվում ենք կենդանի Աստծո հետ». ապա դառնալով դեպի երկինք ասում էր. «Գոհություն եմ Հայտնում քեզիցից Քրիստոս՝ իմ հույս, որ սուրբ Գեորգի<sup>2</sup> այս տոնին ուխտավոր լինելով՝ նոխազներ ու զտոներ եմ մատուղ անում քո անվան փառավորությունը. ահա, ինքս ինձ եմ իրբև. զոհ բոլորակվեր մատուցում քեզ. ընդունի՛ր, Տե՛ր, և խառնիր մեզ քո սրբերի շարքում»: Եվ այսպես քստ

ամենայնի Հաղթանակ՛ տանելով, պիանդեցին իրենց Հողի՛ները<sup>3</sup> և պսակվեցին Քրիստոսից Հայոց (ժր) երեք Հարյուր երկու թվականին՝ ավելի քան (ՏՏ) Հարյուր հիսուն տղամարդիկ. որոնց անունները գրված են անմահների մատյանում: Ապա Հովհաննես Հայրապետը նրանց հիշատակի օրվան նվիրված պաշտամունքի տոն սահմանեց ամեն տարի մեհական ամսի քսանհինգին<sup>4</sup> ի փառս ամենակալ Աստծո՞՛:

Եվ նույն ժամանակ շարժվում գնում է Տիգրիսի վրա և Իսմայիլի՛ որդի Սահակին Հանում է [խաչա]փայտին: Այնուհետև անցնելով Պարտազ, սրով նահատակում է վանանդեցի Մակաթիին, որը մարտիրոսացավ Քրիստոսի Հավատի համար ունեցած բարի խոստովանությամբ:

Իսկ Հովհաննեսն իր Հայրապետության (իե) քսանեւհինգ՝ տարին լրանալուց հետո, Հայոց (յր) երեք Հարյուր երկու թվականին, փոխվում է այս աշխարհից: Եվ Սմբատ սպարապետը եպիսկոպոսներին հրամայում է Հավաքվել և Ջաբարիային ձեռնադրել կաթողիկոս, որը կոտայքի գավառի Չազ գյուղից էր. սա տիրեց (իր) քսաներկու տարի: Նա մինչև. Հայրապետ գառնալը քահանայություն կամ սարկավազություն ոչ մի աստիճան՝ չէր ունեցել, սակայն անարատ կյանք վարելով՝ մեկ օրում (իմա՝ միանգամից) պատվական բոլոր աստիճաններին արժանի եղավ: Ապա սպարապետ Սմբատը Բուզայի հետ գնում է Ջափր ամիրպետի մոտ, իսկ Հայոց սպարապետ է դառնում Սմբատի որդի օրհնյալ Աշոտը, որը հետագայում թագավորեց Հայաստանում:

1 Զ.՝ ի սուրբակ  
2 Զովհ. Կաթ.՝ յնորբանս  
3 Զ.՝ թեթեւացուցեղք

4 Տ.՝ գիշան  
5 Տ.՝ ի փայտին  
6 Տ.՝ Գեորգեայ

1 Զ.՝ տղութայ  
2 Զ.՝ զոգիս  
3 Տ.՝ ի 27 մեհակայ  
4 Զովհ. Կաթ. ԿԵ:  
5 Տ.՝ իսմայիլ

6 Զովհ. Կաթ.՝ անս քսան և. երկու  
7 Տ. աստ և. ի սուրբև.՝ տղաբնև, այլաբ.  
ճանայն  
8 Տ.՝ աստարտո ի փառս կեցեայ

տանում: Բայց Հայոց այն իշխանները, որոնք<sup>1</sup> առաջ գեր-  
ված էին Բուղայի կողմից, մի քանի տարի Հնոտ յուրաքան-  
չյուրը<sup>2</sup> վերադարձավ իր երկիրը. բացի Սմբատից և Ստե-  
փանոս Կոնից, որոնք<sup>3</sup> Սամարայում նահատակվեցին  
Քրիստոսի խոստովանությամբ:

Եվ ահա, Հայոց (յժա) Հարյուր տասնևմեկ թվականին  
Ամիր-ալ-մուսնի<sup>4</sup> նստեց Ահմատը. որ Հայոց աշխարհը  
Հանձնեց Յահեբի<sup>5</sup> որդի Ալեին: Սա Սմբատի որդի Աշոտին  
Հաստատում է Հայոց իշխանաց իշխան, որ իշխանաց իշ-  
խան մնաց (իե) քանհինգ<sup>6</sup> տարի<sup>7</sup> մինչև (յլը) երեք Հա-  
րյուր երեսունվեց թվականը, և այնուհետև թագավո-  
րեց՝ 61:

Սրա օրերում (յժբ) երեք Հարյուր տասներկու թվակա-  
նին, Քառասներորդաց<sup>8</sup> պահքի վտօրը շարթում տեղի ունե-  
ցավ ահագին մեծ երկրաշարժ, որին շատ շատերը զոհ դնա-  
ցին, Հրաշագեղ շինությունները կործանվեցին, որ տեսեց  
մինչև երեք ամիս: Այս նույն տարում Սեւադայի որդի Շա-  
հապը ամբողջաատ զորքով գալիս է մեր Հայոց երկրի  
վրա՝ ցանկանալով ավերել ու գերեզմարել:

Գալիս են Արշարուեիք գավառը, Հարավային կողմից  
իջնում է Երասխի ակը, այնտեղ, որն այժմ Քառասունք են  
անվանում: Իսկ Հայոց սպարապետ մանկահասակ Արսարը,  
Աստուծո նախվիճած, (խո) քառասուն Հազար մարդկան-  
ցով, Հայոց ամբողջ զորությամբ, քաջարի և մեծամարտող  
այրերով գալիս Հարձակվում է նրանց վրա, նրանց բանակն  
ամբողջությամբ ցիր ու ցան անում, այս ու այն կողմ սփ-  
ռում, ամենքին [առհասարակ] գետակնժ ու սրախողիտը

անում: Դրա Համար էլ Սերաստայում<sup>9</sup> այդ տեղի անունն,  
բոտ մարդկանց թվի, մինչ այժմ էլ կոչում են Քառասունք:  
Իսկ Շահապը (ից) քանևելեց<sup>10</sup> մարդկանցով մազապուրծ  
և ամոթահար փախչում գնում է: Եվ դրանից Հետո՝ (յիդ)  
երեք Հարյուր քանակեց թվականին վարձանվում է Տեր  
Ջաբարին: Ապա մեծապուր պատիվներով կաթողկոս է  
նստում Տեր Գեորգը՝ Տիրոջ թվատուժյան<sup>11</sup> տոնի օրերին:  
Բայց նույն տարում անհամար մահերը ամբողջ աշխարհն  
են բռնում: Նա Գառնի գյուղաքաղաքից<sup>12</sup> էր և Հայրապե-  
տական աթոռին տիրեց (իբ) քաներկու<sup>13</sup> տարի: Սրա տա-  
ներկուերորդ տարում Աշոտը թագավոր է դառնում:

Իսկ մեկը, ճանապարհորդների օրինակին Հետևելով, ո-  
րոնք միանգամից<sup>14</sup> չեն կարողանում իրենց Հետ վերցնել ինչ  
որ ցանկանում են՝ ուժի տկարության պատճառով, ավելա-  
ցածին նորից են վերադառնում. նույնպես և մենք կրկին  
վերադառնանք մեր թողած՝ պատմությանը՝ բերելով՝ Պար-  
սից թագավորների, Տաճկաց ամիր-ալ-մուսնիների և ապա  
Հունաց կայսրերի Հերթականությունը, որպեսզի զրանց  
Համապատասխան լինի խոսքիս ավարտը:

1 2՝ որ  
2 2՝ իւրաքանչիւր  
3 2՝ որ  
4 2՝ ամիրմուսնի

5 2՝ պէ, որչաւ ահէր  
6 Տ՝ սուն 27:  
7 Տ՝ ի քառասներորդ

1 2՝ բո թվոյ... սերասոյ  
2 2՝ Տղ սրտոք  
3 Տ՝ թլպատութիւն  
4 2՝ ի վերադարձն

5 Տ՝ սուն 12:  
6 2՝ միանգամ  
7 2՝ գնանցեալս

Պարսից Մասանյան քազավորները,  
տրանց անուններն ու ժամանակները՝ (85)

Արտաշիթը՝ քառասուն տարի.  
Շապուհը՝ հիսուներեք տարի՝.  
Ներսեհը՝ տասնեմեկ տարի.  
Որմիզը՝ երեք տարի.  
Շապուհը՝ հիսուսուփք տարի.  
Արտաշիթը՝ երեք տարի.  
Վռամը, որ նույն Կրմանն է՝ երկանուն՝, տասնեմեկ տարի.

Հագկերտը՝ քսան՝ տարի.  
Վռամը՝ քսաներկու տարի.  
Հագկերտ Զախջախը՝ տասնինը՝ տարի.  
Պերոզը՝ քսանյոթը տարի.  
Վազարչը՝ չորս տարի.  
Կավատը՝ տասնեմեկ տարի.  
Ջամասպը՝ չորս՝ տարի.

Խոսրովը, որը մերտվեց՝ քառասունուփք՝ տարի (86) < 62 > : Սա էր, որ իր մահվան ժամին ընդունեց երկնային չեորհները՝, Հավատաց Քրիստոսին և մկրտվեց սուրբ Երրորդության Հեռ. նա իր սենյակում պատարազ մատուցել տվեց և Հազարդվեց Տիրջ մարմինն ու սրյանը : Որմիզը՝ տասներկու տարի : Արա ժամանակակիցն էր Վահրամ Մեհենանդ<sup>10</sup>

(Միհրեվանդակ\*) կոչված մեկը՝ Պարսից աշխարհի արևելյան կողմերի իշխանը, որը քաջությամբ ջախջախեց Թեոսլայի զորքերին, բռնի ուժով տիրեց Բահլին ու ամբողջ Քուշանաց երկիրը՝, մինչև մեծ զետի մյուս կողմը, որ Վեհ-նուս՝ է կոչվում և մինչև այն տեղը, որ Գասպուն՝ է կոչվում : Այս Վահրամը պատերազմում է Մաղքթաց (իմա՝ Մասբութների) դեմ, ջախջախում է նրանց զորքի բազմությունը, սպանում է նրանց թագավորին՝, Հափշտակում է թագավորության բոլոր զանձները. մեծամեծ ավարից միայն մի փոքր մասն է ուղարկում Որմիզը թագավորին, մասացած ամբողջը բաժանում է իր զորքին : Իսկ թագավորը ստանալով այն՝ գայրացած ասում է, «Իմացա ընթերթի առավել մեծագույնի և պատանների չափերի մասին. այդքան մեծամեծ զանձերից միայն այսքանը բերիք արքունիք» : Եվ փուշտիպաններին\*՝ Հրամայում է զնայ և Հավաքել զորքի մոտ եղած զանձերը : Այդ պատճառով գայրացած զորքերը սպանում են փուշտիպաններին և թագավոր են Հոչակում Վահրամին ու միաբանությամբ զնացին դեպի Ասորեստան՝ Որմիզդին սպանելու. այդ բանը լսելով՝ Որմիզը փախչում, անցնում է Դիլաթ գետն ու ապաստանում ուն Վեհկավարին՝ : Սակայն խորհրդակցելով՝ տղամարդիկ, Համհարզներն ու փուշտիպանները որոշում են սպանել Որմիզդին. և նրա օրդի Խոսրովին նստեցրին Պարսից աշխարհի վրա թագավոր :

Սակայն քիչ օրեր Հետո՝ Վահրամը ամբողջ զորքով

\* Տե՛ս Սեր., էջ 30  
 \*\* Իմա՝ թիֆլիսացու և Հարկահավաք  
 1 Տ.՝ աշխորՑ  
 2 Տ.՝ մեծ փետրյուն, քեհուս  
 3 Սեր.՝ Ասորիտ : Քիսեսա կայրիտ : -  
 4 Տ.՝ Սեր. չին 30, Ման. 1 :  
 5 Տ.՝ ընդ սարքայն  
 6 Տ.՝ վաղջեղ  
 7 Ի Տ.՝ պակասեք՝ խորհրդ : - Չ.՝ խորհր.  
 8 Տ.՝ սարքայն սպանել  
 9 Տ.՝ և չեա բազում

1 Տ.՝ 23  
 2 Տ.՝ որ Կրման՝ անու  
 3 Տ.՝ ան ու  
 4 Տ.՝ անս իթ.  
 5 Տ.՝ անս ք.  
 6 Տ.՝ անս իտ.  
 7 Տ.՝ անս իթ.  
 8 Տ.՝ երկնային չեորհ ընկալու  
 9 Տ.՝ Ժամանակի  
 10 Սեր.՝ Վահրամ ան Միհրեվանդակ

փութանակի, ինչպես արժիվ խոյանալով, գալիս հասնում է, իսկ *Խոսրովը* յուրայինների հետ փախչում անցնում է Դվլաթ մեծ գետի մյուս կողմը:

Վահրամը գալիս դրավում է արքունի տունն ու զանձեբը եւ նստում է թագավորական՝ գահին... (87)\*:

Իսկ *Որմիզդի* օրդի *Խոսրովը* նրա երեսից փախստական՝ նամակով դիմում է Ղունաց Մորիկ կայսեր, խնդրում, որ պետքի կայսրն իրեն օգնական զորք տա՝ իր թշնամիներին հարվածելու եւ կրկին իր հոր գահին նստելու համար. ուստի խոստանում է կայսրը տալ Ատորքի կողմերն ու ամբողջ Արվաստանը, մինչեւ Մծրին քաղաքը, որը մասեր Հայոց աշխարհից, մինչեւ Այրարատ ու Դվին քաղաքը եւ Վրաց երկիր մեծ մասը: Երբ կայսրն ստանում է սուրհանդակների միջոցով *Խոսրով* արքայի մատուցած պատարագն ու նամակը, խորհրդի է հրավիրում սինկղիտոսին, թե ինչպես վարվեն: Եվ թեպետ սինկղիտոսը միաձայն խորհուրդ չի տալիս օգնության գնալ *Խոսրովին*, սակայն Մորիկը հասնան է առնում օգնելու նրան եւ Հովհաննես պատրիկինն ու Ներսես սարատելյատին մեծաքանակ զորքով ուղարկում է նրան օգնության: Հունաց զորքերին միանում են նաև Պարսից *Խոսրով* արքան ու Հայոց պարսպպետ Մուշեղ Մամիկոնյանն իր քաղ եւ ընտրելագույն մարդկանցով: Երկու կողմերից գալիս հասնում են Ատրպատական եւ բանակ դնում միմյանց դեմ Հանդիման Վարարատ գավառում: (Վահրամը ազդիտանալով Մուշեղ Մամիկոնյանի հզորության մասին եւ ցանկանալով նրան իր կողմը գրավել)՝ նամակ է հղում նրան եւ նրա միջոցով էլ Հայոց նախարարներին, հորդորում է հեռանալ *Խոսրովից*, «թողնել այդ ժամա-

նակավրեպ տիրաախրությունը, չէ՞ որ Սասանյան սոհձն էր, որ հիմնովին կործանեց նրանց երկիրն ու տերությունը»։ նաև երդում է տալիս նրանց, որ երբ հաղթի *Խոսրովին*, նրանց կտա իրենց թագավորությունը Հայոց, եւ ում որ ցանկանում են, թող կարգեն իրենց թագավոր... ապա այլ եւ այլ խոստումներ է տալիս նրանց առևեւ: Բայց Մուշեղն ու նրանք բողբոբ, որ նրա հետ էին, ընթերցում են հրովարտակն ու ոչ մի պատասխան չեն տալիս. նույն ձեռով էլ վարվում են Վահրամի երկրորդ նամակի հետ, որը զբված էր [խիտ] սպառնալիքով, այլ միամտությամբ հաստատ են մնում իրենց տիրաախրության մեջ:

Դրանից հետո, երկրորդ օրվա հնեց արշալույսին, արյունահեղ պատերազմ սկսվեց, որը աստիկ կոտորածով երկարաձգվեց մինչեւ երեկոյան կողմը, մինչեւ որ Վահրամը Հունաց եւ Հայոց զնդերից ծանր պարտություն կրելով փախչում ընկնում է Բահլ Եահաստան. եւ այնտեղ թագավորում է մի առ ժամանակ, մինչեւ որ սպանվում է *Խոսրով* արքայի սարքած զավաճությունով:

Իսկ վերջինս բարձրանալով գահին՝ կատարեց ինչ որ խոստացել էր Մորիկ կայսեր. ավել նրան այն բոլոր սահմանները, որ նախորաք նշել էր, նաև մեծամեծ պատարագներ մատուցեց. եւ եղավ խաղաղություն Պարսից եւ Հունաց միջև, որը տեևեց տասներեք տարի:

Իսկ *Խոսրով* արքան կամենալով վարձահասույց լինել Մուշեղին նրա տիրաախրության համար՝ զավով ու ննդուությամբ նրա անձի նկատմամբ մահ է նյութում. սակայն քաջարի Մուշեղը չի ընկնում նրա լարած թակարղը, որ պատարաստել էին նրա համար, այլ վերահասու լինելով արքայի չար խորհրդին, հեռացավ զԿաց Հայաստան, սպասամբեց պարսիկների դեմ եւ ձեռք մեկնեց Մորիկ կայսրը:

\* Տե՛ս՝ Մուխ. բաց. 87, (թջ 360-362), սեր. 33-71:

1 Սեր. 94. Բ՛:

Բայց քանի որ Մորիկն ու Խոսրովը բարեկամ էին մի-մյանց, զրա համար էլ Մորիկը սիրաշահելով Հանգցնում է ապստամբության բողբոջը, իր մտա Կոստանդնուպոլիս է կանչում Մուշեղին և այնտեղ պալատում պահում է նրան որպես պատվավոր բանտարկյալ: Եվ որպեսզի Հայոց իշխաններն այլևս չկարողանան ապստամբություն հարուցել, Խոսրովին խորհուրդ է տալիս Հավաքել իր մատուս եղած Հայոց ամբողջ ազատագրուղը և ուղարկել արևելյան կողմերը պատերազմի. իսկ ինքն էլ տարեց տարի կՀավաքի Հայաստանից մեծաքանակ զորք և կուղարկի դեպի Թրակիա պատերազմելու: «Որովհետև եթե (Հայերն) սպանվեն, ստում է, մեր թշնամիները կպայտվեն, իսկ եթե սպանեն, մեր թշնամիներին կսպանեն, և մենք կսպարենք խաղաղությանը»: Ճիշտ նույն ձևով էլ կատարում է Մորիկը յուր չար մտադրությունը. Հայոց երկրից տարբեր-տարբեր բազմաթիվ զորքեր էր ուղարկում Թրակիա, որոնք երբեմն սպանվում էին՝ լինելով որպես թշնամի և երբեմն էլ սպանում էին կայսեր թշնամիներին. և այսպես երկարաձգվեց մինչև Խոսրովի տասնչորսերորդ և Մորիկի քսաներորդ տարին, երբ ապստամբեցին Մորիկի զորքերը, որ Թրակիայում էին և իրենց թագավոր՝ նստեցրին Փոկասին. ապա եկան Կոստանդնուպոլիս, սպանեցին Մորիկին ու նրա որդիներին: Եվ՛ Խոսրովը, երբ լսեց այդ, առավ իր զորքերի բազմությունը, դիմեց դեպի արևմտյան կողմերը, նախ զբաղեց Դարա քաղաքը<sup>1</sup>, այնուհետև Խոսեմ զորավարին, որը նաև Ռամազան էր կոչվում, զորքով ուղարկում է Ասորիք<sup>2</sup>, իսկ Ալշատին՝ Հայոց սահմանները: Սա զալիս պա-

1 Տ.՝ զորք նորա ի Թրակս  
2 Ձ.՝ և Թագուսթեցոյցն  
3 Տ.՝ զոր

4 Սեր. գր. ԻԱ:  
5 Ձ.՝ քեզ յասորիս

տերազմում է Հունաց զորքերի դեմ, որոնք Դուում և Որդուում (?) էին, փախցնում տանում է մինչև Սասալա<sup>1</sup>, զբաղվում է Կարին՝ քաղաքը, գերում է Հովհան կաթողիկոսին՝ կաթողիկոսարանի ամբողջ սպաարներով՝ ու քաղաքի բոլոր բնակիչներով և տանում Ալճմատան<sup>2</sup>: Իսկ Խոսեմը անցնելով Ասորիք՝ իրեն է ենթարկում Ամիղը, Ուհայն ու Անտիոքը<sup>3</sup>: Եվ Պարսեց զորավար Շահնըր զբաղվում է Կեսարիա քաղաքն ու այնտեղ մտում չուրջ մեկ տարի: Խոսեմը ապա անցնում է Պիսիդա<sup>4</sup>, զբաղվում է Տարսոն քաղաքը, չըջապատում է Երուսաղիմը տանելիք օր, փորում է քաղաքը հիմներն և զբաղվում այն: Հրի՛ ճարակ զարժերին քաղաքը, սրախողտող արեցին (ծէո) հիսուսելոթ հազար մարդ ու գերեցին (չեո) երեսունհինգ հազարին. Ջարարիա Հայրապետին, փրկչական սուրբ Խաչը՝ ամբողջ սպաարներով, ոսկով ու արծաթով տարան արքունի զուռը: Բայց թագավորը հրամայեց կալանավորներին վերադարձնել քաղաքը, վերաշինել այն և այնտեղից Հայսմեղ Հրեաներին, քաղաքի քահանայապետ կարգել Մողեստոսին<sup>5</sup>, որը Հայոց ուղղված թուղթը գրեց<sup>6</sup>:

Խոսրովի<sup>11</sup> թագավորության (իթ) քսանինը տարում Կոմիտասը քանդեց սրբուհի Լուիփսիմեի<sup>12</sup> մատուռը<sup>12</sup>, որը կառուցվել էր սուրբ Սահակի կողմից: Գտավ այնտեղ սուրբ Լուիփսիմեի մարմինը՝ ինը թիղ և չորս մաս, կնքված սուրբ Գրիգորի և սուրբ Սահակի մատանիով, իր մատանիով նույնպես կնքեց, նույն տեղում ամփոփեց նշխարներն ու

1 Տ.՝ ի Սաղաւոյ  
2 Ձ.՝ կարես  
3 Տ.՝ սաս և ի սարբե՛ սպաարս  
4 Ձ.՝ ի յաճմատան  
5 Սեր. գր. ԻԳ:  
6 Տ.՝ ի Պիսիդոս

7 Ձ.՝ և այրեաց  
8 Տ.՝ Մողեստոս  
9 Սեր. գր. ԻԴ:  
10 Ձ.՝ Խոսրովայ  
11 Ձ.՝ սաս և ի սարբե՛ Հաթիփմէ  
12 Տ.՝ զմատուռ



կառուցեց եկեղեցին: Եվ սուրբ կաթողիկոսի փայտաճարկը վերցրեց ու քարաճարկ կառուցեց: Վանքի երեցը՝ Հովհանն էր:

Իսկ Պարսից Խոռեմ զորավարը, որը Երուսաղեմը գերեց, բոլոր զորքերով Հասնում է Քաղկեդոն, եւ Կոստանդնուպոլսի մտտերքում նախերով պատերազմելիս մեկ օրում Պարսից զորքերից՝ սպանվում է չորս հազար մարդ:

Այնուհետեւ Հերակլես թագավորը յուր որդի Կոստանդինին թագավորեցնում՝ է Կոստանդնուպոլսում, իսկ ինքն անցնում է Կեսարիա՝ իր բոլոր զորքերին՝ Հավաքած՝ (ճիւղ) Հայուր քսան հազար մարդ, շարժվում է Պարսից արքայի դեմ. գալիս է Կարին քաղաք, Հասնելով Դիլին՝ ավերում է այն, նաեւ նախճավանը՝, Գանձակն ու Հեղակը՝ (88), որոնք Հիմբից բրուտ՝ բանդում է: կործանում է նաեւ մեծն Հրատի բազիկը, որին Վնասպ էին կոչում: Ավարի առնելով Պարսից աշխարհը՝ դառնում է ղեկավար՝ Մարս: գալիս Հասնում է Կասպից աշխարհ՝ Փայտակարան եւ բունակ՝ է զնում Տիգրանակերտ ավանում: Բայց Պարսից երկու՝ զորավարները՝<sup>10</sup> Շահր-Վարազն ու Շահնեը, իրենց բանակներով, մեկն առջեւից, մյուսը Հետեւից Հասնում են Հերակլեսին. Հերակլեսը՝<sup>11</sup> Հետ է դառնում եւ երեսուն հազարով թիկունքի կողմից Հարվածում է Շահնեին: Ապա ինքը Միդուկի կողմից թափվում է Նախճավան ու անցնելով Երասխ գետը՝ Վրնճունիս ավանով մտնում է Բազրեանդ. եւ անցնե-

1 Սեր. գլ. ԻԵ:

2 Մ. ի պարսից զորքն մեռան  
3 Մ. թագուտ քրեցուցանել  
4 Մ. զգրս  
5 Տ. սաս եւ ի ստորեի՝ Նախճավան  
6 Թ. Ս. պարսուք՝ գճեղար. Հասնակ եւ սս

Սերճուս եւ ու Քովմայ Աբուսուլայ:

7 Մ. ի մարս  
8 Մ.՝ Կարից. բանակին  
9 Մ.՝ երկու  
10 Մ.՝ զարե  
11 Մ.՝ երակի... Շրակուտ, Շրակ

լով Ապահուներ՝ բանակ է դնում Խրճտոնք՝ կոչված գյուղում: Իսկ Շահր-Վարազը (զո) վեց հազար ընտիր՝ ղեկավորներով նստում է Արճեշում եւ դարանակապ սպասում Հերակլեսին: Սա գիշերով գալիս Հարձակվում է նրանց վրա, Հրդեհում է՝<sup>12</sup> ամբողջ քաղաքը, դուրս եկողներին էլ քրախողխող անում. սպա ամեն ինչ ավարի՝ առնելով՝ Կեսարիայով մտնում է Ամասիա (89) եւ այնտեղ իր բանակին Հանգիստ առլիս: Կրկին զորքով վերադառնում է Հայաստան, անցնում Շիրակն ու Կողովխտով ճանապարհ վերցնում ղեկի Հեր եւ Զարեանդ զավանները, ուղիղ ղեկի Տիգրոն՝<sup>13</sup> Խոսրովի՝ վրա: Ապա անցնում է Զարասպի՝ լեռներից այն կողմ՝ Ասորական աշխարհը, շարժվում ղեկի արեմուտք՝ եւ զնում Նինիւն:

Իսկ Հերակլեսը Հետ է դառնում եւ սաստիկ զորով թյամբ Հարձակվում նրանց վրա. բայց Պարսից զորքերը՝<sup>14</sup> չեն իմանում՝<sup>15</sup> Հերակլեսի Հետ դառնալը, որովհետեւ թանձրամած բալը (իմա՝ մատախուղը) ծածկել էր ամբողջ դաշտը, մինչեւ որ զնում ու խառնվում են միմյանց (90): Եվ այդ օրը Տերն օգնեց Հերակլեսին, Պարսից զորքը պարտութուն կրեց նրանից, նրանց զորավարն՝<sup>16</sup> էլ սպանվեց, սպա սասպանակ՝<sup>17</sup> սփռելով ավարի առան Պարսից՝<sup>18</sup> աշխարհը:

Ինքը՝ կայսրը Հասնում է մինչեւ Տիգրոն քաղաքի դուրը, Հրդեհում է քաղաքի շրճակայքում եղած թագավորա-

1 Տ.՝ ընց Ապահուներ

2 Տ.՝ երեսուց: - Սերճ.՝ Հրճեշուք: - Աբուսուլայ. թիկուց Խոսրու ի նեմանանու. թեմէ ստորին երկրապարհ ստորս Ը եւ Տ:

3 Մ.՝ այլճողիք

4 Տ.՝ մատուց

5 Տ.՝ զարե

6 Մ. սաս եւ ի ստորեի՝ սարսե

7 Մ.՝ ի Խոսրովայ

8 Մ. եւ Տ.՝ Կարասպայ - Աբուսուլայ ուղղութիւնը մեր բառ Սերճուս:

9 Մ.՝ ընց յարե մուտս

10 սաս եւ ի ստորեի՝ զորք

11 Մ.՝ զիտաց

12 Մ.՝ զարե

13 Տ.՝ ստղասպիս

14 Սեր. գլ. ԻԶ:

կան բոլոր սպարանքները եւ Հետ դառնում Ատրպատական: Այդ ժամանակ Պարսից նախարարներն ու զորքը սպանում են ինտրովին եւ թագավորեցնում նրա՝ որդի Կավտին: Կավատը պատարագով Հանդերձ սուբհանդալ<sup>2</sup> է ուղարկում կայսր մոտ Հաշտուիթյան Համար. նա՝ նույնպես ուղարկեց, եւ միմյանց Հետ խաղաղություն Հաստատեցին. եւ վերահաստատեցին նույն սահմանները, որ եղել էր Մորիկի ու ինտրովի՝ ժամանակ: Բայց Կավատը վեց<sup>3</sup> ամիս անց վախճանվում է. թագավորում է նրա որդին՝ դեռևս մանկահասակ Արտաշիրը: Իսկ Հերակ կայսրը գրում է Ալեքսանդրիայի կողմերում գտնվող Պարսից ինոսեմ գորավարին, կանչում իր մոտ եւ թագավորեցնում Պարսկաստանում: Սա խնդրում է նրանից փրկչական Խաչը՝ սակավաթիվ զորքով Հավատարիմ մարզկանց ուղարկելով նրա Հետևից: Ինոսեմը զայլու սպանում է մանուկ Արտաշիրին եւ փրկչական Խաչի խնդիրքը կատարելով՝ ուղարկում է Հերակին. եւ նա առնում տանում է Երուսաղեմ՝:

Այստեղ զաղարում է Պարսից թագավորությունը Սասանյան ցեղից, որ սկսվել էր Հոմի Փիլիպպոս թագավորի երրորդ (91) տարուց եւ ավարտվում է Հերակի (մը) տասնութերորդ տարում, (յՀէ) երեք Հարյուր յոթանասունյոթը թվականին. բոլոր միասին Սասանյան ցեղի թագավորությունը<sup>7</sup> Պարսկաստանում տեւում է (յձգ) երեք Հարյուր ութսունվեց տարի (92):

Այդուհետեւ մի-մի տարի թագավորում են մի շարք մանկահասակ պատանիներ՝, նույնիսկ աղջիկներ՝ ամիսներ

բով, որոնք անգամ Հիշատակության՝ արժանի չեն, բայց սրանք են նրանց անունները. Ինոսեմից Հետո թագավորում է ինտրովի դուստր Բորնը<sup>2</sup>, որից Հետո ինտրովի թոռը՝ Կավատի որդի Հագվերտը, որը թագավորում է Տրդրոնում:

1 Ձ.՝ ստո եւ ի ստորեւ՝ ինտրովայ

2 Ձ.՝ գհեկատի

3 Տ.՝ եւ նա տարեաց

4 Ար. զ. Իէ:

5 Տ.՝ անս 2. - Ձ.՝ անս 9. - Արք ուղղագրե-

ցար աղջիկու ըստ Արեւոսի - Տես եւ ի

Տես. 85:

6 Ար. զ. ԻԸ:

7 Ձ.՝ կարեայք - Թագաւորութիւն

8 Ձ.՝ մի ժամ... պիտանեք

1 Ձ.՝ իշտակի արժանի

2 Տ.՝ Բորն

Տաճկաց Ամիր-ալ-մումնիններ՝

եւ թե Խրանց օրհնում ինչեք սեղի ունեցան (94)

Ապա Խոսրովի մահվանից շատ քիչ ժամանակ առաջ, Հերակ կայսեր ութերորդ տարում եւ Հայոց (կը) վաթսու-նութ թվականին<sup>1</sup> չքաստանից (95) Հայտնվեց Արդլայի որ-դի Մահմետը՝ Տաճկաց մարզարեն:

Այդ ժամանակ Հրեաները, որ<sup>2</sup> ապստամբել էին Հույն-բի՛ դեմ եւ պատսպարվել Եղեւսի քաղաքում, երբ չկարողացան Հունաց զորքին դիմադրել, ելան զնացին Տաճկաստան Իսմայիլի որդիներին<sup>3</sup> մաս (ժրտ) տասներկու Հազար մարդ, Հայտնեցին նրանց իրենց Հնազանդությունը (աստ՝ Հարապատությունը) եւ խնդրեցին օգնել<sup>4</sup> իրենց: Եվ խոսել էր Մահմետը նրանց Հետ, թե Աստվածն էր խոստացել երկիրը ձեզ տալ, ուրեմն ոչ ոք չի կարող պատերազմով ձեր դեմ կանգնել, ուստի Հավաքվեցին Իսրայելի որդիները Եվիլայից մինչեւ Սուր ու Եգիպտոսի մոտերքից: Փառանի առնպատից զնացին տասներկու ցեղեր՝ ըստ իրենց տոհմերի նահապետության: Եվ երբ Հասան Մովաբի Իսրայելի Ռուբենի սահմանները, պատերազմի բռնվեցին Հերակեսի եղբայր Թեոդոսի Հետ ու փախուստի մասնեցին: Իսկ Հերակես կայսրը նորից զորք կազմեց՝ (Հո) յթիանասուն Հազար եւ ուղարկեց նրանց դեմ: Եկան Հասան Հորդանան, անցան

1 Չ՝ ամիրալմումնին  
2 Չ՝ Թուսխանութեան  
3 Ի Տ. պովաբեք՝ որ  
4 Չ՝ յուսաց

5 Տ՝ առ որդի  
6 Չ՝ պիմանութիս  
7 Չ՝ Ի արարիայ

Արարիա<sup>5</sup> եւ Հեաիտան զնալով ճակատ կազմեցին Իսմայիլի բանակի դեմ, բայց նրանք անցան Հորդանան գետը եւ բանակ դրեցին՝ Երկերզում: Այդ ժամանակ բոլոր Երուսաղեմացիք զարհուրած՝ սուրբ Խաչը եկեղեցու ամրոջ սպապրեցնելով նավերով՝ ուղարկեցին Կոստանդնուպոլիս: Իսկ Մահմետն իր իշխանության երկրորդ տարում մեռնում է՝ Հերակեսի (96) տասներկերորդ տարում: Ապա իշխանությանը փոխարինում են՝ Աբուբարբը, Օթման եւ Ամիրը՝ (յը) երեսու-նութը<sup>6</sup> տարի:

Իսկ երբ թագավորում է Հերակի որդի Կոստանդինը, Տաճիկները տիրում են Հրեաստանին ու Ասորեստանին եւ բաժանում են իրենց զորքերին երեք մասի. մի մասը [ուղարկեցին] դեպի Եգիպտոս, որ զնացին ու գրավեցին<sup>7</sup> մինչեւ Ալեքսանդրիա եւ որոշ մաս էլ Հյուսիսային կողմերից՝ Հունաց թագավորության դեմ զիմաց, զրավեցին՝ ծովի վերջին ծայրից մինչև Եփրատ՝ մեծ զեռի եզերքն ու զեռի մյուս կողմից՝ էլ՝ Ռուհան ու Միջագետքի բոլոր քաղաքները. մի մասն էլ [զնուս էլ] դեպի արևելք՝ Պարսից թագավորության վրա. սրանք զնալով Տիգրոս<sup>8</sup>, Հայաձուս են Պարսից՝ զորքին եւ ապանում են նրանց Ռամիզ թագավորին, որը Խոսրովի թոռն էր, եւ ավարտ<sup>9</sup> առնելով ամրոջ Պարսկաստանը՝ արքունի գանձարանը Հասցնում են իրենց<sup>10</sup> եր-

1 Չ՝ եւ բանակեցան  
2 Չ՝ սպարաբ... նուսեք  
3 Չ՝ Թմեն եւ ան: - Տ: Աստ եւ Ի սաս-րի: Ապուբարբ  
4 Չեւ. ց. Ա:  
5 Տ: Կոպու  
6 Չ՝ ընց Հուսայ կոչանակ: - Սեր. Ի Հի-սոնյ կոչանակ  
7 Տ: Կոպու  
8 Տ: Եփրատայ

9 Տ: յայնմ կոչանակ: - Չ: յայն կոչմ: - Սեր. յայն կոչմ  
10 Տ: յարեւել, որք երթնայ Ի Տիգրոս Ի վերայ թագաւորութեան Պարսից, Հարի  
11 Տ: Հարի եւ ցորոս նոցա  
12 Չ: յուսեւայ  
13 Սեր. ց. է:  
14 Չ՝ սպարապուս ամրոջ ստարի

կիրք: Իսկ զորքի մեծ մասը սապատակ ստեղծելով՝ գերումս<sup>4</sup> են Մարտը, Գողթնն ու Նախնականը: Եվ մի գունդն էլ ապատակելով Արտազ գավառը, Հարձակվում է Հունաց Պրոկոպ զորավարի վրա, Հայածում նրան, նրա ամբողջ բանակը ավարի են առնում ու գնում իրենց երկիրը: Եվ այս՝ բոլոր տեղի ունեցավ Իսմայիլի իշխաններ Աբուբարբի, Օթմանի եւ Ամիր<sup>2</sup> (իր) քաններկուերորդ տարում:

Ապա երեք տարի զաղար առնելուց Հետո, նրանց իշխանության (իդ) քանավեց եւ Հերակլեսի թոռ Կոստանդնի երրորդում Իսմայիլի զորքերը դուրս գալով Ասորեստանից Չորի ճանապարհով ներխուժում են Տարոն աշխարհը, Բյուտեհիբով գեպի Բերկրիի ձորն ու լցվում Այրարատ<sup>3</sup>: Գրավում են Դվին քաղաքը, այնտեղ եղած բոլոր տղամարդկանց կոտորում, իսկ կանանց եւ երեխաներին գերի տանում (չեռ) երեսունհինգ հազար հոգի, որը այգեկույթի Հենց ժամանակն էր, տրե ամսի քանին: Իսկ Հայոց իշխան եւ Ռշտունյաց<sup>4</sup> տեր Թեոդորոսը, որը Աղթամար<sup>5</sup> (իմա՝ Եկեղեցին) կառուցեց, Կազովիտում պատերազմի դուրս եկավ նրանց դեմ, բայց չկարողացավ հաղթել: Եվ դա եղավ Եզրի կաթողիկոսության տարեներին:

Ահա, Իսմայիլի արքան, երբ տեսավ Պարսից թագավորության վերանալը, իր բոլոր զորքերին հրաման տվեց պատերազմական գործողություններ սկսել Հռոմեական թագավորության դեմ, որպեսզի զբաղեն Կոստանդնուպոլիսն ու նրանց թագավորությունը նույնպես վերացնեն: Եվ նախատիքի թուզիթ զրեց [Հռոմոց] թագավորին, որի մեջ Հետնյալ խոսքերն էին. «Քո Քրիստոսը, որ Հրեաներից իր

անձը չկարողացավ պահել, ինչպե՛ս կարող է պաշտպանել քեզ իմ ձեռքից: Եվ եկան հավաքվեցին արեւելյան կողմերում եղած բոլոր զորքերը՝ Պարսկաստանից՝, Խուժաստանից, Հնդկաց կողմերից, Ասորեստանից ու Եգիպտոսից, գումարվեցին Մավիա (իմա՝ Մուավիա) զորավարի մոտ, որը Դամասկոսում էր նստում: Եվ պատրաստեցին ռազմանավերը Ալեքսանդրիայում ու ծովեզրյա բոլոր քաղաքներում եղած, լցրին զրանք զենքերով ու ռազմական մեքենաներով՝ երեք հարյուր մեծ նավեր, յուրաքանչյուրի մեջ հազար մարդ, եւ (եռ) հինգ հազար փոքր նավեր, յուրաքանչյուրի մեջ հարյուր մարդ, ու բոլորը ծովն իջնցրին: Եվ ինքն իր զորքերի Հետ ցամաքային ճանապարհով գնաց դեպի Քաղկեդոն, իսկ Հունական զորքերը Կոստանդինի (իդ) քաններեքերորդ տարում գնացին մտան՝ Կոստանդնուպոլիս՝ քաղաքը պաշտպանելու:

Իսմայիլի զորքերը, երբ հասան Քաղկեդոն, [իրենց] թագավորի հրովարտվող ուղարկեցին<sup>6</sup> Կոստանդին կայսեր: Արքան վերցրեց<sup>4</sup> թուղթը, մտավ Աստծո տաճարը, իր երեսների վրա ընկավ դեռտի եւ սասց. «Տե՛ս, Տե՛ր»: Ապա քուրճ հազավ, նստեց մոխրի վրա եւ պահեցողություն էր քարոզում:

Իսմայիլցիների իշխանը հրամայում է նախապատրաստել նավերը ծովի վրա ճակատ առ ճակատ<sup>5</sup> ու դիմում են քաղաքի վրա: Այնժամ երկնից Տերը զայրացավ եւ սաստիկ փոթորիկ<sup>6</sup> նշաններ ցույց տվեց. զղրդաց ծովը անդունդի խորքերից դեպի վեր, կործանեց բոլոր նավերը զորքի Հետ

1 Չ.՝ եւ այս եղեւ  
2 Չ.՝ յոթմանց եւ յամոյ  
3 Չ.՝ յայրարատ

4 Չ.՝ րոշտունաց  
5 Տ.՝ Կեկեթամար  
6 Աբ.՝ Գր. Լ.՝ Դեւ.՝ Գր. Բ.՝ 9:

1 Չ.՝ ի պորտ  
2 Չ.՝ մտան  
3 Տ.՝ սուրբէն  
4 Տ.՝ էւս

5 Տ.՝ կարկէ ցեռուս նակատս ի վերայ: -  
Աբ.՝ Կովտս առ նակատս  
6 Տ.՝ Հոյցոյ

միասին, այնպես, որ ոչ մեկը նրանցից կենդանի չմնաց, որովհետև, վեց օր շարունակ ծովը ծփում և արեկծովում էր: Իսկ Քաղկեդոնում եղած զորքերը գիշերով փախուստ սովին ու գնացին իրենց<sup>1</sup> տեղերը:

Արուբեքիրի, Օթմայի եւ Ամրի իշխանութիան (չձ) երեսունևվեցերորդ տարում նրանց զորքերը<sup>2</sup> դարձյալ Հարձակվեցին Հայոց աշխարհի վրա եւ երեք ուղություններով դիմեցին դեպի Տարոն ու<sup>3</sup> Վասպուրական: Եվ առաջապահներին մեկը, երբ Հասնում է Կողովիտ, գիշերով գրավում է Արծաի բերդը, եւ այդ օրը անհող<sup>4</sup> եղած<sup>5</sup> զայրայի պղծագործությամբ էին զրազվում: Սրանց վրա է Հասնում Թեոզորոս իշխանը (ո) վեց Հարյուր մարդկանցով<sup>6</sup>, բոլորին առահասարակ սրախողտող արեց<sup>7</sup> (զո) երեք հազար հոգի, գերվածներին Հեռ զարձրեց ու ամրոցը թալանածը ավարի առավ: Եվ Արուբեքիրն ու Օթման<sup>8</sup> այստեղ սպանվեցին:

Նրանից Հեռու իշխանությունը վերցնում է Մավիան<sup>9</sup> (սթթ) տասնևինը տարի (97): Սրա Հենց առաջին տարում եւ Կոստանդինի (իե) քսանհինգերորդում իշխան Սմբատ Բազրատունին<sup>10</sup> <ՅՏ> եւ Հուռաց զորավարը, Կոստանդինի Հրամանով գնում պատերազմում են նրանց դեմ, անցնում են Եփրատի մյուս կողմը, բայց պարտութուն կրելով Հեռ են փախչում: Այսպէս Հայաստանը Հարկի տակ գնելու Հրովարտակ են գրում, ուստի իշխանները, նախարարներն ու Ներսես կաթողիկոսը պարտավորում են ամեն տարի (չ) Հինգ Հարյուր դահեկան Հարկ վճարել<sup>11</sup>: Մուավիան Գրիգորին Հայոց եւ Վրաց իշխան է Հաստատում եւ ինքը մահա-

1 Սիր. գր. Լեւ-ԼՁ  
2 Տ.Տ.Տ.Տ.Տ.  
3 Ի Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.  
4 Չ.Տ.Տ.Տ.Տ.Տ.

5 Չ.Տ.Տ.Տ.Տ.  
6 Սիր. գր. ԼԲ: - Ղեւ. գր. Գ:  
7 Չ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.

նում է: Մուավիայից Հեռու Տաճկաց իշխան է նստում նրա որդին երկու տարի:

Իսկ նրանից Հեռու նստեց Մրվանի որդի Արզլմեկեր<sup>1</sup> (իա) քսանմեկ տարի: Գրիգոր իշխանը խաղաղեցնում է մեր Հայոց աշխարհը, կառուցում է Արուհի եկեղեցին, բայց ինքը սպանվում է Հյուսիսային ազգերի<sup>2</sup> ղեմ սպատերազմում: Նրա իշխանությանը Հաջորդում է Աշուտ պատրիկը<sup>3</sup> երեսուլի, ուսումնասեր եւ աստվածային երկյուղով լի մի տղամարդ, որը կառուցեց Դարյոնեցի<sup>4</sup> եկեղեցին եւ Քրիստոսի մարդեղութիան կենդանագիր պատկերը քանդակել տվեց նրա արեւմտյան կողմում, որի մեջ Հանդես է մեծաքանակ զորութիւնը եւ նրա անուշով էլ կոչեց եկեղեցին<sup>5</sup>: Սրա Հենց առաջին<sup>6</sup> տարում երեսաց վարսավոր (իմա՝ զիսավոր) աստղը, որի Հետեւից այլևս ճանաչել չուղարձակում էր ճանճանչներին ցոլքը, եւ դա եղավ նշան սովի, սրի ու մեծամեծ սասանուձների:

Իր՝ իշխանության զուլա անցնելուց տասնևեկեց տարի Հեռու Արզլմեկերը յուր զորքերին Հրամայում է Մահմետի զորավարութիւնը<sup>7</sup> զուրա զալ դեպի Հայոց երկիրը: Սրանք գալիս տեսնում են սուրբ Գրիգորի [եկեղեցին] թանկարժեք զարդերով եւ սպասքներով պայծառացած՝ չարիքներ են նյութում նրա դեմ: Անօրեններից մի զուռը գնում եւ օթեւանում է նրա Հարկերում, գիշերը խնդում են իրենց ծառաներից մեկին ու նետում մի խոր փոսի մեջ, իսկ առաջտայան արժուկ բարձրացնելով փետրում գտնում են ծառային: Ուստի Մահմետի Հրամանով ծայրատում են վանքի կրօնավորներին, փայտերից կախում են ավելի քան քառա-

1 Չ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.  
2 Ղեւ. գր. Գ:  
3 Չ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.

4 Չ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.  
5 Չ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.  
6 Չ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.Տ.

սուն մարդ եւ թայանուս՝ են եկեղեցու սրբազան սպասք-ներն ամբողջությամբ:

Ապա Մահմետը գնում է Ասորիք՝ յուրայիններից մեկին Հայաստանում իշխան թողնելով՝ որը ցանկանում էր վերացնել Հայոց ազատագուևողը. նրա նենգ մտադրությունը Հայտնի դարձավ Սմբատ Բագրատունուս\*։ Նա իր մոտ է կանչում Աշոտ իշխանի որդի Սմբատին, Թեոզորոս իշխանի որդի՝ Վարդին ու նրա եղբայր Աշոտին. բայց [սրանք] ցանկանում են գնալ Հունաց աշխարհը։ Իսմայիլի զորքերից հինգ հազար<sup>2</sup> հորի նրանց հետապնդում եւ հասնում են Վարդանակերտ ավանում. իսկ Հայոց զինվորները երկու հազար էին։ Առաջուրյան<sup>3</sup> պատերազմի են բռնվում, պարտության են մատնում իսմայիլացիներին ու սրտ ճարակ դարձնում, որովհետև քաջօթյա<sup>4</sup> էին զիշերել եւ ցայգալուսին սառած էին. նրանք էլ, որ փախչում էին սառույցի վրայով, ընկղմվեցին Երասխ գետի մեջ։ Եվ Սմբատը տաճիկներին ձիերն ու դիակներին ունեցվածքը<sup>5</sup> ուղարկում է Հունաց կայսեր. նրանից ստանում է կյուրապապատության<sup>6</sup> պաշտոն եւ գնում Տայոց ամրոցը, որին Թուխաբք են անվանում:

Եվ Իսմայիլի իշխան Արղմնլիբը երբ որ լսեց իր զորքերի կործանման լուրը, Մահմետ զորավարին հրամայեց մեծ բանակով հարձակվել Հայաստանի վրա։ Նրանց ընդառաջ է դուրս գալիս Հայոց Մահակ կաթողիկոսը եւ իր մահվամբ խաղաղություն հաստատում<sup>7</sup>. նրա մահը տղիք ունեցավ Խառան քաղաքում, ինչպես վերևում ասացինք<sup>8</sup>:

\* Բագր. զգրած է անկուր փորձաստով: 5 Տ.՝ ունչ  
1 Չ.՝ Կայս կայսցանիք 6 Չ.՝ կրտսերազատութեանն  
2 Տպ. որինքնի՝ Կունի՝ 5,000: 7 Տ. արքայնայ  
3 Չ.՝ սառուտուն 8 Չև. գլ. եւ. է-ի:  
4 Չ.՝ օթաքայտայք

Արղմնլիբի վախճանվելուց հետո տաճիկներին տիրում է նրա որդի Վլիթը՝ տառ տարի։ Սա իր իշխանության հենց առաջին տարում խորհում է վերացնել մեր աշխարհի ազատագուևողը եւ Մահմետ՝ զորավարին հրամայում է կատարել այդ։ Նա էլ հրամայում է ոմն Կապուին<sup>1</sup>, որը նախճական քաղաքի կողմերի հրամանատարն էր, իր մոտ կանչել Հայոց նախարարներին՝ այրուձիով հանդերձ, որպես թե հանդես անցկացնելու եւ արքունիքից հոգոն (յիսն)՝ թուրակ, ոտնիկ) ստանալու։ Նրանք էլ իրենց սովորական պարզամտությամբ չուստափույթ չամբարվում են այնտեղ։ Ապա հրամայում են երկու մասի բաժանել նրանց. ոմանց նախիջնանի եկեղեցին են լցնում, մնացածներին՝ իրքանի՝ եկեղեցին ու եկեղեցիները հրով այրում. եւ այդ ձևով այրեցին մոխրացրին բոլորին՝ (ձճգ) հարյուր հիսուներեք թվակապին. իսկ նշանավոր նախարարներին փայտյա կախազանների դատապարտեցին։ Այնտեղ ձերբակալեցին նաև Բագրատունի<sup>2</sup> Աշոտի որդի Սմբատին եւ Արծրունյաց տոհմից Գրիգորին ու Կորյունին, նրանց կանանց եւ որդիներին էլ գերի տարան. իսկ՝ Գողթնի իշխան Խոսրովի որդի Վարդանին<ՃԿ>, մանկահասակ, տարան անեցին եւ իրենց անուրեն հավատով ուսուցանեցին։ Բայց սա հետագայում, երբ արքունքի հասակի<sup>3</sup> հասավ եւ արքունիքի կողմից իր հայրենական՝ իշխանությանը տիրացավ, Հայաստան վերադարձավ. եւ այստեղ կրոնապարական վարքի հանճառու եղավ, իսկ արքունի դուռը հասնելուն պես սրով՝ մարտիրոսության վճիռն ընդուսեց<sup>4</sup> (ձճգ) հարյուր ութսունվեց

1 Չ.՝ մահմետ 5 Ի Տ. արքունիք՝ որ  
2 Տ.՝ Կապույ: - Չ.՝ կապույ: - Կե.՝ Կապույ 6 Ի Տ. արքունիք՝ հասակի  
3 Չ.՝ իսմայի 7 Տ.՝ Հայրենի  
4 Չ.՝ սրով: - Ի Տ. արքունիք՝ բողա- 8 Չ.՝ որով ընկալու  
տունայ



թվականին, ինչպես որ մեզ հազորդում է նրա մասին գրված պատմությունը:

Իսկ իշխանների այրվելուց հետո Սմբատ կուրապաղատն ու նրա հետ եղած նախարարները ազատվելով գնում են Եգերացիները՝ կողմերը: Հունաց թագավորը նրանց է տալիս բնակվելու Փուլթ քաղաքը, ուր՝ մտնելով՝ հետագայում թալանում են քաղաքն ու եկեղեցու սպասքները և այնտեղից վերադառնում: Ուստի կայսրը արքայխոսկուղաներին ու մտորպոլիտներին հրամայում է՝ կողմերի նկմարկել նրանց և այն ընթիվերցել գառակի տունին, երբ այդ սպիտատուխյունը գործեցին:

Այնուհետև Մահմետի փոխարեն Վլիթն ուղարկում է ոմն Արդաղդիդի, որը լսելիքով կաղ էր՝ (իմա՝ խուլ էր) և խաղաղություն հաստատեց մեր Հայոց աշխարհում, վերակոտցեց Դվինը՝ քաղաքը սպիլի ևս հզորագուն ընդարձականիստ մեծությունը, քան նախկինում էր: Որովհետև ասում էր. «Իմ ձեռքով եղավ այս քաղաքի կործանումը և ես նորից պիտի վերականգնեմ այն. քանզի ես էի, ասում է, տասներկուսայն մանուկ ու հազուն էի կարմիր սգամանյի (դենջակ)»<sup>4</sup> <65>. և երբ Իսմայելի զորքերը պատերազմում էին այս քաղաքի դեմ, ես մտա մի խողովակի միջով, բարձրացա պարսպի վրա ու բարձր ձայնով աղաղակեցի, զգուշացրի մեր զորքին. այնժամ բոլոր առաջապահ պաշտպանները պարսպից ցած թափվեցին, իսկ տանկաց զինվորները զորանալով գրավեցին քաղաքը»: Եվ այդ էլ այդպես եղավ:

<sup>4</sup> Տե՛ս մեր 65 րոպ. (էջ 449)

1 Ձ.՝ եղբայ  
2 Ձ.՝ որ  
3 Տ.՝ հրամայեց

4 Ձ.՝ խուլ լսելիք  
5 Տ.՝ գրուին քաղաք

Ապա Մահմետ զորավարի սիրտը զրզուվում է ձենաց աշխարհի դեմ. նա Իսմայելի իշխանից խնդրում է (բճռ) երկու հարյուր հազար զորք՝ և անցնելով Ասորեստանն ու Պարսից աշխարհը՝ հասնում է ձենաց երկրի մի կողմին և բանակ դնում Բուրիսն՝ կոչված զեռի ափին: Եվ Հրովարտակ է գրում ձենաց արքային. «Ինչու՞ միմիայն դու չես գալիս մտնում մեր տիրակալի իշխանություն տակ, որից բոլոր ազգերն են սարսափում»: Ձենաց արքան պատասխանում է. «Ինչու. Բարեյունի թագավորը, որն՝ ամբողջ տիրեղբերին տիրեց, նույնպես և մակեղոնացիներն ու պարսիկները չկարողացան տիրել մեզ. մենք քեզ հարկ չենք տա, թեև ես սասնք միայն պարզեմ թագավորական»: Բայց Մահմետը նորից է պահանջ ուղարկում. «Տո՛ւր ինձ, ասում է (ը) երեսուն հազար աղջիկներ և [մենք] կհեռանանք քո երկրից». քանզի շատ էր ձգտում ձենաց չքնաղ կույսերի գեղեցկությունը: Այնժամ ձենաց արքան պատրաստում է վաչկային զիպակներով սայլեր՝ (խո) քառասուն հազար սպառազեն մարդկանցով, որոնք գալիս Հասնում են գետի սփը: Իսկ ինքը սակավ մարդկանցով բանակում է սայլերից փոքր ինչ հեռավորության վրա և Մահմետին հաղորդում է [հետեւյալը]. «Քո բարձրապատիվ մարդկանցից իմ (ը) կույսերի թվաբանակին՝ համապատասխան բեր անցկացրու. զեռի այս կողմը, որպեսզի ըստ իրենց վիճակի բաժանենք աղջիկներին և քո զորքերի մեջ կոխվ լլինի»: Մահմետն առնելով իր՝ զլխավոր մարդկանցից (ը) երեսուն հազար հոգի, նավերով անցնում է գետի մյուս կողմը:

1 Տ.՝ զոր  
2 Ա.՝ Բուրիս  
3 Ի Ձ. պարսպը՝ որ: - Այսպես թողաք  
քառ Տ. և քառ Անուկի

4 Ձ.՝ քառ թույլ  
5 Ձ.՝ գլխավոր իր  
6 Տ.՝ նորք

Ճնեաց արքան Հրաման է տալիս Հարձակվել նրանց վրա: Եվ նրանք, որ սայլերի՝ վաշկերում էին թաքնված, դուրս են գալիս, շրջապատում նրանց և սրերով ու սուտերով բոլորին կոտորում. միայն Մահձեռը սակավ մարդկանցով գեան է ընկնում ու փախտաւոր՝ դիմում:

Վլիթը վախճանվում է տասը տարի տիրելուց հետո, իշխանությունը վերցնում է Մուլեյմանը՝ երեք տարի<sup>1</sup>: Սա իր գահակալության երրորդ տարում զորք է գումարում Մալիմի ձեռքի տակ, որոնք զայով Դարբանդ (իմա՝ Դեբրեկոյ) քաղաք վտարեցին Հոնաց զորքերին այնտեղից ու Հալաձեցին: Եվ մինչդեռ պարսիսն էին քանդում, գտան նրա Հիմբի տակ մի մեծ վեճ, որի վրա զրված էր. «Ինքնակալ կայսր Մարկիանոսը կատուցեց այս քաղաքն ու այս աշտարակը՝ յուր դանձերից մեծաքանակ տաղանդներով՝ Սակայն Հեփնե՝ ժամանակներում Իսմայիլի որդիները քանդելու են այն և իրենց զանձերով նորոց վերակառուցելու են»: Իսկ երբ գտան դրածը, զաղարեցին քանդելուց և վերստին կառուցեցին կործանված պարսպը՝:

Օմարից հետո (98) վեց տարի իշխան է գալիս Եգիտը<sup>10</sup>: Սա զրվահար չարությունեց մղված մարտնչում էր քրիստոնյա ազգերի դեմ. Հրամանաց էր փչրել Տիրոջ ճշմարիտ մարդեղություն կենդանագիր պատկերները, նրա հետևորդներին՝ նույնպես. խորտակել Քրիստոսի սերունական խաչի նշանները, որ տարբեր սեղերում կանդեցված էին Համազոյ Երրորդությունը<sup>11</sup> երկրպագելու նպատակով. ա-

պա հրամայում էր սպանել խոզերին ու ոչնչացնել երկրի երեսից: Սակայն ինքը զեւերի զորութունեց խնդրամահ լինելով սատակում է: Նրա փոխարեն տիրում է Հեյմը<sup>1</sup> (ժր) տաններու<sup>2</sup> տարի: Սա ալիի ծանրացրեց Հարկերի սակը մեր Հայոց՝ աչխարհի վրա. ապա սկսեց Հոխարտայ Հոռոմների Լեւոն կայսեր դեմ, թե պիտի գաս և Հարկատուությամբ Հնազանդվես ինձ: Բայց երբ [Լեւոնը] Հանձն չառավ՝, ուստի զագագած, իր եղբայր՝ Մալիմին մեծաքանակ զորքով ուղարկեց և Հունաց երկրի վրա: Սա գալիս և Կլիկիայով անցնում է Մյուսուզոն՝ երկիրը, որը թարգմանվում է Միջերկրայք՝, և Հասնում մինչև Բյութանիա, մեծ ջարդ են տալիս Հունաց զորքին, ավարի ենթարկում՝ նրանց երկիրը, ապա վերադառնում իրենց աշխարհը:

Մեծ իշխան Իսմայիլը տեսնելով նրանց Հաղթանակը, նորից է զորք Հավաքում, տալիս է իր եղբայր Մոսլիմ զորավորի ձեռքը և ուղարկում Հունաց կայսեր վրա<66>: Սա մեծ երդումով խոստանում է չվերադառնալ նրա մոտ, մինչև չկործանի Կոստանդնուպոլիսն ու սուրբ Սոֆիան:

Եվ առաջ չարվելով Հասնում է մինչև Գոնտուկան ծոփի եզերքն ու Հրովարտակ է գրում Լեւոն կայսրին. «Ինչո՞ւ ևս այդպես Համատում և չես գալիս մեզ Հնազանդվելու. չսեցի՞ր այն բոլոր չարիքների մասին, որ թափեցինք ուրիշ թագավորութունների գլխին, որոնք՝ մեր դեմ կանգնեցին, քանզի փչրեցինք նրանց ինչպես իեցեցին ստով, և այն խոստումը, որը տալի մեր Հայր Իսմայիլին, գլուխ բերեցինք: Ահա, երդում եմ տալի՝ չվերադառնալ իմ երկիրը,

1 Չ. ի սայլին  
2 Ղե. գր. ժԼ:  
3 Չ. սայլման  
4 Ղե. սան երկու և ամիս ութ  
5 Ղե. իրկրոց  
6 Չ. զբազալաշտարակս  
7 Տ. տաղանդիք

8 Չ. յեանի  
9 Ղե. գր. ժԲ:  
10 Չ. իգիտ - Ղե.՝ Յեգիտրո  
11 Ի Տ. պակասը Հաստանց, սխեղ ի քաղից՝ զոր ուրեք ուրեք - Ղե.՝ ուրեք ուրեք կանդեղ էին յսուտե (Աղբյ) ի պատճառս...

1 Չ. սաս՝ սրչամ - Ղե.՝ Շամ որ է Հեյմ:  
2 Ս. ամնայի ուրեք՝ Հեյամ  
3 Ղե.՝ սան սասն և ինն  
4 Չ. գր. ժԷ:  
5 Տ.՝ եղբայր  
6 Չ.՝ միտրոսե - Ղե.՝ միտրոսե  
7 Չ.՝ միջերկրայք  
8 Չ.՝ աւարի սասնան  
9 Չ.՝ որ

մինչև չվերացնեմ իսպառ քո թագավորութունը և չկործանեմ քո այդ պարսպապատ քաղաքը, և Սոֆիա կոչվածը, որ քո պաշտամունքի օջախն է, պետք է լողարան դարձնեմ իմ զորքերի Համար, իսկ այն խաչափայտը, որին երկրպագում ես, պիտի ջախջախեմ՝ քո գլխին խփելով»:

Իսկ կայսրը, երբ ընթերցեց՝ այպանութիւն այդ գիրը, Հայրապետներով ու քաղաքի ամբողջ բազմութիւնը Հանդերձ, ընթանում են դեպի սուր Սոֆիա, տարածում են այդ նախատինքի գիրը Տիրջ ստն և երեք քո շարունակ, սոված ու Ժարավ աղօթում և երկրպագում էին<sup>1</sup>: Այնու Հետևե գրում է Մսիմ գորավարին՝ Հետևյալ պատասխանը. «Ինչո՞ւ ես պարծնեմ չարագործութիւնք, Հորագույնդ անօրնութիւն, որով Հետևե եթե՞ Մովսեսի՞ զավագանը, որը վկան էր Քրիստոսի Խաչի գորութիւն, ջրասույց արեց Փարավոնին, որքա՞ն ես առավել Հեշտութիւնք սուրբ Խաչի նշանը՝ կկործանի քեզ՝: Ահա, եթե Հեռանա մեզանից՞, ապա բարին կընտրես անձիդ և գորքերիդ Համար, իսկ եթե ոչ, արա, ինչ որ մտբումդ գրել ես»: Իսկ Մսիմ գորավարը, երբ կարդաց այդ պատասխանը, զազանային դայրոյթով Հրաման է առաջ<sup>2</sup> զորքին լցվել նավերը, որ<sup>3</sup> կազմ ու պատրաստ էին, և առաջ շարվեցին ու մոտեցան քաղաքին: Լեւոն կայսրը, երբ տեսավ խոտ անտառի<sup>4</sup> նման ծովի վրա ամբողջած բազմութիւնը, Հրամայեց պատրաստի ամրացնել պարսպի<sup>5</sup> երկաթյա վանդակորմերը, շղթայազորք կապանքներ<sup>6</sup> գնել ամրացի դռանը և ոչ մեկի թույլ

չտվեց պատերազմել թշնամու դեմ, այլ Աստծուն ապավինելով՝ բարձունքներին սպասում է էին նրանց այցելութիւն:

Եվ ինքը՝ թագավորը, վերցնելով անհաղթելի նշանը (Խմա՝ Խաչի) իր ուսերին<sup>7</sup>, Հայրապետն ու ժողովուրդների ամբողջ բազմութիւնը մտներով և բուրումնալիտ խնկարկութիւնք օրհնեցութիւն էին մատուցում. ապա թագավորը դուրս է գալիս քաղաքի դարպասի դեմ, Խաչի նշանով Հարվածում է ծովի ջրին՝ երեք անգամ կրկնելով. «Օգնի՛ր մեզ, Քրիստոս, աշխարհների փրկիչ»: Եվ Հենց նույն ժամին ծովը խորքերից զղբալով խորասույց է անում Խամայիլ բոլոր զորքերին. մտացածները ալիքների ծփանքից քշվեցին<sup>8</sup> զեպի Թրակիայի ափերը, ոմանք էլ՝ դեպի Հեռավոր կղզիները, որով Հետևե ավելի քան (ծ) Հիսուս բյուր մարդ կար: Իսկ Մսիմին բռնեցին ու ներկայացրին թագավորին. և նա ասաց. «Իմ ուզած դատաստանը Աստված կատարեց, ուստի ես ես իմ ձեռքը չեմ կպցնի քեզ: Գնա քո երկիրը և պատմիք այնտեղ Աստծո Հրաշագործութիւնքը»: Եվ նա ամօթահար գնաց իր երկիրը և այլևս քաջութիւն չունեցավ իր անձի վրա՝ սուր կրել»:

Այդ նույն ժամանակ Խամայիլի իշխան Հեշմըը Հայոց վրա է ուղարկում Մաճմեհի որդի Մրվախին: Սա Վասակ Բագրատունու<sup>9</sup> որդի Աշոտի պատրիկ է նշանակում Հայոց վրա: Դրանից Հետո վախճանվում է Հեշմըը և նրա փոխարեն տիրում է Վլիթթ մեկ ու կես տարի: Սրան կուռայրի<sup>10</sup> Հրամանով սպանում են իր նախարարները և նրա փոխարեն նշանակում են Սուլեյմանին<sup>11</sup>:

1 Ձ.՝ Խաչիցից  
2 Տ.՝ իրեն ընթերցու  
3 Տ.՝ կատարել  
4 Ձ.՝ գորուար  
5 Ձ.՝ թէ: - Տ.՝ քի (կթէ)  
6 Ձ.՝ մովսէի  
7 Ի Ձ.՝ պախալը՝ խաչի

8 Ձ.՝ զնկ  
9 Տ.՝ անգրէն  
10 Ձ.՝ տա  
11 Ձ.՝ գոր  
12 Ձ.՝ պարտապան  
13 Ձ.՝ պարտապան  
14 Ձ.՝ պարտապան

<sup>9</sup> Կուռայրի Հրամանով՝ կուռայրի կարգաչոյցների խմատեց (տաս՝ 130)  
1 Տ.՝ ի վերայ յուսոյն  
2 Ձ.՝ վարեպաշտ

3 Դե.՝ դ. ժԹԻ:  
4 Ձ.՝ բագրատունի  
5 Ձ.՝ տառ և ի տարբեր՝ Ալիսան

Իսկ Մրվանը, երբ լսում է Վիթի մահը, չուսափելով Հավաբուն է իր զորքերին և անցնելով Եփրատ գետը պատերազմում է Մուլեյմանի դեմ, պարտություն է մատնում նրան, սպանում և տիրում ինքը վեց տարի: Ապա պաշարում է Դամասկոսը, զրավում և քաղաքի բնակիչներին՝ Իսմայելի որդիներին չորս ցցերի վրա կապելով, Հյուսնական գործիքներով տաչում են նրանց դեմքերը, հղի կանանց Հերձում են մեջտեղից, արու մանուկներին որմերի՝ մեջ են թաղում, իսկ աղիկներին գերի են տանում: Եվ կատարվում է Ամովնի մարգարեությունը. «Դամասկոսի երեք ամբարշտությունները պատճառով և չորս Համար նույնպես չսխալի [կարողանան] խուսափել զրանցից»<sup>1</sup>: Քանզի մտքերով և զգայություններով ախտավոր էին՝ մահվան նրկունքն էին կատարում, սպանություն, ընչաբազցություն, ցանկատարություն՝ [մեղքերի] մեջ էին. և չորրորդը, որ Աստծո այցելությունը աչք չունեին՝:

Այս նույն ժամանակներում էր իշխում Աշուտ պատրիկը, որը տիրապետեց (ժե) տասնևհինգ տարի, փոստավոր կերպով, բայց Հեսու կուրացվեց Գրիգոր Մամիկոնյանի կողմից. զրանից Հեսու ապրելով (ժղ) տասնևչորս տարի՝, վախճանվում է՝ ու զրվում տապանում Դարյոթե<sup>2</sup> դյուղում:

Եվ մինչդեռ Մրվանն էր տիրապետում և մարտնչում էր իր ազգակիցներին դեմ, Խորասանից՝ մեծ զորք է շարժվում, որոնց գլխավորում էր ուն Արղլա, անցնում են Տիգրիսը՝

Տանկաց մեծ բանակառեղ Ակողա՝, եւ՝ ճակատամարտ են տալիս, սպանում են Մրվանի զորքերից (յո) երեք Հարյուր Հազար մարդ և Հասնելով Մրվանին՝ նրան էլ են սպանում՝:

Մրվանի փոխարեն տիրում է Արղլան: Սա՝ ուղարկում է իր եղբորը՝ մյուս Արղլային չրջագայելու իր տերություն ընդ իր կողմերում և գանձել Հարկերը բոլորից՝ թե մեռածներից և թե ողջներից. ըստ մարգավթի: Սա բազմապիսի նեղություններով ու վշտերով տանջում էր ամենքին, փոսնազում էր և Հասցնում ծայրահեղ ազդատություն: Քահանաներին ստիպում էր բացահայտել մեղատեղի թիվը. որպեսզի նրանց Հարկերը ընտանայեղները՝ Հատուցեն. և կապարն կնիք էր կախում բոլորի՝ պարանոցից (99): Հայոց երկրից էլ գնալով՝ Խորասան, Եգիպտոս և Պենդագալիս նույն չարիքներն էր գործում: Իսկ Հայաստանում Հրամանատար է թողնում Ոսաղայո՝ որդի Իգիտին. սա Հայոց իշխան է Հաստատում Բագարատ Բագրատունու որդի Սահակին, որը գեղեցիկառես երիտասարդ էր և Հարորդակից սաստվածային երկյուղին:

Երեք տարի՝<sup>3</sup> անց վախճանվում է Արղլան և իշխանությունը զրավում է նրա եղբայր մյուս Արղլան՝ երկու տարի՝: Սրա օրերում Աւետի որդի կայսր Կոստանդինը շարժվելով դեպի արևելք զբաղվում է՝<sup>4</sup> Կարին քաղաքը, կործանում է նրա պարիսպները, բաց անել է տալիս նրա գանձատունը և քաղաքի՝<sup>5</sup> արակինոս՝<sup>6</sup> բնակիչներին՝ իրենց ու-

\* Կախատությունը, խոստար անհավանական է թուրքմ. մտափոխ խոստարով:  
 1 Չ.՝ գրեական  
 2 Չ.՝ որմեր  
 3 Ամովն. Ա. 3:  
 4 Չ.՝ պոստոնայ  
 5 Ղե.՝ գլխավորել

6 Ղե.՝ գլ. ԱԿԻ:  
 7 Ղե.՝ սուս տասն և եփթ  
 8 Ղե.՝ սուս տասներեք  
 9 Չ.՝ վախճանի  
 10 Չ.՝ գարուն: Ղե.՝ գլ. ԱԶ:  
 11 Չ.՝ խորասանայ

1 Չ.՝ սասոց  
 2 Ի Չ. պակասե՛ր՝ և  
 3 Ղե.՝ գլ. ԱԶ:  
 4 Ի Չ. պակասե՛ր՝ որ  
 5 Չ.՝ փոստեղեք  
 6 Չ.՝ բնակիչի  
 7 Ղե.՝ գլ. ԱԿ: Աստի և անդ մինչև ցփրան Երբորդ պատեր ի Տագարին:

8 Չ.՝ և գնաց  
 9 Ղե.՝ Ոսաղի  
 10 Չ.՝ անթ  
 11 Ղե.՝ սուս բուն և երկու  
 12 Այ Չ.՝ և լսու  
 13 Չ.՝ աշխարհին  
 14 Երթնակի՛ք՝ գնարակնուս

նեցվածքով տանում է Լուսնայ աշխարհը: Բայց Հաջորդ տարվա սկզբին Իգիտը վերականգնուցւմ է Կարին քաղաքը<sup>1</sup> և ուրիշ տանիկների բնակեցնում այնտեղ: Դրանից Հետո խմայելացիների մի զուռն, նրանց զորավարի անունը Ալի-ման<sup>2</sup> էր, Պարսկաստանի կողմերից, սապատակում է Վապուրական աշխարհը: Նրանց զեն են զուրս գալիս Մահակ և Համազասպ Արքունի իշխանները և արևը գործի զենելով թշնամիներից բազմաթիվ մարդկանց խողտողեցին: Այնտեղ Համազասպը կարծիքը խցցված ընկնում է երկվարից և սպանվում թշնամիների ձեռքով:

Բայց Մահակը տեսնելով այդ վրա է Հասնում, շատերին խոցոխողում և ինքն էլ սպանվում նրանց Հետ, սրանք Վահանի որդիներն էին: Նրանց եղբայր Գազիկը սպաստամբում է խմայելացիների զեն, ամբանում է Ողական ամրոցում, սպա զորքով զուրս է գալիս և ավերում Պարսից աշխարհը: Նրա վրա են գալիս Իսմայիլի զորքերը, շրջապատում ամրոցը և մեկ տարի պաշարված պահում: Եվ երբ չեն կարողանում<sup>3</sup> ոչինչ անել, զավելով ու նենգությունը նրան Հաշտություն գալ են առաջարկում. սակայն [Գազիկին] բանտ են զնում, որտեղ էլ վախճանվում է: Նրա որդիները Համազասպն ու Մահակը կան իրենց Հոր սիրտարեն:

Իսկ մյուս Արզրայի իշխանություն<sup>4</sup> և Իգիտի Հրամանատարության ժամանակներում խիստ ծանրանում է Հարկապահանջության լծի անուրը մեր Հայոց աշխարհի վրա, որովհետև Հարկերը ոչ թե ըստ երդամքի էին, այլ ըստ մարդկանց գլխաբանակի, այնպես որ անզամ նախարարներն ու մեծատունները չքավորության և աղքատության<sup>5</sup>

1 Ձ. կարևոց քաղաք  
2 Ղև.՝ Մուլբան  
3 Այլ Ձ.՝ Կարպան

4 Ձ.՝ իշխանութան  
5 Այլ Ձ.՝ ի նշուր աղքատութիւն

զուռն ընկան: Դրա համար թեպետև Մահակ իշխանն ու Տրդատ Հայրապետը բազմից բողոքներ էին ներկայացնում, սակայն ոչինչ չէր օգնում, քանզի մեր մեղքերի պատճառով Տիրոջից էր պատուհասը սաստկացած, ուստի և կարկուտը, մարտին ու երաշությունը եկան որպես մեր մեղապարտության պատուհաս: Եվ Մուսնի իշխանության օրերին նահատակվեցին Մահակն ու Համազասպը, որոնց սրով գլխատեցին<sup>6</sup>, ապա կարեցին խաչափայտից (մղ) երկու Հարյուր երեսունչորս թվականին:

Մուսնի մեկ տարի տեղեկով իշխանությունը<sup>7</sup> սատկում է<sup>8</sup>, և նրանից Հետո [գալիս է] նրա եղբայր Ահարոնը: Սա Ատրպատականն ու Հայաստանը՝ Վրաստանով ու Աղվանքով Հանդերձ, Հանձնում է իր եղբայր Օրեթյային<sup>9</sup>: Մա Հոռոմ ազգությունը ուն Իրն Գուկի<sup>10</sup> ուշարկում է Հայաստան Հարկահավաքության, որը գալով Իլլին քաղաքը սատիկ Հարկապահանջությանը կեղծում է երկրի բնակչությանը: Ուստի Հավաքվում են բոլոր նախարարներն ու Եսայի կաթողիկոսը, աղաչում են թեթևացնել Հարկերի ծանրությունը կապանքները, ինչ որ պահանջում էր. սակայն ոչինչ չի օգնում, այլև նորից է ուղարկում Հարկահաններ և ստիպում առաջինի<sup>11</sup> կրկնակին Հավաքել, և կապարյա կնիք է զնել տալիս բոլորի պարանոցներին<sup>12</sup> (100) ու մեկիկ-մեկիկ պահանջում էր անբանակ (զուղէս)<sup>13</sup> սուրբեր, մինչև որ մարդկանց Հասցնում է վերջին անանկություն և անտանելի նեղությունների այդ չարաչուք գահից: Այնպես որ

\* Հավանաբար՝ ուզանք, պահանջանք:

1 Ղև. գլ. ԻԹ-ԼԳ.  
2 Ձ.՝ զորույն  
3 Ձ.՝ սատակի  
4 Ղև.՝ Արեթյայ  
5 Ղև.՝ Իրեզովի

6 Այլ Ձ.՝ գլխաթեղան  
7 Ղև.՝ գլ. նեկ.  
8 Ղև.՝ ետ մի կնիք պահանջը պատճառով  
9 Այլ Ձ.՝ Կարպան

տասներկու Հաղար մարդ փտարանդի եղած զնացին Հու-  
նայ աշխարհը, որոնց առաջնորդում էին Շապուհը՝ Ամա-  
տունայաց տոհմից եւ նրա՝ որդի Համամը: Բայց թշնամիինե-  
րը նրանց Հնտապնդելով՝ Հասնում են Կողի սահմաննե-  
րում. իսկ նրանք՝ Հետ են դառնում, պատերազմի են բռն-  
վում, փախուստի են մատնում տաճիկներին եւ իրենք անց-  
նում են Ակամսիո՝ գետից այն կողմ, որը սկիզբ առնելով  
Տայոց երկրից, անցնում է Հյուսիս՝ արեւմտայան կողմով եւ  
թափվում Պոնտական՝ ծովը: Այդ բանն իմանալով Կոս-  
տանդին կայսրը բնակեցնում է նրանց բարեբեր եւ արգա-  
վանդ երկրում: Իսկ այն սինչբորները՝ որոնք՝ մնացին մեր  
երկրում՝ սաստիկ կարոտության պատճառով, անձնատուր  
եղան ծառայութեան Իմայիլի որդիներին՝ եւ դարձան  
նրանց Համար փայտ կտորողներ ու Ջուր կրողներ:

Այդ ժամանակ՝ Հայոց Եսայի կաթողիկոսը սրբակրօն  
վարքով ավարտում է իր կյանքը: Ապա Դեն Դուլը<sup>11</sup> եկեղե-  
ցու բոլոր գանձերն ու սպասքեղեղեղ<sup>12</sup> սպառնալիքով ու  
ստիպողաբար բերել է ապլիս իր առջև եւ վերջնում այն աս-  
մենք, ինչ Համակի է թվում իրեն: Եվ բազմատեսակ կա-  
շառքներով Հայրապետական աթոռին Հաջորդում է Ստե-  
փանոսը<sup>12</sup> < 67 >:

1 Սկզբ 2. պակտեզ՝ եւ Համամ որդի նո-  
րա  
2 Օր. Բյուսնի՝ նուցին  
3 Արտեմ երկրին 2. - Օր. Բր.՝ Ակամ-  
սիո՝ - Պե.՝ Ակամսիոս  
4 2.՝ գհւտուսով երկրայ  
5 Ղե.՝ Աղբիտասու թ Պետաս

6 2.՝ սինկ թրքե: - Ալ 2.՝ այզ  
7 Օր. Բր. եւ 2.՝ որ  
8 Օր. Բր. եւ 2.՝ որդւյն  
9 Օր. Բր.՝ այլով ժամանակի  
10 Օր. Բր.՝ Ին Դուլ  
11 2.՝ զուսա  
12 Ղե. գ. թԲ:

Ուրիշ դասնագրից՝

Տաճիկների Ամիր-ալ-մուսնիների մասին

Ինչպես վերևում ասացինք, (կը) վաթսուներեթ թվական-  
ին երեսաց տաճիկների Մահման մարզարեն եւ տիրապե-  
տեց երկու տարի: Ապա՝

Աբուբարբը՝ (կ) վաթսուս տարի.

Օմառը՝ (ժա) տասներեակ տարի.

Օթման իբն Աթմանը՝ (ժ) տասը տարի.

Մեր Մովսիսն՝ (իդ) քսաներեք տարի.

Իզիտը՝ (զ) վեց տարի.

Մավիա իբն Յիզիտը՝ (ա) մեկ տարի.

Մրվանը՝ (ա) մեկ տարի.

Աբդլանկիք՝ իբն Մրվանը՝ (ի) քսան տարի.

Վլիթ իբն Աբդլանկիքը՝ (թ) ինը տարի, մինչև (ճկ) Հայոց  
Հայրյուր վաթսուներեք՝ թվականը: Իսկ Վլիթից Հետո եկավ  
Մրվան ամիր-ալ-մուսնին՝ (ճղը) Հայրյուր իննսուներկու թվա-  
կանին: Աբդլան մուսավ (մթթ) երկու Հայրյուր տասնինը թվա-  
կանին: Եկավ Մահդիթ ամիր-ալ-մուսնին: Ահարոնը մեռավ  
(ճմն) Հայրյուր երեսունհինգ թվականին: Մյուս Աբդլա իբնը, ո-  
րը՝ Հոռոմների [երկիրը] մտավ: Ահարոնը, որի՝ եղբայր Ջափը-  
րը (մղը) երկու Հայրյուր իննսուներեթ թվականին մեռավ:  
Իսկ Ջափրը՝ (յժա) երեք Հայրյուր տասներեակ թվականին:  
Ահմատը, որը Յահեի որդի Ալիին Հայոց ամիրա ուղարկեց եւ

1 Ի ցանկին 2. եւ S. ունին յաջմ որեւեղեթ  
2 Երեքին որ.՝ Սովիս  
3 Օր. Բր.՝ Իդիս  
4 Օր. Բր. սուս եւ թ սարեն.՝ Ապրվելք  
5 Օր. Բր.՝ ճԳԲ.

6 Օր. Բր.՝ Ահարոն... Մուսավ  
7 Օր. Բր.՝ միս իբն... որ  
8 2. եւ Օր. Բր.՝ որ  
9 Օր. Բր. սուս եւ թ սարեն՝ Ջափը



Աշտոին՝ իշխանաց իշխան կարգեց, (յժա) երեք Հարյուր տասնամեկ թվականին\* :

Թեպետև շատ Գանք թավեցեցին քարադրել՝ կարճ ու Համառոտ նախորդ պատմադրական գրվածքներից<sup>1</sup> (և ստույգ են սովածները), սակայն ամիր-արմուսիներից ոմանց առուններն ու ժամանակները այլ եւ այլ պատմութուններում գտանք. Հաստատապես չգիտեմ՝ նրանք երկակի<sup>2</sup> անուն են ունեցել, թե՞ մեկը մյուսից աՀավոր<sup>3</sup> լինելով՝ որպես շքեղաշուք ինքնակալներ են Հանդես գալիս, որոնց անունները<sup>4</sup> գրոց<sup>5</sup> Հիշատակի են արժանացել. բայց մեծք բոլորն այստեղ գրի առանք, որպեսզի գրածներին մե՛կ ոչ մի բան պակաս մնա: Եվ այն էլ Հաստատապես իմացել, որ (և) թարթաունվեթ թվականին և Հերակլի թագավորութան օրվերը տարում երեսուց Մահմետը եւ այնուհետև սկսվեցին բնութայունն ու նրանց տիրակալութունը աշխարհի վրա՝ 687. ու մնացին շատ երկար՝ մինչև Հայոց (յկզ) երեք Հարյուր վաթսուչորս թվականը եւ Սմբատ թագավորի, որը իաշափայտից կախվեց, (իզ) քսանչորսերորդ տարին, մինչև Հունաց Վասիլի որդի Լեոնտի թագավորերը: Իսկ դրանից առաջ եւ հետո էլ թե՛նև ուրիշ ազգերը՝ չարիքին նրանց վրա, սակայն իրենք իրենց բաժան-բաժան՝ եղան, միմյանց դեմ թշնամացան. քանզի ոչ միայն ամենանշանավոր քաղաքները նվաճեցին եւ բռնությամբ՝ տիրապետում էին, այլև աննշան քաղաքների ու բերդերի ինքնակալ իշխաններ<sup>6</sup> եղան եւ սաստիկ կատաղությամբ միմյանց դեմ լարվեցին:

\* Ինքը՝ Առաջին էլ է նկատում, որ այստեղ ինչ-որ խնձհան է, աՀա շարունակութունը:

- 1. Զ.՝ ստաբոնոց Հայոց ցարտ
- 2. Եր. Բր. պակասե՛ր գրել
- 3. ԾՕր. Բր. պակասե՛ր պատմադրական: -
- Բ.՝ տես
- 4. Զ.՝ աՀավոր
- 5. Այլ Զ.՝ գտնուած
- 6. Զ.՝ գրոց
- 7. Օր. Բր.՝ սպալոքք
- 8. Ի Զ. պակասե՛ր բաժանել
- 9. Օր. Բր.՝ բաժանալուի (?): - Այլ Զ.՝ բաժանելու
- 10. Օր. Բր.՝ ինքուանք

Հունաց կայսրեր Կոստանդինանոսից այս կողմ, նրանց անուններն ու ժամանակները

Դիոկղետիանոսի՝ երրորդ տարում Հայոց վրա թագավորում է Տրդատը. իսկ Դիոկղետիանոսը երեքից հետո (մէ) տասնեյոթ տարի<sup>1</sup> եւս թագավորում է: Ապա Կոստանդինը<sup>2</sup> (յր) երեսուներկու տարի. սա իր իշխանության երկրորդ տարում արքունիքը Հռոմից տեղափոխեց Բյուզանդիա կղզու վրա, պատագարեց գարձերեց մեծ քաղաք եւ իր անունով կոչեց Կոստանդնուպոլիս. այլևս բերելով իր հետ մի քանի մասունքներ Պետրոսի ու Պողոսի նշխարներից՝ թագավորության ամրապնդման համար. հետագայում տեղեւորական մայրաքաղաքում կառուցում է մեծ եւ հռչակավոր եկեղեցին, որը Հարմարազույն անվամբ Առաքելոց<sup>3</sup> է կոչում. սպա երրորդ տարում ժողով է գումարում՝ բյուզանացիների Նիկիայում (յժր) երեք Հարյուր տասնևութը Հայրապետների [մասնաժողովքյամբ] Արիստ Ալեքսանդրացու պատճառով, որը Աստուծո Որդուն սովորական արարած էր անվանում: Իսկ յոթերորդ տարում իր ժօրն է ուղարկում Երուսաղեմ Քրիստոսի պատվական սուրբ՝ Խաչի խնդրով: Նա խնդրեց եւ ստացավ Պարսից Եազուհ արքայից Դավիթ մարգարեի հնազույ՛թ թագը, որ Հովսափ որդի Հեքեոնիայի զվիթ<sup>4</sup> վերգված էր Նարեզողոնոսը արքայի կողմից, ինչ-

- 1. Զ.՝ ցիփղետիանի
- 2. Ի Զ. պակասե՛ր՝ սա
- 3. Այլ Զ. քոչում ուրե՛ր՝ կոստանտին, կոստանտինուս, կոստանտին:
- 4. Օր. Բր.՝ սաքաքաք
- 5. Զ.՝ ժողով: - Այլ Զ.՝ սուրբ Հայրապետացի
- 6. ԾՕր. Բր. պակասե՛ր՝ սուրբ
- 7. Երկրորդ Զ.՝ գեալիսի պոլիս
- 8. Զ.՝ ր գյուխն

պես ուսուցանում է քեզ՝ Աշոտ անթիպատրիկի՝ որդի Շապուհ Բագրատունու Պատմութիւնը: Սրա քսաննամկերորդ՝ տարին (մղա) երկու Հայրուր իննասուննկերորդ տարին էր Տիրոջ կենարար շարշարանքների: Իսկ նրանից Հետո Հունաց եւ Հոսոսոց վրա թագազորում են նրա որդիներ Կոստանդնուր, Կոստասը եւ Կոստանդիանոսը՝ (իդ) քսաննչորս տարի: Նրանց՝ ժամանակներում Մանգղոս՝ եպիսկոպոսի եղբայր Անդրեասը ստամբուլի շարադրութիւնն է Հորինում. իսկ սրան էլ նշանի երեսուցու մասին նամակ է ուղարկում Կյուրեղ երեսուցանացին:

Այնուհետեւ Կոստանդիանոսի եղբորդի Ղուկիանոսը՝ երկու տարի: Սրա օրերում Ալեքսանդրիայի՝ երանելի՝ Հայրապետ Աթանասը, երկրորդ անգամ Հայաձված լինելով արիանոսներից, Ակութում էր: Նա մահացավ Պարսկաստանում եւ թաղվեց Տարսուսում, ինչպես վկայում է Սոկրատը: Հորիանոսը մեկ՝ տարի:

Վաղնետիանոսը եւ Վաղեր՝ (ժա) տասնեանկ տարի. սա էր, որ Հայոց սուր ներսեւ Հայրապետին եւ բազմաթիվ ուրիշ Հայրերի աքսորեց Պատմոս կղզին, որոնք կերակրվում էին ծովից ինքնին՝ ափ նետված ձկներով: Սրանց՝ տասնեանկերորդ տարում վարձանից՝<sup>11</sup> երանելի Աթանաս Ալեքսանդրացին՝<sup>12</sup> դարձյալ Հայածանքներից: Սրանց օրերում էին նաեւ սուրբ վարդապետներ Բարսեղ Կեսարացին, նրա եղբայր Գրիգոր Նյուսացին ու Գրիգոր Նազիանզանցի՝<sup>13</sup>

աստվածարանը: Գրատիանոսը՝ Հինգ տարի. սրա ժամանակ կիպրացիների Եպիփան եպիսկոպոսը «Պարունակախոսը»՝ գրեց <69>: Սուրբ Թեոդոսը՝ (ժե) տասնհինգ տարի. նա էր Կոստանդնուպոլսի (ճճ) Հայրուր Հիսուս Հայրերի ժողովը գլուխարողը՝ Մակեդոն Հոգեմարտի մասին, որը վաղուց ի վեր մահացած էր: Թեոդոսի որդիներ՝ Արկադիոսը՝ ու Օնորիոսը՝ (իդ) քսանչորս տարի. սրանց օրերում են փայլում Հովհան Ոսկերեանը՝ եւ Եպիփան Կիպրացին եւ Ամոն՝ Ալեքսանդրացին, որը Ալիստարանի ցանկերը՝ զարդարեց, եւ Եվթաղն Ալեքսանդրացին, որը Հրաշագան Հորինվածքով Սուրբ առաքելոցը՝, Փորձք առաքելոցը, Կաթողիկոսի սուաջարանները՝<sup>10</sup>, գլուխներն ու մասնավորները, վկայութիւններն ու տները՝<sup>11</sup> կարգավորեց: Արկադիի որդի Թեոդոս Փոքրը՝ (իբ) քստասուններու տարի. սա Եփեսոսում զումարեց երկու Հայրուր սուրբ Հայրերի՝<sup>12</sup> ժողովը նեստորի մասին, որը Մարիամին մարգածին էր Համարում եւ ոչ աստվածածին. ժողովում որոշվեց նզովել նրան. սրա ժամանակներում էր Հայոց Հայրապետ սուրբ Սահակը, որի օրոք կարգավորվեց (իմա՝ ստեղծվեց) մեր Հայոց լեզվի դպրութիւնը (իմա՝ այրուրենը)՝ (իթ) քսանեփնը գիր Ասորի Դանիելի՝<sup>13</sup> փիլիսոփայից, իսկ յոթ գրերի՝<sup>14</sup> պակասութիւնը ստացավ երանելի Մեսրոպ՝<sup>15</sup> տարոնեցին՝ Աստուց խնդրելով՝:

Մարկիանոսը՝ յոթը տարի. սա իր թագազորութեան եր-

1 Այլ Զ՝ գրեց  
2 Օր. որդի սուրբ անթիպատրիկի  
3 Օր. Բը՝ քսան եւ մեկին  
4 Զ. եւ Օր. Բը. ի տար  
5 Օ՝ ծաղնոսի  
6 Օ՝ աղէքանեղբի - Այլ Զ՝ աղիկանեղբի  
7 Օր. Բը՝ երեսնին

8 Երկուցին Զ՝ յուրիանոս ու ամ կամ՝ ամ ու  
9 Այլ Զ՝ ծով իկն  
10 Զ՝ ի տար  
11 Օր. Բը՝ սուս եւ ի տարեւ՝ վաղնանեցու  
12 Երկուցին Զ՝ սուս եւ ի տարեւ՝ Ալեքսանդր  
13 Զ՝ սպիանոս

1 Օր. Բը՝ զՊարունակախոս  
2 Օր. Բը. և Զ՝ Թեոդոսոս  
3 Օր. Բը՝ որդին  
4 Զ՝ արկաթիւն  
5 Երկուցին Զ՝ սեւրէոս  
6 Զ՝ սեկերեան - Այլ Զ՝ սեկերեան  
7 Զ՝ եւ սն  
8 Երկուցին Զ՝ ցանցն

9 Երկուցին Զ՝ առաքելոյն  
10 Երկուցին Զ՝ առաջարանս  
11 Զ՝ քստան  
12 Երկուցին Զ՝ Հայրս  
13 Զ՝ դանիէլ  
14 Զ՝ գրոյն  
15 Զ՝ մեսրոպ  
16 Օր. Բը՝ խնդրուածք

բորզ տարում զուամբնց Քաղկեդոնի ժողովը՝ քինախնդիր լինելով Նեստորի լուծմունքին, Հրամայեց Նեստորին Խուժաստանից կրկին վերադարձնել, սակայն աստվածային բարկությունը Հասով նրա վրա՝ որդնայից լինելով աստկեց: Լեւոն Մեծը՝ (ձկ) տանյոթը՝ տարի.

Մասոս Լեւոնը՝ (ա) մեկ տարի.

Ջենոն Առաջինը՝ (ա) մեկ տարի՝.

Բասիլիսկոսը՝ (ա) մեկ տարի.

Մասոս Ջենոնը՝ (ժր) տաններկու տարի, սա չափազանց որբրամոլ էր և Բարիկենդանի՝ որը ազահորեն սուտւմ ու խմում էր, մինչև պահեց որպէս լուսարացք, սպա քնից զարթնելով մտի մնացորդներ է գտնում աստմներկ արանքներում, քանզի Հոռոմները սովորություն չունեն ուտելուց հետո լվանալ ու մաքրել իրենց ատամները լվանալու նյութերով, որին օշնան (իժա՝ օճառ) են անվանում, այլ միայն ջրով են ողողում: Ուտի և կարգազրուս է պատրիարքի Հրամանով որպես նգովք, բարիկենդանի վերջում պանրակերությունը՝ թույլատրելի էր նա շրջաբերական է գրում Հունաց և Հռոմոց բոլոր երկրներից, որը Հնեոտիկոն է կոչվում, որով նգովում է Քաղկեդոնի ժողովը և նրանց բարբի, ովքեր Քրիստոսի մեջ երկու բնություն են ընդունում: Սա վերադարձնց Տիմոթեոսին Ալեքսանդրիա, որտեղից արտաբաժան էր Ջենոնի կողմից, և երկրորդ տարում վախճանվեց:

Անաստասը՝ (իե) քսանհինգ տարի, սա Ջենոնի Հետ ուղղափառության միաբանության եկամբ: Հուստիանոսը՝ (թ) ինը տարի, որը Քաղկեդոնական ուղղությունն ընդունեց:

նեց: [Մյուս] Հուստիանոսը՝ (լէ) երեսուներեք տարի, սա տաննորսերորդում Դվինի ժողովում Հաստատվեց Հայոց թվականությունը, իսկ նույնի քաննեերբորդ տարում ալեքսանդրացիք Տասնեկեր ետյակը՝ սահմանեցին, որը Ջատկի տաննորսերորդն՝ է և քաննեությունը շրջապատույտով բոլորում է (չրը) հինգ Հարյուր երեսուներկու տարի: Սա շատ ճշչին պատճառով հայտնվում է իր գորբերեց, փախչում է Խաղիքների խաքան թագավորի մոտ, կնություն է առնում նրա դստերն ու ԻՀնիթիա՝ քաղաքն իրբեմ ժառանգություն, սպա Խաղիքների գորբերի օգնությունը վերադառնում է թագավորելու Կոստանդնուպոլսում, Հաստատվում է իր արքայական աթոռին և Հետագայում կառուցում է մեծ ու հուշակավոր սուրբ Սոփիա եկեղեցին: Հուստիանոսը՝ (ժա) տաննեմեկ տարի, ուղղափառ: Տիրերիոսը՝ (դ) չորս տարի, սա օրբրում եղավ Կոստանդնուպոլսի Հայոց և Հռոմոց ժողովը՝ Քաղկեդոնական սահմանման վերաբերյալ, որում Հայերը պարտություն կրեցին:

Մորիկը՝ (ի) քսան տարի, սա Համար ասում են, թե եղել է Հայոց երկրից, Արագածոտն գավառի Օշական կոչված գյուղից, և Կոստանդնուպոլսից խնամք էր տանում իր գյուղին՝, և սա արգարացնում՝ է այն առասպելի ասածը, թե. «այստեղից Օշական խունկն առաջին»\* < 70 > :

Սրա ժամանակ է սպանվում Պարսից արքա Ռոմիզդը և թագավորում է Վահրամը, իսկ Ռոմիզդի որդի Խոսրովը փախատական եղած ընկնում է Մորիկի մոտ, մկրտվում է Քրիստոսի Հայատով և Մորիկի օգնությունը թագավորում է Պարսկաստանում:

1 Այլ Ջ.՝ անս մե.  
2 ՅՍ.՝ Բր. պատմություն՝ սասվին  
3 Օր. Բր. ասոս և զվին՝ աս մեկ

4 Ջ.՝ քաննեկոս  
5 Ջ.՝ բարիկենդանի  
6 Այլ Ջ.՝ պարեց

\* Խոսք ինչ անհավանական:  
1 Ջ.՝ գլին և տաննեմեկ  
2 Երկրորդ Ջ.՝ չարքասաներբորի

3 Օր. Բր.՝ ԵՀնիցայ  
4 ՅՍ. Բր. պատմություն՝ ցինջե իրում  
5 Ջ.՝ արգարացնացեղք

Փռ(վ)կասը՝ (ը) ութը տարի, որ Մորիկին սպանողն է: Ապա նոսրալը ձգակով յուճել Մորիկի սպանության վրեժը՝ սկսում է սրով ու գերեզմարութեամբ ավերել Հուճաց երկիրը՝, զբավում է սուրբ քաղաք Երուսաղեմը և սուրբ նաչը գերի տանում Պարսկաստան:

Հերակը՝ (յա) երեսուճմեկ տարի, սա յուր թագավորության (ժը) տանևութերորդ տարում սպանում է Սուրով թագավորին՝ և Պարսկաստանից վերադարձնում սուրբ նաչը, որը եղավ Հայոց թվականության (Հէ) յոթանասունևյոթը տարում: Ուրեմն Տիրեր(իսա)ի (ժթ) տանևելին տարվանից և Փրկչի խաչելությունից մինչև և Հերակի (ժը) տանևութը տարին ու փրկչական նաչի վերադարձը բուր ժամանակների գուժարը կազմում է (չղե) Հինգ Հարյուր իննսունհինգ տարի, իսկ Ազամից սկսած՝ (ըջէ) Հինգ Հարյուր ինն Հարյուր յոթը տարի:

Կոստանդինը՝ (գ) երեք տարի, սրա ժամանակ Տաճիկները վերցրին Ասորիքը և Երուսաղեմը Հարկի տակ դրին: Կոստանդին որդի Կոստանդինը՝ Հերակի թոռը (ժթ) տասնինը տարի, սրա երկրորդ տարում զբավվեց Գլինը տաճիկների կողմից: Կոստանդին Գ՝ (ժզ) տասներեք տարի: Կոստանդին որդի Հուստի(նի)անտը՝ (է) յոթը՝ տարի, սրա առաջին տարում Հայաստանին, Վրաստանին և Ազովանքին սփրեցին Հյուսիսային ազգերը (իմա՝ ցեղերը), որոնց նազիրներ են ասում՝:

Լևուր՝ (գ) երեք՝ տարի.

Աղսիմարտը՝ (է) յոթը տարի.  
Թուսար՝ (զ) վեցը տարի.  
Փրկչպատը՝ (ը) երկու տարի.  
Արտանը՝ (ը) երկու տարի.  
Թեոդոսը՝ (ա) մեկ տարի.

Լևուր՝ (իդ) քսանեչորս տարի, սրա (ժը) տաներկու տարում Տաճիկները Նիկիա են գալիս: Կոստանդինը՝ (լզ) երեսուներեք տարի, սա իր թագավորության (իս) քսանևմեկերորդ՝ տարում զբավեց Կարին քաղաքը՝ Հայոց (մզ) երկու Հարյուր չորս թվականին, իսկ երկրորդ տարում՝ [Հայոց] (մե) երկու Հարյուր Հինգին Հայոց ամիրա Իգիտը կառուցեց Կարին քաղաքը:

Լևուր՝ (ն) Հինգը տարի:

Կոստանդինը և յուր մայր Եռինեն՝ (ժ) տաս տարի, սրանց սրերում՝ տեղի ունեցավ պատերազմի Հաստանքը Հռոմում՝ (մլէ) երկու Հարյուր երեսույոթը թվականին: Սրանց մասին պատմում են, թե տեսել են մարմարյա մի մեծ տապան, ահազին ընդարձակածավալ և զարմանալով նրա մեծության վրա՝ Հրամայում են՝ չուռ տալ տապանի կափարիչը և զտնում են նրա ներքի՝ կողմում զբված. «Ինձ ծածկելուց քեզ ի՞նչ օգուտ, քանի որ Կոստանդին թագավորի և նրա մայր Եռինայի՝ ժամանակներում արեգակը տեսելու է ինձ»:

Նիկիփորը<sup>10</sup> (թ) ինը տարի, սա (մկ) երկու Հարյուր

1 Օր.՝ Բր.՝ գաշխարհ  
2 Սլլում 2. պրկչաւը՝ թագաւորս  
3 Երկրքն 2՝ ամս Է.

4 Ալլ 2՝ օց ամի  
5 Օր.՝ Բր. և Ալլ 2՝ ամս Է.

1 2՝ ասրոս  
2 Օր.՝ Բր.՝ Կուսր  
3 2՝ Թ.՝ ամի  
4 Օր.՝ Բր. և Ալլ 2՝ Է սորս երկրորդ աս-  
մի: - 2՝ և երկրորդ ամի  
5 2՝ Ղեռն

6 2՝ ասր  
7 Օր.՝ Բր.՝ Հրամայեալ  
8 2՝ աս ներքուսայ  
9 2՝ երկայ  
10 2՝ Կիկիփոր

վաթսուն թվականին մտավ Բուշդարիա եւ կործանվեցին ինքն էլ, իր ժողովուրդն էլ:

Միքայելը՝ երկու տարի, սրա ժամանակ Թրակիայի՝ ափերումը եղավ: Լեւոնը՝ (ե) Հինգ տարի, եկան ՅՆամինները Ոսկի Դուռը, գրավեցին բազում քաղաքներ, գերեցին Մակեդոնիայի մայրաքաղաք Արիդանապոլիսը: և<sup>2</sup> Լեւոնը կործանեց պատկերները: սա էր Բյուզոնը<sup>2</sup>, Կամաուսը եւ Արեւադուպոլիսը կառուցողը՝ (մկն) երկու Հարյուր վաթսունհինգ թվականին:

Միքայելը՝ (թ) ինը տարի, սրա ժամանակներում Հայտնվեց Թովմա մղղղեցնողը եւ տեղի ունեցավ քրիստոնյաների խառնաշփոթությունն ու կործանումը: Բայց (մՀբ) երկու Հարյուր յոթնասուներկու թվականին Միքայելը պայքարում է Թովմայի դեմ, բռնելով կտրում է նրա ձեռքերն ու ոտները եւ խաչում փայտի՝ վրա. այնուհետեւ Միքայելը պատերազմում է Տաճկաց զորքի՝ զեմ, նրանցից շատերին աստվաչնում<sup>3</sup> է Կուռն ավանում<sup>4</sup>, Հաղթում է նրանց եւ Անկյուտիային<sup>5</sup>:

Իսկ (մՀբ) երկու Հարյուր յոթնասուներեւթը թվականին վախճանվում է Միքայելը եւ (ժգ) տասներեք տարի թագավորում է նրա որդի Թեոփիլոսը: սրա օրերում տեղի ունեցավ Հոռոմլիերինների՝ գալուստը Բանանի<sup>6</sup> գափառ<71>: Հարձակվեցին Գոմանձը պոլաքաբաղաբի վրա եւ շատ շատերին խողխողեցին սրով: Իսկ Թեոփիլոսը զնաց զեպի Խաղտիք, կամընով զուրս եկավ ցամաք, Հայերից շա-

տերին գերեց՝ իրենց ընտանիքներով՝ Հանդերձ, եւ Հյուլպատավորութիւնը՝ պաշտոնը, այսինքն այսուհյուլպատ պատրիկութիւնը տալով՝ (103) Շապուհի որդի Աշուտին, թողեց նրան Սպեր գավառում, իսկ ինքը Թեոդուպոլիսցիներից գանձում է Հարկն ու այնտեղից վերադառնում: Այնուհետեւ Հոռոմլի մարդիկ՝ գալիս են Վանանդի Կարճկաբար պոլղը եւ կոտորում Իւմայիլի որդի Սահակի ձեռքով: Եվ նույն տարում Թեոփիլոսը մտնում է Ասորիք, զբաղվում Ուրբիլի՝ քաղաքը եւ Այմուլատում պատերազմում է տաճիկների դեմ ու Հաղթում: Սա զեպի արեւելյան կողմերը իր արշավանքի ընթացքում զբաղվում է Հայոց Մմու բերդը, Ասաղիներ, Անծիկերը եւ Գեղամա գավառից Ալբերդը եւ Խոզանն ու Չորրորդ Հայքը [գատարկում է] մարդկանցից ու անասուններից, անապատ դարձնում: Նրանից Հետո թագավորում է նրա որդի Միքայելը (իգ) քսանչորս տարի բայց սա անխլաբար (իւմ՝ գաղտնի կերպով) մեռնում է Վասիլի կողմից, որը թագավորեցած էր իր Հետ: Եվ նորից է թագավորում Վասիլը՝ (իբ) քսաներկու տարի: Սա էր, որ կառուցեց Կոստանդնուպոլսի մեծ<sup>6</sup> եկեղեցին, ոսկեգօծ զարդերով զարդարեց եւ անվանեց Սուրբ զորավարներ (իւմ՝ Չորսվար): Սրա Համար ատում են, թե եղել է Տարնի՝ գավառի Թիլ գյուղից: Սրա օրերում զբաղվեցին եւ ստաւութիւնը պայծառանում է սուրբ պատրիարքաբարնը<sup>7</sup>:

Նրա օրը է Մեծ<sup>10</sup> Հայրին թագավորում Աշուտը. այ-

1 Օր. Բր.՝ Բրուկուոյ (?)

2 ՅՈր. Բր. պոլպուսը՝ եւ

3 Օր. Բր.՝ բիբու

4 Օր. Բր.՝ ի փայտի

5 Զ.՝ ընդ տանկին

6 Այլ Զ.՝ պատերազմեաց Միքայել ընդ տանկին (ստորանկով գրադուսե ի նոյա-

նէ... բայց, զարձակ պա...)

7 Զ. եւ Օր. Վեհ.՝ ի կուռ նախին: - Օր. Բր.՝

ի Կուռնուին

8 Որդոքին Զ.՝ անկերուսային

9 Զ.՝ Հոռոմլի: - Օր. Բր. եւ Վեհ.՝ Հոռոմլի

զիբային

10 Զ.՝ քանն

1 Երկրին Զ.՝ ընտանոց

2 Օր. Վեհ.՝ Հեղապատորթիւնս: - Այլ

Զ.՝ զ՛հրապատիւնս

3 Առտի եւ անդ պոլպուս ի Չեռուզրին

4 Զ.՝ եւ Օր. Բր.՝ Հոռոմլի զիբային

5 Զ. եւ Օր. Բր.՝ Աւուրիլի

6 Օր. Վեհ.՝ մեծ

7 Այլ Զ.՝ ի տարուն զուսով

8 Օր. Բր. Զ.՝ պայծառանապը

9 Այլ Զ.՝ պատրիարքն

10 Առտի եւ անդ պոլպուս յՈրդանկին

Բրուսակի: - Այլ Զ.՝ յաւիպը սառ՝ ա.

տեղ էլ ավարտում է սույն պատմութեան երկրորդ՝ գլուխը  
և մեր Հայոց թագավորութեան երրորդ՝ նորոգմամբ դար-  
ձյալ մեր խոսքը դառնում է զբան՝:

**Մտեփանոս Տարսնեցու ժամանակների  
պատմության ինքնախոսությունը**

ԵՐԿՐՈՂԻ ՀԱՆԴԵՍ

**Երրորդ գրքի գլուխների ցանկը՝**

- Ա. Խուր նախասացութեան և Աշու Բագրատունու՝ թագա-  
վորելու մասին:
- Բ. Աշուի՝ թագավորելու մասին, թե ում ժամանակ՝ եղալ:
- Գ. Ամբատի թագավորելու մասին և թե նրա օրքը ինչեր տե-  
ղի ունեցան:
- Դ. Ամբատի մահվան և Արուստանի՝ որդի անօրեն Յուսուֆի  
կողմից Հայոց աշխարհի ավերածությունների մասին:
- Ե. Անարեն Յուսուֆի կողմից Դավին քաղաքում՝ նահատակ-  
վածների մասին:
- Զ. Ամբատի երկու որդիների փախստյան՝, այնտեղից վերա-  
դառնալու և Աշուի թագավորելու մասին:
- Է. Աբասի՝ թագավորելու և նրա օրքը տեղի ունեցած՝ զոր-  
ծերի մասին: Մոնակյաց և երկայնակյաց կրոնավորների  
մասին:
- Ը. Աբասի՞՝ որդի Աշուի թագավորելու, նրա օրերում կա-  
տարված զորքերի՞ և սուրբ վայրերի շինարարութեան

1 Այլ Ձ.՝ ուր փոխանակել է փրկորոց  
2 Այլ Ձ.՝ ընդ որ երրորդ  
3 Օր. Վնն.՝ ի նայն գրանալոյ: - Այլ Ձ.՝ ի  
նորք տակելոյ  
4 Այլ Ձ.՝ ունի սուր թշուաւարաւ սայտի-  
ոյ՝ Հայք, մի մտանար գաշխատու-

թիւն իմ, որ զրեքի շատս ի չի սրով սոս  
Աստուած: Ի Քրիստոս սորբնու յովհա-  
նայ քաղաքի սորս յանկաջուտ գտուու-  
րու թեանն, և յանաթուռնիք տաննիք,  
յորթամ գասան գաղեղերս:

1 Ձ. ունիք՝ ցանց տեփանոսի տարածեցոյ  
պատմութեան: - Երրորդ Հանդիս: -  
Տ.՝ Երրորդ Հատոր  
2 Տ.՝ և յորդոս Աշուոյ Բագրատունոյ  
թագաւորելոյ  
3 Ձ.՝ յանաթ՝ Աշուի: - Որքն ուրքն՝ Աշ-  
ուոյ  
4 Ձ.՝ Տամանակս  
5 Ձ.՝ ապոսթոս  
6 Ի Ձ.՝ պովոսուէ՝ քաղաքի  
7 Ձ.՝ փախուստի  
8 Ձ.՝ անբաւոյ  
9 Ձ.՝ զօրքեցան  
10 Ձ.՝ անբաւոյ  
11 Ձ.՝ յորդոս նորս զօրքեցան



մասին:

Թ. Տեր Խաչիկի կաթողիկոսութեան, Արզնիս՝ գլուխում եկեղեցու եւ կաթողիկոսարանի տան կառուցելու մասին:

Ժ. Ասիթում եղած Հունաց պատերազմի, [զիս]աստղի երևալու եւ Կյուս-ժան՝ թագավորի մահվան մասին:

ԺԱ. Աշոտի՝ որդի Ամրատի թագավորելու, Անիի՝ պարսպի շինարարութեան՝ եկեղեցով հանդերձ, եւ Գավիթ կուրսպագատի՝ Շիրակ գալու մասին:

ԺԲ. Արշաճ՝ ամիրայի Հայաստան գալու, Հետո նրա իշխանութեան վերացման եւ՝ նրա խնդրամահ լինելու մասին:

ԺԳ. Վասպուրականի կոտորածի եւ Գողթնի ամիրա Աբուալփի՝ ձեռքով իշխանների ձերբակալ լինելու՝ մասին:

ԺԴ. Հունաց վրա Վասիլի թագավորելու, Վարդի բռնակալութեան եւ Հունաց աշխարհի ավերածութեան մասին:

ԺԵ. Հունաց վերջին պատերազմի եւ Վարդ բռնակալի փախտական լինելու մասին:

ԺԶ. Իրն Խտարովի՝ ամիրայութեան եւ նրա իմասանութեան մասին:

ԺԷ. Արասի Կարսում թագավորելու, նրա բարեգործութեանը՝ ների՝<sup>1</sup> եւ յուր անունով՝<sup>2</sup> Շիրիբ կառուցելու մասին:

ԺԸ. Այն մասին, թե ինչպես Ռովդի որդի Արշաճը եկավ Դիլին քաղաք եւ Հայաստանից հարկերը գանձելով վերազարձավ:

ԺԹ. Արշաճի կրկին Վասպուրական գալու, նրա մահվան եւ

նրա որդի Մամբանի՝ ամիրա կարգվելու մասին:

Ի. Վասիլ թագավորի [կողմից] Հայոց բազմություններին Մակեդոնական աշխարհն անցկացնելու եւ Սերաստիայի՝ մետրոպոլիտի ձեռքից կրած Հայամանքների մասին:

ԻԱ. Սերաստիայի մետրոպոլիտի պատասխան թուղթը՝ զրված Հայոց՝ կաթողիկոս Տեր Խաչիկի հրամանով:

ԻԲ. Թե ինչպիսի չարաչար մահվամբ մեռավ Սերաստիայի՝ մետրոպոլիտը եւ Բուլբարաց՝ թագավորների մասին, որոնք՝ սպանեցին նրան:

ԻԳ. Թե՛ ինչպես Հունաց թագավոր Վասիլը՝ զորքով գնաց բուլբարների երկիրը եւ նրանցից պարտված՝ փախավ այնտեղից:

ԻԴ. Բռնակալ Վարդի Բազգատից դուրս գալու եւ Հոռոնոց աշխարհը մտնելու՝ մասին:

ԻԵ. Փոկաս Վարդի՝ բարձրանալը, Վարդ՝<sup>12</sup> թագավորին ձերբակալել եւ նրա թագավորելը:

ԻԶ. Փոկաս Վարդի՝<sup>13</sup> զորքով ծովի եզերքը գալը եւ Վասիլի դուրս դալն ու նրան սպանելը:

ԻԷ. Գիսաստղի երևալու, Կոտսանդուպոլսի երկրաչարմի եւ սպաստար Չորոտանսելի՝<sup>14</sup> մահվան մասին:

ԻԸ. Արիսապիայի՝<sup>15</sup> թագավորութեանից Թեոտասին՝<sup>16</sup> գրվելու եւ Գուրգենի՝<sup>17</sup> որդի Բագարատին թագավորեցնելու մասին:

ԻԹ. Ամրատի չարագործութեանների եւ նրա մահվան մասին:

1 Զ.՝ Կողմից  
2 Տ.՝ անմեայն ուրբ՝ կիր-ժան, կիր-ժար  
նայ եւ այլն  
3 Ի Զ.՝ պակասեր՝ որդւոյ ստրուոյ  
4 Զ.՝ ստուոյ  
5 Զ.՝ եւ գալի կիւսազագատին  
6 Զ.՝ ապշանէ: - Ի ստորեի՝ ապշանայ

7 Ի Զ.՝ պակասը՝ բառնայոյ իշխանութեան  
կարսու  
8 Զ.՝ ապութայոյ  
9 Զ.՝ լինել  
10 Զ.՝ իսկ խորագու  
11 Տ.՝ բարեգործութեան  
12 Զ.՝ գամ

1 Տ.՝ Մաշիստայ  
2 Զ.՝ սաս եւ ի ստորեի՝ սերաստու  
3 Տ.՝ Հայոց կաթողիկոսի  
4 Ի Զ.՝ պակասեր՝ Սերաստիայ  
5 Զ.՝ ի թագաւորեան բուլբարայ  
6 Տ.՝ որ  
7 Տ.՝ եւ թէ  
8 Ի Զ.՝ պակասը՝ գալի  
9 Զ.՝ եւ պարս

10 Զ.՝ եւ ժառնգ  
11 Զ.՝ փոքրասոյ վարդոյ  
12 Ի Տ.՝ պակասեր՝ վարդ  
13 Զ.՝ փոխասոյ վարդոյ  
14 Զ.՝ չարոտանսելի  
15 Զ.՝ արիսապայ  
16 Զ.՝ զթոտայ  
17 Զ.՝ զորդնայ

- Լ. Գազինի թագավորելու և նրա օրերում կատարված գործերի՝ մասին:
- ԼԱ. Տեր Խաչինի մահվան մասին:
- ԼԲ. Տեր Սարգսի կաթողիկոսութան մասին:
- ԼԳ. Թե ինչպես Վասիլ թագավորը երկրորդ անգամ մտավ Բուլղարաց աշխարհը և գրավեց Վեռա (իսմ՝ Վառնա)<sup>1</sup> քաղաքը:
- ԼԴ. Ժան պատրիկի առաքվելը Բուլղարաց աշխարհը և ձերբակալ լինելը:
- ԼԵ. Եզիպտոսի<sup>2</sup> տանիկ գործերի դուրս գալը<sup>3</sup> Հունաց երկիրը, միանգամ և երկրորդ<sup>4</sup> պատերազմելը և Վասիլ թագավորի՝ նրանց վրա գնալը:
- ԼԶ. Զորորդ Հայրի երկրաչարմի մասին:
- ԼԷ.<sup>5</sup> Եզիպտական<sup>6</sup> գործի դարձյալ դուրս գալու և Բարեղունի մասին. Դպասանտի մահը:
- ԼԸ. Բառ ամիրայի մահվան<sup>7</sup> մասին, Մանազկերտի<sup>8</sup> առումը<sup>9</sup>, Մամբանի<sup>10</sup> գալն ու Դավիթ կուրապաղատին պատահելը<sup>11</sup>:
- ԼԹ. Թե ինչպես Բասի բեռտրդին դարձավ ամիրա, տանիկ բնակիչներին Հանեց Նիբիկերտից և նրա մահը Ամիթում:
- Խ. Վրաց զորքերի կոտորածը իլյաթ քաղաքում<sup>12</sup>:
- ԽԱ. Ապահունաց գալիսում Պարկաստանի և Քրիստոնյաների միջև տեղի ունեցած մեծ պատերազմի մասին:

- ԽԲ. Երկրորդ անգամ Վասիլ թագավորի մտնելը Տաճկաց աշխարհը՝ Ասորեստանի կողմից:
- ԽԳ. Դավիթ Մեծ կուրապաղատի մահվան մասին և Արևելքից<sup>13</sup> Վասիլ թագավորի գալը Հունաց աշխարհ:
- ԽԴ. Գուրգենի՝ Տայոց երկիրը, իսկ Հունաց զորքերի՝ Բասենի գալիսը գալու մասին:
- ԽԵ. Թե ինչպես Գազինը ավերեց Տաշիրը<sup>14</sup> զավանն ու Վրաց դաշտը:
- ԽԶ. Արծրունիների նահապետութան մասին, որ մեր ժամանակներում թագավորեցին Վասպուրականում:
- ԽԷ. Գազին արքայի՝ կողմից Անի<sup>15</sup> քաղաքում սուրը Գրիգորի<sup>16</sup> անունով մեծ եկեղեցին կառուցելու մասին:
- ԽԸ. Փառխտաի իրխանների մահվամբ Հատուցելու մասին:

1 Ի Զ. պոպուեր՝ գործեցու  
 2 Զ.՝ եւ անտու զքաղաքի վերայ  
 3 Զ.՝ յեղիպտոսաց  
 4 Զ.՝ եւ  
 5 Զ.՝ երթս  
 6 Զ.՝ պատերազմեաց թագաւորին զայ  
 7 Ի Ե ցանկի ջեռաղջին այս զլուի (ԼԷ) Ե-  
 զնայ իր զից զիսթուսու ԼԶ յառա՛  
 ցան գնալելիցայ

8 Զ.՝ գործեաց յեղիպտոսաց զգրուն  
 զլուիս (ԼԶ)  
 9 Զ.՝ եւ մահուան  
 10 Զ.՝ մանկիկտի  
 11 Զ.՝ տերուան  
 12 Զ.՝ ամենայն ուրիշ՝ մտգրմեաց  
 13 Զ.՝ եւ պատահուան  
 14 Զ.՝ քաղաք

1 Զ.՝ կրտսեպաղատին - Տ.՝ վանն մեծի  
 կիւրապաղատին Դավիթ մահուան  
 2 Զ.՝ յաշխարհը յարեւելից  
 3 Զ.՝ աներեաց զաշխարհ

4 Զ.՝ Ի Զ. պոպուեր՝ զպոպու արքայի  
 5 Զ.՝ անայ  
 6 Զ.՝ յարեւ ասու՝ թագաւորն զարկի

Խոսով նախասագության՝ եւ Աւոս Բագրաստուո՝  
քազավորելու մասին

Աստվածային<sup>1</sup> շնորհների հարատւ ու անսպառ ընթացքը՝ գերազույն էութիւննից գերայիբ ամբողջութիւնամբ մեզ տրված, ծայրածափալ սկզբնափորութիւնամբ, գարեց դար<sup>2</sup> եւ ժամանակ առ ժամանակ, ամենախմաստուն իմաստնութիւններին գերազանցած եւ մտքերի անհասանելի տարածութիւններեց<sup>3</sup> մնացած, այն ոչ միայն մեզ շնորհեց բանականներին խոսքով հակաճառելու ձիւրքը, այլեւ իր անկերպութիւնամբ մեր տեսքը իշխանական կերպարանքով զարդարեց եւ անդադար խորհրդածութիւններով մտածել տվեց Հասնելու Հանդերձայնների ճառարտութիւնների անճառելի գիտութիւնը եւ ճշմարիտ պատմութիւններով ներկայացնել նրանց (իմա՝ Հանդերձայնների) Հիշատակը (105):

Նրորորդութիւն եռակի լույսով պայծառացած երեք ժամանակների անաղարտ եւ անմուար [կերպով] ճառարտանեք այս ճառերը՝ անցյալը, ներկան եւ ապագանին, որպեսզի անցյալի վերաբերյալ սուտանուն փիլիսոփաների ստապափր խոսքերին չհետեւենք, որոնք պնդում են, թե աշխարհն ինքնակա է<sup>4</sup>, առանց նախախնամութիւն եւ ամեն ինչ իրենից է [բխում]՝, եւ ներկայումս Հերձավաճողների

1 Զ՝ նախասոց  
2 Տես Ման. 2, Գլխ 149:  
3 Զ՝ աստուածայնայ  
4 Զ՝ ի գարս գարս

5 Զ՝ ի Հասութենէ  
6 Տ՝ ինքնովոց  
7 Տ՝ ինքի

կեղծ հավատին չհանդիպենք ու բարյաց գործերից հեռու մնանք, չմոլորվենք (106) նաեւ Հեթանոսների խոսող խոսքերից՝, որոնք մարդկանց հոգում հարութիւն հույսն են կտրում եւ Քրիստոսի արդար զատաստանին չեն հավատում: Բայց մենք՝ Տիրոջ պատվիրանների կանխեղը եւ գիտութիւն լույսը աչքի առաջ ունենալով՝ հասկանանք, որ բոլոր գոյութիւնները բացարձակ ոչնչից են էացած, Աստծո խոփյունից են ծագած ու նրա նախախնամութիւնամբ փայտայված, ուտաի գարդար ցանկալի եղանակով մեր նախնիները եւ արդարադատ Աստուծոց շնորհներ ստացան ու զրոյց Հիշատակով փառափորովեցին. իսկ ստապափր մարդիկ, աստվածային կամքով Աստծո ցատումն ընդունեցին եւ նրանց վատատուն Հիշատակը մինչեւ օրս պատմվում է:

Գիտութիւն Հենց նույն լույսով եւք ներկայումս ճանաչում ճշմարտութիւնն անապարհը, որ նույն ինքը Քրիստոսն է եւ նրա միջոցով գեպի Հայրն ենք ուղևորվում Հեռու մնալով Հեթանոսական սնահավատութիւններից ու Հերձավաճողների բազմախար մոլորութիւններից: Եվ նույն լույսով՝ Հանդերձավորված՝ սրառեա աչքերով մեր առջեւ տեսնում ենք նոր եկողների հույսն ու արարմանների վերածնութիւն գորութիւնը: Այս է խորհուրդը քրիստոնյաներին, եւ զրանով անցյալներն ենք պատմագրում ու Հանդերձայնների<sup>5</sup> մասին մարգարեանում ըստ շնորհարաչիս Աստծու:

1 Տ՝ քանից  
2 Տ՝ մեր  
3 Տ՝ գանալ գովիչ

4 Զ՝ լուսով  
5 Զ՝ գհանդերձայն

Ահոս Բագրատունու թագավորելու մասին,  
քն ում ժամանակ եղավ

Ահա, երեք տոհմերը եւ Հայաստանում թագավորելու նրանց ժամանակները ամենքին են հայտնի. Հայկազյանցն եմ ասում, Արշակունյացը եւ Բագրատունյացը<72>: Ըստ այդմ էլ պատմության մեր խոսքը երեք հատվածներով որոշեցինք [չարադրել]: Առաջինը սկսեցինք նախատեղծից նրա մեջ դնելով անդիտության խավարի ժամանակները, մինչեւ Տրդատի թագավորելն ու Հայաստան աշխարհի լուսավորությունը<sup>1</sup>. իսկ երկրորդը՝ նույն Հայոց լուսավորությունից ու Տրդատի թագավորությունից<sup>2</sup> մինչեւ Հայոց<sup>3</sup> թագավորության երրորդ<sup>4</sup> նորոգությունը Աշոտ Բագրատունու ձեռքով, որը եղավ Հունաց Վասիլ թագավորի օրոք եւ նրա օժանդակությամբ՝ Հայոց [յլը] երեք հարյուր երեսունվեց թվականին<sup>5</sup> եւ մեր Փռվիչ Տեր Աստու գայտից կազմում է (պճը) ու թվ հարյուր ու թուներու թը տարի, Տեր Գեւորգի<sup>6</sup> ժամանակ, նրա Հայրապետության (ժը) տասներկուերորդ տարում:

Այս Աշոտը որդին էր Սմբատի, որը կոչվում էր Արդարաս<sup>7</sup>, Հայոց հայրապետն էր՝ Աբրահամի սերնդից: Սրանց նախնիներն էին, որ Իսրայելի գերությունից ժամանակներում բարեկացիների նարուզադոնոսը արքայից մեր Հայկազյան

պսակավորների վերաբերյալ [տեղեկություն էին] խնդրում. իսկ արշակունյաց Վաղարշակի կողմից էլ (107) թագադրի սպասուության<sup>8</sup> պաշտոնն ստանձնեցին եւ՝ ասովա՝ ասովա՝ ասովա՝ ասովա՝ ասովա՝ մեր կուսպաշտ թագավորներից բազում<sup>9</sup> չարչարանքներ կրեցին, ապա մեր լուսապայքառ ժամանակներում մովսիսական օրենքի համաձայն ավետարանական շնորհներն ընդունեցին՝ Քրիստոսի հավատով<sup>10</sup>: Եվ թագմաթիվ անդամներ Հայոց պետականության իշխանությունը վերականգնեցին՝ պատերազմելով՝ պարսկական<sup>11</sup> կրակապաշտություններին, ապա նաեւ՝ Տանկաստանի մահմետական անօրեն<sup>12</sup> պաշտամունքին՝ ընդդեմ. որը եւ որդին հորից ծննդաբանելով հասնում են մինչեւ այս Աշոտը:

Սա նախքան թագավորություն [վերականգնումը] երեսնամյա ժամանակով իշխան եւ իշխանաց իշխան կոչվեց Հայոց եւ Վրաց, չըջնկայքի բոլոր ազգերին էլ հաղթող ճանաչվեց, պայծառացրեց սուրբ եկեղեցու միաբանությունները, զարդարեց Հայաստանի եկեղեցիները. բանցի այր էր քաղցրատես, խոնարհ եւ անբարտ, ապրեց անբարբ<sup>13</sup> կյանքով, շանօրինացավ ընտանիքի աշխարհային օրենքներից եւ իր անրեմ վարքով ըստ ամենայնի հաճո էր Աստուծուն:

Սրա օրոք էր ապրում Հայոց Սահակ վարդապետը, որը բարձրաձայնությամբ պատճառով կոչվում էր նաեւ Ապիկուրել. նա էր, որ գրեց գիտականություններ եւ իմաստությամբ լեցուն պատասխանը Հունաց Փոտ պատրիարքի թղ-

1 Տ.՝ լուսավորի  
2 Ձ.՝ եւ թագավորությունն  
3 Ձ.՝ սերնդից  
4 Տ.՝ Հայոց թագավորություն

5 Տ.՝ թուին  
6 Տ.՝ Գեորգիայ.՝ Զ.՝ Գրիգորի  
7 Տ.՝ արդարաս

1 Ձ.՝ սպասուության  
2 Ի Տ. սպիտակե՝ եւ  
3 Ձ.՝ բազում  
4 Տ. հատուտով  
5 Ի Տ. սպիտակե՝ բնույթի պատերազմաց

6 Տ.՝ ի պարսկական  
7 Ի Ձ. պարսկալե՝ անօրեն  
8 Տ. ստա խոսելուք ի փոխադրե՝ (կուսակ)  
9 Գավ բառ Ձ.՝ անբարատ կենու

թի: եվ Համամ Արեւելցիին՝ որ Առակաց մեկնությունը շարադրեց եւ Հորի «Ո՞վ է այդն»<sup>1</sup> ու օրհնարանությունները թարգմանեց, որ սաղմոսների սկզբում են ասվում<sup>2</sup> մի գրվածքով՝ եւ «Անբիծքը»՝ նույնպես մի գրվածքով՝, նաեւ քերականի վերլուծությունը: Այս Աշտուր ապրեց (լր)<sup>3</sup> երեսուներկու տարի, թագավորեց (ե) Հինգ տարի եւ մահվամբ փոխվեց առ Քրիստոս:

Մմբատի թագավորելու՝ մասին եւ  
քե նրա օրերում ինչնր տեղի ունեցան՝

Աշտոցի Հետո՝ (յիս) երեք Հարյուր քառասուն թվակահին թագավորում է նրա օրդի Սմբատը՝ Հունաց Լեւոն թագավորի կամակցությամբ, (իդ) քաննչորս տարի, քանզի Վասիլը թագավորելով (ժթ) տասնեկինը տարի, մահացել էր՝ իր փոխարեն թողնելով իր օրդի Լեւոնին, որը թագավորեց (լզ) երեսուեփեցը տարի. սա էր այր խաղաղարար եւ բարեխորհուրդ ամբողջ երկրի Համար, նվիրատվությամբ առատաձեռն, բաշխելու մեջ Հոռոմների նման ոխու (իմա՝ զձուժ, ժբատ) չէր, որովհետեւ Հոռոմները սովոր չեն առատաձեռնության՝ եւ նրանց՝ լեզվում նույնիսկ առատ բառը գոյություն չունի. բայց նա Հայի՞ զավակ էր եւ նույնիսկ Հայից էլ առավել՞ առատաձեռն:

Սմբատի տիրապետության օրոք, (յիւզ) երեք Հարյուր քառասունվեց թվակահին, վախճանվում է Հայոց՝ կաթողիկոս Տեք Գեորգը՞ եւ Հայրապետական աթոռին նրան փոխարինում է աստվածային այր Մաշտոցը. սա Հայրենյոք Արազածոսն՞ զավտի եղվարդ գյուղից էր: Մանկուց անպատային ճգնությամբ խոտարուտ կյանքով ապրած լինելով Գեղամա ծովակի Աեանա կղզում՝ այնտեղ էլ բնակվում էր, այնտեղ էլ կառուցում է եկեղեցին, որն անվանում է Առաքելոց: Այնտեղ ի մի է Հավաքվում եղբայրների բազմու-

1 Չ. արեւելց

2 Տ. եւ Այս ո՞վ է զան: - Չ. եւ յոք զովչայի, զոր մեք ուղղութեացք պարզուի՝ Կիրք Յովրայ, ԼԸ, 2:

3 Տ.՝ որտրեայ: - Չ.՝ ի զուի

4 Տ.՝ ի գիրս մի

5 Ի Տ. պովաւէր՝ եւ զԱմբոնս գիրս մի

6 Տ.՝ անս 21: Աւար, Բարձրք, անս 71:

1 Չ.՝ թագաւորութեան

2 Չ.՝ եւ պիղ... պարեկցան

3 Տ.՝ լինիլ

4 Չ.՝ ի բնակեց

5 Տ.՝ Հայոց

6 Տ.՝ անի

7 Ի Տ. պակասը՝ Հայոց

8 Չ. սաս եւ ի տարեի՞ գերդ

9 Տ.՝ յԱրազածոսնէ

թյունը՝ ըստ սուրբ Բարսեղի սահմանած կանոնադրության՝ Աստծո ստեղծ նույնահավասար լինելով, ստանում են մեծ քանակությամբ սուրբ զրվածքներից, որպեսզի նրանց հոգու աչքերը լուսավոր լինեն Տիրոջ՝ ճանապարհի տեսության իմացությամբ՝ իրենց անսուտ ուղեւորություններում:

Այս նույն ժամանակներում է առաքինությամբ ճառագայթում սուրբ Ատոմի անսպասի առաջնորդ Հայր Գագիկը, որը մարտիրոսացածների հիշատակիչ՝ շարադրեց մի գրվածքում<sup>1</sup>, որը, ստանալ է <73>, Ատոմի գիր են անվանում<sup>2</sup>: Սակայն Աստծո այր Մաշտոցը Հայրապետական աթոռին մեկ տարի մնալուց<sup>3</sup> Հետո փոխվում է առ Աստված եւ նրա ուկորներին նշխարները Հանգչում են Գառնիում՝ Խորտովագուխտի Հովանոցի մերձավորությամբ, որը կառուցվել էր Հայոց Տրդատ արքայի կողմից:

Նրանից Հետո Հայրապետական աթոռին (յիս) երեք Հայրյոր քառասունվեց թվականին նստում է Տեր Հովհաննես<sup>4</sup> Դմենցին՝ ճարտասան եւ պատմադիր, (իր) քաներկու տարի: Սրա օրերում էր, որ Հանդես եկավ Ամբաս Թոնգրակեցին<sup>5</sup> Ծաղկոտն զավառի Զարեհազան<sup>6</sup> գյուղից, առաջինը, որ Հակոբակորդ էր քրիստոնեական բոլոր տեսակի կարգերին<sup>7</sup> <74> :

Իսկ Ամբասը թագավոր դառնալով՝ տիրում է իր Հայրենիքի բոլոր սահմաններին՝ Հայաստանի եւ Վրաստանի, իր ժառանգությունը գործնելով Հակոբակորդների քաղաք-

ներքե: Նրա եւ իր հոր իլյանություն՝ օրերում շննություն ու՝ խաղաղություն էր մեր Հայոց աշխարհում՝ ըստ մարգարեական խոսքի, թե յուրաբանչյուր ոք [անհոգ] Հանգչում էր իր որթի ու իր թեղնու ներքո: Եվ այդպես պարսկները պանների փոխվեցին, պանները՝ քաղաքների՝ բազմամարդություն եւ անբավ Հարատություն: մինչեւ անգամ Հովիվների ու նախարպաները մեռաբայա՝ պատմունաներով էին զգնատավորվում: Սա կառուցեց Երևակավանում Ամենափրկիչ եկեղեցին՝ բարձրաբերձ գմբեթավոր Հորինվածքով, պրատաչ քարեղեն՝ որմերով: Այս նույն ժամանակներում էր, որ Դվիներ ապստամբեց, որի պատճառով թագավորը պատերազմով գրավեց քաղաքը ավագ ուրբաթ օրը (իմա՝ Մեծ պահքի): Այնուհետեւ Ամբասը պատերազմում է Աճմատի դեմ, բայց բազում Հարվածներ կրելով պարտվում է նրանից եւ փախուստի դիմում: Այս բաները լսելով՝ Սաճի՝ որդի ամիրա Ափշինը, որը Պարսկաստանի՝ սուրիանն էր եւ Ամբասին պակ ղեռոցը, մանավանդ որ խիտ շարացած էր Ամբասի՝ Լուսնաց կայսեր Հետ բարեկամանալու պատճառով, դիմում է դեպի Հայոց աշխարհը, գրավում է Կարին բերդը, գերի տանում պատաներին՝ իրենց կանանցով ու երեխաներով՝ եւ ողորմելի տեսքով տանում Հասցնում Դվին քաղաքը: Սա այն Ափշինն էր, որը գերի տարավ Տեր Գեւորգին, որին զենք Աղվանքի Համամ թագավորը: Իսկ Ամբաս թագավորի կրտսեր եղբայր Շապուհը, յուր անձը մահու եւ կենաց երթարկելով, զնաց Ափշինի մոտ, մեծավ փառքով պատվվեց նրա կողմից եւ Հետ վե-

1 Տ.՝ կանոնադրություն  
2 Չ.՝ իշխանակ  
3 Ի գիր, կամ ի գիր  
4 Չ.՝ որ ստորագրել անուանի  
5 Տ.՝ կեղեց  
6 Չ.՝ ստու եւ ստորե՝ յավան  
7 Չ.՝ թեղեցից

8 Տ.՝ Ջորեհուստոց  
9 Չ.՝ ստա յուրայր՝ սա կայսր գուշտանն սախնց, եւ ծով եւ սանել իրեն աշխարհ աննայն տակնց: եւ կայսր եւ ան զմեղանարտ արխուստ: եւ սարգիսանն իջակաց զսփ վանկ զի գաղթ կեն եւ անուանեցով արխուստ:

1 Ի Չ. պակասը՝ իջնուտություն  
2 Ի Տ. պակասը՝ իջնութիւն եւ  
3 Չ.՝ մարգարեություն  
4 Չ.՝ մտաբան

5 Չ.՝ կոմանու քաղաք  
6 Չ.՝ ափշ որդի յարի  
7 Չ.՝ ի պարս  
8 Չ.՝ մանկութիւն



բաղարձրեց Հայաստանի բոլոր գերբայներին: Ստանում է նրանից նաև արքայական թագը եւ՝ բերում դնում է իր եղբայր Ամբատի գլխին՝ վերահաստատելով նրա թագավորությունը: Ապա մեր Հայոց աշխարհը՝ խաղաղվում է շենթթյամբ ու առատությամբ՝ նախկինից առավել եւս, եւ այսպես երկար տարիներ:

Եվ երբ որ շատ գերացանք, բազմացանք՝, ճոխացանք ու անկուշացանք<sup>1</sup> (իմա՝ ընդվզեցինք)<sup>2</sup>՝ մոռանալով մեր սիրելի Աստծուն, արարիչին խաղաղության եւ ամենայն բարեքնեքերով տվողին, քահանաներն ու ժողովուրդը, մեծամեծներն ու փոքրերը բամբասեցին Հացի լիությունից եւ զի՛նու ճոխությունից՝ ըստ մարգարեի ասածի, եւ նրա տված բարեքնեքերի փոխարեն մոռացանք Աստծուն, չլսեցինք նրա պատվիրանների ձայնը, որի պատճառով էլ մեր թշվառանալու եւ վշտահար ժամին, երբ պաղատեցինք նրան, չլսեց՝ մեր ձայնը եւ մատնեց մեր աշխարհը իսմայելցիների զորքերին, որոնք քանդեցին ու ավերեցին՝ սրով ու գերեզմարությամբ:

Մերախի մահվան եւ Աբուսաճի՝ որդի անօրեն Յուսուֆի կոզմից մեր Հայոց աբխառիի ավերածության մասին՝

Այդ ժամանակ մեռնում է Ափշինը եւ նրա փոխարեն Պարսկաստանի ու Ատրպատականի ամիրա է գալիս նրա եղբայր Յուսուֆը: Սակայն Ամբատը չի կամենում Հնազանդվել նրան, ուստի ընձանեցով մի խնդրագիր է ուղարկում Բաբելոնի ամիրապետին՝ ազատելու իրեն Սաճի անօրեն որդուց, որը եւ անմիջապես կատարում է: Այս բանը լսելով Յուսուֆը ելնում գալիս է Պարտավ, այնտեղից՝ էլ զազոնածածուկ անցնում է Տփղիս եւ գալիս Տաշիրը: Այդ իմանալով Ամբատը մեծ զորքով պահում է նրա ճանապարհը: Բայց նա գողաբար, բարձր լեռների վրայով գնում անցնում է Երբակ (106) եւ այնտեղից էլ շվում է դեպի Դվին, իսկ Ամբատը սաստիկ զորությամբ Հասնում է նրա Հեռեւից, Յուսուֆը սարսափահար Հաշտություն է խնդրում, բազմաթիվ ընձանեցով նորից էլ զարկելով պակում Ամբատին եւ թողնում է գնում Պարսկաստան՝:

Ամբատը կալանավորում է Եգերացիների Կոստանդին՝ թագավորին եւ պահում իր ձեռքի տակ նվաճված: Դրա վրա զայրացած Վրաց Ատրնեբեհ թագավորը անջատվում է նրանից եւ նրա նկատմամբ չարիքներ է խորհում: Իսկ անօրեն Սաճը (107) ըմբոստանում է ամիրապետի՝ զեմ եւ չարունակ անզսնում էր նրան: Եվ ամիրապետը Հրաման է

1 Ի Զ. պակասը՝ եւ  
2 Զ. գալիսուհ  
3 Ի Բ. պակասը՝ սուտարացաբ  
4 Տ.՝ անկուշացաբ

5 Տ. ունէր ստա՝ Ի վշտանայն (մեր եւ) ոչ (նա)  
6 Զ.՝ տեւեղ

1 Ի Զ. պակասը՝ որդւոյն սրտասանի  
2 Տ.՝ յաղապս  
3 Զ.՝ անցի

4 Եովհ. կաթ. գլ. եւ:  
5 Զ.՝ եղիպտոսոց կոստանդին  
6 Զ.՝ ամիրապետն

արձակում իր տերության բոլոր կողմերում՝ նրանից վրեժ լուծելու։ Ամբաստին նույնպես գրում է՝ զորք զուժարեւ նրա դեմ։ Իսկ Ամբաստը ակամա մեծաքանակ զորք է ուղարկում Հայտնելով՝ Յուսուֆին, թե քեզ օգնելու եմ ուղարկել։ Ասկայն Յուսուֆը Հնազանդվում է ամիրապետին և զորքերի հակադրական բազմություն զուժարելով գալիս է Ամբաստի վրա և ամբոխաստատ զորությունը գալիս Հասնուս է մեր Հայոց աշխարհը՝ (յծդ) երեք Հարյուր Հիսուսից՝ թվակահին։

Նրա մոտ են գնում՝ Վրաստանի Ատրենբուհ թագավորը՝ Վասպուրականի Գազիկ իշխանը, որը Ամբաստի քեռորդին էր և։ Ամբաստի եղբայր Եապուհի որդի Աշուրը, իրենց բոլոր զորքերով միանում են նրան (իմս՝ Յուսուֆին), Ամբաստ թագավորին թողնելով միայնակ, չար նախանձից նենգազործում են Հայոց աշխարհի շենության պատճառով (108)։

Ամբաստ թագավորը երբ լսեց նրանց նենգավոր մտադրություն՝ մասին, Հայոց տանուտերերով՝ եւ բոլոր զորքերով միասին ելավ դեցա Տաշիրը՝ զավառի Օձուն պուղը և այնտեղից էլ անցավ Ափրազիս։ Յուսուֆը Հետապնդում է նրան մինչև [Վուս] ամրոցը<sup>9</sup>, Կուել<sup>10</sup> <75> բերդի մոտ մարտի է բռնվում և զրավում ամրոցը։ Եվ զրանից Հետո անցնում<sup>11</sup> է Տիգրիս<sup>12</sup>։ Իսկ թագավորը այնտեղից վերադառնում է Երբակ։

Հաջորդ տարվա սկզբներին Յուսուֆը դարձյալ բազմաքանակ զորքերով գալիս է Հայոց աշխարհի վրա։ Նրա դեմ

է դուրս գալիս Ամբաստը յուր բոլոր զորքերով և նրա երկու որդիները՝ Աշուտ և Մուշեղը<sup>13</sup> Նիզ գավառում։ միմյանց դեմ մարտի են բռնվում Զինավաճառ<sup>14</sup> կոչված վայրում, ուր Հայոց զորքը պարտվում<sup>15</sup> և փախուստի է մասնավում։ Այնտեղ Ամբաստի որդի Մուշեղին գերի են բռնում, տանում են Դվին և այնտեղ մահվան զեղձ տալով սպանում<sup>16</sup>։ Նրա դիակը բերում և թաղում են Բազարանում։ Իսկ Ամբաստ թագավորը փախչում ամբաստում է Կապուտան բերդում։ Տաճիկ զորքերը նրան Հետապնդելով՝ գալիս Հասնուս են Բազրենանդ գավառը, զրավում են Վաղարշակերտ բերդը (յծթ)<sup>17</sup> երեք Հարյուր Հիսուսիէր թվականին, ապա գնում Հասնուս են Կապուտան ամրոցին։ Թագավորը յուր մոտ մնացած<sup>18</sup> ազատների զավաճանության Հետեւանքով, սարսափահար, ցուպը ձեռքին գնում է Արուսաճի՝ որդի Յուսուֆի մոտ։ Իսկ անօրեն Յուսուֆը թագավորի Հետ միասին շարժվում է դեպի Դվին, պատերազմ<sup>19</sup> է բռնվում Երնջակ կոչվող բերդի զլյակում, որտեղ պատսպարված<sup>20</sup> էին ազատների կանայքն ու նրանց<sup>21</sup> զանձերը, զրավում են ամրոցն ու այնտեղից վերադառնում Դվին։ Այնուհետև Ամբաստ թագավորին<sup>22</sup> Դվին քաղաքում ձողափայտից կախելով<sup>23</sup> սպանում են՝ (յկդ)<sup>24</sup> երեք Հարյուր վաթսուսչորս թվականին<sup>25</sup>։

1 Ձ. սասելով  
2 Ձ. չի. թուսուսին  
3 Ձ. երնայ  
4 Ատրենբուհ Վրաց թագուոր  
5 Ձ. չուհորդի  
6 Տ. խորհուրդ

7 Ձ. տղամորթ  
8 Ձ. տաշուր  
9 Ձ. յուսուսիք տա՛ կուսյ  
10 Ձ. Կուշուր  
11 Տ. անցնող գնաց  
12 Ձ. սփիխ

1 Ձ. մուշեղ  
2 Ձ. միսուստ  
3 Ձ. որ պարտեայ եղի.  
4 Տ. զեցոթ  
5 Ձ. սպանույ  
6 Ձ. չի. թուսուսին  
7 Ձ. որ  
8 Ձ. սպուսինայ

9 Ձ. մարտից  
10 Տ. ամրոցիսոց  
11 Ձ. նոցա  
12 Ձ. թագուոր  
13 Տ. կոբեի և  
14 Ձ. չի. միսուսին  
15 Յուզ. Կոմ. գր. եւ Լ. Լեժ՝

Ասորեն Յուսուֆի կողմից Գվին Բադաբան՝  
Խահասակվածների մասին

Այնժամ շատ շատերին Հարցաքննության էին ենթարկում զեպի Քրիստոս՝ ունեցած խոստովանության Համար և ջանում էին դարձնել Մահճանի Դուրանին: Մակայն Քրիստոսը, որ նրանց անձերը՝ դարձրեց զեպի Հավիտենական կամբը, հույն ինքը աստվածային Հոգով ջերմացրեց նրանց մտքերը զեպի սուրբ սերն ու անպարտելի Հավատքը, նրանք ստանալով արին մահճվան կայթոցն՝ և սիրով՝ ընդունեցին նահատակության լուստ պակը՝: Եվ յառտերին էլ ուրիշ ժամանակ բռնեցին ու մատնեցին՝ տանջանքների:

Եվ տեսան, թե ինչպես ոչխարը սպանդանոցում, դիմեցին [զեպի մահճ]՝ Հանուն Քրիստոսի, մի մարդ, մանկական տարիքից՝ ծաղկատար, Գուգարաց աշխարհից, անուր Արքայի, կորզեցին թաքցրին իրենց մեջ, որպեսզի այլոց Հետ չմտնի և թերեւս կարողանան տանջանքների խստությանը կտրել նրա կամբը: Բայց նա արտասովալից կական՝ մամբ աչքերը զեպի երկինք՝ առ Աստված դարձրեց և վերին օգնականությանը զորացնելով ինքն իրեն, որոշեց ճողպել նրանց միջից և դիմելով իր ընկերների մոտ՝ իր պարանոցը սքին է մատուցում: Եվ այսպես միակամ նահատակեցին Հայր Ասածո անուշահոտությանը:

Այնտեղ էին նաև երկու՝<sup>10</sup> եղբայրներ Գնունյաց սոհ-

մից՝ Գուրգենն ու Դավիթը, մեծ ու պատվական, որոց դահիճները բռնեցին ներկայացրին Յուսուֆին: Սա մեծամեծ երգումներով խոստանում էր սպա իր տերության կեսը, այլև տեսակ-տեսակ պաշտառաբայլ զգեստներ, ոսկյա մանյակներ ու ճոխապաճույճ՝ արագավազ նժույզներ, և ձեռքը նրանց պարանոցով զցելով Համբուրում՝ էր և բժնամուղողով՝ խոսքերով Հրապարում էր ուրանալ Քրիստոսին: Բայց նրանք աստվածային սիրով վառված՝ Համարձակորեն պատասխանում են իրենց Հավաքող ճշմարիտ լինելը, թե. «Քրիստոսյա ևնք և Աստվածազիտության լույսը, որ անմահությանն է ամփոփում իր մեջ, չենք փոխանակի ձեր մահարեք ստության՝ Հետ, որը ոչնչություն է՝ և ոչնչություն էլ Համարված»: Եվ չարը, երբ տեսավ, որ նրանք անշարժ արձանացած են Հանուն Քրիստոսի սիրո, Հրամայեց սրով սպանել նրանց: Իսկ նրանք արտասովալից աղոթքները առ Աստված են ուղղում և խնդրում խառնել իրենց այն նահատակների շարքում, որոնք իրեն խաչակից եղան: Եվ երբ դահիճը մտնում է նրանց, ավազը՝ խնդրում է նախ կրտսեր եղբորը զլխատել, որովՀեսեև զԵՆԵԱ մանկական տարիքում է և չի Հասկանա. ապա ասում է. «Եղբայր ցանկալի, մեր բանավոր զոհարելությանը նախ դու իրքես պատարագ մատուցվիր Քրիստոսի Հույսին, քանզի նա մեզ Համար զոհարելից և մեզ անմահություն պարզեցեց»: Եվ այդպես էլ նա առաջ անցավ, ապա նրանից Հետ երեցը՝<sup>20</sup> պատկվեցին արյամբ: Այդպես անՀամար նահատակներ

1 2՝ քաղաքն  
2 2՝ առ ի քրիստոս  
3 2՝ անմեկն  
4 2՝ սխալմիջց  
5 2՝ երեսու՝ սրով

6 2՝ զբարեպ  
7 2՝ բնունեպ և մանեպ  
8 2՝ աստեք  
9 2՝ զալ իր տ  
10 2՝ երկու եղբայր

1 2՝ երեսուցանուն  
2 2՝ Համբուրի  
3 2՝ շշմութեանք  
4 2՝ պատասխանեպ  
5 2՝ որպ

6 2՝ ստութեանց  
7 2՝ որ լույն է  
8 2՝ էրեք  
9 2՝ զերեքն

պատկվեցին Դովին քաղաքում անօրեն Յուսուֆի ձեռքով, որոնց յուրաքանչյուրի անուհիները առանձին գրված կա կենաց մատյանում և նրանց Հիշատակի ամենամյա տոնախմբու թխումը կատարվում է մարտի<sup>1</sup> քսանին<sup>2</sup>, քանզի անխախտ<sup>3</sup> Հավատով Հաղթեցին խորմամանկ չարին և նրա մահաբեր պատգանբի<sup>4</sup> ոստերը կտրեցին, որովհետև չկա ուշինչ ահալոր, ուր սերն է կենդանի<sup>5</sup>, և Հնեց զբանով զբարացած՝ արհամարհեցին մահն ու լուստ պսակն ընդունելով զասաղրվեցին<sup>6</sup> վերին Երուսաղեմի<sup>7</sup> լույսի որդիներին: Իսկ ոմանք խարվեցին չարի ստապատիբ խոստումներին և մտլորվեցին<sup>8</sup>, ուստի Հոգով ու մարմնով անարգանբի, սովի մատոնվեցին և Հավիտենական լույսից՝ զրկվեցին:

Այս է, ահա, խավարաբեր ժամանակը Հայոց: և այս Յուսուֆն է՝ երկրորդ Թեղասն ու առաջին սպստամբը տաճիկների ամիր-ալ-մուսնիներին<sup>10</sup>:

Սրա ժամանակ ավերակ և անապատ դարձավ Հայոց երկիրը. քաղաքներն ավերվեցին, ավանները քարոքանդ եղան, ցիրուցան դարձան, այլալեզու և օտարազգի եղան մեր աշխարհի բնիկները. եկեղեցիներն ամայացան, միաբանության սպասավորներից ու ժողովրդից թափուր մնացին, անզարդացան, զրկվեցին ամեն տեսակի սքանչելի զարդարանքներից<sup>11</sup>: Եվ նույնիակ ինքը՝ Տեր Հովհաննես կաթողիկոսը, փախստական գնաց Հունաց աշխարհի կողմերը՝ մեր սուրբ Լուսավորչի մենաստանն ու Հանգստարանը, այն լե-

ուր, որին Մանյա Այբբ ևս կոչում<sup>12</sup>, Դարանաղաց զավառի Գառնկա՝ վանքը:

Այս բոլորը տեսնելով՝ Գագրի Արծրունին, որը Յուսուֆին առաջնորդողն էր, մի զիշեր փախստական ընկնում է Կորդվաց աշխարհը. այնուհետև Վասպուրականն՝ ամբողջութեամբ զաղթեցնում է Ասորեստան, մինչև չարագույժ ամալրոպի<sup>13</sup> անցնելը. Հետագայում կրկին շնեացնում է երկիրը՝ թագավորելով Հայոց Վասպուրականի մասի վրա: Իսկ Ամբասի եղբորորդի Աշոտը, որը նույնպես այն չարախորհուրդ վիշապի կամակիցն էր, թագադրվում է՝ նրա կողմից իր Հորեղբոր փոխարեն: Եվ այսպես Յուսուֆ ամիրան (ե)<sup>14</sup> Հինգը տարի մնալով Հայաստանում՝ սրով, սովով ու զերութեամբ ամայացրեց ամբողջ երկիրը<sup>15</sup>:

1 Տ.՝ նոյեմբերի  
2 Յովհ. Կաթ.՝ որ իշխտակի օտոց ուճականաց մարտի տոնայ՝ որ որ քսան ևս եղին  
3 Չ.՝ անխախտ  
4 Չ.՝ քաղաք  
5 Այսպիս ունին Չ. և Տ.: Յովհ. Կաթ.՝ որ սեր Հոր է

6 Տ.՝ զատկորդեցան  
7 Չ.՝ յերուսաղեմի  
8 Չ.՝ կատարեցան  
9 Չ.՝ յախտեղանական լուսույն: - Յովհ. Կաթ.  
10 Չ.՝ ՄԻ:  
11 Չ.՝ ամբարձումնացն  
12 Չ.՝ բարկաբոց

1 Տ.՝ ասն  
2 Չ.՝ կատոց  
3 Տ.՝ Վասպուրականի  
4 Չ.՝ տարտիտե

5 Չ.՝ թագադրոց  
6 Չ.՝ է ամ  
7 Յովհ. Կաթ. զբ. ԾԵ-ԾԶ:

**Մմբասի երկու որդիների փախչելու, այնտեղից վերադառնալու եւ Աւոսի թագավորելու մասին**

Մմբասից մնում են երկու որդիները՝ Աշոտն ու Աբասը: Աշոտը փախտական եղած գնում է Կոստանդնուպոլիս, Հունաց Լեւոն կայսեր դուսր: Իսկ Աբասը գնում է Վրաց աշխարհը, փեսայանում նրանց եւ՝ իր եղբայր Աշոտի՝ Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո ինքն էլ է վերադառնում մեր աշխարհը:

Այս Աշոտը, որն իր քաջակորով արիության համար երկաթ հոշվեց, Կոստանդնուպոլսում եւ Հունաց աշխարհում սփրանքի անօրինակ գործեր կատարեց, ապա Լեւոնի հրամանով վերադարձավ մեր աշխարհն ու իր հոր ծառաներին գտավ թագավորելիս: Ինքն իրեն անվանեց Շահնշահ, այսինքն թագավորաց թագավոր, նա Իսմայելական զորքերին հայածեց մեր Հայոց աշխարհից, իսկ մարտերում՝ զորաց (իմա՝ զորավարների) կարիքը չէր զգում, այլ ինքն անձամբ էր վարում պատերազմը:

Լեւոնից հետո Հունաց աշխարհում մեկ տարի թագավորում է նրա եղբայր Ալեքսանդրը, այնուհետեւ Հունաց վրա թագավորում է Ռոմանոսը<sup>1</sup> (իր) քսաներկու տարի, Հայոց (յկե) երեք հարյուր վաթսուեւեցինգ թվականին: Սա իր թագավորության երկրորդ տարում անհամար զորք է զուսարում եւ դեմնայիկոս՝ ուղարկում Դվին քաղաքի վրա, այստեղի ամիրան էր Սպքին<sup>2</sup>, որը Շահնշահ<sup>3</sup> Աշոտին իրեն փո-

խարինոյ էր թողել քաղաքում: Հունաց զորքերը գալիս պաշարում են Դվինը, բայց զրավել չեն կարողանում՝ ու այնտեղից հեռանում են:

Իսկ Տեր Հովհաննեսի մահվանից հետո, Հայոց երկրորդ<sup>4</sup> չենության ժամանակ, կաթողիկոս նստեց Տեր Թաղեուսը՝ (ժա) տասնևմեկ տարի:

Ապա Աշոտը, իր հոր մահվանից<sup>5</sup> (մե) տասնև հինգ տարի ապրելուց եւ (ը) ութը տարի թագավորելուց հետո, վախճանվում է (յժը) երեք հարյուր յոթանասուութը թվականին:

1 Ի. Չ. պոլսուց՝ եւ.  
2 Չ.՝ իսմասո  
3 Չ.՝ ըռոմանոս

4 Չ.՝ եւ. զիմոյ իկոս  
5 Յովհ. Կոթ.  
6 Չ.՝ յուՇեչուհ

1 Չ.՝ Կորսուցի  
2 Չ.՝ Ի յերկրորդ  
3 Ի. Տ. պոլսուցը՝ մահուան  
4 Չ.՝ Կորսուցի

Արասի բազավորելու մասին և թե նրա օրերում  
ինչեր տեղի ունեցան՝ նաև  
մենակյաց ու բազմակյաց կրոնավորների վարքը

Աչոտի մահվանից հետո թագավորում է նրա եղբայր Աբարը՝ (ին) քսանչորս տարի: Արա օրեր, Տեր՝ Թեոդորոսից հետո, յոթը տարի կաթողիկոս է նստում նրա եղբայր Տեր Եղիսեն: Իսկ սրանից հետո՝ Վարազա սուրբ ուխտի առաջնորդ Տեր՝ Անանիա Մոկացի, որ Համայն Հայության Հայրապետեց (իր) քաններկու տարի:

Այս Աբարը յուր քաղցրարարու վարքի և քաջակորով զորության՝ պատճառով մեր Հայոց աշխարհի խաղաղության ու բարգավաճման Հիմքը դրեց և շրջակայքում բոլորին Հաղթող Հանդիսացավ: Վրացիների ու Սարմատացիների ասպատակությունները դադարեցրեց Հայոց աշխարհից, որոնք մի օր՝ բազմախուռն բանակներով և բյուրավոր զորքերով, ամբարտապանությունք մեկի օրինակով, Ափխազայի իշխան Բերը՝ Մամարացիների աշխարհից, որը Կովկասյան՝ լեռներից էլ այնկողմ է, դուրս գալով՝ չարժվում գալիս է անթիվ բազմությամբ, Հասնում Կուր կողմող զեռի ափը՝ ցանկանալով անսպասացնել մեր Հայոց աշխարհը:

Դեսպան է ուղարկում Հայոց թագավորի մոտ՝ պահանջելով չօծել նեկեղեցին ըստ սուրբ Գրիգորի ուղղադավան

1 Ձ.՝ գործնակ  
2 Ձ.՝ տեք  
3 Ի Ձ.՝ պախաւը՝ տեք  
4 Ձ.՝ գործնակ իւրայ

5 Ձ.՝ ամի  
6 Ձ.՝ յնչաղօ  
7 Ի Տ.՝ պախաւը՝ Բնին: - 2.՝ թերե  
8 Ձ.՝ զկովկասայն

Հավատի, այլ առում է, թե ինքը կզա և և կկատարի այդ քաղկեզոնական օրենքներով: (Քանզի թագավորը Կարին քաղաքի սուրբ կաթողիկեն կառուցել էր վեհաշուք արձաններով, որձաքար պողպատատաշ վեմերով, բոլորածև կմբեթավորված և երկնանման խորանները՝ պայծառորեն զարդարված):

Արաս թագավորը, երբ լսում է նրա այդ պահանջը, Հայոց այրուձիից մի զուամբատակ է կազմում, [արագորեն] Հասնում է Կուր զեռի ափին ու բանակ դնում Բերի՝ բանակի զեմ: Իսկ երես կողմերի՝ զհեմբորները ամեն օր Հարձակվելով՝ ասպատակ էին սիտում զեռի՝ այս և՞ այն ափերում:

Եվ օրերից մեկում ափխազաց ասպատակները անցնում են Կուր զեռն ու Հասնում Հայոց բանակի մոտերքը. չփութություն աղաղակները Հասնում՝ են թագավորին: Նա Հրամայում է չուսափույթ երիվարը՝ իր մոտ բերեց, ասպազենն ու զենքերը անձամբ ինքն է Հազմում, երկայրի սուսերը ձեռքն է աննում և Հարձակվում ասպատակների վրա. նրանց հետևից Հասնում է զեռի մեծտղը, քաջի Հզոր ձեռքով Հարվածներ Հասցնում, երիվարներից կիսախեղ գած է գցում, որոնց Համար Հուլարկավոր ջուրն է դառնում: Իսկ ինքը ափ դուրս գալով, ահեղ ձայնով Աստծուն օգնական է կանչում և իր անունն է տալիս. զրանից ահարեկված Հյուսիսային ազգը փախուստի է դիմում: Հայոց զորքերը քաջապիկն զորությամբ Հետապնդելով՝ նրանց բոլորին սրտ ճարակ են դարձնում ու ամբողջ բանակը ավարի՞<sup>10</sup> աննում:

1 Ձ. յուկոյր սաս՝ սա չին է գփփըր կա-  
թողիկն սուչ ու գուրբը զքիզոր Ի  
չարտոյ Դալոնի  
2 Տ.՝ սարբուց գորոց  
3 Ձ.՝ յնչոյ  
4 Ի Տ. պախաւը՝ երկոյնց

5 Ձ.՝ գնուոյն  
6 Ի Տ. պախաւը՝ եւ  
7 Ձ.՝ Հասնի  
8 Ձ.՝ յնչրեայ  
9 Ձ.՝ սաս եւ Ի սարեւ՝ երկուր  
10 Ձ.՝ ուարի



նաև ամբարտափան Բերին ձերբակալում եւ քերում Հասցնում՝ են Կարին քաղաքը: Թագավորը ասում է նրան. «Հայ նայի՛ր այդ գեղեցկաչին եկեղեցուն, քանի որ այլևս չես տեսնելու»: և՛ Հրամայում է փորել նրա շաբերը: Նրա խափարած՝ պատկերը յուր ազգի մարդիկ արծաթով զնեցին, Հայաստանի Հետ երգմամբ խաղաղության դաշինք Հաստատեցին՝ որ այլևս նրանց միջև պատերազմ չլինի:

Այս ժամանակներում Հայոց Հայրապետական աթոռին սիրում էր Տեր Անանիան՝ գերապատիվ ամենաբղանիկ՝ սրբությամբ, բարեկնորհ իր վիճակավորների Հանդես: Այդ նույն ժամանակ ծաղկում ու պայծառանում է կրոնավորական դասը մեր Հայոց աշխարհում: Եվ բազմաթիվ տեղերում կառուցվում են երապրանոցներ<sup>1</sup>, Հավաքվում են՝ միաբնակացյաներ Քրիստոսի սիրով:

Նախ եւ առաջ՝ Կամրջածորի մեծաՀուշակ միաբանությունը Արշարույսաց զավառում, որի առաջնորդն էր Հայր Հովհաննեսը. սա Արեւմտյան աշխարհից, եզերացիների զավառի քաղեղեղնական մարդազավան աղանդից Հայածական եկավ և իր Հետ բերեց Հրազեն (իմա՝ Հրաշագեն) նշանը (109) տերունական:

Եվ որտեղից անցնում էր՝ Հրաշագործություն բազմապիսի նշաններ ու բժշկություններ էին կատարվում այդ պատվական Խաչի զորությամբ, որպես եւ մեր ժամանակներում մեր սեփական աչքերով տեսնում ենք, թե ինչպես բազում Հիվանդներ ու արտահաարներ՝ են բժշկվում: Եվ Հասնապազորյա կա ու կատարում է իր Հրաշագործությունները:

Արդ, եկավ ու ընակություն Հաստատեց մեր վերելում նշված Կամրջածորում՝ կանոնական ուղեցույց ունենալով սուրբ Հայրապետ մեծն Բարսեղի կողմից սահմանվածը՝ առաքելական Հիման վրա՝ 76>, թե. «Նրանք ամենայն ինչք, որ ունեն, ընդհանուր է»<sup>2</sup>. և այնտեղ Հավաքվեցին շուրջ (յ)<sup>3</sup> երեք Հարյուր ճգնահանդերձ մարդիկ:

Իսկ նրանից Հետո նույն միաբանությունն առաջնորդ ու ճշմարիտ Հավատքի պահապան եկավ աստվածային՝ այր Պողիկարպոսը: Ապա նրանից Հետո՝ իմաստուն (իմա՝ փիլիսոփան, իմաստունը) Սամվիլը՝ սուրբ Պրոք դիտություններին մեջ բազմաՀմուտը, շնորհալին երգի ու երաժշտություն:

Իսկ Շիրակի զավառում Հոռոմոսի անվանված վանքը կառուցվեց Հովհաննեսի՝ ձեռքով, որը աղքատասիրության շնորհներով էր զարդարված. քանզի ողորմածությունը եւ առաքիծությունը բաշխում էր իր բոլոր Հագուստները, նույնիսկ մինչև և լրիվ մերկանալը, երբ աղքատներին էր Հանդիպում: Տարբեր տեղերում անց ու զարձաղների<sup>4</sup> և՛ ճանապարհորդներին Համար Հանգստյան տներ էր պատրաստում, ուր բոլոր օտարականները նույնիսկ այնպես ապահով Հանգստանում էին<sup>5</sup>, ինչպես սեփական՝ տանը, և մինչև աշտո էլ ողորմածություն նույն նշանները երելում են այնտեղ: Այս նույն ժամանակներում այդ նույն կարգավորությունը՝ կառուցվեց Նարեկը Ռշտունյաց<sup>6</sup> զավառում՝ բազմամարդ պաշտոնապայծառ

1 Ձ.՝ ամեն  
2 Ձ.՝ տեսնելու ևս  
3 Ձ.՝ սխալմույ  
4 Ձ.՝ Հաստատույ

5 Ձ.՝ ամենաբղանիկ  
6 Ձ.՝ եզերացույ  
7 Ի Ձ. պահալը՝ եւ ժողովեցու  
8 Ձ.՝ արտաձեռ

1 Ձ.՝ անդրեայ ձոր  
2 Պրոք Ա. Բ. 44:  
3 Ձ.՝ քութով  
4 Ի Ձ. պահալը՝ Աստուծոյ  
5 Ձ.՝ յահեմիսի  
6 Ձ.՝ յաղապարսոյ

7 Տ.՝ Ի ճանապարհորդույ  
8 Ձ.՝ Հակեկ  
9 Ձ.՝ իւրեանց  
10 Տ.՝ Կարգավորութեամբ  
11 Ձ.՝ յՌաշտունաց

(իմա՝ լուսավոր Հայաստով) երգեցողներով ու գրական գիտուններով: Նույնպես եւ Խլյաձորի կոչված վանքը Դերջանի գավառում, որը յուր վկայարանի Համաձայն սուրբ Գրիգորի անունն է կրում՝ Հիմնադրված՝ Քրիստոսի ժրջան եւ ճգնավոր ծառա Հայր Սինոնի ձեռքով, որը կյանքից Հեռացավ իր մաքրակենցաղ վարքի սահմանին Հասած եւ իր փոխարեն մխարանոթյան վերակացու թողեց Պետրոս ծերունուն, որը զիշեր ու զօր ջանք էր թափում Տիրոջ ծառայության կարգը կատարել՝ թե՛ ձեռքով գոծելով եւ թե՛ բերանով սաղոմոսելով, բազիլատարած, զեպի աղթարան՝ (իմա՝ զեպի Արեւելք) զեժքը Հասած, իր բոլոր օրերը արտասովալից ողբով էր լցնում: Դրա պատճառով էլ օր ծերության, երբ աչքերի տեսողությունը խիստ վատանում է, բոլոր ընտրյալների մեջ Հայր Բարսեղին է վատահում առաջնորդությունը, որն ընտրյալներից ամենացանկալին եղավ. սա բոլորի կարիքները Հոգում էր ըստ պատշաճի եւ զիտությունը, իմաստնական Հանձարով էր վարում Հոգաբարձությունը. չնայած կենդանությունը կյանքից Հեռանում է, սակայն իր մաշով իսկ կյանքն էր փարոզում՝ բարյաց օրինակ Հանդիսանալով թե՛ Հեռավորների եւ թե՛ մերձավորների Համար: Նրա մոտ էին Հավաքվում միշտ սրբակրոն մարդկանց բազմություններ, խաբազանազգեստ, խոնարհազարդ՝ վայելչությունը, ճաշակելու մեջ սակավապետ, օրվա՝ մեջ միայն մեկ անգամ ուտելով եւ չրով զովանալով, այն էլ սուրբ քառասորացի շարաթի եւ կիրակի՝ օրերին սրբելով: Նրա մոտ գտնվելով սուրբ

քառասորացի՝ օրերին եւ, ըստ իմ կարողության, այս կարճատև Հիշատակարանում շարադրեցի ժամանակներն՝ ու թվականները:

Այս նույն ժամանակներում Լիկանոնոն՝ երկրում, Նահրեստ տեղում, Խարբեղ՝ գավառում Հայր Մովսեսի՝ ձեռքով կառուցվում է մի վանք, որը նրա անունով էլ կոչվում է. բարեգարդ կառուցվածքով, երայրների բազմաքանակությունը, բազմապայծառ իմաստությամբ զիտնականներով լի: Այս Մովսեսը՝ այրն Աստծո, ծնունդով Տարոն գավառից էր, որը ամբողջ արեւմտյան՝ ալիսարհի (իմա՝ Հայոց) Համար բարեգործության օրինակ ցույց տվեց՝ կրոնափրական զատերը բազմապատկելով եւ մեր կրոնի ավանդապահը լինելով՝ տեւեց Հասավ մինչեւ մեր օրերը: Համանման եւ նույն օրինակով, Հայր Սարգսի ձեռքով կառուցվեց Հնձուց վանքը Կարին գավառում ամենայն օրինավորությունը լի. եւ Արշալույսաց գավառի մի վայելչազարդ տեղում՝ Կապուտաբար անվանվածը. եւ Դպրեվանքը՝ Շիրակ գավառում. եւ Ցախաց քարը՝ Վայոց Ձորում, Հայր Ստեփանոսի ձեռքով:

Սրանք ամենքը եւ սրանցից Հետո էլ ուրիշներ՝ նրանց Հետեւելով, Հարակա ճղնակեցությունը միաբան, Հոգիների ամեն տեսակի փառասիրությունից զերծ, յուրաքանչյուր ոք թեկուզ մի խերեւեղ՝ (լուսմա, զոռ) չստանալով, Հասարակաց սեղանից բացի ուրիշ ոչ մի տեղ չկերակրվելով՝ ոչ մրգեբրից եւ ոչ էլ զայլ փոստաբույսերից, այլ գործուս էին Տիրոջ պատվիրանով՝ Հրամայվածի Համաձայն եւ Հանա-

1 Զ.՝ Արաբի Հիմնադրել  
2 Զ.՝ յանդատարած  
3 Զ.՝ քարտեայ  
4 Զ.՝ բազմութիւնն

5 Զ.՝ խոնարհար  
6 Զ.՝ յուրեք  
7 Զ.՝ ի կիրակի

1 Զ.՝ քառասորացի  
2 Զ.՝ ժամանակն  
3 Զ.՝ ի լիկանոն  
4 Զ.՝ ի կորբեղ  
5 Զ.՝ մովսէփ

6 Զ.՝ արեւմտական  
7 Զ.՝ գարեջմես  
8 Զ.՝ խերեւեղ  
9 Զ.՝ ի պատախրանին

պագօրյա փառաբանությամբ զիչեր ու ջերեկ՝ Դավթյան նվազներն էին Հնչեցնում: Եվ այս է նրանց նահատակության դորձը: Իսկ միայնակյացների բազմազարդ առաքինությունների մասին ինչպե՞ս կարող ենք այս սեղմ խոսքերով շարագրել, որոնք Քրիստոսի խաչկությունը խաչակից եղան, քաղցով, ծարավով և Հանապազամետիկ կյանքով զոյատուենցին այն ժամանակներում: Ինչպե՞ս օրհնակ՝ Վանզոց վանքի մեծանուն և Հռչակաբար Հայր Վարդիկը՝ և սուրբ Հայր Կարմիրը: Նրանք այս այխարհի կյանքը ստվեր Համարեցին, լեռների զազանների Հեռ ամայի և անապատ տեղերում, ծոմապաՀությունք, անազարտ վարքով ապրեցին, մինչև որ տիրող կողմից Հրաշագործ զորություն արժանացան: Քանզի առյուծը Հնազանդվեց Վարդիկին՝ բերեց նրան եղջերվի՞ կաշի և իր երկու՞ կորյուններին առաջն արած բերեց ձեցց նրա ոտների մոտ, իսկ նա ձեռքը դնելով նրանց վրա բուժում է նրանց՝ տեսողության՝ օրգանները: Եվ բազում այլ Հիվանդների վրա ձեռքը դնելով արագորեն բուժվում էին անտերից: Թող Հանգիստ լինի նրա ուկորներին, որ Վանզոցում են [Հանգչում], որը՞ մինչ այսօր էլ Հիվանդներին բժշկություն է՞՛ անում:

Իսկ սուրբ՞ Հայր Կարմիրը, որն իր մարմնով Քրիստոսին բարձրացրեց աղբատի՞ կերպարանքով՝ Մոփաց գավառում, բնակվում էր այնտեղ քանի զեռ՞ տաճկաց ձեռքին էր

աշխարհը, օրերից մեկում ելավ դեպք Պաղին բերդի ամիրայի՞ մոտ, որի տարածքի մի ավերակ տեղում եկեղեցի կար, և Հանգիստ առնելու Համբը մտավ այնտեղ: Իսկ այնտեղ ապրող մարդիկ՞ նրան առում են, թե մի՞ մնա այնտեղ, քանզի այնտեղ մահաշունչ վիշապ կա: Բայց նա Աստծո զորությունն ապավինելով՝ արչալույսին մտավ ներս և սկսեց աղօթել: Եվ վիշապը՞ մոտենալով եկեղեցու դռանը՝ Աստծու զորությունք և զորությունք սուրբի աղօթյանը, անմիջապես ստատկեցավ: Բայց երբ լույսը բացվեց, անՀամատ Հեթմաններն ասացին Հավատացյալներին. «Դեպքե՞ք՞ և սեսե՞ք, որ աճարձու վիշապը կուլ է տվել այն մարդուն, որին աստվածային եք կոչում»: սակայն ոչ ոք չհամարձակվեց մոտենալ: Բազում ժամեր վիշապը անշարժ ընկած էր՞, ուստի մարդիկ կասկածանքով կամաց-կամաց մոտենում են. իսկ Քրիստոսի ճշմարտը ներսի կողմից աղաղակում է. «Քարչ տվե՞ք այդ պիղծին և զուրս նետեք»: Եվ այս բանը Հպարտություն է լինում Հավատացյալներին և ամօթանք անՀավասաններին՝ Հանուն Քրիստոսի փառքի:

Կային նաև վարդապետներ՝ քաջահմուտ Տիրոջ ուսմունքը քարոզելու մեջ և ուսուցիչներ ճշմարտության. Բաւիլոս ծերունին՝ քաջակորույր խոսքի մեջ և պերճաբանը Տիրոջ օրհնքները ուսուցանելու մեջ, և Գրիգորը՝ ամուսնացողներին պսակ դնողը, Հորդախոսն ու ասատաբանը Տիրոջ պատվիրանները, և Ստեփանոսը՝ աշակերտը Բարսեղի, որ Հոջեւորն կոչվեց՝ առաքելաչափորէր խոսքով ու գործով. սրա Հես նաև Մովսեսը՝ մեծանունը զիտություն և առաքինություն մեջ, որը քառասնօրյա ծոմապաՀու-

1 Զ.՝ ի սուրբնեան  
2 Զ.՝ վարդուկ  
3 Զ.՝ վարդկոյ  
4 Զ.՝ պեղծուցի  
5 Ի Տ. պատմաճ. և  
6 Տ.՝ կորեւն երկու  
7 Տ.՝ պարսաս  
8 Զ.՝ աստ զիւր զՀատուս՝ օքր եւ բարձրալ զՔրիստոս մարմնով ի կերպ աղ-

բարոս, ցոր Տ. ունի սակու մի գինի:  
9 Զ.՝ ի գանդուր  
10 Ի Տ. պատմաճ.՝ յոր  
11 Զ.՝ ի բժշկութիւն  
12 Ի Տ.՝ պատմաճ.՝ սուրբ  
13 Ի Տ.՝ աստ զպատմաճ. Հատուս բանկց պիտոյ ի բարոսի՞ որ եւ  
14 Զ.՝ մինչև

1 Զ.՝ երթիւն  
2 Զ.՝ մարդիկե  
3 Զ.՝ վիշապ  
4 Զ.՝ երթիւն  
5 Զ.՝ մայ  
6 Զ.՝ զիտութիւն և յառաքելութիւն

թխանն էր Համազում ու մղում<sup>1</sup>։ Ապա եւ Դավիթը՝ ազգա-  
տակերալ ու սակալապետ գիտնականը, որին մակամբամբ  
Մաշկոտն են կոչում<sup>2</sup>։ Եւ Պետրոսը՝ սուրբ Գրոց Հավաստի ու  
ճշմարիտ մեկնիչը, եւ մեծն փրկիւտփա Անանիան, որ՝ եւ՝  
վանահայրը նարեկի։ Սրա զրվածքն է ընդդէմ Թոնդրա-  
կան՝ եւ Հերձվածողական ուրիշ ազնուղների դեմ շարադ-  
րածը։ Սրանցից շատերին իրենց ծերութեան եւ մեր տղա-  
լութեան օրերին մեր սեփական աչքերով տեսանք եւ ճաշ-  
կեցինք նրանց խօսքի քաղցրութիւնը։

Սրանք բոլորը խորախորհուրդ քննութեամբ, աստվա-  
ծաբանական ամենակատարյալ զրվածքների ընտրու-  
թեամբ, Տեր Անանիայի Հրամանով կարգադրեցին քաղկե-  
դոնական օրենքով մկրտավածներին կրկին անգամ մկրտել։  
Քանզի քաղկեդոնականներն ուրանում են Աստծո՝ սեփա-  
կան մարմնով խաչվելու եւ մահանալու գազափարը, այլ եւ  
վերին ներգործութեան կամքով երկակի բնութիւն են վե-  
րագրում Քրիստոսի էութեանը եւ մարդկայինը, ոչ թէ աստ-  
վածայինն են ստում, Հանուն որի մեզ Համար տանջանքներ  
կրեց ու մահացաւ, այն էլ սոսկ մարդկային մահամբ, ուս-  
տի եւ մարդկային մահով են Հազորդում։ Իսկ ճշմարիտ  
Բանին<sup>3</sup> Աստծո [մեկը] խոստովանում ենք մարմնի Հետ  
միավորված, քանզի նույն Աստվածը չարաբանքների ար-  
ժանացալ ու խաչվեց Հանուն մեզ, որովՀետեւ այդպես է  
Աստված սահմանել մեր մկրտութիւնը եւ զրանով է Տիրոջ  
մահը կատարյալ եւ ոչ թէ միայն մարդու, եւ որպեսզի չընկ-  
նենք Երեմիայի անեծքի տակ, թե՞, «Անիծյալ է՛ նա, ով իր  
Հույսը մարդու վրա է դնում»։

1 Ձ.՝ մկրտույցանէր  
2 Ձ.՝ որում մաշկոտն կրկն  
3 Ձ.՝ փրկիւտփա որ  
4 Ձ.՝ թեոզոլոգ

5 Տ.՝ քանն  
6 Ձ.՝ էթի  
7 Ի Բ. զրվածքը՝ է

Ապա Հունաց Ռոմանոս կայսեր օրերում եւ Հայոց Ա-  
բաս Թագավորի ժամանակներում տաճիկների կողմից  
գրավվեց Մեյլիտինեն՝ (յձգ) երեք Հարյուր ութսուներեք  
թիվականին։ Ռոմանոսը վտարեց մեր Հովատի Հայածիչ Ա-  
լախութեթին։ Իսկ (յձբ) երեք Հարյուր ութսուներեք թիվա-  
կանին Համտունը՝ բազմաբանակ զորքով մտալ Կողոնիա  
եւ նորից Հետ դարձաւ։ ԱյնուՀետեւ Թագավորեց Անտոնի  
որդի Կոստանդինը՝ (յձբ) երեք Հարյուր ինսուներկու  
թիվականին (ժգ) տասներկու տարի։ Սրա վեցերորդ տարում  
են (յձկ) երեք Հարյուր ինսուներկու թիվականին (իմա՝ Հայոց) թիվակա-  
նին տաճիկները գրավեցին Մարաշը։ Իսկ Հաջորդ տարում  
(յձբ) երեք Հարյուր ինսուներկու թիվականին Կոստանդին  
կայսրը Չմշկիկ դեմեպլիտոսին (110) մեծաբանակ զորքով  
ուղարկում է Կարինէ՝ կողմնը։ Սա գալիս պաշարում է  
Թեոդուպոլիսը, ճակատամարտ տալիս եւ պարտութեան  
մատնում իսմայելցիները՝ զորքերին, քարուքանդ է՝ անում  
քաղաքի<sup>5</sup> խանդակն ու նրա բարձրարեքն՝ աշտարակները  
եւ զբալում քաղաքը։ Այնտեղ քաջութեանն քաղում զործն  
է ցույց տալիս Չմշկիկի թոռ Կյուռ-մանը՝ որ այն ժամանակ  
ղեծես մանկական՝ տարիքում էր։ Իսկ զբանեց Հետո՝ (նկ)  
չորս Հարյուր յոթը թիվականին Հունաց զորքը գրավում է  
Սամոսաա<sup>6</sup> քաղաքը։ ԱյնուՀետեւ մահանում է Կոստան-  
դինը եւ Թագավորում է Կոստանդինը (դ) երեք տարի։ Իսկ  
(նր) չորս Հարյուր երկու թիվականին վախճանվեց Հայոց Ա-  
բաս Թագավորը, որը տիրեց (իդ) քսանչորս տարի։

1 Ձ.՝ Համտուն  
2 Ձ.՝ կարեայ  
3 Ձ.՝ գրն խաչակաջոց  
4 Տ.՝ կոստանայ  
5 Ձ.՝ քարաքին խաչակրն  
6 Ձ.՝ քարձրարեք

7 Ձ.՝ գարութեան  
8 Ձ.՝ կուռման - Տ. սատ եւ ի սարեին  
9 Ձ.՝ ի մանկութենէ  
10 Ձ.՝ տամոսաթ

Արասի որդի Առոսի բազավորելը,  
 և թե նրա օրերում ինչ գործն՝ կատարվեցին.  
 սրբակրոն սեղանի՝ շինությունը

Արասից Հեսո թագավորում է նրա որդի Աշտարը, որը նաև Շահնշահ<sup>1</sup> էր կոչվում, (ին) քանչորս տարի: Իսկ նրա եղբայր Մուշեղը նույն ժամանակ թագավորում էր Կարսում: Այս Աշտար խաղաղասեր բնավորությամբ տիրելով Հայոց աշխարհին՝ խոնարհությամբ և ողորմածությամբ գերազանցեց՝ իր բոլոր նախորդներին. քանզի զոնջաչալներին<sup>2</sup> (ուրուկներին, անդամալուծներին), կաղերին ու կույրերին Հավաքում էր իր մոտ, խրախմանքներին իրեն բարձակից՝ էր դարձնում, նրանցից շատերին իշխան<sup>3</sup>, այլև իշխանաց իշխան և կյուրապագաս<sup>4</sup> էր անվանում, նրանց թևանցուկ էր գրանում, իսկ նրանց կարծիք քոսն ու վերքերը Հենց իր աչքերի առջև դարդերի ու ակների փոխանակ էր Համարում: Նաև թագավորական ըմպիլիքով վիճուր բաժակը նրանց էր մատուցում. և երբ նրանց վերքերի բիժն ու թաքախը գիժուտ Հետ էր խառնում, այն ժամ նրանց մնացորդը վերցնելով՝ ինքն անձամբ էր ճաշակում: Եվ այնպիսի<sup>5</sup> առատաձեռնությամբ էր [իր ունեցվածքը] բաշխում աղքատներին, որ դեռ յուր<sup>6</sup> մահվանից առաջ ոչ մի դրամ չձնաց նրա գանձարանում. նույնիսկ զարդեղեններից վեր-

ջինը, բազմականներին՝ էլ (իսն՝ զահակիցներին) Հետը, անդամ առագաստների բողբոջը նվիրում էր չունելորներին: Եվ ողորմածությամբ ու տնանկների նկատմամբ ունեցած դիմարտությունը բավից իր մեղքերը:

Արա օրերում կատուցվեցին կրոնավորները կացարաններ, ճղնարաններ Սևուրդայց աշխարհում, Հավասարակյացների, միաբնակյացների Համար. ինչպես նախորդը ասացինք՝ սր. Բարսեղի սահմանած կանոնների Համաձայն. սրանցից երկուսի տողերի անունները՝ Հաղպատն ու Սահահիրը՝ միմյանց դեմ-Հանդիման, Աստծո տան միահավատ Հինգ Հայրուր մարդկանց Համար են: Սանահինի առաջնորդը Հովհաննեսն էր՝ Աստծո գիտնական այլը. իսկ Հաղպատինը՝ Բրիտոսի՝ ճգնազգյաց ծառա Սիմյոնը:

Այսու Հետ վախճանվեց՝ Տեր Անանիան՝ (նժո) չորս Հարյուր տասնչորս թվականին, իր բոլոր օրերը բարվոք ծեբությամբ ցցված: Նրանից Հետ կաթողվեա նստեց Բազայ գավառից Վահանիկը՝ Բաղայց Ջիվանշիր իշխանի որդին՝ 12>: Սա ցանկանում էր նամակազրույթյամբ<sup>7</sup> սիրալիրությոն և<sup>8</sup> բարեկամությոն Հաստատել քաղկեդոնականների Հետ: Այդ պատճառով Հայոց կրոնավորները՝ (իսն՝ բարձրատիրան) Հավաքվեցին Անի քաղաքում. Արշարուսյաց եպիսկոպոս Տեր Խաչիկը, Կամրջաձորի՝ առաջնորդ՝ Հայր Պողոսիարպուսը<sup>9</sup>, Լոռուանի վանքի վանական Հայր Սարգիսը, Սեանան վանքի վանական Հայր Ստեփանոսը և այլ նախկուպոսներ ու բազմաթիվ Հայերի<sup>10</sup>: Իսկ Վա-

1 Ձ՝ առուր նորս գործեցան  
 2 Ի Ե. պակալաթ՝ սրբութեան անցեաց  
 3 Չ. սան և ի սորբո՝ շահեաշահ  
 4 Տ՝ անցայց  
 5 Ձ՝ պոնջուցեաց

6 Տ՝ և բարձակից  
 7 Տ՝ իշխան  
 8 Ձ՝ կրուպագաստ  
 9 Ձ՝ յուրսան  
 10 Տ՝ իւր

1 Տ՝ բազմականացն  
 2 Տ՝ աստուծայ  
 3 Ձ՝ վախճանի ի նժո. թուականին  
 4 Ձ՝ վաղաքինի  
 5 Տ՝ թղթուց անել  
 6 Ի Ե. պակալաթ՝ և

7 Ձ՝ կրոնաբայց  
 8 Տ՝ կամրջաձոր  
 9 Տ՝ կամրջաձորը վանական  
 10 Ձ՝ պոլիպոսոս  
 11 Տ՝ Հայր

Հանիկը փախստական եղած ընկնում է Վասպուրական, Վասպուրականի թագավոր Ապուսահայի մոտ, որը Գագիկ Աբրահամու որդին էր: Եվ ժողովը Աշոտ Շահնշահի ցանկությամբ Հայոց կաթողիկոս է հաստատում՝ Սեանի վանքի վանական Ստեփանոսին: Ուստի երկու կողմերից նզովքնեբով լցրին մեր Հայոց աշխարհը:

Բայց մեծ վարդապետ Ստեփանոսը, որը երանելի Մարտիկի՝ աստիճանակիցն էր եւ հովիվում էր Հայոց արեւմտյան կողմում, կրօնավորների բազմություն հավաքեց. Տարոնի, Հաշտենից, Մոփաց եւ Խորձենաց՝ [գալստներից], Մովսես՝ վարդապետով եւ անվանի այր Բարզենով Հանգերձ, որ Սյունյոց աշխարհից՝ էր, եկավ զմաց Վասպուրական՝ ի Հանդիմանություն Վահանին (իմա՝ Վահանիկին) եւ Ապուսահային: Բայց նրանք վարդապար (այսինքն նենգորեն) վարվելով՝ ոչ ցանկացան տեսնել նրանց եւ ոչ էլ բառ անգամ լսել, այլ Հրամայեցին Ստեփանոսին, Մովսես Վարդապետին ու Հայր Բարզենին աքսորել Աղթամար կղզի: Հենադայում Հայր Բարզենին եւ Մովսեսին ազատ արձակեցին, սակայն Ստեփանոսին փոխարեցին Կուտրոց բերդը, ուր եւ մահացավ. բայց չեմ կարող սսել՝ նրանց նենգությամբ, թե մեկ այլ պատճառով: Ազա այս Վահանիկն ու Ստեփանոսը վախճանվեցին միեւնոյն տարում եւ վերացավ խոտլությունը մեր Հայոց աշխարհից:

Այնուհետեւ՝ Հունաց թագավոր Ռոմանոսի օրերում կային մագիստրոս Նիկիփորը՝ եւ պատրիկ Կյուռ-ժանը, որոնք՝ իրենց Հզորությամբ զարհուրեցրել էին ամբողջ Տաճ-

կաստանյան՝ երկրները: Հինց Ռոմանոսի մահվան ժամանակ նրանք պաշարել էին Անարարդան ու Հայկալը. որոնք՝ զրավեցին էլ: Կոստանդնուպոլսում թագավորում է ոմն Մարինոսը՝: Իսկ Նիկիփորն ու Կյուռ-ժանը ամբողջ զորքերով գալիս են Հունական ծովի եզերքը. Կյուռ-ժանը՝ մտնում է Կոստանդնուպոլիս, գահճնեց անուս Մարինոսին եւ թագավոր կարգում Նիկիփորին՝ (նժր) չորս Հարյուր տասներկու թվականին, որը թագավորեց յոթը տարի: Սա քաջարար Հաղթեց խմայելական զորքերին, բազմաթիվ քաղաքներ՝ իսկ նրանցեց. Մահը՝ (նժգ)՝ չորս Հարյուր տասներեք, իսկ Տարսուսը (նժդ) չորս Հարյուր տասնչորս թվականին: Այնուհետեւ (նժե)՝ չորս Հարյուր տասնհինգ թվականին խավաքեց արեգակը եւ վախճանվեց Տարոնի իշխան Աշոտը: Եվ Հոռոմները տիրեցին Տարոնին:

Իսկ (նժէ) չորս Հարյուր տասնոթ թվականին Նիկիփորի եղբորորդի Վարդը մեծաքանակ զորքով գալիս Հասնում է Ապահունիքը, պաշարում է Մանազկերտ քաղաքը. զբազում է այն եւ Հիմաշհատակ բրում՝ ու կործանում է նրա պարիսպները: Եվ ապա (նժր) չորս Հարյուր տասնութ թվականին զբազում է՝ Ատրական՝՝ Մեծ Անտիոք քաղաքը:

Իսկ նույն տարում Կյուռ-ժանը Վաղիլի մոր՝ Թագու Հու նենգավոր Հորդորանքով սպանում է Նիկիփորին եւ թագավորում ինքը՝ վեց տարի: Բայց Նիկիփորի եղբոր որդի մեծ զուքս Վարդը պատամբում եւ թագավորում է ժոռուղում (?): Նրա զեմ սպտերագում է Հաղթող Կյուռ-ժանը, Հաղ-

1 Ձ.՝ Հաստանցին  
2 Ձ.՝ մարտոցայ  
3 Ձ.՝ քարե ժուռակ կայծ  
4 Ձ.՝ եւ ի խորձենից՝ - Տ.՝ ի խորձենոյ  
5 Ձ.՝ մովսէփե

6 Ձ.՝ աշխարհիկ  
7 Տ.՝ ստա եւ ի ստորեւ Նիկիփորն: - Ձ.՝ նիկիփոս  
8 Ձ.՝ որ

1 Ձ.՝ տանկոստանոսը  
2 Ձ.՝ որ  
3 Ձ.՝ մարինոս  
4 Ի Տ.՝ զովստեղ՝ Կյուռ-ժան  
5 Ձ.՝ քաղաք

6 Ձ.՝ ուձը սոս՝ թուականին  
7 Ձ.՝ նժՁ թուականին  
8 Ձ.՝ քրեաց  
9 Ի Տ.՝ պղպոսեղ՝ անուս  
10 Տ.՝ յուկեղը սոս՝ ի փակոցին (տա)



թուճ եւ Վարդին նետում է կզգու բանոր: Իսկ ինքը զնում է Բուլղարաց երկիրն ու պատերազմում նրանց՝ դեմ: Նրանք Բուզասց՝ ազգը օգնություն կանչելով՝ մարտի են դուրս գալիս նրանց՝ դեմ. եւ միմյանց դեմ ճակատամարտե- լիս ուռնեկրը Հունաց ուղղամտակատի երկու թեւերը Հեռ են շարտում: Իսկ թագավորը ամբողջ Հետուակ զնդով, Հա- յաստանցիներով Հանդերձ, անշարժ մնում են ճակատա- մարտի մեջտեղում, ուր Հերոսաբար նաՀատակվում է Հե- տուակ զուղը, որին սաղարբ (111) են ասում, թագավորի առջև պատուում են նրանց դիմաց գտնվող վաՀանափակո- ցը: Թագավորի Հեռ՝ եղած ամբողջ Հեծեկազորը ներս է թափվում եւ օրեր գործի դնելով՝ նրանց բոլորին սրախոդ- լիող են անում ու տարբեր վայրեր՝ ցիրուցան սփում, Հնա- զանդեցնում ու տիրում են Բուլղարական ազգին (112):

Այս Կյուս-ժանը մանկությունից ի վեր արիություն՝ բազմաթիվ գործեր էր կատարել ու շատ շատերին զարմա- ցրել, այնպես որ՝ թագավոր դառնալուց Հետո Հարավային կողմից Տաճկաց ազգը, Հյուսիսային կողմից Սարմատացոց ազգը եւ արևելյան կողմից Վրաց ազգը ինքնակամ Հար- կատվությունը Հնազանդվեցին նրա իշխանությունը:

Տեր Խաչիկի կաթողիկոսության, Արգինա՝ գյուղի եկեղեցու եւ կաթողիկոսարանի կառուցման մասին

Հունաց Կյուս-ժան կայսեր եւ Հայոց Աշոտի թագավո- րության օրերում (նրա) չորս Հարյուր քսանմեկ թվականին ՎաՀանից ու Ստեփանոսից Հետո Հայոց կաթողիկոս եկավ Արշարունյաց եպիսկոպոս Տեր Խաչիկը՝ Տեր Անանիայի քրոջ որդին, որը միապետությանը խաղաղացրեց մեր Հա- յոց աշխարհը տասնինը տարիներ: Նա նորոգեց կաթողիկո- սարանը Շիրակ գավառի Արգինա՞ գյուղաքաղաքում, Ա- խուրյան գետի ափին, Հայոց վերադիտողի (ի՞նձ՝ եպիսկո- պոս կամ Հայրապետ)<77> Տեր Անանիայի Հանգստարա- նի կողքին: Նույն գյուղում՞ կառուցեց նաև սուրբ կաթու- ղիկն եկեղեցին՝ միմակոփ կառուցվածքով, Հաստահեղույս զմբեթավոր՝ արձաններով, երկնամասն խորաններով, երեք ուրիշ եկեղեցիների՞՝ ասամբլայով, նույնանման, սքանչե- լատեսք՞ ու չքնազագեղ Հորինվածքով, զարդարեց այն մե- ծապայձառ, ծիրանածաղիկ, ոսկեթիկ Հյուսվածքներով, ոսկյա, արծաթյա եւ ամեն տեսակի զարդերով՝ պսակված, Քահարորոք եւ լուսավոր անթիվների պայձառությունը. այ- լելե աստվածախոս կտակարանները բազմապատիվ ստանա- րդ՝ սուրբ առաքելչասց ու մարգարեաբարոզ պատդամե- րը՝ վարդապետական բոլորամպեր երզնցդուրթյամբ Հան- ղերձ:

1 Տ.՝ ընդ ետս  
2 Տ.՝ որոց ազգն Բուսուց: - 2՝ որոյ  
3 Տ.՝ եղեպ  
4 Տ.՝ ընդ ետս

5 Թիբուս՝ անց  
6 Չ.՝ վայրացն  
7 Չ.՝ արևութեան  
8 Ի Չ. պղտուղը՝ ե.

1 Ի Չ. արևուտը՝ ի զեզե արդևոյ  
2 Չ. ի գեղաքաղաքին արգինայի  
3 Չ.՝ ցեւոց  
4 Չ.՝ գրեթէ արթ  
5 Չ.՝ եկեղեցիքի

6 Չ.՝ Հրաչատեակի  
7 Տ.՝ յարիւս անով  
8 Չ.՝ ակթիկ անպուսովոյ  
9 Չ.՝ ամնաբարոզ

Մրա օրերում էին [գործում] նաև վարդապետները Հովհաննեսը՝ խաչակիրը՝ Քրիստոսի, որը տկար խոսքով, բայց մեծ իմաստությամբ բացահայտում էր սուրբ Գրքերի ուսմունքը: Նա մոլեռանդ վրաց ազգի սրով մահացավ եւ թաղվեց Ակսիզոմս կոչված վանքում, Բասենի՝ գավառում, Միջինյաց լեռան ստորոտում եւ այժմ սուրբ Հովհաննէ՝ է կոչվում: Նրա նման էր նաև Կարին գավառի Հեծուց անվանված վանքի միաբանության առաջնորդ Հայր Հովսեփը՝ առատաբաւիս գիտութեամբ գերմաքուր:

Եվ Կիրակոս նվաստաշուք գիտնականը, որ առավելապես իր վարքով, քան խոսքով էր ուսուցանում, սա երկար ժամանակ բնակվում էր Նիզ գավառի Թեղեղնիս կոչված անապատում իմ ընկերակից եւ Քրիստոսի ճգնափոր Հայր Երեմիայի մոտ: Եվ վայելչաբան Սարգիսը Ազվանից աշխարհից, որը զեռ մանկութիւնից սուրբ Գիրքը անգիր գիտեր, իսկ այժմ ծերացած է: Հովհաննես քահանան նույնպես՝ ամուսնացողների պատկորը:

1 Տ.՝ Ի Բաւնի  
2 Տ.՝ Յոճան  
3 Տ.՝ ապ եւ: և:

Ամիրոմ՝ սեղի ունեցած Հունական դասերգովի,  
գիասասղի երեւալու եւ Կյուս-ժան քազավորի  
մահվան՝ մասին

Այնուհետև Հունաց Կյուս-ժան թագավորը Մլեհ գեմնայիկոսին բյուրավոր զորքերով ուղարկում է Ամիրի վրա, որը գայիս է եւ չընպատասուս Համսունի՝ թոռ Արուժահայպի՝ զորքին: Բայց անակնկալ ժամի չորս Հարյուր սուսերամերկ մարդիկ, երիվարներին Հեծած, Հանկարծակի զուրս են արշավում քաղաքի զարպատից, սուսերահար են անում զոների առջև եզած՝ գունդը, բոլոր զորքերին ցիր ու ցան անում, բազմաթիվ մարդկանց բարխողխող անում՝ եւ գեմնայիկոս՝ Մլեհին էլ գերի բռնում. նա տաճիկների մոտ էլ մահացավ:

Ապա Հաջորդ տարին՝ (նիզ) չորս Հարյուր քսաներեք թվականին, Հունճքի օրերին երեսաց նիզակավոր (իմա՝ դիսավոր) աստղը, երբ դեռևս ամառնամուտ եղանակ էր, ինքը բռնկվելով արևելյան կողմից, լուսի նիզակաձև նշանները գեպի արևմտյան կողմը՝ դեպի Հունաց աշխարհն էր ձգվում. եւ այդ տեսեց մինչև աշնանային եղանակները: Հենց նույն տարվա վերջին արբունի պալատում մահացավ Կյուս-ժան թագավորը: Եվ նրանից Հետո՝ (նիս) չորս Հարյուր քսանհինգ թվականին թագավոր նստեց Վասիլը:

1 Ի Զ. պոստոնը՝ որ  
2 Չ.՝ եւ մահ  
3 Չ.՝ Համսունայ  
4 Չ.՝ սպրթահայ

5 Չ.՝ գրոցի  
6 Չ.՝ եւ ցրոցուն... սրտրին  
7 Չ.՝ գեմնայիկոս

ԱՅՈՒՅ ԵՐԿԻ ՄԱՐԲԱՏԻ ԹԱԳԱՎՈՐԵՒՆՈՒ ՄԱՍԻՆ.  
 ԱՆԻԻ ԵՂԱՐԱՏՈՒԿ ԿԱՌՏԱԳՈՒՆՔ՝ ԵՆԷՂԵՂՈՒ՝ ԻՆՏ ՄԻՍԱՍԻՆ  
 ԻՆ ԳՆԱՎԻՅ ԿՅՈՒՐԱՊՈՂԱՏԻ ՇԻՐԱՎ՝ ԳԱՂԸ

Այդ՝ ժամանակ էր, որ մահացավ Հայոց օրհնյալ թագա-  
 փոր Աշոտը (Երկ) չորս հարյուր քառասուն թվականին և  
 Հենց նույն օրը՝ թագափոր նստեց նրա որդի Մարատը՝ (Ժգ)  
 տասներեք տարի: Սա իբրևան ամբողջությամբ լցնել է առ-  
 լիս և պարսպապատում է Անի քաղաքը, Ախուրյան գետից  
 մինչև Մաղկոցաց ձորը՝ կրով և որձաքար վեմերով՝ շա-  
 դախված, մահարձաններով և բրգավոր՝ աշտարակներով,  
 առավել բարձրաբերձ պարիսպներով և ծավալուն, քան  
 Հին պարսիպը՝ ամբողջ քաղաքի ընդարձակությամբ, մայ-  
 րի փայտից գերանն ղռներով, երկաթագամ, հաստահե-  
 ղույս և բեւեռապինդ ամրացրած: Ապա Տրդատ ճարտա-  
 րպետի ձեռքով, որը Արգիշտի՝ կաթողիկոսարանի եկե-  
 ղեցին կառուցեց, ձեռնադրում է Անիի մեծաշեն եկեղեցու  
 Հիմնադրումը:

Եվ խաղաղություն և շենություն էր տիրում մեր Հայոց  
 աշխարհում: Ապա նա սկսեց Հոլորալստ իր Հորեղբայր  
 Մուշեղի դեմ, որը Կարսում էր. և զբաղեց Շատիկ կոչված  
 բերդը, որը ճակատում էր<78>: Այդ է՝ պատճառ գառ-  
 նում, որ Տայոց Դավիթ կյուրապաղատը Վրաց ամբողջ զո-  
 րքաբանկով շարժվի՝ գա Մարատի վրա. գալիս իջնում է Շի-

1 Չ՝ եկեղեցուն  
 2 Չ՝ և գալիս գառթի կ...ապաղ  
 3 Չ՝ յայտու  
 4 Չ՝ օր  
 5 Չ՝ վեմեր

6 Ի Տ. գամատը՝ աշտարակը: - Չ՝ բր-  
 գացի  
 7 Չ՝ յարգվույնի  
 8 Չ՝ յայտը  
 9 Չ՝ յայոց

բակի Բավաջ ձոր կոչված գյուղում. նրա Հետ՝ նաև Մուշե-  
 ղը, որը նրան սցոնություն էր կանչել: Իսկ Մարատը բերդը  
 նորից նրանց է Հանձնում և խաղաղություն հաստատում.  
 և Հանցավոր ոչինչ չեն անում Մարատի երկրում, որովհե-  
 տև խաղաղասեր և սրբաբամբա էր կյուրապաղատը:

ԱՐԻԽԱՏ՝ ԱՄԻՐԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՂՈՒ,  
 ԻՆՏԱԳԱՅՈՒՆ ՆՐԱ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՎԵԼՈՒ՝  
 ԻՆ ՆՐԱ՝ ԽՆԵՂՂԱՄԱՏԻ ԼԻՆԵՒՈՒ ՄԱՍԻՆ

Մուշեղը, սակայն, Աստծո երկյուղը չուներ իր սրտում,  
 որովհետև շատերի կողմից բույժ բողբոխ Հետ էր կենակ-  
 ցում: Սա առաքեց կանչեց Դեյմաստանի՝ պարսիկ ամիրա  
 Սալատինի թոռ Աբլահանին. նա թեպետ նրանց Հետ չեկավ,  
 բայց Հետագայում եկավ, այրեց Հոռոմոսի վանքը և ճուպ-  
 նով ցած զցեց սուրբ Շողակաթի վրա կանգնեցված փրկա-  
 կան Նշանը՝ (Նյա) չորս հարյուր երեսույն թվականին.  
 սակայն նրա վրա շարժվեց Աստծո զայրույթը և նա դեմա-  
 հար եղավ: Պատերազմի մեջ մտավ Գողթնի՝ ամիրա Ա-  
 բուտույի՝ դեմ, պարտվեց նրանից. սա զբաղեց՝ նրանից  
 Դիլին և մյուս բոլոր քաղաքները, նրան էլ ձեռքակալեց:  
 Եվ նա ամբողջ ընտանիքով թափառական շրջում էր Հայոց  
 երկրում և Վրաստանում՝ և ամենուրեք պատում, թե

1 Չ՝ սոց՛հանց  
 2 Չ՝ բանայ  
 3 Ի Չ. գամատը՝ նրա  
 4 Չ՝ գաղ՛հանց զմնասանի  
 5 Չ՝ և գնանեն  
 6 Չ՝ ընդ ամիրան գողթնի

7 Տ. և. Չ՝ սոց՛ապոյ  
 8 Չ՝ Հան  
 9 Տ՝ Թափառական շրջը ընդ ամենույն  
 աշխարհ Հայոց: Կայոց ամենույն բե-  
 տանեց իբրով: - Չ՝ ընտանեք

քանի որ թէնամացա Քրիստոսի սուրբ Խաչին, զբա համար նա վտարեց ինձ իմ՝ Հայրենիքից: Ուստի ելավ գնաց Հունաց Վասիկ կայսեր դուռը, սակայն ոչինչ օգնություն չստանալով նրանից, այնտեղից Հետ վերադարձավ ու ինդգամահ Հեղավ իր ծառաների կողմից Ուխտայաց քաղաքում:

**ՂԱԹԽ ԺԳ**

**Վաստուրականի կոտորածի  
և Գողթնի ամիրա Աբուսլուփի՝ կողմից  
իլխանների ձեռքակալվելու մասին**

Այս ժամանակներում Գողթնի ամիրա Աբուսլուփը (Ջե) ինը հարյուր յոթ հետևակազուեղ (իմա՝ Հետևակազորք) խաղիկներով՝ <79> (? սաս՝ խազիօքն) (113) գալիս է Վասպուրական աշխարհը: Վասպուրականի թագավոր Աշոտի հրամանով նրանց զեն է դուրս գալիս Վասպուրականի իշխանաց իշխան Աբլխարիբ՝ կոչվածը, մեծաբանակ զորքով և Գրիգոր՝ իշխանի ու Տիգրան մարզպանի՝ Հետ միասին: Գալիս իջևանում են՝ ձուռչ գավառի Բակեար կոչված վայրում՝ իրենց երբվարներին թողնելով պաճարաբառ (իմա՝ արածելու):

Նրանց՝ վրահասու ևն լինում Տանկաց զորքերը, Հափշտակում են ամբողջ երիվարները, իսկ նրանք մնում են ամբողջում արգելափակված: Ուստի և տանիկ զորքերն, ըստ իրենց սնահավատ օրենքի, երդումով Հավատարացնում են,

1 Ջ՝ յիմ  
2 Ջ՝ սաս և ի տարեի՝ պուստոփու, արսուպոփ  
3 Ջ՝ Հետամոզով իսկանանք  
4 Ջ՝ մալլխարիկն

5 Ջ՝ զերգորի  
6 Ջ՝ և մարզպանու  
7 Ջ՝ իխանի  
8 Ջ՝ որչ

թև. «Ոչ մի մեղք չենք գործի՝ ձեր նկատմամբ. միայն ձեր գեներքը Հանձնեք մեզ և դուք գնացե՛ք խաղաղությամբ»: Եվ նրանք իրենց անմտու թյամբ Հիմարացած՝ տալիս են իրենց զենքերը: Բայց նրանք, ըստ իրենց Հեթանոսական անօրեն զենի (իմա՝ կրօնի), ստում են իրենց երգմանը և բուրբին սրախողխող են անում. իսկ Աբլխարիբին, նաև ևրկու՝ իշխաններին՝ Գրիգորին ու Տիգրան մարզպանին ձեռքակալում են. սրանք Հետո գանձազին տալով փրկվեցին՝:

Բայց այն մեռածների մարմիններին վրա Հեթանոսական պղծություն նշաններ՝ Հայտնաբերվեցին, որը նույնիսկ պատմել չի կարելի. այդ պատճառով էր, որ Աստված մասնեց նրանց այլազգիների՝ ձեռքը՝ (նյր) չորս հարյուր երեսուներկու թվականին:

**ՂԱԹԽ ԺԳ**

**Վասիլի Հոնասանում՝ քազավորելու՝  
Վարդի բոնակալության և Հոնաց ալխարհի  
ավերածության՝ մասին**

Երբ որ Վասիլը թագավոր նստեց՝ (նիև) չորս հարյուր քանհինգ թվականին, ինչպես նախօրոք՝ արդեն սակ ենք, Վարդը, որ մականվամբ Սիկատոս էր կոչվում և քաջ ու կորովի տղամարդ էր պատերազմական գործերում, սպրտամբում է և թագավորում Ջուհանի և Սնլիսինի կողմերում: Նա իրեն է միացնում Հունաց թագավորության մեջ եղած Հայոց Հեծելազոր դուեղը, մասնատում է Հունական

1 Տ՝ զերկու: - Չ՝ պ. բ. ս  
2 Տ՝ և քաջքն գեմիս փրկելու  
3 Չ՝ մարմին գուտ նշան  
4 Չ՝ այլազգան

5 Չ՝ պոխալը՝ յուեաց  
6 Չ՝ թագաւորութանն  
7 Չ՝ տերքոնի  
8 Չ՝ սասն

թագավորութունը, չորս տարի շարունակ ճակատամարտ է մղում Վասիլ թագավորի դեմ, Հաննում է մինչև Բյութանիս՝ արյան ճապաղիքով՝ լցնելով այդ ամբողջ աշխարհը:

Այդ պատճառով Վասիլ թագավորը դուժարում է Բյուզանդիոնի, Թրակիայի եւ Մակեդոնիայի զորքերին, արեւմտյան բոլոր ազգերի Հետ միասին ուղարկում Վարդ բռնակալի դեմ: Իսկ Վարդը զինվում է նրանց դեմ պատերազմի եւ նրանց Հետ քաջաբար մարտնչում էին նաեւ Հայոց զորքերը. այնտեղ էին Տարոնի իշխանի որդիներ Գրիգորն՝ ու Բագարատը, Մուկաց իշխան Զափրանիլը, սարսափաշար են անում Հունական զորքին, որոնք ահաբեկված ինչպես փոթորկահալոյ՝ մորիկի դեմ չփոթաշար, շատերին սրախողիտող արին եւ բազմաթիվ մարդկանց էլ ձեռքակալեցին<sup>1</sup>, այնտեղ էլ սպանվում է նրանց զորահրամանատար ներքինի՝ Պետրանոսը: Բայց Հետագայում ողորմաճաբար<sup>2</sup>, Հանում քրիստոնեական Հավատի գլխարտութիւյամբ մնացածներին կանք շնորհեցին:

Եվ այս նույն ձեւով երկրորդ անգամ, եւ երրորդ, եւ բազմաթիվ անգամներ ճակատամարտ տալով՝ անընդհատ Հաղթում են արեւմտյան զորքերին, անպես որ Հունաց ամբողջ աշխարհը զրեթե բռնվում է պատերազմով, մինչև անգամ գլուղը գլուղի<sup>3</sup>, քաղաքը քաղաքի դեմ էր կռվում եւ ամենուրեք<sup>4</sup> արնահեղութիւն էր տիրում: Եվ սարսափելի սուվը տարածվել էր<sup>5</sup> ընդՀանուր աշխարհում<sup>6</sup> մեկ, մահացածների դիակներով լցվել էին բոլոր ճանապարհներն ու Հրապարակները, իսկ կենդանի մնացածները չըջում էին

մեռյալներից ավելի ողորմելի [տեսքով]. եւ դիշատիչ<sup>1</sup> գայելը մեռածների դիակներից մոլեգնած՝ ողջ մնացածներին էին Հոչոտում:

Եվ մինչդեռ այսպիսի՝ չփոթութիւն էր տիրում Հունաց տիրապետութեան մեջ, երաթի եւ Նփրկերտի ամիրա Բատը վերստին կառուցում է Մանագիկերտ քաղաքը, սրով ու զերութիւյամբ Տարոնի ամբողջ գավառը անմարդարեակ է զարձնում, ավտի է վեցցնում Մուշ քաղաքը եւ զարհուրելի տեսքով խոլոտում սուրբ Փրկիչ անվանված եկեղեցու քահանաներին, որոնց<sup>2</sup> արյան դաժմաճքը մինչև օրս էլ ցույց են տալիս նույն եկեղեցու<sup>3</sup> վրա:

## ԳԼՈՒԽ ԾԵ

### Հունական վերջին թագաւորացի եւ բռնակալ Վարդի փախստական լինելու մասին

Այնուհետեւ, այս բոլոր իրադարձութիւնները անցնելուց Հետ, Հունաց Վասիլ թագավորը<sup>4</sup> Թռոնիկ զորավարին, որն աղբութիւյամբ վրացի էր եւ սուրը լեռան<sup>5</sup> արեղա, Հանում ուղարկում է Տայոց Դավիթ կուրապաղատի մոտ, խոստանում է տալ նրան Խաղտահաթհը՝ Կղեսուրի Հետ (114) միասին, Չորմայրին ու Կարինը, Բասենն<sup>6</sup> ու Սեւուկ բերդակը<sup>7</sup>, որ Մարզազին (ինս՝ գավառը) են, Հարքն ու Ապահունիքը<sup>8</sup>, (որոնք<sup>9</sup> Հնեց տպեց էլ), որպեսզի իրեն օգնական զորք ուղարկեն:

1 Զ.՝ ճապաղիք  
2 Զ.՝ զրեգորի  
3 Զ.՝ փոթորիկայ  
4 Զ.՝ Անթրակայ  
5 Զ.՝ ներքինի  
6 Զ.՝ սարսափաշար

7 Զ.՝ գեղջ ընդ գեղջ  
8 Զ.՝ ուրբ  
9 Զ.՝ տարածեցաւ  
10 Զ.՝ ընդՀանուր աշխարհում  
11 Զ.՝ զիշիչ

1 Զ.՝ գայ  
2 Զ.՝ որում  
3 Զ.՝ ցուցանի - Տ.՝ իկեղեցու  
4 Զ.՝ թագաւորին  
5 Զ.՝ իրին այնով

6 Տ.՝ Բասեն  
7 Զ.՝ սեւուկբերդակ  
8 Զ.՝ գաղաւուտիք  
9 Զ.՝ զոր

Դավիթ կուրսպագատը գումարում է Վրաց ամբողջ զորքը և իշխանաց իշխան Ջոթիկին դնում է Թռռնիկի Հետ և ուղարկում պատերազմելու բռնակալ Վարդի դեմ: Նրանք, սկսելով Տայց աշխարհից, քանդում և ավերում են Հունաց ամբողջ երկիրը, որը բռնակալի ձեռքի տակ էր<sup>1</sup>: Վարդ թագավորին, որը նաև Փոկաս էր կոչվում, նույնպես ազատում են բանտից, որին Կյուս-ժանն էր բանտարկել կզդում, տալիս է նրա ձեռքը Հունաց արեմտյան ամբողջ զորաբանակը, վրացական զորքերի Հետ միասին և երկու բանակներն ուղարկում բռնակալ Վարդի դեմ:

Իսկ բռնակալը<sup>2</sup> միայն մեկ բանակի դեմ պատերազմելով՝ քիչ էր մնացել, որ փախուստի մատնեի, և աճա վրա է Հասնում երկրորդ բանակը, Հիմնավորապես կարգավորում<sup>3</sup> ճակատամարտը: Դրանից Հանկարծակի զայրվ բռնակալ<sup>4</sup> Վարդը փախուստի է մատնվում:

Եվ դուրս է գալիս Հունաց աշխարհից՝ իր թիկունքում օգնական ունենալով Բազդասի ամիրային, որ իրն ինտրով էր<sup>5</sup> կոչվում և որի Հետ նախկինում էր բարեկամություն Հաստատել: Գնում Հասնում է նրա քաղաքի: Մարտիտաց պոսի<sup>6</sup> մոտերքը, որ Նփրիկբուն է, Փշպաշն կոչված<sup>7</sup> վայրը: Բայց Վասիլ թագավորը խաղաղության սուրՀանդակ է ուղարկում և խնդրում Վարդ<sup>8</sup> թագավորին այնտեղից վերադառնալ: Այդ բանն իմանալով՝ Իրն ինտրովի Հնճուպների (իմ<sup>9</sup> ընթերականների) ավազը<sup>10</sup> <80> տեղեկացնում է նրան Բազդազում: Եվ նա Հրամայում է, եթե Հնարավոր լի-նի, ձերբակալել<sup>11</sup> թագավորին: Իսկ նրանք անպատե՛Հ ժամի Հանկարծակի վրա են Հասնում, ձերբակալում են Վարդ

<sup>1</sup> Հնճուպ՝ ամաց սեննակաբու (արար.)  
<sup>1</sup> Ի Տ. արտակը՝ էր  
<sup>2</sup> Չ.՝ բռնակալն  
<sup>3</sup> Չ.՝ քարգործին  
<sup>4</sup> Չ.՝ բռնա որին

<sup>5</sup> Չ. ամնայն ուրք և Տ. սաս Իրն ինտրով  
<sup>6</sup> Չ.՝ մարտիտաց պոսի  
<sup>7</sup> Չ.՝ կոչվոք  
<sup>8</sup> Չ.՝ թագաւորն փաղդ  
<sup>9</sup> Չ. անկի

թագավորին՝ իր մեծամեծների Հետ միասին և Հասցնում Իրն ինտրովի՝ դուռը՝ Բազդազ քաղաք, որը նույն Բարե-լոնն<sup>2</sup> է: Իրն ինտրովը Հրամայում է նրան երկաթյա կա-պանքների մեջ բանտում պահել իր կենաց թոյր օրերին:

**ԳՆՈՒՆ ԾՅ**

**Իրն ինտրովի ամիրայության և նրա մեծիմաստության մասին**

Այս Իրն ինտրովը Ալեքսանդրի<sup>1</sup> նման խոհական<sup>2</sup> իմաս-տությամբ ապրելով՝ աշխարհը զարմացրեց. նա Հրաման տա-լով քաղաքներ էր զրավում և խտրի ուժով բերդերի զղյակ-ներից բնակիչներին Հայաճում: Նա՝ պատերազմում է քա-ղաքներից մեկի դեմ, որի բնակիչները չեն Համաձայնում քա-ղաքը նրան Հանձնել. իսկ սա, իբրև Հնազանդության նշան, յուրաքանչյուր ընտանիքից պահանջում է մեկական շուն Հարկ վճարել<sup>3</sup> (քաղաքը չըՆապատված էր եղեղնաբույս չափ-բերով՝ և նրանց թոյր բնակարանները եղեղներից էին պատ-րաստված), և ստանալով չներին՝ Հրամայում է բորբի վրա նայիթ<sup>4</sup> լցնել և կրակ տալ ու բաց թողնել: Մյուսը էլ (իմ<sup>5</sup> չները) ամեն մեկը պարսպի խողովակների միջով փախավ իր բնակարանը, և այդպեսով Հրով այրեցին ամբողջ քաղաքը:

Մրա այդ իմաստուն քայլը նման էր Սամախտնի արածին, որը<sup>6</sup> չորս Հարյուր<sup>10</sup> աղվեսներով այլազգիների ամբողջ ու-

<sup>1</sup> Չ. սաս և ի ստորն՝ իրն խտրովայ  
<sup>2</sup> Չ.՝ յարկի  
<sup>3</sup> Չ. սաս և ի ստորն՝ ալէքսանդրի  
<sup>4</sup> Չ.՝ խորՀական  
<sup>5</sup> Չ.՝ սոյր  
<sup>6</sup> Չ.՝ Հարկաւորն

<sup>7</sup> Չ.՝ չափից  
<sup>8</sup> Չ. սաս և ի ստորն՝ նոթ  
<sup>9</sup> Չ.՝ արտակը՝ որ  
<sup>10</sup> Ի Գերս Դաստաւորաց Ժն. 4 զի ոչ յու-րեք Հարիւր. այլ երեք Հարիւր:



ճերը (իմա՝ խոզան արաները) հրով այրեց. կամ Ալեքսանդրի նման, որը վեմերի վրայի բարձրաբերձ գիտանոցի՝ փայտակերտ ապարանքները թոչուններով հրդեհեց<sup>2</sup>:

Արանից զարհուրած՝ Համսուելի՝ մեծ ազգատոհմը, որոնք բնակվում էին Ասորական հարթավայրում, լքում են իրենց ամբակուս քաղաքները՝ նփրկեաբար, Ամիթը, Ագրուն և մնացած<sup>4</sup> բոլորը ու փայտատական գնում են Հունաց աշխարհը: Ապա Վասիլի հրամանով վերադառնում բնակվում են Հայպում (Հավանաբար՝ Հայկպում), մինչև որ իրենց մահվամբ վճարեցին ու սպառվեցին:

Այս Իրն ևնորովը մեծարում ու պատվում էր քրիստոնյաներին. մինչև անգամ տերուսական բոլոր տոները՝ նրա երկրում համարձակորեն տոնվում էին: Այլև Հենց ինքն անձամբ Փրկչի գալստյանը՝ տաճարում, որը Տեսուներդառաջ է կոչվում, պայծառարորոք ջահերով ու մոմեղեններով՝, մեծակույտ վշերով՝ <Տ3> ճրագայույցն՝ էր կատարում, այլև աղափնների թեևերը նավթով և հրով լուսավառած երկինք էր թռցնում: Սա թագ կրելով՝ թագավորների թագավոր կոչվեց, որը, սակայն, Տաճկաց ազգի մեջ ընդունված չէր: Նա հրամայում է նաև սպիտակփայլ՝ արծաթը պղծել ու կապարի հետ խառնել<sup>5</sup>-ձուլել, որպեսզի փաճառականները՝ չկարողանան զանազանել. ապա իր անունը խեցեղեն և կավեղեն իրերի վրա հրամայեց զրոշմի ու սալ մարզկանց ձեռքը, որպեսզի նրանով կերպ-

կուր կամ հանդերձանք գնեն. և ոչ ոք չի Համարձակվում ընդդիմանալ նրան:

## ՉԼԻՒՍ ԺԷ

Արասի Կառսում քաղափորելու,  
նրա՝ բարեգործությունների և իր անունով  
Շիրիմի վանքը՝ կառուցելու մասին

Այս ժամանակներում (նյգ) չորս Հարյուր երեսուներեք թվականին վախճանվում է Կարս մայրաքաղաքի թագավոր Մուշեղը և նրա փոխարեն թագավորում է՝ նրա որդի Աբասը՝ վեց տարի: Սա նախկինում, մինչև թագավոր դառնալը, փր ու կայտառ մանուկ էր և իրեն ճանաչողներին կարծել էր տայիս, թե անհաղորդ է Հոգևոր դասի ինչ-ինչ բարեգործություններին: Բայց երբ որ Հասավ թագավորական աթոռին, երեսաց որպես այր չբեղազարդ, իմաստությունամբ և Հանճարով լի, գիտուններից առաջինն էր Համարվում և դարձավ բոլորովին ուրիշ՝ մարդ:

Նա սկիզբ դրեց՝ ամեն տեսակ բարեգործություններին. նախ և առաջ իր երկրից վերացրեց ավազակությունն ու մարդադավությունը, որ ունեին վանադացիների տոհմի մարդիկ որպես Հայրենիք, ինչպես որ վկայում է պատմագիրը՝ <Տ1>\*: Եվ սրա հոր օրերում ոչ միայն ճանապարհներին կամ անբնակ տեղերում էին թալանում, այլև նույնիսկ քաղաքի մեջ երեկոյան ժամերին և ամբողջ գիշերը ա-

\* Տես Ե.Լ.Ք., Հատ. Բ, 820, իմա՝ Հավաքել:

1 Տ.՝ բարեգործությունը

2 Չ.՝ եղաց

3 Չ.՝ Համսուել

4 Տ.՝ գայլակ

5 Չ.՝ տոն

6 Չ.՝ սպարազուտ

7 Չ.՝ մանուկներով

8 Տ.՝ գրուպուտու: - Չ.՝ գրուժուտան. գր մեք ուղղադրեցար աշտեան, որպես ընթեժան և Մ. Էմին:

9 Տ.՝ սպիտակփայլ

10 Տ.՝ Հրամայեց ընդ սղեղն և ընդ կարպոյր խուսել:

11 Տ.՝ որ ոչ ընտելց գաճառականացն և

\* Տես՝ Խոր. Գ, 44:

1 Ս. Չ. պահպանը՝ և բարեգործությունները

2 Չ.՝ զննիրեն վանք

3 Չ.՝ Թագուրեղաց

4 Չ.՝ յայր յայլ

5 Չ.՝ արքա

6 Տես Խոր. Գ, 44:

մենուրեք կողոպուտի ճիշ ու ձայներ էին լսվում: Բայց նա, ինքն անձամբ վրեժխնդրութեամբ լցված, բռնված գողերին անաչառ կերպով մահալան էր դատապարտում, չէր խնայում մեծերին, թն փոքրերին<sup>1</sup>, իշխաններին կամ շինականներին. եւ այնպես բարեկարգեց իր երկիրը, որ անգամ գիշերները, ինչպես լույս ցերեկ, եւ նույնիսկ անապատ տեղերում, որպես ապարանքներում էին շրջում ամենքը. շինարարութեամբ եւ գործարարութեամբ էին պարապում<sup>2</sup> արդարադատ իրավունքով<sup>3</sup> ազնվացած:

Եվ քանի որ Հին սովորութեամբ անկարգութիւն էր տիրում մեր Հայոց աշխարհում, ուստի իշխաններն ու ազատները որովայնամոտութեամբ ապականում էին, ըստ սահմանված կարգի, պահոց օրերը<sup>4</sup>. չորեքշաբթին, ուրբաթն ու շաբաթ օրերը<sup>5</sup>. մից բացի նաեւ կաթնեղեն կերակուր էին ուտում. ինքը<sup>6</sup>, սակայն, անձնական օրինակ ցույց տալով, ոչ միայն կաթնեղեն որեւէ բան, այլեւ ձկնեղեն անգամ չէր ճաշակում, այլ միայն հացով, բանջարեղենով ու մրգերով էր անցկացնում [սուրբ] կանոններով օրինակուրդված այդ<sup>7</sup> օրերը:

Այնուհետեւ բարեբարձ<sup>8</sup> խորհրդով Հանձն՝ առավ կառուցելու եկեղեցիներ՝ հանուն իր անժի փրկութեան եւ ի հիշատակ Հոգու Հալիտենութեան: Եվ առանձնահատուկ վայր ընտրեց Արշարունյաց գավառի մի բարձրադիրք տեղում, որին Շիրիմն<sup>9</sup> էին կոչում, ընդարձակածավալ սահմաններով պարսպապատեց որձաբար վեմերով, քառակողմ ձևով, յուր սեփական գանձարանից մեծածախ աշխատու-

թեամբ Հարդարեկ տեղեց բոլոր շինութունները՝ Հարձարավետ կրօնավորների բնակութեան՝ Համար: Իսկ այդ Հանրահռչակ վայրին Համապատասխան միարանութեան առաջնորդ է կարգում Աստծո մարդուն՝ Մովսեսին, որը աննաշանավորն էր Համարվում ամբողջ Հայոց աշխարհում: Բանգի երեք Հոգի էին նրանք՝ Մովսեսը, Հովհաննէսն ու Համդիբոսը<sup>10</sup> մարմնով արյունակից եղբայրներ՝ առավել եւս Հոգով էին միասունեղ եւ նույնահավատ Աստվածային կարգերին: Այն էր՝ մի Հոգի, մի մարմին եւ մեկ բնութիւն Համանվագ երեք անձանց մեջ բնակված, սուրբ Երրորդութիւնը փառաբանել եռակի խոստովանութեամբ ու բարեպաշտութեամբ. եւ եռակի առաքինութեամբ պայծառացած՝ աշխատութեամբ, պահոցով եւ պղծքներով: Եվ այդպես առաքինութեամբ ու բարի անվամբ պարելով՝ վախճանվում են նույն տարում (նժա) չորս Հարյուր Հիսունմեկ թվականին:

Իսկ Արաս թագաւորի մայրը՝ բարեպաշտ ծնողների բարեպաշտուհի [ղուստրը], որը Փառխոսի Սենեքերիմ եւ Գրիգոր<sup>11</sup> թագաւորների քույր էր, Հրամարվեց երկրավոր պատկից եւ՝ առ ոչինչ Համարեց անցավոր փառք, երկնավորի Հետքով ընթացավ, Հանձն առավ կրօնավորական վարքը, գնաց բնակվեց այն տեղը, որին Թրին վանք են անվանում (որովհետեւ եկեղեցիները փոքրածո են<sup>12</sup>, սպիտակ քարից եւ Հարալաղեմ) եւ իրեն նվիրեց պղծքների, բարեգործութիւնների ու Հոգեւոր առաքինութիւնների:

1 Տ: ի փոքր  
2 Տ: եւ աշխատութիւն գործեց պարապում եւ  
3 Տ: իրուակ  
4 Տ: գուրս  
5 Տ: գուրս  
6 Տ: գուրս

6 Տ: գուրս  
7 Տ: գուրսով  
8 Տ: բարաց  
9 Տ: յանկն իւրում  
10 Տ: չղիկներ

1 Տ: շինուածն պիտոյց բնակութիւն  
2 Տ: անկիւս  
3 Տ: գրիգորոյ

4 Ի Տ. պովսէսը՝ եւ  
5 Տ: անուտի  
6 Ի Տ. պովսէսը՝ եւ

**ՉԼՈՒԽ ԺԸ**

**Թն ինչոքես Ռովդի՞ որդի Արիւածը եկավ Դվին  
հաղաք եւ Հայասանից հարկեր գանձելով  
վերադարձավ**

Իսկ (նչզ) չորս Հարյուր երեսունվեց թվականին Ռովդի՞  
որդին եւ Ատրպատականի ամիրա ԱրջՀանը՝ (ճու) Հարյուր  
Հազար պարսիկ զորքով գալիս Հարձակվում է Արուստիի  
վրա, խլում է նրանից Մայրին քաղաքը, ամարի է վերց-  
նում նրա երկիր Գողթնը, գալիս Հասնում է Դվին քաղաքը՝  
զրավում է այն եւ՝ Հայոց այխարհից պահանջում է նա-  
խորդ տարիների Հարկերը. Ամբաս թագապորը նրան ընդա-  
ռաջ է ուղարկում՝ Հարկը՝ մեծամեծ նվերներով եւ նրան  
Հետ դարձնում:

**ՉԼՈՒԽ ԺԹ**

**Արիւածի դահլայ վաստդուրական գալը, նրա մահն  
ու նրա որդի Մամբանի՞ ամիրա դառնալը՞**

Չորս Հարյուր երեսունթըթը՝ (նչէ) թվականին Ռովդի՞<sup>10</sup>  
որդի ԱրջՀանը մեծագույն կատաղությամբ ու ցասումով է  
լցվում Վասպուրական աշխարհի նկատմամբ Հետեւյալ  
պատճառով. մի անգամ Հէր գավառի Ալեւորի որդին բա-  
ժանության նպատակով անցնում է Ապահունիքի ամիրա-

յի՞ մոտ. ապա այնտեղից վերադառնալիս, երբ որ մոտենում  
են՝ Հէրի սահմաններին եւ անցնում էին ինչ-որ գյուղի մի-  
ջով, տեսնում են գեղեցկատես թրիստոնյա մանուկների  
խաղալիս, գայլաբար Հարձակվում են, բռնում են նրանց  
դնում երկվարների վրա եւ փախցնում՝ տանում: Այդ տես-  
նելով՝ Հավատացյալներից՝ մեկը Սարգիս անունով, ազատ-  
ների դասից, Հեծնում է երկվարն՝ ու ընկնում նրանց Հետե-  
ւից. «Ի՞նչ եւ ինչո՞ւ եք անում այդ՞ բանը», - ասում է  
նրանց: Իսկ նրանք Հետ զանազով թշնամաբար են դիմում  
գեպի նա: Եվ նա պողպատե սուրբ քաջաբար դուրս քաշե-  
լով՝ նրանց արյունով է Հարբեցնում, բոլորին կոտորում է:  
Ալեւորի որդուն մեջտեղից երկու կտոր է անում եւ գերված՝  
երեխաներին Հետ վերադարձնում:

Բայց Հէրի [տեր] Ալեւորը բանագնաց է ուղարկում  
Ատրպատական ամիրա ԱրջՀանի մոտ, խոստանում է նպի-  
րել նրան Հէր՝ քաղաքը, միայն թի՛ն՝ սա իր որդու արյան  
վրեժն ստնի Վասպուրական աշխարհից: Նա էլ վստահ լի-  
նելով յուր զորքերի բազմաբանակությանը, խոստանում է  
անմարդարենակ դարձնել այդ ամբողջ երկիրը: Եվ Հավաքե-  
լով Պարսից խուժաղուժ ցեղերի բազմությունը, գալիս Հա-  
նում է Վասպուրականի սահմանի Հենց դեմը. երեկոյան  
ժամին երեք առաջպահ՝<sup>11</sup> գնդերի է բաժանում իր զորքե-  
րին, որպեսզի վազ առավոտյան (իմա՞ լուսարացին) բանա-  
կի մի զուեղը աջակողմից՝<sup>11</sup> սփռվի երկրի սահմաններին,  
մյուսը՝ ձախակողմից՝<sup>12</sup>, իսկ ինքը բանակի մեծ մասով բռնի

1 Զ.՝ այլճանաչ բառացիք  
2 Զ.՝ ուղարայ  
3 Զ.՝ ստո եւ ի ստորեւ՝ այլճանաչ  
4 Զ.՝ ի բազարե Դուին  
5 Ի Զ.՝ պակասե՞ր եւ

6 Զ.՝ որոյ ընդգէժ ու զարկեայ  
7 Զ.՝ անձայն ու թե՛ր՝ Մայրան, Մայրական  
8 Զ.՝ ամբողջով  
9 Զ.՝ ի 467 թուին: - Զ՝ ե՛ւէ. թուականին  
10 Զ.՝ այլճանաչ ուղարկի

1 Զ.՝ յամիրան  
2 Զ.՝ մերձ եղեւ.  
3 Զ.՝ մտայ  
4 Զ.՝ ի Հաստատցից ազատ անի  
5 Զ.՝ յերկիրսի  
6 Ի Զ.՝ պակասե՞ր՝ ցայդ

7 Զ.՝ գերեայ  
8 Զ.՝ Հէր  
9 Զ.՝ կի՛ր  
10 Զ.՝ ստալս  
11 Զ.՝ ընդ աջակողմին  
12 Զ.՝ ընդ յաճեկողմին

երկրի կենտրոնական մասը, որպեսզի բրիտանյաններից ոչ որ չկարողանա կենդանի մնալ:

Այս բոլորը դասավորում է և կարգադրում թյուն է անում իր գործին արեւամուտին: Բայց նույն գիշերը խոսեց նրա դեմ Փրկչի ձայնն ու սասց. «Անմիտ՛, Հենց այս գիշեր Հոգիդ՝ դուքս պիտի պահանջվի քեզանից. իսկ մտքիդ այդ անբարհավաճութեան խորհուրդը ինչպե՞ս կարող ես կատարել»: Եվ վաղ առավոտյան նա մահացած գտնվեց ու նրա չարութեան խորհուրդն իսպառ խափանվեց: Նրա մահվանից Հետո իշխանութիւնը վերցնում է նրա որդի Մամլանը: Իսկ Գողթնի ամիրս՝ Արուստուփը երկրորդ անգամ է տիրում Դվինին, և Հայոց թագավոր Սմբատը նրա Հետ երդումով դաշինք է Հաստատում Տեր Խաչիկի միջնորդութեամբ, և միմյանց՝ Հետ ապրում են Հաչա ու խաղաղ:

Վասիլ Թագավորի կողմից Հայոց  
ժողովարաններից բաժնին Մակեդոնիա՝  
անցկացնելու և Մերասիայի՝ մեքոդոլիսի  
ձեռքով նրանց կրած հալածանքների մասին

Այն ժամանակ, երբ Բաղդադում թագավորում էր Վարդը և խաղաղութիւն էր տիրում Վասիլի տիրապետութեան մեջ, սա (իմա՝ Վասիլը) մտածեց իր թագավորութեան մեջ ապրող Հայերին անցկացնել Մակեդոնիա՝<sup>1</sup> Բուլղարիայի դիմաց, որպեսզի չենկանն այդ երկիրը. ուստի և շատերին տեղահանեց և տարավ բնակեցրեց՝<sup>2</sup> այնտեղ: Սակայն [նրանց] կանացի Հոդեւորականներն ու Մերաստիայի՝ մեքոդոլիսը սկսեցին դաժանորեն տանջել Հայերին իրենց դավանանքի պատճառով, և Հալածանքների ձեռնարկելով՝ սկսեցին չարչարանքների ենթարկել քահանաներին իրենց Հավատի Համար, իսկ Մերաստիայի ավելի նշանավոր վանականներին երկաթյա կապանքներով Հասցնում են՝ թագավորի դուռը: Բանտում չարչարանքների ենթարկելով սպանում են քահանաների ավագ Գարրիկին, քանզի ծերացած մարդ էր, իմաստութեամբ լի և աստվածային ճշմարիտ Հավատին քաջապիղծ կանգնած: Այդ եղավ (ույն) չորս Հարյուր երեսունհինգ թվականին՝: Իսկ ոմանք, առավել աննշան քահանաներից՝ և երկուսը եպիսկոպոսներից՝ Մերաստիայինը և Աստիստինը՝՝ Սիրոնն ու Հովհաննեսը, նույն մեքոդոլիսի ձեռքով ընդունեցին Քաղկեդոնի ժո-

1 Ձ.՝ մակեդոնի

2 Ձ.՝ նեքոդոլիսին սերաստու.

3 Ձ.՝ ի մակեդոն

4 Ձ.՝ որ տարեկ ընդմեջ

5 Ձ.՝ սառ և ի ստորեւ՝ նեքոդոլիս, և՛

սերաստու.

6 Ձ.՝ Հասուցանեն

7 Ձ.՝ ի Նէէ. թուականն

8 Ձ.՝ այլք աննշան քահանայք

9 Ձ.՝ գաղթոյ

1 Տ.՝ յուկոյր սառ՝ թլլ

2 Ձ.՝ ոպիս

3 Ձ.՝ ամիրս

4 Ձ.՝ սռ միմիսս

զովն ու դուրս եկան Հայոց միավորութիւնից: Այնուհետեւ արդիւնքին առհասարակ Սերաստիա քաղաքում Հայոց ժամերգութեան ծայրը, մինչեւ Վասիլ Թադաճորի գլար արեւելյան երկրները<sup>1</sup>, ինչպես որ իր տեղում արդեն ասել ենք:

Դրանից հետո այդ մետրոպոլիտն ու այլ մետրոպոլիտներ ձեռնարկեցին մեծածավալ նամակներ գրել եւ ուղարկել Հայոց կաթողիկոս Տեր Խաչիկին: Նրանց ընդդիմախոսական պատասխանները քաջհամուտ իմաստութեամբ շարադրեցին նախապես արդեն մեր նշած վարդապետները եւ այդ թղթերից (իմա՝ պատասխան) մեկը պատշաճ համարեցինք զետեղել այս պատմութեան մեջ:

#### ՉԼՈՒՄ ԻՄ

### Սերաստիայի մետրոպոլիտի թղթի դասասխանը՝ գրված Հայոց կաթողիկոս<sup>2</sup> Տեր Խաչիկի հրամանով՝ (115)

Ատովածային եւ վեհագոյն՝ մտքից առավել, երկնապարզ եւ ու անհասանելի խաղաղութեանն արժանացած բանական արարածներս, Ատովածային Բանի ճանաչմանն ու նրան Հարստեւ Հետեւողներս Հույժ զժպարանում ենք խոտվարարութեան հետեւանքով. ոչ միայն մեծամեծ իրողութիւնների, այլ նույնիսկ ամենաչնչին խնդիրների կապակցութեամբ, մանավանդ որ Հակատքի՝ վերաբերյալ բաժանման խոսքը առավել թշնամութիւն է սերմանում. ինչպես ձեր ներկա գրածից ենք հասկանում, ո՛ր վատվական եպիսկոպոսապետ ու մետրոպոլիտ Սերաստիայի մեծ միաբանութեան՝ 82՝:

1 Ձ՝ Երեւան  
2 Ի Ձ. պակասեր՝ Հայոց կաթողիկոս

3 Ձ՝ Հրաման  
4 Ձ՝ Հատուց

Բայց քանի որ զգուշացնելը մեծ բան չէ եւ դյուրին է անգամ վատթարագույններին, ինչպես ասում է Գրիգոր Նանձիանձացին<sup>3</sup> (իմա՝ Նաղիանգանցին), ուստի խոնարհութեան եւ զգաստութեան խոսքը բարբառել իմաստասեր ու ամենակատարյալ այրերի գործն է, ահա թե ինչու՝ մենք, ոչ թե հակառակ ձեր թշնամական խոսքերի ենք գրում, [այլ առանց թշնամանքի], որովհետեւ ո՛չ մենք եւ ո՛չ էլ Աստծո կեղեցիկները այդորինակ բնավորութիւնն չունենք, որպես ուսուցանում է Պողոս երանելի<sup>4</sup>:

Արդ, որովհետեւ ձեր թղթի հնցն սկզբում եւ զրանից հետո էլ ըստմիջոց մեզ Հերետիկոս Հորջորջեցիք<sup>5</sup>, ճիշտ այնպես, ինչպես երկու բնութիւնների բաժանելը<sup>6</sup>, որի հետեւանքով երկու կամք եւ երկու ներգործութիւն եք խոստովանում Քրիստոսի էութեան մեջ, բացի զրանից, որը եւ ամենասարաստեղծն է, այդօրինակ [կեղծ] քարոզչութիւնը առաքյալներին ու առաջին վարդապետներին եք վերադրում<sup>7</sup>, որպես «...պղնձոյ շուրջ եղեալ զխարհութիւն արծաթոյ» (116)\* (= իբրեւ արծաթով օժված պղինձը խարհութեամբ արծաթ համարեք). եւ այդ էլ Հայտարարում եք նրանց՝ առաքյալների՝ քարոզչութիւնից, ավետարանիչների ավետարանական մեկնութիւններից<sup>8</sup> եւ սուրբ Հայրերի վարդապետութիւնից եկած, որից մարմնացյալ բանին երկու կամք ու երկակի բնութիւն եւ վերաբոյժում եւ պահանջում Հնագանդակ իբրեւ ճշմարիտ խոսքի:

Ապա նաեւ միայն<sup>9</sup> անուճապատան եք Հագցնում նրանց անվանը, որպես թե ուսմիկի Հագուստի մեջ թազա-

\* Տե՛ս՝ Մայի. 115 եւ 116 քաղաղարթիւնները:

1 Տ՝ Գրիգոր Ամենամեծ. - Ձ՝ գրիգորն անմիանուն.  
2 Տ՝ այնպիսի  
3 Թուղթ Գոյ. առ Կրեղի. Աստիքի. ԺԼ. 16:  
4 Ձ՝ երանելիս

5 Ձ՝ զատկանութիւն  
6 Ձ՝ ասոյ  
7 Տ՝ առաքյալիցն  
8 Տ՝ յառապարտութեան  
9 Ձ՝ միայն պատեւ անսո

վորին կերպարանավորեք (որպեսզի շատեք թե առյուծի մորթու մեջ այն կենդանուն եք կերպավորում կամ արծվի մեջ արծվայինը զանց առած ճային եք առասպելարանում<sup>1</sup> ուրիշ հավերթի գեղեցկությունը), որը մի<sup>2</sup>թե բացահայտ խաբեությունն է՝ ազնվատենի համար, ու՝ իմաստունների նրանց մեջ: Բայց միայն նրանք, որ իրենց դեմքին աչք ունեն եւ իմաստուն միտք, որոնք կատարյալ<sup>3</sup> են հասակով եւ զարգացած ճաշակով<sup>4</sup>, նրանք են ընդունակ բարու եւ չարի մեջ ընտրություն կատարել: Հենց այս<sup>5</sup> պատճառով մենք մեր բարեպաշտական<sup>5</sup> հավատն ենք բացահայտ քարոզում եւ շարադրում այս նամակում: Քանզի լուսան բարձունքին հրամայվեց բարձրացնել հավատա բարբառը, եւ Տիրոջ կողմից հրամայվեց, որպեսզի<sup>6</sup> ականջով լսվածը տների կտուրներին ասվեն ու քարոզվեն: Արդ, թեպետեւ Հյուսիսային աշխարհի ոլորտներում ենք ընակվում, որտեղ սառնասառույց ցրտության շունչն<sup>7</sup> է տիրում, եւ այդ սառնության պատճառով ի սկզբանն մեր հողիները անգիտության խավարով էին պատված եւ բազմաթիվ տարիներ ու ժամանակներ այդ անթմափանց խավարում անհայտը էինք մնացել ավետարանական լույսի ծագմանը. բայց երկնային բարձունքներից մեզ իր շնորհք բերեց Արեգական արդարության քաջաձայն առաքելությունը<sup>8</sup> եւ ամենակրթանիկ<sup>9</sup> չարհաբանքներով պատվված մեր սուրբ Լուսավորչի ու Քրիստոսին խոստովանողի<sup>10</sup> Գրիգորի ձեռքով, աստվածասաստ Հարվածներով եւ աստվածահրաշ քրանչեկրքներով լուսավորեց եւ անգիտությունից զեպի աստվածազիտությունն ճշ-

մարտությունը<sup>1</sup> դարձի բերեց մեր ազն ու Հայաստանյայց թագավորությունը: Հենց նրանից ուսանեցինք եռանձնյա<sup>2</sup> դեմքով, բայց մի զորությունը խոստովանել սք. Երբորդությունը, փառավորությունը եւ Աստվածությունը կերպագեւ, համազոյական Հորը, Որդուն եւ սք. Հոգուն խոստովանել. եւ նույն Երբորդությունից մեկին<sup>3</sup> միածին Աստված Աստծո եւ լույս լուստ [կոչել], որ անկեւույթ<sup>4</sup> Աստծո պատկերն է, լույս փառաց եւ Հոր էություն նկարագրերն է, որն իջավ սուրբ<sup>5</sup> կույս Մարիամի<sup>6</sup> որովայնը<sup>7</sup> կամաքն Հոր եւ սք. Հոգու Հովանավորությունը զոյսասեղծեց ինչեւ իր մեջ մարմին<sup>8</sup> Աստվածությունը միավորությունը. ծնվեց Կույսից աստվածախառն մարմնով, գյուղթյուն առավ անձառելի եւ առանց արտի<sup>9</sup> հանուն մեր փրկության եւ բոլոր նրանց, ովքեր կկարգան նրա անունը:

Այս նույն նպատակով էր, որ Կոստանդնուպոլ պահանջով զուամբովեց Նիկիայի<sup>1</sup> սուրբ Սինոդոսը (ինա՝ ժողովը), (յժը)<sup>2</sup> երեք Հայրուր տասներեթ հայրերի [մասնակցությունով]. Արևոսի չարափառ աղանդի քնուկության համար, որքը Հեռ էր նաև մեր սուրբ Գրիգորի որդի Ռատակեսը<sup>3</sup>, որը նույնն էր ասում ու քարոզում տեղեկերի չորս ծագելում<sup>4</sup> նրանց զավանդությանը ձայնակցելով:

Ապա եւ երկբորդ ժողովը<sup>5</sup> (ծծ) Հայրուր հիսուն հոգեւոր Հայրերի, որը տեղի ունեցավ Կոստանդնուպոլսում բարեպաշտ Թեոդոս թագավորի ձեռքով ընդդեմ Հոգեմարտ<sup>6</sup> Մակեդոն ՀայՏոյողի. այստեղ էր նաև Հայոց Հայրապետ սուրբ Ներսեսը: Մրանց Համամիտ եւ միաձայն է<sup>7</sup> նաև Եր-

1 Ի Թ. Գրիգորի ստ  
2 Թ. խոստովանել կատարել  
3 Թ. նայանել  
4 Թ. այնպիսի  
5 Թ. բարեպաշտություն

6 Թ. օր  
7 Թ. օրացն (ին) շնչունք  
8 Թ. ստորություն  
9 Թ. անչե կրթանիկ

1 Ի Թ. Գրիգորի՝ նյմարություն  
2 Թ. խոստովանել եռանձնակ  
3 Թ. անկեւույթ  
4 Ի Թ. Գրիգորի՝ սրբոյ  
5 Թ. մարտաց

6 Թ. Նիկիա  
7 Թ. 328 Հարսուցի  
8 Թ. ստատովե  
9 Թ. Հոգեմարտ  
10 Ի Թ. Գրիգորի՝ է



բոր ժողովը եփեսոսի, որը (ն) չորս հարյուր հայրերի մասնակցությամբ գումարվեց՝ Թեոդոս Փռքը բարեհաղթ թագավորի օրոք՝ ի հանդիմանություն և ևրժում նեստորի՝ մարդադավան աղանդի: Սրան թղթով իրենց հավանությունը ավին Հայոց սուրբ Հայրապետ Մահակն՝ ու մեր երանելի ուսուցիչ Մեսրոպը:

Ահա, նրանցից ուսանելով՝ նրանց հավասան ենք խոստովանում, որը և ընդունեցինք, սովորեցինք և որով մկրտվեցինք ու պաշտում ենք իրբև գեղեցկագույն ավանդույթ Հայրենասուրբ ժառանգությանց. իսկ այն, ինչպես գույնը մարմնի վրա, անընթեխ մնալու է մեր հոգում ու սրտերում: Բայց որպեսզի երկարաբանելով ցնդարանություն չհասցնենք, ինչպես որ խոզովակի մեղ չսեղմված ջուրը ճապարակ է դաշտի երեսին, ձեզ ենք հարցնում, իրբև սուրբ Հայրերի և Առաքյալների աշակերտների. «Նրանցից ո՞վ, արդյոք, և որտե՞ղ զբն ու քարոզեց երկակի բնությամբ կամ երկու կամքի բաժանված՝ Բրիտոս. ինչպե՞ս եք համարձակվում աստվածախոսն մարմնին իրարից անջատ բնություն վերագրել, որը ոչ թե սազմից, այլ սուրբ Հոգուց զոյացավ, երկակի բարձունքներից մալց և. ծնվելիս սուրբ անվանվեց ու որդի Բարձրյալի՞», որպես Գարբիելն է ուսուցանում: Արդ, ո՞ր բնությունն եք կոչում Որդի Բարձրյալի՞, կամ որի՞ն եք ասում Փրկիչ և Օծյալ և Տեր, ինչպես Հրեշտակը Հայտնեց Հովիվներին՝, թե երկակի չէ բնությամբ՞, և նրա փառքը տեսանք, ասում է, որպես միածնին

ի Հորն՝: Ո՞ւմ եք արդյոք, ասում է, Հայրենյաց փառք համարում մարմնի՞ն, թե՞ Աստվածությունը: Եվ Հորդանան գետում որդու մկրտություն ժամանակ Երրորդության հայանվելով՝, որտեղ սուրբ Հոգին աղափուտ կերպարանքով եկավ ու նստեց նրա վրա, և Հայրենյաց ձայնն՝ ի լուր ամբողջ տիեզերքի, հասավ, թե «Դա է իմ սիրելի Որդին»<sup>1</sup>. կհանդգնե՞ս, արդյոք, Հայրենի բարբառն էլ երկու բնությունների բաժանել: Եվ ի նշան Տիրոջ փառքի ճառագման, այդ նույն ձայնը ո՞ր բնության համար ասաց՞ Որդի և Սիրելի: Եվ երբ որ Աստծո սիրո անսահմանությունը աշխարհի հանդիպ հայանվեց աստվածարան Ավետարանի կողմից, մի՞թե՞ն չասաց. «զՄիածնին ո՞ւմ տալիս»<sup>2</sup>, և զեպի ո՞ւր, արդյոք, տվեց, եթե ոչ՝ զեպի խաչ և զեպի մահ: Ահա, զբաժանի՞ր Միածնին՝ այդ ո՞ր բնությունն էր նրա մեղ որը Հորից արվեց: Իսկ ինքը՝ Ավետարանիչը պայծառափայլ խոհականությունը, այդ անբաժանելի և անկասկածելի միավորության համար երբեմն աստվածայինը մարդ և մարդկայինը աստվածային է կոչում. քանի որ, ասում է. «Երկինք՞ ոչ ոք ելավ, եթե ոչ՝ նա, որն իջավ երկնքից որպես մարդու Որդի, որ կան երկնքում»<sup>3</sup>: Եվ երբ որ այդ բանն ասաց Տերը՞, ոչ երկնքում էր մարմնով և ոչ էլ նախապես երկնքից իջած մարմին, ինչպես Եվտիբեն էր կարծում, այլ աստվածությունը անվանեց որդի մարդու, թե. «Տեսնելու եք մարդու որդուն, որովհետև երևելու է վերապին այնտեղ, ուր ի սկզբանն էր»<sup>4</sup>. ապա ինչպե՞ս էր մարդու որդու համար ասում, թե մինչև մարդանալը երկնքում

1 Ձ.՝ Թեոդոս փոքու ժողովուրդ բարեյալ թագուորք յանդիմանութիւն 2 Ձ.՝ Նեստոր տաւեցեցի 3 Ձ.՝ Իսահակ 4 Ձ.՝ աստ և զիբի յահաբ՝ բարձրակեց, բարձրանում 5 Ղուկ. Ա. 36: 6 Ի Ձ.՝ արտաւոր՝ ո՞ր բնությունն է Որդի Բարձրեցի 7 Ղուկ. Բ. 11: 8 Ձ.՝ բնութիւն

1 Յով. Ա. 14: 2 Ձ.՝ թէ 3 Տ.՝ յերեկոյ 4 Ղուկ. Գ. 22: 5 Յով. Գ. 16:

6 Ձ.՝ յերկին 7 Յով. Գ. 13: 8 Տ.՝ արդ Տէրն ասաց 9 Յով. Զ. 62:

էր: Դե հիմա այդտեղից բաժանի՛ր ընությունը, ո՛վ նոր ւփետարանիչ, մի՞թե արդարեւ նույն ինքը չէ՞ր՝ Մրամինը Հոբից եւ կուսածինը մորից, որ պարզամտորեն սասց. «Պահանջե՛ք սպանել ինձ՝ մարդ, որ միմիայն ճշմարտությունը ձեզ մոտ խոսեցի, որն իմ Հորից ուսանեցի»<sup>1</sup>:

Եվ երբ աստվածության Համար ինքն իրենից Հարցնում էր, թե «Ի՞նչ էք ասում մարդու որդուն»<sup>2</sup>, ապացույց է բերում Պետրոսի խոստովանության պատասխանը, թե՛ Աստծո որդի դասվանեց՝: Իսկ բերանը ոսկի էր Հոգւանը (իմա՝ Հոգւան Մակերերանը) մեկնարանում է, թե՛ աստվածությանն է կոչում մարդու որդի եւ վերելում գրածները էլ իբրեւ վկայություն է բերում (թե՛)<sup>3</sup> ու բազմաթիվ անգամներ էլ կրկնում, թե աստվածությունն է մարդու որդին: Այսբան, ահա, բազմապիսի եւ անհաղթելիորեն բացահայտ խորհուրդ՝ Աստվածային Բանի միավորությամբ մարմնանալու վերաբերյալ, թողած՝ երկու մասի էք պատում միավորության պատմուճանը, տարբերակում բնությամբ ու կամքով պոզպես ոչ զրվիլ եւ ոչ էլ քարոզվիլ է Առաքյալների կողմից: Ըստ մարմնի այդ ո՞ր բնությամբ է Պողոսը Քրիստոսին՝ Համբնդհանուրի Աստված անվանում՞. կամ այդ ո՞ր կերպարանքին, ո՞ր բնությանն են ամենքը ծուրը դնում՞ մարմնի՞ն, թե՛՞ աստվածությանը:

Դե բաժանի՛ր երկակի բնությունը երկու՞՝ երկրպագությունների (չնայած վախճումն էք երկու՞՝ երկրպագություններ արտասանել, թե՛նեւ Հույժ բաժանասերներ եք. իսկ եթե՛ միեւնույն՞ երկրպագությունը սակք (իմա՝ երկուպիսի),

<sup>1</sup> Պողո չէ հիշել վրա եկած՝ նշանի խոստովանություն:

1 Յովհ. Ը, 30:  
2 Մատթ. մՅ, 15:  
3 Մատթ. մՅ, 16:  
4 Չ՝ քրիստոսան  
5 Քուզմ. Պոլ. առ Հուզմ. Թ. 5:

6 Քուզմ. Պոլ. առ Փիլիպ. Բ, 10:  
7 Չ՝ երկուս եւ երկրպագութիւնս  
8 Ի Չ. պարմալը՝ երկուս  
9 Չ՝ եւ հիշէ տակք զվի՛ն եւ նշի

ուրեմն երկրպագությունը կբաժանեք եւ ոմն օտարոտի էություն էրբեւ Աստված ներս կբերեք): Այլ որպիսիք մեկ երկրպագություն խոստովանեք<ՏԷ>, ուստի ստիպված կլինեք ակամայից, թեպետեւ չեք էլ ցանկանում, Տնօրինողի միավորությունն ընդունել՞, քանի որ չի կարելի՛ երկրպագել մարդկային բնությանն իբրեւ՞ աստվածություն եւ ոչ իսկ մայել է երկնավորներին երկրային բնությանը երկրպագություն անել. ընդ որում Համայն մարդկային Հասարակության բնությունն է երկրպագել՞ ճիւղան՞, մեզ բնութեմնակից լինելու Համար (117):

Այն՞դ անմտություններիդ՞, առափել եւս անգետ մոլորություններիդ Համար. քանզի պարտավոր էիք երկու բնությունների մեջ մեկ այլ բնություն եւս փնտրել, թե՛րեւս կարող լինեիք խուսափել ՀայՀոյշությանից (կամ ափելի ծանրագույն ՀայՀոյշության մեջ ընկնել): Ահա, թե ինչ է ապացուցում մենն Կյուրեղը իր տասներկու գլուխներից (Հավանաբար՝ բաղկացած ճառեր) յոթներորդում՝. «Եթե՛ ոքեւ՛ մեկը, ասում է, մեկ երկրպագությամբ եւ փառաբանությամբ չի պաշտում էմմանուելին, թո՛ղ եղովյալ լինի»: «Բարձրացնել եւ անուն շնորհել, ասում է Պողոսը, առափելազույն, քան մարմնի բոլոր տեսակի անունները»<sup>4</sup>. իսկ ի՞նչ անուն կա առափել զերազանց, եթե՛ ոչ՝ Աստված: Եվ ինչպե՛ս կհանդգնի՞՞ որեւէ մեկն ասել երկու Աստվածներ: Եվ քանզի Բանն առաջուց իսկ կրում էր աստվածության անունը, եւ որովհետեւ անճառելի միավորության Հետ միաձուլելով անխառն բնությունները, վերցրեց մարմինն աստ-

1 Տ. ստե եւ ի ստորե՛ խոստովանել  
2 Չ՝ ընդ  
3 Չ՝ երկրպագել  
4 Չ՝ անբնութեան

5 Չ՝ չեմբորոց  
6 Առ. Փիլ. Բ, 9  
7 Չ՝ անգրիփ

վածացրեց, ուստի եւ եղավ ստեղծողի բնությամբ ու զորությամբ՝ որպէս վկայուած է Գրիգոր Աստվածաբանը: Գարձայ մեկ այլ ճառում ասում է, թե. «Աստվածային պատկերը մարդկային կերպարանքի Հնա միաձուլեց ու ներկայացրեց սաան Իւրայեի, թե՛ ա՛նա, Տերը օծեց նրան եւ աստվածացրեց: Այդ բանը մեկնելով ինքը՝ նույն Աստվածաբանը, որով ինքնեկը էլ եք պարծնելու, ինչպես մենք եւս Հպարտանում ենք, թե՛ օծեց եւ Քրիստոս կոչեց, բայց ոչ թե ուրիշ օձվողները՝ զորությամբ, այլ Համբողջանուր Օծողի մերձավորությամբ<sup>1</sup>. եւ միմիայն նրա շնորհն էր՝ մարդուն օձված դարձնել եւ օձյալից Աստված արեալը:

Դե այժմ բաժանելը այդ օձված անունը երկու բնությունների եւ ցույց տուր երկակի Աստվածները տարբերությունը՝ բաժանելու բնությունները<sup>2</sup>: Եվ քանի որ չես կարող, ուստի պարտավոր ես ինքդ խոստովանել՝ մի Տեր, մի Քրիստոս, մի Աստված եւ՝ մեկ բնություն:

Ե՛կ միասին շրջադայեք (ի՛նչ՝ քննեք) Աստվածաբանի ուրիշ խոսքերում եւս: Երբ ասում է, թե. «Ոչ միայն աստվածությանն եմ անվանում կատարայ, այլեւ աստվածության կողմից՝ օձված մարմնին, որը եղավ [կատարայ] ինչպես օծողն է, որին եւ Համարձակվում եմ անվանել մեկ Աստված», ի՛նչ եւ Հասկանում՝ դրա տակ, ո՛վ բնութենասերը, եւ ինչպե՛ս եւ մի Աստվածը երկու բնությունների բաժանում: [Ապա նաեւ]. «Եկավ Աստված երկու Հակադիր՝ էություններով իբր ստեղծածների Հնա միասին՝ մեկը մարմինն եւ ասում, մյուսը Հոգին, որոնցից մեկին ինքն

աստվածացրեց եւ մյուսն՝ էլ աստվածացավ»<sup>3</sup>. ինչպե՛ս եւ Համարձակվում աստվածացային օտար բնություն վերադրել: Իսկ ի՛նչ բան է աստվածաբանն<sup>2</sup> քարոզած բնությունների նորաձեւությունը, եթե ոչ՝ միավորություն, քանզի Աստված կարող է եւ մարդ դառնալ. այն է՝ չիք, ինչ որ էր (այսինքն՝ կար), ոչի փոխարկվեց. իսկ ինչ, որ չկար, զոյացավ, որպեսզի Հոգու օծությանն՝ միջնորդությամբ անտանելին տանելի դառնա, միջնորդելով նաեւ թանձրազոյն մարմնի Համար:

Արա վրա գարմանալ կարելի է. ասում է թե մարդկային Հոգին մարմնի եւ աստվածության միավորության միջոց է: Ձի՛ նշանակում, արդյոք, որ եթե երկատում եւ բնությունները, ապա ոչ թե երկու, այլ երեք բնությունների պարտավոր եւ խոստովանելի միջոցը ավելանում է: Իսկ եթե անտեսում ես միջոցը, ուրեմն երկուսի միավորումը չի լինի. ոչ էլ Աստված մարդ կդառնա, ու դրանով մարդկությունը Համայն զրկված կլինի փրկությունից: Տեսնո՞ւմ ես, թե ուր է տանում քեզ քո այդ բաժանաբարությունը: Հնեց նույն ճառում նա ասում է՝ ոչ միայն աստվածային բնությունը՝ կարող է միավորվել մարդկային Հնա, այլեւ մահկանացուին<sup>3</sup> անմահ Հնա, չարչարելիին անչարչարելի Հնա, անպատվելիին նրա Հնա, որն ամենքից առավել գերապատիվն է: Նաեւ Աթանասը Ապոլինարին ուղղված թղթում Աստծո մարմնացած Բանի մեջ մեկ բնություն է ճանաչում: Նույնն է Հաստատում նաեւ նրա Հտեւերդ Կյուրեղը. երբ Սեկունդոս<sup>4</sup> եպիսկոպոսը նրան Հարցրեց. երկու՞ բնու-

1 Չ՝ որ  
2 Չ՝ օծողը  
3 Չ՝ միւրեւորություն  
4 Չ՝ բնութենա

5 Ի Տ. պոփոսը՝ եւ  
6 Չ՝ յոժութենէն  
7 Չ՝ յիմաստ  
8 Չ՝ ընդդիմացայեց

1 Չ՝ միեւ  
2 Տ՝ աստվածաբանից - Չ՝ աստվածաբանի  
3 Տ՝ Աստվածութենան

4 Չ՝ բնութենան  
5 Չ՝ ընդ մահկանացուն  
6 Չ՝ աստ եւ փոքրիկ՝ սփոխող

թյամբ պետք է Հասկանանք մարդեղացած Բանին, թե՞ մեկ, նա նամակով պատասխանեց և. ասաց. «Մնա՞րդովուց Հետո չենք կարող անջատել բնությունն՝ իրարից, ինչպես որ երկու որդիների բաժանել մեկն ու անբաժանելին. նույնպես և մեր սուրբ Հայրերը մեկ բնությամբ ուսուցանեցին մարմնացած Բանին Աստծո՞ւ»:

Եվ դարձյալ Սեկուլոզսին առաքած երկրորդ թղթում ասում է. «Հակառակորդներն ասում են նաև, զրու՞մ է նա, եթե մարմնացյալ Բանն Աստծո մխարնայթ է, սպա պետք է ընդունել ամենայն ինչի խառնակումն ու շիլաշփոթը. ինչպես որ մարդկային ընափորությունն է՝ թաքցնել ծախսվածը կամ զողացվածը, սակայն անզուտ են և աղափարում են ճշմարտությունը. ըստ որում ճշմարտան այն է, թե մեկ բնության մեջ է մարմնացած Բանն՝ Աստված»:

Դարձյալ սուրբն Կյուրեղը Հեղեոս քահանային զրու՞մ է. «Եթե ասում ենք մի բնության պետք է խոստովանել՝ և՛ Հոգևոր մարմնի և թե՛ իմացական, ուրեմն մխարովածոնը չենք անջատում իրարից. այստեղից էլ այնուհետև մի որդի է միայն և մի բնություն նրան»։ Նորից էլ զրու՞մ, [այս անգամ] Թեոդոս թաղափորին. «Թեև բնություններով միմյանցից խիստ սուրբեր էին և բոլորովին նմանություն չունեին, [սակայն] զարով միացան այդ բնությունները՝ մի Քրիստոս և՛ մի Որդի և Ստեղծողով Հանդերձ եղավ մեկ բնություն»:

Նույնն էլ զրու՞մ նաև սուրբ Հայրերին Հետեւող՝ Մելիտոնի Ալիակ եպիսկոպոսին. «Ամենայն տեղերում՝ աստվածությունների Համար ասում են, թե սուրբ կույսից էլ զալիս՝

Բանին Աստծո մարմնավորումը, որը միայն Որդին է, միայն Տեր Հիսուս Քրիստոսը. երկու էություններով ենք ասում մխարովեցին՝, ինչպես որ միանալուց Հետո վերանում են՝ նույն մարմնի անջատ մասերը. ուստի և Որդու էություն մեջ մեկ բնության ենք Հավատում»:

Իսկ սուրբ Բարսեղը Քրիստոսի ծննդյան ճառում ասում է. «Աստված մարմնի մեջ ոչ թե արՀեստական՝ գործերով, ինչպես մարգարեների ձեռքով է կատարվում՝: 85>, այլ իրեն Հետ րուսածին և իրեն Հետ մխարոված է ներկայացնում մարդուն (118)\*: Իսկ ի՞նչն է մարմնի մեջ աստվածայինի Հատկանիշը. օրինակ՝ որպես Հուրը երկաթի մեջ փոխարկաբար (իմա՝ զրսից է փոխանցվում), այլ փոխադարար (իմա՝ ինքնակա, փոխադարձ ազդմամբ) է ստանում. քանզի Հուրը ոչ թե ինչ-որ տեղից է ինքն իրեն գնում երկաթի մեջ, այլ իր ներքին բնույթին Համապատասխան, մալով իր տեղում, իր բուն զորությունից փոխանցում է նրան, որը այդ փոխադարձությամբ զորությունով բուրբովին էլ նվազ չէ և այդ զորությունով լցնում է ընդունողին ամբողջապես: Այդ նույն ձևով էլ Աստվածային Բանը՝ առանց նրանից զուրբ զալու, փոխանցվում և բնակվում է մեր մեջ, և ոչ էլ լցնել է պահանջում, և այդպես է Բանը մարմին առնում: Բայց ինչպե՞ս է, ասում են, որ մարմնական տկարությունից ոչինչ չանցավ Աստվածային Բանին. սահմ Հուրը ոչ թե երկաթի Հատկությունից է վերցնում որևէ բան. երկաթը սեւ է և սառը, բայց երբ շիկանում է, Հրո կերպարանք է ստանում և ինքը պայծառանալով կրակին՝ չի սեպանում. ուստի և ոչ ստեղծական այդ Հրով

\* Տե՛ս Մեղբ. ձև 118.

1 Ձ.՝ բնութիւնն  
2 Ի Տ. պղկաւէ՛ր Բանին  
3 Ի Ձ. պղկաւէ՛ր և

4 Ձ.՝ ուսուց  
5 Ձ.՝ տակայ

1 Ձ.՝ իրկուս բնութիւնս մխարոյց ա- սեթ  
2 Ձ.՝ բարեկեցիյ  
3 Ձ.՝ ստանոյ  
4 Ձ.՝ Հուր  
5 Ի Տ. պղկաւէ՛ր Հոյ

չկարծես ազդել Աստվածությանը»:

Նույն ծննդյան ճառում Աթանասը գրում է. «Ճշմարտագին մեներ եւս խոստովանում ենք անապական մարմնի գերակայությունը, քանզի Բանն իր բնությունը մարմին առավ եւ ինքնարարաբ միածուլվեց նրա Հետ. եւ մեր Տեր՝ ու Փրկիչ Հիսուս Քրիստոսը մեկ բնությունը Կույսի արգանդում մարդ դարձավ: Ուշ դարձնենք մարգարեների խոսքերին, որովհետեւ մի բնությամբ եւ անապական են ցույց տալիս: Ոչ ուրանում եմ բնությունը եւ ոչ էլ բաժանում, այլ առանց երկմտանքի միություն՝ եմ ասում Պրոֆիտի այն՝ ճառի Համաձայն՝, որի սկիզբը Հետեւյալն է. «Կուսական է այս ասոնը՝, ասում է, սուրբ եւ Աստվածածին կույս Մարիամը, զբանով (այսր - 119) [Հրամայեց] անարատ կուսության բաժակը, երկրորդ Աղամի իմացական դրախտը, բնությունների միավորության գործարանը, սարսափազդու տնօրինության ոստայնը, որի մեջ անառարկելիորեն ընկավ՝ միավորության պատմուճանը»<sup>1</sup> ՏՃ: Նա անապականաբար ծնեց եւ փակված դռներով անարգել ներս մտավ, որի բնությունների միավորանքը Քովանան՝ ազդեղակեց. «Տեր իմ եւ Աստված իմ»: Եվ շատ այլ բաներից Հետո ասում է. «Բնությունամբ անչարչարելին զՖարստությունը եղավ բազմաչարչարելի»: Եվ դարձյալ ասում է. «Գթառատ Աստվածը, որ միշտ էլ մերձ էր մեզ, եկավ եւ որպես փրկություն իր աշույնը՝՝ տվեց ու որպես նզովքի օրինակ գնեց այս աշխարհը. իսկ նա, որը մեզ գնեց, սոսկ միայն մարդ էլ, ո՛վ Հրեաներ»: Եվ դարձյալ կրկնում է. «Եթե ուրիշ ոք է

Քրիստոսը եւ ուրիշ ոք՝ Բանն Աստված, ապա չկա նաեւ երրորդությունը»: Մի՞ պատեիր տնօրինության պատմուճանը, որովհետեւ ի վերուստ՝ է տրված. մի՞ աշակերտիր Արիստին, որովհետեւ նա ամբարշտություն բնություններն է մասնատում: Դու մի՞ բաժանիր միավորությունը, որպեսզի չբաժանես Աստծուն:

Ապա նաեւ Եպիփանը տասնեյոթերորդ սաղմոսում ասում է. «Որովհետեւ Աստծո միածին Որդին մարդացավ եւ եղավ Դավթի իբրական որդին՝ անշփոթելի մնաց բնություններով ու անյուծանելի միավորությամբ»<sup>2</sup>: Եվ դարձյալ նույն Եպիփանը Պարունակխոսում՝ գրում է. «Ինքն Աստված նույն ինքը մարդն է. պետք չէ տարրերակել միասնականությունը, այլ երկուսինը միմյանց Հետ խառնել՝ երկրալիքը Աստվածությունը»:

Նայի՛ր, տե՛ս, Բանի եւ մարմնի անուտ միավորանքը միեւնույն գրությունը զորավիզ եղավ եւ պարփակեց մի աստվածության մեջ. մի գոյություն Տեր եւ մի՝ Քրիստոս. միեւնույն Հոգեւոր մարմնում չեն լինի երկու քրիստոսներ եւ երկու աստվածներ՝ Նույն անՀասանելի աստվածությանը: Ինչպես Գրիգոր Աստվածաբանն է պատասխանում բնությունների զանազանության մասին սուրբ Բարսեղի Հարցումին. «Եթե զանազանություն է, ասում է, ապա աննմանություն է, իսկ եթե աննմանություն է, ապա պարզություն չէ, եւ եթե անպարզություն է, ուրեմն զանազանակերպ վիճակ է, որից էլ առաջանում է բազմակի գրությունները»: Եվ քանի որ ճշմարտությունը մի է ու բնությամբ ոչ բազմապիսի, ուստի եւ բազմակիք բաժանելը ստույթուն է:

1 Չ՝ անորոշաբար. մի եւ տեք  
2 Տ՝ միությունը  
3 Տ՝ յայնք  
4 Ի Չ. պատեա՞րք՝ բուն

5 Չ՝ տան է  
6 Տ. աստ եւ ի ստորին՝ անցու, անգնակ  
7 Չ՝ թուճատ  
8 Չ՝ արեւեն

1 Չ՝ զի վերուստ  
2 Տ՝ միությունը

3 Չ՝ ի պարունակխոսում

Իսկ չարաթյունն Հակատակորդ Ապողինարեսը, սնահափատության պատճառով չկարողանալով Հականալ այդ բանը, երկու կատարելություն է դնում մինևնույն մարմնում: Բայց սուր Կյուրեղը՝ պատասխանում է նրան, թե. «Երկու կատարյալ՝ գոյությունները՝ միավորություն է»<sup>1</sup>: Եվ Ապողինարեսը դարձյալ ասում է, թե. «Երկու կատարյալը (իմա՝ ամբողջությունը) մեկ կատարյալ կենդանու մեջ լինել չի կարող»<sup>2</sup>: Եվ նորից սուրբն Բարսեղը ասում է. «Մարդկանց՝ կողմից անկարելի է, իսկ Աստծու կողմից կարելի է. ինչպես որ Կույսից՝ ծնվելը՝, ինչպես ծովի վրայով քայլելը, ինչպես որ մտից ու ուղորներինց կազմված թանձրամած մարմնի՝ վակվամը՝ գունեքով Հաստաստպես ներս ստնելը՝: Ահա, եթե օրինակի Համար սրանք կարելի են Աստծուց, նույնպես եւ այդ. քանզի Աստծուց են եւ աստվածային են ամեն տեսակի բնությունները՝ եւ կերբը, եւ ներազգումը, եւ կամքը:

Այսբանը բավական է որպես ընդդիմախոսություն երկու բնությունների վերաբերյալ՝ սուրբ Հայրերի կողմից ասված, եթև կանխումս՝ էք Հեռու վանել Հակատակությունը եւ անսրբելով ունկնդիր լինել:

Այժմ պարզաբանենք, թե ինչ կա կամքի մասին, որը ինքներդ քաղումս՝ էք սուրբ Կյուրեղի ասածներից, թե. «Երբ ցանկանում էր (իմա՝ Աստված), թույլ էր տալիս մարմնին իրեններից կրել, որը Հնարավոր չէ մի անձի մեջ լինել: Եթե անՀրաժեշտաբար ընդունեք յուրաքանչյուր

բնությունների Համար՝ կամենալ եւ գործադրել իր ունեցածը, ապա բոլոր չէր աստվածայնանա եւ տակավին կմնար մարմնի Հակատակությունը (իմա՝ Հակադրություն): Ռոտմոհեա, ասում է, երբ վերացնում ենք կամքը մարմնի և մտածողություն, ապա արգարես արարում ենք որդի բարկության»<sup>3</sup>. և դա ոչ էլ Համար է գալիս Պողոսի ծառայական բնավորությանը, որ Քրիստոսի ձեւափոխված մտքերն ուներ (120): Իսկ եթև բոլորն էլ աստվածացված էք Համարում, ուստի մեր փրկությունը եւս միակ իշխանական տնօրինությունն է թողնվումս՝ մարմնով տանել անանդոսանելի՞ կրքերը, ուրեմն Հայտնի է դառնում, որ միմիայն աստվածային կամքն ենք ի նկատի առնում վեՀազարյն՝ Հաղթողին ըստ ամենայնի: Ահա սրանց՝ Համար պետք է Հստկանանք սուրբ Հայրերի ասածները:

Իսկ Քրիստոսի [ուսմունքի] անպարտելի սպառազեն Աթմասար՝ Փրկչի Հայտնությունը՝ ճառում ասում է. «Հենց դաա Համար՝ եկավ Բանն Աստված, Հանուն ասաջին մարդու մարդկային կենդանության, եկավ դուրս վանելու մեր անօրեն թխնամոս. ծնվեց կնոջից եւ մարդկային կերպ ինքն իրենով Հաստատեց, երեսաց մարմնով, սակայն առանց մարմնական կամքի՞ եւ մարդկային խորհուրդների՝ իբրև պատկեր նորոգության եւ իբրև սրբազործում աստվածային կամքի, քանզի Բանի բնությունը անթերի կերպով երևում է մարդկային մարմնի կերպարանքի ցուցադրությամբ»:

Գրում է նաև Հռոմի Ռոորիոս<sup>10</sup> եպիսկոպոսը. «Եթև

1 Չ. յուրերը սատ թան միանկնայ՝ իմա՝  
և սես ցանեւոյ  
2 Չ. կատարացեոյց  
3 Չ. գոյացելովնանց  
4 Չ. մարդկան  
5 Չ. կուսին

6 Չ.՝ մանկին  
7 Չ.՝ փակեթ  
8 Չ.՝ մարմնին թանբումած ստանելով. ի մայ ի յակերոց Հաստատայ  
9 Չ.՝ կամքիք  
10 Չ.՝ սուրբ

1 Առ Եփես. Բ. 3:  
2 Չ.՝ թույլատրացանք  
3 Չ.՝ ցանկանանց  
4 Չ.՝ վեՀազարյնթմար  
5 Չ.՝ այտցելի

6 Չ.՝ արժանաբոս  
7 Չ.՝ ի ճառին ի յայտնութիւն  
8 Չ.՝ սպարիկ  
9 Օր. Բք.՝ առանց մարդկան կամայ  
10 Չ.՝ սուրբ



[նախապես Հայտնված] ծանուցված լինեք, արդյո՞ք փառքի Տիրոջը խաչի վրա էջին Հանելու», որից եւ Հասկանալի է, թե աստվածութեանը Հնարավոր չէր՝ ո՛չ խաչ Հանել եւ ոչ էլ նրա նկատմամբ մարդկային չարաբանքների փորձ անել, եւ՝ որ այդ բաները կրում էր մարմին եւ աստվածային բնութեան անտարակուսելի միավորութեան պատճառով: Դրա Համար էլ մեկ կամք ենք խոստովանում Տիրոջը մեր՝ Հիսուս Քրիստոսին, քանի որ միմյանց Հակառակ այլ եւ այլ կամքեր մեր Փրկիչ՝ մե՛ծ չի կարող լինել եւ մարդկային իրավունքներից վեր է ճանաչված [այդպես կարծելը]՝:

Եվ՞ Գրեգոր Աստվածաբանն էլ այսպես է գրում կամքի մասին. «Փրկիչի այն ասածը՝ Ոչ թե եւ կամքով արեցի՞, եւ եթե այդ խոսքերը ասված լինեին ինքն իր խորքերը մտնելով, այդ դեպքում կարող կլինեինք սակե, թե մարդուց է կերպարանավորվել Բանը, որն ըստ Փրկչի է Հասկացվում. քանզի նրա կամեմալը ոչ թե ընդդեմ է Աստծուն, այլ Աստծունն է պարունակում: Ուստի եւ, ըստ մեզ, այդպես էլ մարդկային ախրժուժությունները ոչ ըրողը բաներում են աստվածայինին Հսեւելու»: Տեսնո՞ւմ ես, որ կամքի սահմանները Փրկիչը Հասարակ մարդկութեանից է [սկզբնավորված] Համարում եւ ոչ թե իր մարմնից: Իսկ եթե բաժակից Հրաժարման՝ մասին եւ խոսում, թե՛ «Ոչ ինձանով, այլ քեզանով է զորանում կամքը»<sup>6</sup>, այս բանն էլ նույն Յոթնյակի<sup>7</sup> տասներորդ զլխում է մեկնաբանում Աստվածաբանը. «Երբ որ ոչ թե կարողությունն է լինելու կամ թե անկարողությունը, ուրեմն այդ պեսք էր անգիտանալ, այլ ոչ թե

կամքին Հակառակ ուրիշ կամքեր ներմուծել, որով եւ արարողին է այդ բանը, որը իմաց եւ ինքն էլ արարեց»:

Տե՛ս ստեղծողի եւ ստեղծվածի միավորությունը՝ Բանին եւ ասում եւ մարմնին: Ասա՛, ո՞վ անբան (իմա՛՝ անզեռ) սպասավոր Բանի, կարո՞ղ է, արդյոք, Որդու կամքը մի ինչ՝ որ առանձին բան լինել, քան Հորն է, որ կարծես գոյությունն էլ չունեն <87>. «...Բանն է, զի եղիցի այնպիսի իմն ժողովումն» (121): «Որպես իմ կամքը չարարեցի, որովհետեւ իմ կամքն ու բո՛ղբ անձատ ու տարբեր չեն, այլ իմն ու բո՛ղբ Հավասարակից են. ինչպես մի է աստվածութեանը, նույնպես եւ մի է կամքը»: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես անՀնտացավ մարմնի կամքը եւ Հորն ու Որդուն միավորվեց մեկ աստվածութեան մեջ: Ահա՛, չես կարող բաժանել՝ ոչ բնութեամբ եւ ոչ էլ կամքը, ինչպես որ ցույց տվեց. քանզի մի են երեւելին ու աներեւույթը, անժամանակն ու ժամանակավորը. եւ ուրիշ ոչ մեկը, եւ՝ ուրիշ կեքոջ չի կարող լինել, որովհետեւ երկուսը ի մի են ձուլված՝ Աստծու մարդանալով եւ մարդու աստվածայնանալով. դա էլ բարոյից քարոզում է՝ Աստվածաբանը՝ մարդու աստվածանալը, որպեսզի բնութեանն եւ կամքի գանազանության ոչ մի Հնաք անգամ չերեւա:

Եվ Գրեգոր Նյուսացին Եփեսոսի դեմ գրած երկրորդ թղթում ասում է. «Քանի որ մենք, մարմինը, որով չարչարանքներն ընդունեց, աստվածային բնութեանը Հնտ միավորված ենք Համարում, այսինքն միասնականի ձեռքով արարված, որն էլ Հենց արարողի բնութեանն է»: Նա գրում է նաև Ալեքսանդրիայի Թեոփիլոս եպիսկոպոսին, թե. «Ամենայն ինչ, որ անգոր եւ ապականացու էություն էր, միշտ էլ աստվածութեան Հնտ միասնականված էր»:

1 Զ՝ Հակեմ  
2 Իսա՝ թիւն  
3 Տ՝ հին Փրկչին մեր  
4 Զ՝ նոյ  
5 Ի Տ. պոփոսե՞ր եւ

6 Լուկ. ԻԲ. 32:  
7 Զ՝ Հրաժարումն  
8 Լուկ. ԻԲ. 42:  
9 Զ՝ եւթանգիկն

1 Ի Տ. պոփոսե՞ր եւ  
2 Զ՝ մի խոսակցութե

3 Տ՝ եղանակ

եմ մեծն Բարեպօղ երբորդ սաղմոսի մեկնութիան մեջ աւում է. «Հողեղեն մարմինը աստվածութիանը կարողակից (իմա՝ գործակից) ստեղծեց, միեւնոյնի գորութիամբ զորացրեց եւ մի աստվածութիան մեջ զուամարեց»:

Եմ Պողոսի աշակերտ Դիոնեպոսը, որը արժանի եղավ Փրկչի տեսութեանը<sup>1</sup>, զրոււմ է Գայիոս ասպնջական Առաքելոցն (Թերեսու՝ Առաքելոյն). «Գերագույնի աներևույթ լինելու պատճառը, անիմանալիի եւ իմանալիի՝ մարդկայնորեն լինելու մասին մեր իմացութիանը Հայտնի եղավ, ուստի եւ մարմնով երևեալուն աստվածագունեն ենք անվանում: Եմ Հիսուսի՝ այս խորհուրդը անհայտ է ոչ միայն խոսքի կամ մտքի համար՝ նույնիսկ նրա էութիանը մոտենալու, այլեւ Հակաճառութիամբ էլ անկասկածելի է մնում եւ իմացութիամբ էլ անիմանալիի՝ Քրիստոսը ոչ մարդ էր եւ ոչ էլ որպես ոչ մարդ. այլ իբրեւ մարդկութիւնից առաջ եկած՝ մարդկանցից ավելի առաւել է. այնուհետեւ՝ ոչ ըստ Աստծու աստվածայնորեն՝ է ներգործում եւ ոչ էլ ըստ մարդու՝ մարդկայնորեն, այլ Աստծու մարդկայնանալով մի նոր աստվածային ներգործութիամբ է մեր մեջ կենցաղավարում»:

Այլեւ զրգամ է, թե՞. «եկա ոչ թե իմ կամքը պարտադրել, այլ առաքիչ Հոր՝ կամքը». կամ «Ոչ այնպես գործել, ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես ինքը»<sup>2</sup>. սրանք, ահա, այլ եւ այլ կամքեր չեն ցուցադրում, բայց միայն մարդկա-

լին ցանկութիւնների համաձայն եւ Հանուն մեր տնօրէնութեան ամպեցին, որի օրինակը՝ Հնեց մեր բարեգութ Վարդապետը տվեց, որպեսզի նրա շարժով առաջնորդվենք եւ ոչ թե ըստ ամեն մեկի կամքի, այլ ամենուրեք եւ ընդմիշտ Տիրոջ կամքին նախապատվութիւնը տրվի: Ահա սրանք են անճառելի միավորութիւնը եւ մարմնով աստվածայնանալը:

Ահա Հայտնի զարձակ Քրիստոսի մեկ՝ աստվածային կամքը եւ մյուսը՝ Համայն մարդկութիանն ու Քրիստոսինը, բոլորն աստվածային (122): Խոսենք այսուհետեւ ներազգեւ մասին՝ ըստ սուրբ Հայրերի վկայութեան: Աթանասը Արեւոյն ուղղով չորրորդ ճառում ասում է. «Եմ Բանը մարմնավորվելով՝ ստանում է նաեւ տկարութիւնն իբրեւ իր սեփականը, քանզի նրանն է մարմինն իբրեւ աստվածային գործերի մասնակից, որովհետեւ նրանով էր զոյանում, քանզի Աստծու մարմին էր»:

Եմ փոքր ինչ Հետո զարձայ ասում է. «Թե որ Բանին Աստծո գործերը մարմնի ձեռքով չէր կատարված՝ մի՞թեւ, աղյոք, չաստվածացավ մարդը»: Եմ այլ բաներից Հետո էլ՝ «Քանզի Հոր գործը մարմնի ձեռքով էր արվում»: Եմ զարձայ նույնն է զրում Դեղրիսո՝ եպիսկոպոսին ու խոստովանողին. «Քանզի ձեռք մեկնելով Հարութիւն տվեց նրան, որը Չիւրութիւնով էր բռնված եւ ձայն արձակելով կենդանացրեց Ղազարին»:

Եմ Գրիգոր Նյուսացին՝ ընդզմ Եմենոսի գրած իր երկրորդ ճառում ասում է. «Քանզի ներգործումը նույնպես, որպես ճշմարտն Աստծո, յուր մարմնի ձեռքով եղավ ամենքին, որպես ձայնը կամ գործը մարդկորեն առաջ եկան,

1 Զ՝ անմահ

2 Զ՝ Թաղուհեւ եւ յերեւոյն

3 Զ՝ եւ այլ է յիսուսի

4 Այլ արեւոյ գոր ի ներքս ամէ 5. ի Ժուսիսութիւնս՝ այսպես ունի զՀատուածոյ՝ մարդկորն լինելով զայն. բայց սակայն Թաղուհէ եւ յետ երեւոյն. եւ կամ քի աստուածայնացոյն ա-

սակցոյ՝ եւ յերեսին մարմնով եւ այս միտոսի խորհուրդ... այլ մասնաւոր եւ ճանկարմ...

5 Զ՝ ոչ ըստ այլ գաստուածայնեան

6 Զ՝ թէ

7 Զովհ. Զ. 38:

8 Ղուկ. ԻԿ. 42:

1 Զ՝ արեւոյ

2 Զ՝ նայն վիւս գեկիսու

3 Զ՝ կուսիս

ասկայն ներքուստ Հասկացվում է՝ թե նրա սակ աստվածությունն է ծածկված»:

Եվ ապա Հռոմի եպիսկոպոս Հուլիոսն<sup>1</sup> է գրում. «Եվ չկա որեւէ անջատում, ասում է, Բանի եւ աստվածային Հատկությունը<sup>2</sup> օտաված նրա մարմնի միջեւ. այլ է մեկ անձնավորություն, մեկ ներգործություն եւ մեկ դեմք, միանգամայն Աստված եւ միանգամայն մարդ, որը նույն ինքը Հիսուս Քրիստոսն է»: Եվ Հովհան Ոսկերեբանն<sup>3</sup> իր ճառում, որի մեջ խոսում է Հիսուսի՝ լեռանը կատարած աղոթքի մասին, ասում է. «Արի գորություն եւ մի ներգործությունը բազմատեսակ ախտեր բժշկեց»: Եվ սակավ խոսքերից Հետո դարձյալ ասում է. «Որովհետեւ զանազան Հրաշագործություններ տեղի ունեցան ձեռքի մեկ ներազմամբ»:

Եվ Կյուրեղ Ալեքսանդրացին՝ «Ալիտարան ըստ Աստիտոսի» մեկնություն մեջ ասում է, թե. «Արտաբերց իրեն Հետ մարմինը ոչ թե, ինչպե՞ս՝ ասում են, Հոր Հետ եւ Հորից է Բանն Աստված<sup>4</sup>, որպես եւ իրենն է կազմված մարմնի ներգործողական Հատկություններով, այլ ամբողջական պահելով մարմնի կառուցվածքը՝ մարմնականի ծնանելու Համար. եւ լցրեց աստվածավայել ներգործություններով, որով եւ (?) իրենը փառքի բարձրացրեց» (123): Ապա նաև. «Երկու կուրբերին բժշկում է ձեռքի մերձավորությունը եւ լուսավորում աստվածագործ գորությունը. ամբողջական [ձեւով] իր մարմինն է ցուցադրում, ինչպես Պետրոսի զբանչին, որի վրա ձեռքը դնելով անմիջապես բժշկում էր եւ ստիպում էր նրանց ճանաչել իր բնավորու-

1 Տ.՝ լինի  
2 Տ.՝ Յուլիոս  
3 Տ.՝ Կիրո

4 Չ.՝ ուկերեբան  
5 Չ.՝ որով ոչ  
6 Ի Չ. պոպուսը՝ աստված

թյան էությունը, աստվածությունն եմ ասում, որ իր մարմնի ներգործությունները միանական զորությունը էր ցուցադրում»: Ապա դարձյալ՝ «Կարող լինելով ներգործել ըստ ամենայնի, կատարում էր այդ նաև թքով, որպեսզի Հասկանանք, թե նրա մարմինն ամբողջությունը լի է կենսաբար խոսքով. որ ձեռքի աննշան մերձավորությունն իսկ կարող է պատճառ դառնալ լուսավորությունից, քանզի մարմինն է ճշմարիտ լույսի»<sup>5</sup>:

Որպես ուղղափառներին անհաղթ Հակառակորդ<sup>6</sup> Կյուրեղը «Պարագմանց» գրվածքում ցույց է տալիս, թե. «Աստվածայինը Քրիստոսի մարմնի գոյանալն ենք Համարում, ասում է՝, որովհետև Աստծու մարմին է՝ անճառելի փառքով զարգացված, անապական, սուբբ եւ՝ կենդանանար»: Իսկ՝ «Գանձույց»<sup>7</sup> գրվածքում՝ «Արավորվելով անբաժանելի Հատկություններով՝ ինքն իրեն թույլ է տալիս, ասում է, մարդկանց Հետ լինել իբրև մարդ, սովածանալ, ծարավել եւ՝ այլ բաներ կրել, ինչ որ ասում են՝ նրա մասին»: Տեսնո՞ւմ ես, քանզի ոչ թե Հարկադրաբար են ասում, այլ կամավոր ցանկությունը, եւ որպեսզի թույլ տան կրելու մարմնի ճշմարտությունն ոչ արճամարճելի Հատկություններն ու սարքայուծելու մեր մեջ դասապարտելին. «Որովհետեւ ճշմարտապես ծառայեց իր մարմնով՝ որպես ծննդյան<sup>8</sup>, նույնպես եւ մեր ունեցած ախտերի Համար, պնդում է Աստվածաբանը, մեր եւ ամենքի աչառություն Համար, որով եւ փրկեց մեզ՝ մեղքերի մեջ թաղվածներին»: Եվ դարձյալ ասում է. «Մասայի կերպարանք առնելով իր ծառայակիցներն ու ծառաների Հետ՝ կերպարանավորում է նաև օտարներ-

1 Չ. յուկուրք սուս՝ յոս  
2 Չ.՝ սխոյանն  
3 Ի Տ. պոպուսը՝ սակ  
4 Ի Տ. պոպուսը՝ եւ

5 Չ.՝ գանձույց  
6 Տ.՝ ծարսուի  
7 Չ.՝ սոխեն  
8 Տ.՝ Ի ձեռնդեանն

րինքը, իրենով ներկայում է ինձ (ի՞նչ՝ մեզ) խմիններով Հան-  
րեքձ, որպեսզի ինքն իրենով վերացնի շարությունը, որպես  
մտին մտանցող Հուրը կամ արեզակը՝ երկրի՝ վրայի գոլոր-  
շին, քանի որ Հանուն միաձուլման եւ Հաղորդվելի նրանց  
Հետ: Այս է խորհուրդը Քրիստոսի միափոքրական Հատկա-  
նիչներին՝ Հանուն մեզ բժշկելու եւ բնությամբ ոչ միանա-  
կան ցույց տալը որպես մեզք Համարել՝ եւ նզովքով Հիշե-  
լայ ոչ թե բոտ նրանց փոխվեց (Տեքր մի՛ արասցե - 124),  
այլ մեր անօրենությունները վերցնելու եւ մեր մեղքերը  
քափելու. եւ ինքն էլ բուրբողին շաքտացալ: Փորձության  
ենթարկվեց մեր նման, բայց առանց մեղքերի, քանի որ  
«Լույսը, ինչպես աստվածաբան Ավետարանիչն է ասում,  
այնտեղ եղած խավարն է լուսավորում, եւ խավարը չկարո-  
ղացալ Հասնել՝ նրան», ինչպես առաջինին՝ Աղամին եւ  
նրանց, որ Աղամինն էին»:

Արդ, ի՞նչ եք ասում, բավական չե՞ն ասածներս ճշմար-  
տությունը բացահայտ դարձնելու Համար, թե՞ անՀրամեղտ  
՝ որպես ծանրալուր ակնաշնորհին, նույն բաները բազմա-  
թիվ անգամ կրկնել: Իսկ այժմ, ահա, լսի՛ր դու սուրբ Հայ-  
րերի առածների օգտակարությունը Քրիստոսի մարմնի ա-  
նապականության մասին, որը նախ Առաքյալներին Հետե-  
ւող Նրինում՝ է արտահայտում մեր խոստովանության ա-  
նապական լինելը եւ դուքս փտարում ձեր ՀայՀոյճության  
ապականությունը. «Անբողջապես ընդունայն եւ սնտոսի են,  
ասում է, որովՀետեւ անարգում են Աստծու Համայն սնո-  
րինությունը եւ ուրանում մեր մարմնի փրկությունը, նաև՝  
անպատվում են նրա վերտախն ծնունդը՝ ընդունակ չլինելով

1 Տ.՝ այնպե՛հ  
2 Զ.՝ լիցա  
3 Յա՛հ. Ա. 5:

4 Տ.՝ առաջու՛ն  
5 Զ.՝ երկնո՛ս  
6 Ի Տ.՝ պափա՛սե՛ր՝ եւ

խոստովանել նրա անապականությունը: Կամ թե՞՝ որովՀե-  
տեւ ինքը չարպեց, ու ոչ էլ Տեքն իր արյամբ որե՛ւ մեկին  
փրկեց, եւ ոչ էլ փրկության բաժակի երախայրէքը նրա ա-  
րյան սովորական լինելն է, եւ ոչ էլ Հացը, որ կտրում ենք,  
նրա սովորական մարմինն է, բայց [չեն հասկանում], որ ա-  
րյուն չի կարող լինել, բայց միայն մարմնի ու երակների գո-  
յակեցությունից՝, որը ճշմարտապես լինելով Բանն Աստված՝  
փրկեց մեզ իր արյամբ» (125):

ԱՀա, այժմ այսբան ասածներդքս պարզվեց, որ ու՛րքեր  
ապականությամբ կամ օտար բնության պնդմամբ տերու-  
նական մարմինն են ՀայՀոյճում, ուրացող են եւ գրկված փր-  
կությունից. այդպիսիք ոչ կենարար Հացը եւ ոչ էլ գո՛հու-  
թյան բաժակը կուեննան իրենց կյանքում, այլ միայն ապա-  
կանությանը կարժանանան. բանզի թեպետեւ Աղամը ան-  
մեղանչական մարմինն ու անդատապարտելին դեպի զա-  
տապարտություն եւ մահվան ապականություն ի՛նչեցրեց,  
սակայն Քրիստոսը դրան անապական եւ մահվանից փրկա-  
կան ցույց տվեց՝ Հնարավորություն տալով երկրում՝ թող-  
նելու մեղքերը, ինչպես որ երանելի Աթանասն՝ է ասում Ա-  
պողինարից ուսած իր խոսքում՝: Եվ դարձյալ նույն բանի  
մասին ճտոտւմ է, թե. «Ինչպես մահը չկարողացալ իր էու-  
թյամբ լցնել Քրիստոսի մարդկային Հողի՞ն՝ եւ ոչ էլ նաեւ  
ապականությունը զոտոզարար Հանդգնեց իր ապական զո-  
րությամբ Հափշտակել Քրիստոսի մարմինը, նույնպես էլ  
նրան ապականացու Համարելը ամբարշտություն է»: Եվ  
ուսել Աթանասը իր գրվածքի չորրորդ ճտոտւմ դարձյալ ա-  
սում է. «Նա, որն իր մարմնով եկալ նորոգելու մեր մահա-

\* Ի՞նչ՝ այլոց, Հակոստորհներին պնդելու :

1 Զ.՝ ցրտեթե՛ն  
2 Տ.՝ այնպե՛հ  
3 Տ.՝ Աթանաս  
4 Զ.՝ ցրտեթե՛ն  
5 Զ.՝ կարեց  
6 Տ.՝ Հողի՛ն

նացու մարմինները, ոչ թե բռնվեց ապականությունը, այլ՝ առավել հզորին կապկապեց»։ Եվ այլ բաներից Հեսո էլ՝ «Եթե Աստծո գառն Համարված Հովհաննեսը քարոզում է աշխարհիս մեղքերը վերացնել, Հապա էլ ինչպե՞ս են մոլորյալներից ոմանք գտնում, թե ապականացու էր Քրիստոսի մարմինը. քանի որ ապականության մայրը մեղքերն են»։

Եվ սուրբ Եսիրփանի «Պարունակարտություն»<sup>1</sup> ավագ է, թե. «Ամենայն ինչ կարողությունն է Աստծո, նաև՝ ապականվածը անապականի փոխարինելը, եւ թող ոչ մեկը չզարմանա, ասում է, քանզի այս եկողին է ներկայացնելու եւ ի ցույց Հանելու ապականելի մարմինը, զգացնել տալ աստվածությունն ու ցուցադրել անապականելի՞. իսկ ինչո՞ւ է Հանդիմանում Աստծուն, եւ Հանդիմանում է նա, որը չի ընդունում տնօրինության խորհուրդը, այլ բաժանում է Աստծուն առանձին եւ մարզուն առանձին, անապականն ու ապականացուն, անմահն ու մահկանացուն եւ ուրիշ շատ այսպիսիները»։

Դարձյալ մենք տակավին աստվածային մարմնի նույն անապականության մասին ենք շտապում ներկայացնել սուրբ Հայրերին. քանզի ուր որ լույսն է թափանցում, այնտեղ միանգամայն անհետանում՝ է խախարը, նույնպես եւ՝ անապականության Հետ առընթեր լինելիս փախչում է ապականությունը՝ սուրբ Կյուրեղի «Պարսպանց» զբքի Համաձայն։ Եվ նորից, թե. «Ով չի գիտակցում մեղքը, [բայց] ինքնակամ ընդունում է այն, մեղքը խափանվում է»<sup>2</sup>։ Եվ դարձյալ. «Մարմինը, որ մեր էությունն ստացավ,

Բանի Հետ միավորվելով՝ անապականություն էր եւ փառավորյալ»։ Իսկ Կյուրեղից էլ առավ նրա վարդապետ (իմա՝ ուսուցիչ) Աթանասը ամենացիների կախկապուս Եպիկտի-մոնին՝ ուղղված թղթում գրում է. «Բանը, որ մարմնում էր, վեր էր, քան մահկանացու մարմնի բնությունը. ստեղծեց իր մարմինն անմահ եւ անապական. լռեցրեց ու ջնջեց մարմնում եղած բնական մահն ու ապականությունը»։

Հապա որտե՞ղ է երևում բնությունը անջատված լինելը, ո՞վ անջատիչ։ Այժմ տես նաեւ սրանցից Հեսո [եղածները]. «Որովհետեւ անապական մարմինը եղավ մահկանացու, ասում է, ուստի եւ Հաղթահարվեց մահը մահկանացու մարմնի՞ բնության մեջ»։ Եվ դրանից Հեսո նորից, թե. «Քրիստոսի մարմնանայը, ասում է, առանց ամուսնության եւ առանց մեղքի եղավ, այդ՝ իսկ պատճառով էլ նրա մարմինը ապականությունից զերծ մնաց»։ Եվ դարձյալ նույն բանը նույն՝ թղթում կրկնում է, թե. «Ջի կարող մահը բնակվել կյանքի Հետ եւ ոչ էլ ապականությունը անապականի»։ Հիմա Հաակացա՞ր անբաժանելի միավորությունը, ո՞վ անջատատեր, երանելի Հայրերի ասածներից, որ ոչ բնության գանազանություն, ոչ էություն, ոչ ներգործություն եւ ոչ էլ կամքի չեն կարող նրա մեջ տեղ գտնել՞։ Պետք է Հավատով խոստովանել եւ երկրպագել եւ ոչ քննել։ Իսկ եթե Հանդգնում ես քննել, ապա Համարձակություն ունեցիր նրանց դեմ առ դեմ խոսել, ինչպես որ կեղծավորությունը պնդում ես երկու բնությունների վրա։

Նախ եւ առավ այստեղ սկսենք դիմելով՝ Առաքյալին. «Նա, որ Աստծո կերպարանքն ուներ, ասում է, ծառայի

<sup>1</sup> Արևտված լինելու պատճառով թարգմանեցինք մտապար իմաստով։

1 Տ.՝ այլ եւս  
2 Տ.՝ ի պարունակարտուս  
3 Տ.՝ յանապականիս  
4 Տ.՝ սեղործանք

5 Տ.՝ փախելու զպականութիւն  
6 Տ.՝ իւր ցուցանելով  
7 Տ.՝ խափանիչ

1 Տ.՝ եպիկտմոն  
2 Տ.՝ մարմին  
3 Տ.՝ այնորիկ

4 Տ.՝ սա յոյն  
5 Տ.՝ քրիս  
6 Տ.՝ ներգործանք

կերպարանք առաջ»<sup>1</sup>: Կերպն ու կերպն է ասում, որն է դեմքն ու դեմքը՝ աստվածայինն եմ ասում եմ մարդկայինը: Դե հիմա սահման դիր երկուսի միջև կամ երկվություն<sup>2</sup> յուրաքանչյուրի մեջ, որպեսզի Համաստասիանի քո խոստովանությանը. այն էլ ասեմ, որ ըստ այդորինակ քննության ստացվում են ոչ միայն երկու բնություններ, այլ նաև երկու որդիներ՝ ըստ Նեստորի (էլ որտե՞ղ ես տեղավորելու արդյոք «Բանը մարմին առած»<sup>3</sup> եւ «Մեզ Հետ է Աստված»՝ Հիմանուկի<sup>4</sup> կողմից ստվածը). եւ կամ յուրաքանչյուրի Համար անշփոթելի միասնությանը Հավատա<sup>5</sup>, ըստ կաթուղիկե<sup>6</sup> եկեղեցու Հավատքի անճառելի խոստովանության, քանզի Աստծո կողմից մարդկային կերպարանք ստանալը արարողի գործությամբ եւ բնությամբ եղավ: Եվ նաև այն պատճառով, որ նրանք՝ մեծամեծները, երկու եկեղեցիների սյուներն ու զվթավորները ուսուցանեցին մեզ մի կերպից մյուսին անցնելու անշփոթելի լինելը եւ անհեղ Բանի մարմնանալը<sup>7</sup>, անբակտելի միավորությունն ու մեկ բնությունը. եւ աստվածային այդ օրեներ թագավորական ճանապարհ Հասկանալով<sup>8</sup> Հրամայեցին մե՞ մեզ ոչ աջ խոստովել<sup>9</sup> եւ ոչ էլ աշխատ, ոչ միավորությամբ Հեղաշրջել եւ չփոթություն առաջացնել կամ մեկը մյուսին<sup>10</sup> միտելու վրա պնդել, ոչ էլ նրա անհեղությանն ու ուղղափառությանը կամ ճշմարտագին մարմնանալը բնությունների անջատում ու բաժանություն<sup>11</sup> Համարել՝ ըստ Արիսի: Եվ դա այստեղ, ինչպես վերեւում ասացինք, երկու չարաց միջինք

1 Աւ Փիլիպ. Բ. 6-7:  
2 Չ՝ յուրութեան  
3 Չ՝ եղև  
4 Չ՝ գեմանուկն  
5 Չ՝ Հուստայոս  
6 Չ՝ կաթուղիկէ

7 Չ՝ ցեղեցութեամբ  
8 Չ՝ գիտելով  
9 Չ՝ խոստովել  
10 Չ՝ միւսայն: - Գուցէ՛ միտել ի միւսայն  
11 Ի՞նչ՝ ըստ բաժանման

պարտավոր ենք գեղեցկորեն պահել. եւ ոչ էլ անշփոթության միջոցով օտարամուտ բնություն Համացող սուրբ Երրորդության<sup>12</sup> մեջ ներածել, կամ միավորության միջոցով ուրանալ՝ որպես Եվտիքեսը<sup>13</sup>. կամ Հողունը՝ որպես Ապոզիանաբա<sup>14</sup>, կամ աստվածության մարմնի վերածվելը՝ որպես պանդուրացիք<sup>15</sup>. եւ ոչ էլ մարմնի կատարյալ բնության արարված լինելը, այլ երկնքից բերված, ինչպես մեկ այլ՝ ոմն Եվտիքեսը. կամ, սրանց Հակառակ, աստվածության սկիզբ առնելը՝ Մարիամից, ինչպես Փոսիտա<sup>16</sup>, նաև արեզակի մեջ մարմին դնելը եւ կամ Հօգո ցնդելը, ինչպես Մարկիզա<sup>17</sup>: Մի կողմ եւ թողուն<sup>18</sup> բազմաթիվ ազանդների թվարկել<sup>19</sup> տեօրիանության ճշմարտացիությունը ուրացողներին, օրոնք չարաթույն նախանձով աննականատ փրկությանը այդպես ամբարշտարար մեկ բնությամբ ասացին, որոնք զուրս ենք նետում իբրևե առեղծվածային գրվածքներ<sup>20</sup>, գաբշելի եւ ոչ մի բանի արժանավոր<sup>21</sup>: 88 >:

Այս բոլորը՝ բավականացնում են մեզանում բացաշխարհու նախը գայթակղեցողներին<sup>10</sup> կարծիքները՝ Եվտիքեսայի<sup>11</sup> սասմ մեկ բնության (126), որը նդովում ենք եվտանազավոր<sup>12</sup> Համարում Աստծու եւ Համբողջատուր<sup>13</sup> եկեղեցու Համար. եւ թող լսելի լինի ամենքին մեր Հավատի խոստովանությունը<sup>14</sup>, ովքեր ուզում են ճշմարտությունն իմանալ: Այլևս Ի՛նչ պետք էին այս<sup>15</sup> բոլոր ընդդիմախոսականները, եթե չեղված<sup>16</sup> չլինեիք անհարկի խնդիրներով եւ

1 Տ՝ սուրբ Երրորդութիւն  
2 Տ՝ ետիքես  
3 Տ՝ Ապոզիանաբա  
4 Տ՝ Պանդուրացիս  
5 Տ՝ այլ  
6 Տ՝ Փոսիտա  
7 Տ՝ Մարկիզոս  
8 Չ՝ գրոյ

9 Չ՝ այտրեկ  
10 Չ՝ գայթակղելոյն  
11 Տ՝ ետիքես  
12 Չ՝ վարկանեմք  
13 Չ՝ բնթխանաբա  
14 Չ՝ եւ լուր լիցի լուր խոստովանութեան  
15 Տ՝ այնպէկ  
16 Չ՝ չալեոյ



դատարկ վիճարանություններով: Քանզի պաշտամունքն ու հավատի զորության արժանավորությունը թողած՝ խոսակցության և կապիճանքի մասնեցիք՝ ինքներդ ձեզ և ընդունայն համարեցիք ինչպէս Քրիստոսի, քանզի «Հավատքը այս մեր ժամանակներին՝ խուրի ավարտումն է, ասում է... որը՝ սայց (127)\* «Իսկ մենք ոչ այլ ինչով ենք պարծե- նում, քայց միայն՝ Նաչով Քրիստոսի»:

Շտպեցեք չարազդի Բանին Աստծո անպատմելի չար- չարանքների մասին, որը Պողոսը՝ անձնանթ լինելու պատ- ճառով, փառաց Տիրոջը խաչված է ասում և հայրենի ծո- ցում ուրախանալու փոխարեն, որն իր մեջ՞ ի սկզբանե կար, նա խաչվելն է հանձն առնում, ասում է, և ամոթանքն՝ է արհամարհում: Իսկ Աստվածաբանը պահերի մասին ճա- րում՝ «Աստվածը խաչված և արեղակը խաչարած է ա- սում, որովհետև Արարչի հետ պետք էր, որ արարածներս էլ չարչարվեինք, և դարձյալ ասում է, թե. «Կարոտեցինք Աստծո մարմնանալուն և մահվանը»: Եվ դարձյալ՝ «Աստ- ծո չարչարանքները, արյունն ու մահը տեսնելով՝ կրեք չլի- նի թե անաստվածաբար ցած ընկե՞ս՝, այլ [մնաս] իբրև Աստծուն փառարանող»:

Ահա տե՛ս, ոչ թե ես, այլ եկեղեցու բոլոր վարդապետ- ները անաստվածամոթությունը՝, ասում է, ոչ խոստո- վանողներին է Աստծո արյունը, չարչարանքն ու մահը: Եվ նույն աստվածաբանը Բարսեղից վերցրած «Հաղթեցիք» գր- վածքում ասում է. «Ի՛նչ կա, ասում է, սրանից առավել Հրաչափա՞տ տեսնել Աստծուն խաչված և նույնն էլ ավա-

զակին. և զա մոտով անցնողին անհասկացողության պատճառով ծաղրելի է թվում՝ Բարձրագույնի ինչ-ինչ ախտերը կրելը»<sup>2</sup> (128)\* <89>:

Ահա, թե որին եք ասում բնություն՝ Աստված անըմրո- նելի:

Իսկ բերանը ոսկի Հովհանն՝ ասում է, թե. «Վերցրեց մեր մարդկային բնությունը, ավեց իր աստվածութունն ու ընտելացրեց՝ իր մեջ մեր չարչարանքները, որպեսզի չնորհի մեզ իր անչարչարական աստվածությունը և երբ մահը մո- տենա, անմահություն պարզուի մեզ: Քանզի մարդու չար- չարանքներն ինքը ստացավ ոչ թե բնության փոփոխմամբ, այլ ինքնակամ այն բեռեկեցրեց իր մեջ»: Դարձյալ նույն ճառի մեջ, որը խաչելության մասին զբովանդակելից յոթն- բորոյն է, հարցնում է, թե. «Ի՛նչ պատճառով է իբրև վերց- նում մարդկանց չարչարանքները, որովհետև կամեցավ չարչարանքով չարչարանքը բժշկել և մահով մահը խա- փանել: Դրա համար՝ էլ նմանության դեմ նմանությամբ կամեցավ կռվել»: Եվ փորձ-ինչ՝ հետո էլ՝ «Քանզի ոչ թե ականատեսին դեպի բնությունը բեռեկեցին, այլ զեպի նրա մեջ եղած Աստծուն, ուստի նրան ձեռք մեկնեցին. և քանի որ իր տեսանելի բնությամբ չարչարանքները որդեգրեց, ուստի սասցին Աստծուն են չարչարանքները»: Այդպես էլ նույն Հովհանը ուրիշ զբովանդակում ասում է, թե. «Անթի կոփահարում էին աստվածեղեն զլուխը, մերթ փնդեն պսակով էին զարգարում և մերթ էլ եղեգներով էին ծե- ծում», քայց կրեք մարդկային բնությունն ցույց չտվեց, այլ

\* Տես՝ Մատթ. 126 և 127 քայտար. էջ 385:

1 Ձ.՝ մասնեցիք  
2 Ձ.՝ Շուտառ սքիմու  
3 Ձ.՝ որ  
4 Ի Տ. պակասել՝ նմա

5 Ան երբ. ժԲ. 2:  
6 Ձ.՝ մի՛ ուրեք ի վայր անցին  
7 Ձ.՝ անմահութիւն

\* Հղում է Մատթ. քայտարանով. էմբը քայ է թողի:

1 Ձ.՝ լիսայ  
2 Ձ.՝ կրի  
3 Ձ.՝ յովհաննէս  
4 Ձ.՝ ընդանցոյց  
5 Ձ.՝ վաս  
6 Ձ.՝ տի

[երևաց միշտ] միևնույն Աստվածը եւ միևնույն մարդը: Այդ բանը կատարյալ ձեւով է ուսուցանում մեծ եւ տիեզերական վարդապետ Աթանասը<sup>1</sup>, թե՛ նույն Աստվածը նույն մարդն է, եւ բնութիւնների որեւէ խնդիր չի դնում. «նույնն է Աստծո որդին, նույնը եւ՝ մարդու որդին, նույնն է երկնքից, նույնն է եւ երկրից<sup>2</sup>, նույն չարչարելին է եւ նույն անչարչարելին. ոչ այլ որ է<sup>3</sup>, բայց եւ<sup>4</sup> այս է եւ այն»<sup>5</sup>:

Իմացի՛ր, իմ խուփերը չեն, այլ Աթանասի՛ գրված ընդդէմ Պրոտո Աստուսացու. ոչ երկու դեմք, ոչ երկու անձնավորութիւն եւ ոչ էլ երկրպագութիւն երկու. ո՛ւմ են պետք քննել եւ բանակրիվ ստեղծել, օգտակար է Հաժմատարը եւ խոնարհարար պաշտելին ու երկրպագելը՝: Համառււմ եմ նրան իբրև ճշմարիտ Աստված երկնքի, գիտեմ նրան իբրև Դավիթի որդին՝ ըստ մարմնի, չարչարելի մարդ երկրից<sup>6</sup>. չեմ քննում, թե ինչպես է ե՛ւ անչարչարելի, ե՛ւ չարչարելի, ինչպես է ե՛ւ Աստված, ե՛ւ մարդ. չլինի թե այդ ինչպանները խուզարկելով՝ կամ եղանակները քննելով՝ գրվոյնք այն բարիքներից, որ մեր առջեւում են: Քանզի պարտավոր ենք միայն Հաժմատար եւ ի վերուստ Հայցել, այլ<sup>10</sup> ոչ թե մարմնից ու արյունից: Եվ մեծն Եպիփանը (ճճԹ) Հաբշուր Հնետունիներորդ սաղմոսի մեկնութեան մեջ Հայտնապետ ցույց է տալիս բնութեանց եւ չարչարանաց միասնականութեանը. «Աստվածային<sup>11</sup> անբաժանելի էութեանն արարեց միավորութիւնը եւ թույլ տուց<sup>12</sup> նրան չարչարվել նաև»՝ շահալիտելով մարդկանց դեպի փրկութիւնը, քանզի նրա Համար

1 Ձ՝ ակնաստու  
2 Ի Տ. պափառե՛ր եւ  
3 Տ՝ յայտարճէ  
4 Ձ՝ ոչ որ, ոչ արև որ  
5 Ի Տ. պափառե՛ր եւ  
6 Ան կրօնիքի քննութեան Պարտականո՞ր ոչ այլ որ բան պատել: - էմբն յ՛թ 164:

7 Տ՝ երկրի պաշտելին  
8 Տ՝ յայտարճէ  
9 Տ՝ յուգիով  
10 Ի Ձ. պափառե՛ր եւ  
11 Ձ՝ աստուածային եւ  
12 Ձ. աստ եւ ի տարեմ: Թուրքացուցանէր

դյուրին էր նույն անմահութիւնը տալ այն բնութեանը, որին արարեց: Եվ քանի որ չարչարանքի ենթարկվելը տիեզերքի փրկութիւնն էր՝ ակտանալուց գերծ մնալու Համար, որով եւ անմահութիւնն ու անպականութիւնն էր պարզեւում մարդկային ազգին:

Իսկ կյուրեղ Ալեքսանդրացին, որը ստաբիլական պատիվն ու շնորհներն ուներ, «Կոստան ընծայութեան» անվանված գրվածքի՝ խաչելութեան մասին ճառում Հետեւյալն է ասում. «էլ ինչո՛ւ եւ զարմացած մնում, որ [ասում է] ամենայն աշխարհը փրկվեց. քանզի ոչ թե ուղղակիորեն որեւէ մարդ էր, այլ Աստծո միածին Որդին, որը եկավ եւ անհապավ մեր մեղքերի պատճառով»: Եվ սակավ բաներից Հետո էլ՝ «Իսկ ահա անվեցու գառը՝ փրկութիւնն ասեց ժողովրդին»: Եվ զարծյալ նույն ճառում՝ «Հասալ ասեց ժամը, որ փառքով պատկի մարգու որդին, որովհետեւ փառքով էր պատկված ավելի ասաջ, քան արարածները եւ փառավորյալ էր նախապես իբրև Աստված. իսկ այժմ առավել եւս փառավորվեց, որովհետեւ Համբերութեան խաչի պատկը Հանձն առավ»: Եվ վերստին նույնը կրկնելով ասում է. «Աշխարհ գալով ամաչելու ոչինչ չուներ, որովհետեւ փրկութիւնը վեցբաժ բերում էր բոլոր արարածներին, քանզի ոչ թե ինչ-որ սովորական մարդ էր, որ չարչարանքների ենթարկվեց, այլ Աստված, որը մարմին առավ եւ Համբերութեան պատկն բնութանելով՝ եւ՛ ճգնակեցութեամբ էր մարտնչում»: Եվ Երեմիան<sup>1</sup> էլ իր ողբում ասում է. «Ոգին՝ Տեր Քրիստոսը, մեր երեսից էր, որ մեր՛ պականութեամբ պարտուրեց»: Մի՛թե եւ ինչ-որ բան եմ Հայտնագործում. ահա-

1 Ձ՝ գառին  
2 Ի Ձ. պափառե՛ր եւ

3 Ձ՝ երեմոս  
4 Ողբը Երեմիայ. Գ. 20:



տարածի Համաձայն, երբ իրեն խաչում էին: Պիղատոսը տանջում էր, ծառան կրփահարում էր, Կայիափան թքում էր նրա երեսին<sup>1</sup>, ժողովուրդը Հայհոյում էր, բայց, ինչպես Եսային է ասում. «Նրանց Հարվածների զեմ թիկունք տարձրի եւ ամոթից երես չզարձրի երեսիս թրոզների՝ կողմը»: Ո՞վ կարող է, արդյոք, լինել այդ, եթե ոչ՝ միայն Աստված, որը Հողի վրա թթելով՝ կավ Հունցեց, դրեց կույրի աչքերին, եւ աչքերը բացվեցին, ավազակների Հետ խաչվեց, մեր մեղքերի Հետ խաչափայտին՝ մեխվեց, մահն ու աստանան սպանեց, որպեսզի մեզ ողորմածությամբ ու շնորհներով իր արքայությունը տանի:

Ո՞վ նոր Հրաչք<sup>2</sup>, որ տեղի ունեցավ սուրբ ննչի դեմ: Ջինվորները<sup>3</sup> նույնիսկ նրա պատմությանը չպատեցին, Հերետիկոսները, սակայն, ջանկանում են Աստծո Որդուն պատռել եւ երկուսի՝ բաժանել նրան, որ անբննելի եւ անբաժանելի Քրիստոսն է»: Եվ փորք-ինչ Հատտ էլ՝ «Նա նրանց մանանա տվեց, բայց նրանք իրեն լեզի են տալիս, նա նրանց մեղք տվեց, բայց նրանք իրեն քաջախն են տալիս, խաչի վրա կախեցին նրան, որը երկբազունը<sup>4</sup> ոչնչեց է կախել, որը կյանքն է ամենայն արարածների եւ զեպի նման իր կանչով տվեց յուր Հոգին Բանն Աստծո՞, որը կամավոր կերպով մահն ընդունեց»:

Իսկ բերանը ոսկի Հովհանը ավետարանի մեկնություն անջ, երբ պատմում է տանջանքների եւ ձաղկումների մասին, որ Բանն Աստված կրեց խաչվելիս, թե. «Այն պատճառով ենք այս բոլորը ընթերցում բազմամբոխ Հանդեսներին

եւ ուսմկանակ մեծաբանակ Հանրահավաքներին, ասում է, որպեսզի Հեթանոսները չբարբաջեն, թե. «Ժողովրդի առջև եմայն մեծամեծներն ու պայծառագույններն եք ընթերցում, այսինքն Հրաչափառ Նշաններն ու սքանչելիքները, բայց նախատիքները թաքցնում եք»: Երբ որ բովանդակ՝ ժողովուրդն ամբողջությամբ միեւնույն տեղում լինի, այդ ժամանակ է բարձրաձայն ամեն ինչ քարոզում. իսկ երբ՝ որ ընթերցում ու քարոզում է, այդ ժամանակ է Հաստատապես իմացվում, թե Քրիստոսը՝ Աստված է. ուստի այլոց Հետ միտային նրա Համար էլ է երկբազունություն անում»:

Այսբանը եւ սքանչելի պակիլ քան բազմապատիկն ու բյուրապատիկն են սուրբ Հայրերի կողմից քարոզվածները, որոնք պարձանքով են փառաբանում խաչված Աստծուն, որը, սակայն, դու ինքզ ցանկանում ես ստել: Եթե նրա Համար խաչված եմ ասում, ապա բազմակի՞ որհնարանությամբ եւ եղյակ՞ տիրական անվամբ՝ Աստված արարածի մեջ, Հզորագույն իր տկարությամբ եւ մահվան մեջ անմահ, ինչպես որ վերածնված ճառերում սուրբ Հայրերն ուսուցանեցին, եթե նրանց [գրած] սահմանը՝ չէիք պատռել եւ ի բարից մասնատել՞ մի Տեր, մի Քրիստոս եւ մի Աստված զանազանությամբ, ուրեմն պետք՞ չէր այդքան ջանք թափել նրա դեմ ամբակուտ պատնեջ կամ փոկանք զնելու՝ որպես թե զեղամիջոց ախտերի Համար:

ԱՀա, ըստ քո Հինգ սահմանադատումների, ինչպես բաժանեցիր աստվածային բնությունը, կամքն ու ներզործությունը, Համարձակեցիր սպականացու կոչել Բանին

1 Զ՝ ընդ յերես  
2 Եւ, Մ, Ե:  
3 Զ՝ ընդ խաչափայտին  
4 Զ՝ պարանջ

5 Զ՝ զեմուսրքն  
6 Զ՝ երկուս  
7 Զ՝ զերկինս  
8 Տ՝ Աստուած բանն

1 Տ՝ ընտ:  
2 Տ՝ յարձան այն  
3 Զ՝ բրիտան թէ  
4 Զ՝ երկր

5 Զ՝ երկին  
6 Զ՝ ստո եւ ի ստորե՝ սցանդ, ցանդոյ  
7 Զ՝ բաժանել  
8 Ի Զ՝ պակասել՝ պատու էր

Աստծո մարմինը եւ չընդունեցիր Աստծու խաչելիք աշխարհի Համար. սույն խոսքերի արձանագրութիւյանը Հինգ դուռներ սահմանեցիր՝ ըստ օրինակի Մովսէսի՝ Հնգադէտյան գրվածքների եւ ըստ թո Հինգ զգայարանների, որոնցով ապշած ես, ուստի ես Դավթի Հինգ ողորկաբար վեմերով Հոգու պարատիկով եւ Տիրոջ բազիի գորութիւյամբ եմ Հարմածում թո ճակատին, որպէսզի այլեւս չհանդգնես անարդի կենդանի Աստու երեսը: Եվ այս ամենը շարադրեցինք՝ բոլոր խոսքերը՝ Հաստատելով երկու վկաների բերանով (իմա՝ գրածներով): Ընդունիր այս երեք վկայութիւնները՝ Տիրոջ տնօրինութեան քարոզների Հավատարմութեան արժանի, որոնք Աստվածն է գրել կեկեղեցու մեջ: Իսկ եթէ ցանկանում եք իմանալ այն բոլոր բաները, որ գրված են Քրիստոսի տնօրինութեան մասին, դրանց՝ Համար բազմութիւլ քարտեզներ ու մազազգիւններ են անհրաժեշտ՝ սակայն այս ամենաբջջերն՝ էլ մեզ բազմական են:

Այլեւ ինչո՞ւ եք Դիոկորոսին ու Պետրոսին՝ թշնամիներ Համարում եւ մեզ էլ իբրեւ՝ նրանց աշակերտ լինելու պնդում. այդ ե՞րբ արդոք ձեր դեմ նրանց խոսքերով պատերազմեցինք, կամ Քաղկեդոնի ժողովի, կամ Լեւոնի տոմարի՞, որոնց՝ ոչ մի ժամանակ Հավատարմութեան գիր չտվեցինք, այլ միայն, ինչպէս ուրիշ շատ երկրներն<sup>10</sup>, քաղաքներ ու ազգեր, չհայանեցին(ք)՝ Քաղկեդոնի ժողովին: Անկը ոչ միայն նրանց միջոցով կամ նրանց ձեռքով ենք ընդդիմախոսում բաժանողները դեմ (130), անգամ նույնիսկ ցեղով ոչ ազգական կամ Հարազատ՝ մեր վարդապետներով, այլ

որպէս Հրեացիների դեմ՝ ոչ ավետարանական կամ առաքելական վարդապետութիւյամբ ենք վիճարանում, այլ եւ նրանց իսկ մարդարների (կարծիքին, տեսակետին)? Համաձայնեցնելով. նույնպէս եւ ձեզ Հեա՞ ըստ ձեր վարդապետների կամ ըստ նրանց, որ ձեր աշխարհում լուսավորվեցին, Հոգնա՞չան՝ եւ բազմապատիկ օգտակարութիւյամբ ենք բանադիր լինում, որպէսզի ատակալազույն արդյունավոր եւ նշանակալից լինի Հաղթանակը ամեն տեսակի Հերձվածողների ու աղանդների\* դեմ<90>:

Երբեմն գրելու անկարողութիւնից կամ չարամտութիւյամբ ճշմարտութիւնը խարդախելով եւ կամ բռնազատելով՝ ստապատիր խոսքերը պատճառարանելու Համար սրբերի գրվածքներից բանաբաղ անելով՝ չարին բարու կերպարանքով են ներկայացնում, տգեաներին ու մանկամիտներին Համոզելու Համար: Որով եւ դուք մանավանդ գրվածքների՝ սեղանակապուտք (իմա՝ տաճարատեղանի գողեր) լինելով, այլոց գրածների՝ մտքերը զողանալով, բարին զեպի չարն եք տանում ու զանազան եղանակներով մարդկանց ցանկութիւններն՝ եք զողանում. երբեմն բազմութիւյամբ եք սահմանում Հավատը, երբեմն էլ մեծապաշտոնութիւյամբ, այն ստիճան, որ մինչեւ անգամ Աստու ձայնն էլ ձեզ եք վերագրում, թե. «Իմն է ոսկին եւ իմն է արծաթը»<91>, որ շատ է Հեռու սկզբնական՝ Հավատից եւ Փրկչի գալստյանից (իմա՝ մարդեղութիւնից). որ է մայր տառապելապետ (իմա՝ չափազանց տառապյալ) եւ՝ աշակերտներ՝ տգետ ու աղքատ եւ թիվով էլ նվազագույնների (ըստ-

1 Զ.՝ Հինգադէտեան գրք մովսէսի

2 Մատթ. մէ. 16:

3 Տ.՝ Աստուծայ

4 Զ.՝ մարդատի պէս են

5 Զ.՝ ստուտուք

6 Իմա զՊետրոս Փոլոզոս, որ յերկր որբ-

ստուցութեան յաւի գիր խոսեցար:

7 Զ.՝ իբրեւ

8 Զ.՝ ընդ առամտքին

9 Զ.՝ ցոյց

10 Զ.՝ յայտարար սաս՝ եւ

11 Զ.՝ ընդանի

\* Մտիւն. նկատութիւնը հինգ է. թաց 130, էջ 286:

1 Զ.՝ յարեալսն

2 Թերեւս ընթերցի ից՝ աղանդից:

3 Տ.՝ գրոյն

4 Տ.՝ գրելոյն

5 Զ.՝ գիտաբարսն

6 Զ.՝ յեկեղեց

7 Զ.՝ տառապելապետի աշակերտ

րից], որպեսզի խոնարհությամբ զչան (իմա՝ մեծատուննե-  
րին և Հորհրենին) միանգամայն՝ խափանեցնի, որպեսզի և  
ոչ մի մարմին Աստծո՞ւ առջև չհամարձակվի պարծենալ  
(131)\*: Եվ եթե Հավատը սահմանվիր բազմաբանակու-  
թյամբ կամ մեծապաշտնությամբ, ապա պարսկական վայ-  
րենիներն ու տանկական բարբարոսները և նրանցից էլ ան-  
դին գանձողները, որոնք տիեզերքի ամենաայրերում են,  
ձեզանից ավելի փարթամաշատ ու բազմաբանակ են. սա-  
կայն այդ էլ շատ հեռու է այն [խոսքից], թե. «Մի՛ երկնչիր  
հուր փոքրիկ»<sup>3</sup> կամ «Երանի՛ Հոգով աղբատներին»<sup>4</sup>. և  
զբանով էլ այդպիսիներն ավելի մոտ ու Հավատարիմ են  
գտնուո՞ւ մեզ:

Տերունական և աստվածախառն՝ մարմինը, նաև աստ-  
վածազյայ սպասավորությունն ու մարդեղացած բնությու-  
նը օտարում էք Բանից, սակայն ինչ-որ նյութերից քան-  
դակված կամ զրգված պատկերները պաշտում էք աստվա-  
ծաստեղծ Համարելով՝ պաշտոնախրությամբ և մեծաբա-  
նակ բազմությամբ, մինչդեռ անտեղյակների և Հեթանոս-  
ների մոտ ներկայանում էք, թե յուրաքանչյուր ոք ձեզանից  
առանձին բուրծ է և յուր սեփական տոնն ունի: Եվ ձեր  
այս ստվորությունը շատ համար քրիստոնեական Հարխ-  
տին անհաղորդ ազեսների Համար պարսավանքի և ծաղ-  
րի ասարկա լինելով՝ պատշաճության կամ խոչնդության  
գործ չէ (132)\*\*: Եվ Աստվածարանն էլ աստվածարանու-  
թյան իր ճառում Հայտնի է կացուցանում, թե. «Կան մար-  
դիկ, ասում է, որոնք իրենց սիրելիների պատկերներն են

\* Տես՝ Մատթ. քաղ. 132, էջ 386:

\*\* Տերտրի ապոկալիպսի լինելու պատճառով Քաղզմ. քառ. Մատթ. 132 քաղ., էջ 387:

1 Ձ.՝ զլան իմ  
2 Կրկնթ. Աստվ. Ա. 29:  
3 Դուկ. սՔ. 32:  
4 Մատթ. Ե. 3:

5 Ձ.՝ փնիցի  
6 Տ.՝ ստուսանախոսի  
7 Ձ.՝ ցրգով

ստեղծում, և Հետևորդները դալով՝ անդիտակցաբար զրանք  
իրբև. Աստված են պաշտում, և այդ էլ ստվորություն են  
զարձրել. դրա համար էլ Մովսեսը՝ նույն օրինակով խրա-  
տում է Իսրայելին. «Չլինի թե որեւէ նմանություն կամ  
պատկեր ստեղծեն»<sup>1</sup>. ապա Երկրորդ Հոգվածում նույնպես  
խրատում է, թե. «Երբ որ Հայտնից Աստվածը, որեւէ նմա-  
նություն չտեսանք». նաև Հրեշտակների ի Հայտ գալուց՝  
ևս այդպիսի որեւէ բան չհաստատեց այդ նույն պատճա-  
ռով: Ուստի և Հրեշտակները Աստծո որդի կամ պատկեր  
չկոչվեցին, ինչպես մարդուն՝ այս նույն խորհրդի՝ Համա-  
ձայն, որպեսզի չլինի թե բազմապիսի՝ պաշտամունքների  
պատճառով մարդկանց մեջ մոլորություն լինի»:

Իսկ եթե Պեննագա (?) քաղաքում Հար և Դան աղ-  
բուրներին՝ Հորդանանին միախառնվելով, դաշտանատես  
կնոջից Փրկչի պատկերը դոյանալն՝ ևս Հիշեցնում, այդ  
նույն է, ինչ պատմվում է Եվսեբիոսի՝ եկեղեցական շարադ-  
րանքում, ուր ասում է, թե. «Ջարմանայի ոչինչ չկա, քան-  
զի Հեթանոսաբարո մարդիկ այդ ստեղծեցին Հեթանոսա-  
կան ստվորության համաձայն»: Եվ թե այն անձնագործ  
պատկերի մասին ևս ասում, որը Փրկիչը նվիրեց Արգարին,  
ապա մեզ համար պատշաճ չէ՞՞ դա իրբև ձեռագործի օր-  
նակ վերցնել՞, ինչպես չենք կարող անհեղ Աստծո փոխ-  
րեն եղական Աստված ընդունել: Ուստի և փառաբանենք  
ու երկրպագենք զանհեղյն Աստված և զանձեռագործ  
պատկերը Փրկչի:

\* Ի Նյուտն ունի Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունը»

1 Ի Տ. պարսաւէ՛ Մովսէս: - Ի Ձ. պարսաւ	5 Տ.՝ բաղուս
ալ՛ Դան որդ	6 Տ.՝ ցարգորսոյ
2 Ենց Ի. 4:	7 Ձ.՝ եւսերկս
3 Ձ.՝ փնիկութիւն	8 Տ.՝ մարթ է
4 Տ.՝ խորհրդոյ	9 Ձ.՝ սունկ



Քանզի Հեզանչրով գրել էիք, թե Նսաչը մկրտում եք ու երկրպագում: Եվ քանի որ Քրիստոսն էլ մկրտվեց, մի երկրպագեք՝ այն ջուրը, որով մեզ մաքրեց, այն փայտը, որի վրա խաչվեց, նույնպես մկրտվեցին՝ ջրից և արյունից իր կողից Հոսեցնելով՝. նույն ձևով էլ մենք ենք մկրտություն անում ջրով ու գինիով՝ ուսանելով այդ իմաստնազույն և խոհական օրինակից. որով և սրբազորվում ենք՝ աղոթքներով, առաքելական ու ալետարանական<sup>1</sup> զբվածքների ընթերցանությունը<sup>2</sup> Հանդերձ:

Բայց եթե սրբություն չեք Համարում, ինչո՞ւ եք, օւրեմն, դուք նույնպես մկրտվում կամ ընկզմվում [ջրում] (ի՞ճա՝ թաթախ[վ]ում), ինչո՞ւ եք ձեր նյիրական բաժակը մկրտում կամ ապականում ջրով. եթե մկրտությունը սրբություն չեք Համարում, ինչո՞ւ եք տանում<sup>3</sup> խաչի անոթի Հես միասին, որով կնքում եք, ինչպես որ Հաստատապես անում եք էլ. և երբ որ ձեր երեխաներին<sup>4</sup> ցանկանում եք՝ քրիստոնյա դարձնել, ջրի մեջ մկրտելու փոխարեն, նույն ձևով եք վարվում. էլ ինչի՞ն եք ստամ ծաղրական են, այլև. ամոթալի. ինչո՞ւ եք, Հապա, ձեր նյիրական բաժակը ջրով օծում վաճառականների օրինակին Հետեւելով, խաբեությունը թունավորում-ապականում եք՝ անապական և անխառն ուրախացուցիչը մարդկային Հոգու: Եվ այդ բաժակն էր, որ մեծն Դավիթը Հրամանում էր<sup>5</sup> արքենայու<sup>6</sup> անապական զորությունը. և այպա նույն խորհուրդը շարունակելով աւուււււ էր. «Տիրոջ ոգորածությունն ու Աստծո տան երկայ-

նակեցությունն՝ է՞» այդ, որը ուրիշ բան չենք Հասկանում, եթե ոչ՝ ընդունումը սուրբ Հոգու կամ երկու կտանկների (ի՞ճա՝ կտակարանների). Հնիին եմ ասում և նորինը՝ Հոգու և մտքի զորությունը արբեցումը կամ աստվածային բաժակի միասեռ մաքրություն և անապականության խորհուրդը, որի միջոցով էլ ըմբռնում ենք գերբնական շնորհի անխախտելի լինելը: Եվ սրանցից բացի, մարմնացած Բանի արտաքին բնության անբաժանելի՝ ու միասնական լինելն իբրև արտամոտ՝ և Հարազատ սպաջույց ընդունելը, որ խոստովանելով անձանակի միավորություն Հետ՝ օտարոտի բնությունը կամ ապականությունը, ոչ թե Հավատի զորեղ ունակությունը արքենայու քաջցորությունն է Հաղթում, այլ որովհանգուցե օրինակով աղտեղությունն է ժայթքելով՝ դուրս Հոսում (133):

Իսկ ի՞նչ կարող եք սանել նյիրական բաժակի Համար, որի մասին այնտարաններում գրված է. «...բաժակն օրհնել և տալ աշակերտներին». և ոչ մի ջրի Հիշատակություն անգամ չկա. և «...որթի բերածով» ասաց պեպե է ըմպել. քանզի որթը գինի է բերում և ոչ թե ջուր: Ուստի Հովհաննը նույն բանի մեկնության մեջ Հերձվածողներ է անվանում այն մարդկանց, որոնք սրբազան խորհրդի Համար ջուրն են զորածածած: Բայց թե ինչո՞ւ է կողից կենաց ջուրն ու արյունը կայլակացայտ Հոսում, կյուրեղը «Առշունքն ընձայություն» գրվածքում ջուրը մեկնաբանում է իբրև մկրտության խորհուրդ, իսկ արյունը խորհուրդն է վկաների՝ ըստ վկայության Քրիստոսու:

1 Բառք՝ «մի երկիր սրբանք» թուրքյունական երկու կամ այլուց ընթերցելով:  
 2 Ձ՝. Շուկեցի  
 3 Ձ՝. անաստաբանայոյ  
 4 Ձ՝. ընթերցանել  
 5 Ձ՝. եթէ մկրտեց ոչ է սրբութիւն: Ընծ վո-

չեցէք  
 6 Ձ՝. գերեզման  
 7 Տ՝. կամք  
 8 Ձ՝. ծանցուցանելով  
 9 Ձ՝. սրէր  
 10 Սաղմ. Դաւթի. ԻԲ. 5:

1 Ձ՝. երկայնացույթիւն: - Սաղմ. Դաւթի. ԻԲ. 6:  
 2 Ձ՝. ցանայայտութեան

3 Ձ՝. ընդունելոյն  
 4 Ձ՝. ժայթքելոյ

Նորից՝ եմ Հարցնում, թե ուրիշ ինչ կա մեծագույն, որը ձեր աչքին՝ փոքրագույն է երևում. քահանայապետությունը, որ բարձրագույնով է՝ ըստ Քրիստոսի քահանայապետության նմանություն, ինչպե՞ս Համարձակվեցիք կանանց Հանձնել. եւ ինչո՞ւ եմ կրնանց Համար ասում, քանզի նա էլ Աստծո ստեղծածն է. բայց չեզոքաստեղծներին՝ (Իշակես, իմա՝ սեռագուրկ, կնամարզ), որ դուք ինքներդ ստեղծեցիք՝ իբրեւ Իշակես, բոլորովին դուրս է Աստծո ստեղծագործությունից եւ նրա սահմաններից՝. իսկ դրանց մասին մարգարեն՝ ասում է, թե ով որ նույնիսկ նրա վրա ձեռքը կայցի, պղծված է (134)\*. եւ կանոնական օրենքն էլ սահմանում է այդպիսիներից Հավատարմ գուրս վտարել՝ նույնպիսիք Համարելով՝ Եվ բերանը ոսկի Հովհանը նույն բանի Համար Մատթեոսի ավետարանի յուր մեկնություն մեջ ասում է՝. «Ներքինի՞նք են նրանք, որոնք իրենց անձերը ներքինի»<sup>20</sup> (իմա՝ սեռագուրկ) են դարձնում»։ նաեւ զազատայիններին [ուզողված] թող թե մեկնություն<sup>21</sup> խոսքում «Երանի՛ թե ամբողջապես մուրակտուր (իմա՝ արմատախիլ) լինեին»<sup>22</sup>, երբ որ սաստիկ կերպով այգանում է նրանց եւ զարմանում<sup>23</sup>. թե արդյոք այդպիսի անօրեն սովորույթ որսնդից մուտք գործեց Հռոմեական ազգի մեջ. եւ այն էլ այն զեպքում, երբ նրանցից շատերն այդ ժամանակներում ոչ թե քահանայական դասին էին պատկանում, այլ զինվորա-

կան կամ աշխարհականների կարգում։ Արդ, ինքներդ դատեցեք ճշմարիտը՝ արժանի՞ է, արդյոք, այդպիսի մեկին եկեղեցու զվաարվոր կամ շնորհների բաշխիչ նշանակել։ Ավագ շնորհների ընդունողների անշնորհությունը, ովքեր սովորաբար եւ սովորություններով մոլորված են։

Այնքան մեծ է խոստովանություն խորհուրդը եկեղեցու, որ մինչեւ իսկ Հավատարմ է աղբյուրների մկրտություն՝ ապաշավանքը արտաստեղծ է լինում, որի մասին կաթողիկեական թղթերում էլ է վկայվում, թե եկեղեցու կանոնները մեզ ուսուցանում են, «Սոստովանենք մեր մեղքերը միմյանց եւ աղոթենք մեկս մեկի Համար, որպեսզի բժշկություն լինի մեզ»<sup>24</sup>. ապա՝ «նախ խոստովանի՛ր դու քո կատարած Հանցանքները, որպեսզի արդարացվես»։ նաեւ՝ «Ասացի ինքնակամ թվարկեմ իմ մեղքերը, եւ դու թողություն կտաս իմ անօրինություններին»<sup>25</sup>։

Ինչպե՞ս այս բոլորը սպիրիտուաբար ուրացար եւ անօրենություն՝ ուրիշ կարգի սահմանեցիք քո ազգի Համար՝ կատարած Հանցանքները չխոստովանել քահանային եւ առանց խտրականության մերձեանալ Տիրոջ մարմնին ու արյանը. դրա Համար է Պոստոք բարձրաձայն աղաղակում, թե. «Մարդը պետք է փորձի՞ իր անձը՝, ապա նոր միայն ճշարկի այնտեղի Հացից եւ բլավի՞ այնտեղի բաժակից», որը նշանակում է քննություն քահանային խոստովանություն, որպեսզի ամեն մեկի տեղը Համապատասխանորեն որոշվի։

Իսկ ինչ որ ասում եք այդ վարսավոր զխոսկների (իմա՝ ծամավոր զլուխների) մասին, որ կրում եք որպես թե քրի-

\* Տես՝ Մարի. նույն բացատր. 387 էջ։

- 1 Տ. յանկար աստ ի փակագրի յուճարո՛ւ (իջէ՛)
- 2 Չ՝ թուկուս մեք- եւ ի յուսանց՝ յալոս մեք
- 3 Տ՝ կանանց
- 4 Չ՝ ստեղծած
- 5 Չ՝ արտաքս
- 6 Չ՝ մովսե

- 7 Տ՝ Համարի
- 8 Ի Չ. պատուք՝ որ
- 9 Չ. աստ եւ զկեի՛ ներքինիք
- 10 Մատթ. ԺԲ. 12:
- 11 Չ՝ մեկնություն
- 12 Աս. Գնդուս. Ե. 12:
- 13 Չ՝ զարմանել

- 1 Քուզմ. կոթ. Յակովբոս, Ե. 16:
- 2 Մատթ. Դաւթի 1. Ա. 5.7
- 3 Տ՝ անօրինութեան

- 4 Չ՝ փորձել
- 5 Ի Չ. որպիսուք՝ իր
- 6 Աս կորնթ. Առաջ. Ժ. Ա. 28:

տոնյաներից՝ տարբերվելու համար, նայեք թե ինչ է գրում Պողոսը Կորնթացիներին [ուղղված] թղթում. «Եթե տղամարդը զիստօր է՝ դա անարգանք է նրա համար»<sup>2</sup>: Եվ Հովհանն էլ նույն բանի մեկնության մեջ ասում է, թե. «Մամկեր [իմա՝ զուխը], երբ որ աղօթում է, արգելվում է, իսկ ծամ պահեր ստՀասարակ չպետք է թույլ տայ»: և բազմաթիվ այդպիսի<sup>3</sup> արգելվող բաների մասին է խոսում: Դուք, սակայն, այդ զրվածքներից եւ ոչ մեկը կարեւոր չեք համարում, քանզի ոչ միայն ինքներդ եք Հանցանք գործում, այլև նրանց, որոնք ծամ չպահելով անմեղ են, սարահինոսներ<sup>4</sup> եք անվանում: Այլևս ի՞նչ գրե՛ք այն մասին, որ մեզ՝ որպես թե կրուսյալ էլիք, գտաք եւ [ցանկանում եք] մոլորությունից Հետ վերադարձնել՝ 92>, իբրև նրանցից, ովքեր<sup>5</sup> ստույթունը ճշմարտության տեղ են ընդունում, խաղաղը՝ լույսի կամ դատը՝ քաղցրի: Եվ երկրագունդն էլ իր Հաստատության մեջ թմբոն<sup>6</sup> ուղեղներին եւ Հարեցողներից թվում է, թե պտտվում է, իսկ նրա շրջակայքում եղած ամեն ինչը անչարժ է մնում (135)\*: Արդ, եթե Թեոփիլոս քաղաքի մեկը լինեիր, պիտի ճանաչեիր մեր ուղղափառության ճշմարտացիությունը եւ պիտի ուսանեիր ոչ թե քո Հնամաշ՝ սովորությանը, այլ այս նորոգ ճշմարտության Համաձայն եւ պիտի խոստովանեիր մի եւ նույն Բանին Աստծո՞ Հոր էությունից ծագած, որ էն առ Աստված եւ որը է Աստված, որպես միաձույլ նյութից բովված կամ ինչպես մակարդը կաթի՞, պնդացավ իր որոպանում<sup>7</sup> կուսա-

կան անարատ արյունից՝ ոչ որպես ինչ-որ ինքնակա զոյակցություն ասած մարմին, այլ աստվածային շարժություն (իմա՝ ներքին էություն) շարժվեց մարմնում ու գոյացավ մարմինը, որը եւ բնությամբ անկերպացավ՝ եւ ստացավ բնությունն Աստծո: Բանից նրանով սկիզբ առավ [իր] գոյությունը ապականացու բնությունից սկսելով. եւ այդ պատճառով էլ (այսինքն՝ վերը նշված) եղավ անապական մարմին: Որովհետեւ անարատ Հիությունը արեզակի նման ընդհատ կերպով ընթանալով՝ Հեռու է վանում ապականության խաղաղը եւ ստանում է այն նույն կերպարանքը, ինչ որ ստեղծողին է, նույնպես եւ ստեղծողի կամքն ու այն ամենը, ինչ որ բնականի Հետ է շարժվում: Ոնց որ ճրագի ճառագայթները, երբ Հասնում է արեզակի պայծառությունը՝ առանց նրա կողմից դուրս վտարված լինելու<sup>8</sup>, նրա անձնավորությունը ոչ մի տեղ այլևս չի մնում<sup>9</sup>, այլ Հզորագույնից պարտություն կրելով՝ աղոտագույնը նրանից է փոխառնում իր լույսը. բայց ճառագայթների ոչ մի ընտրություն, կամ միջնորդ, կամ տեսանելիություն չի մնում (136). այդ նույն ձևով էլ՝ մարմնական բնության, կամ կամքի, կամ ներգործության նշան անդամ չմնաց մարդեղացած Աստծո Բանին ստեղծելով. քանզի, ասում է, բոլորն էլ աստվածային կամքն է և ներգործությունը, որովհետեւ մնում է միայն մաքրամաքուր, բազմապիսի նյութականությունից զերծ եւ անխառն էրրորդությունը:

Եվ այսպես լույսը ներնշունտով ծագեց կույսից աշխարհի վրա. եղավ բազմեց առ խաչելության կտրեին որպես մարդայալ Աստված՝ Հաստատելով նախապես զբաժաները, թե. «Բազմեցիր դու քո կտրեին և խաչի կտրեին քո Հեծ-

\* Տես՝ Մարգ. 135 բայց. 167-188 էջեր. Եթեթի ավան բացառք. ավելի Հավանական է:  
 1 Ճ. յաւոյր տոտ է:  
 2 Աս. նորթի. Աւաթ. ԺԱ. 14:  
 3 Տ.՝ այր  
 4 Չ.՝ ստամբկնաս  
 5 Չ.՝ պ  
 6 Տ.՝ մուխի թնորցեղոցի  
 7 Չ.՝ Չութննէ  
 8 Չ.՝ գրի փոխի  
 9 Չ.՝ ևս. երա ինչ ինչ իրեն. մակարթի կաթիլն  
 10 Տ.՝ յորդոպի

1 Տ.՝ արեծէ  
 2 Տ.՝ բնութեանից կերպոցու  
 3 Տ.՝ բարձեղեցոյ  
 4 Տ.՝ մայ

նելը փրկեց ամենայն աշխարհը», եւ այնտեղի խաչից ինք՝ նիշխան՝ ձայնով արձակեց մարդկային Հոգին, որով իջավ դժոխոց անգուռնը՝ փրկելու Համար այնտեղ գերված Հոգիներին. եւ նույն աստվածախառն մարմնով Հարություն առեծ երեսնեցավ յուր ընտրելագույն աշակերտներին քառասներորդա ժամանակով. Հայտնից նրանց զին Հանդիման Զիթաստանյաց լեռներից եւ ամպաշու գնացքով, Հրեշտակների դատով շրջապատված Համբարձավ. ելավ նա բարձունքները վերին եւ նստեց Հայր Աստծո մեծութեան աջ կողմում, ինչպես որ տեսավ նրան նախավկան Ստեփանոսը եւ նրանից Հետո անոթն ընտրութեան՝ Պողոսը: Եվ գալու է վերստին՝ իր փառահեղ գալուստամբ Հանդերձ, դատելու ողջներին ու մեռածներին, ոչ միայն իբրեւ մարմին, այլեւ ոչ անմարմին, որոնցով միայն ինքը զիստ բարբառել աստվածակերպ մարմնով, քանի որ տեսնվում է նրանց կողմից, ովքեր խոցեցին. եւ կա ու մտում է իբրեւ Աստված՝ [մարդկային մարմնի] արտաքին թանձրութեամբ. եւ գալու է ոչ թե ինչպես ցոյն է իջնուս՝՝ գեղմի վրա՝ ըստ իր առաջին գալաւոյան, այլ գալու է աճեղակերպ, լուսապստի, առավել վեհազոյն ճոռագայլիներով պարտբոված, նորահրաշ, սքանչելի տեսիլքով, ինչպես ինքը՝ Փրկիչն է ասում, թե. «Գալիս է մարդու որդին Հոր փառքով եւ բոլոր Հրեշտակները նրա Հետ միասին». եւ Գանիւն է ասում, թե. «Տեսնում էի ինչպես էր մարդու որդին գալիս՝ երկնքի ամպերի միջով»:

Արդ, կլինե՞ս խոստովանող մի եւ անբաժանելի բնութեամբ, եկածին եւ նրանց, որոնք գալու են Հանուն՝ Տիրոջ, կհեռանա՞ս արդին բաժանողների բաժանարարութեանից

1 Ձ.՝ եւ խաչէ անդի ինքն իշխանական  
2 Ձ.՝ ինքին  
3 Մատթ. Խ. 31:

4 Գուս. է. 13:  
5 Տ.՝ քու թիմար  
6 Ձ.՝ յանուան

եւ կրակին նախահետեւողներից. արդյոք դարձյա՞լ լինելու եւ սինեղոսականներին կաճառակից, թե՛ մեզ Հետ միասին պիտի երկրպագես Երրորդութեանն ու պիտի փառաբանե՞ս Որդուն եւ Հորը՝ սուրբ Հոգովը Հանդերձ, որը օրհնյալ է՝ Հայիտյանս: Ամեն:

## ԳՈՒՌՈՒ ԻՐ

Թն ինչոյն շարաչար մանիւմբ մեռավ՝  
Սեբասիայի մեհրոդուխը. եւ Բուլղարաց  
բազավորների՝ մասին, որոնք սղանեցին նրան՝

Իսկ այդ թղթերն ստանալուց Հետո այնտեղի մետրոպոլիտը անթաճար է մտնւմ: Սակայն դրանով նրա շարութեանից ոչինչ չի պակասում: Բայց Հենց նույն տարում՝ Վասիլ Թազավորը ուղարկեց նրան Բուլղարաց աշխարհը՝ խաղաղութեան դասն Հաստատելու: Նրանք Վասիլ Թազավորի քրոջ ձեռքն են խնդրում որպես իրենց Հարսնացու. Թազավորը, սակայն, իր սպասուհիների միջից մի կին, որը շատ նման էր իր քրոջը, մետրոպոլիտի ձեռքն է տալիս եւ ուղարկում նրանց ծոռ: Երբ դնում Հասնում են Բուլղարաց աշխարհը, ճանաչում են այդ կեղծը, ուստի եւ դատում են մետրոպոլիտին՝ իբրեւ չուն եւ խաբրաս. ցորուններով ու ժժանով (իմա՝ չոր ցախ, խոխով) պատում են նրա մարմինը եւ կրակ տալով Հրատոջոր անում՝ Բուլղարաց Թազավորները: Քանզի նրանք երկու եղբայրներ էին, որոնք կոչվում էին Կոմսաձագեր՝. մեր Հայոց ազգից էին, Դերջան գավա-

1 Ձ.՝ որ օրհնյալ է  
2 Ձ.՝ ստատիցուս  
3 Ձ.՝ Թազավորից

4 Ի. Ձ. զավասէջ՝ որը սղանի գետ: - Տ.  
որ  
5 Ձ. սաս եւ ի ստորեւ: կամաւաղ

սից, եւ նրանցից երեցի անունը Սամփել<sup>1</sup> էր. նրանց սաղա-  
բացիները՝ զնդի Հես տարիլ էր Վասիլ թագափորը՝ բուլ-  
ղարները զեմ կոչելու Մակեդոնիայում. բայց նրանք Հար-  
մար պահ ընտրելով՝ ապստամբել-Հեռացել էին Հունաց  
թագափորից, գնացել Բուլղարաց թագափորի մոտ, որը  
կուրտ էր (թմա՝ ներքինի)<93>, եւ շատ էին բարձրացել  
նրա աչքում իրենց կատարած քաջագործություններով:  
Այս բոլորից Հեսո՞՝ Հուլիների Վասիլ թագափորը պատերազ-  
մում գերի է բռնում՝ Բուլղարաց թագափոր կուրտ ներքի-  
նուն<sup>5</sup> (137)<sup>6</sup>:

Իսկ Կոմսաձագերը՝ տիրելով Բուլղարաց աշխարհի  
վրա՝ դաժան պատերազմ են մղում Հունաց թագափորի զեմ,  
որի մասին կպատմենք իր տեղում:

#### ՉԼՈՒՄ ԻԳ

Թե՞ ինչպես հունաց Վասիլ՝ քագափորը գործով՝  
սարժվեց Բուլղարաց երկրի վրա եւ յարստություն կե-  
լով՝ այնտեղից փախստական հեծ դառավ՝

Այդուհետեւ ինքը՝ Վասիլ թագափորը, զորածոզով է  
անում եւ չարժվում Բուլղարաց երկրի վրա: Մեծասաստ  
զորութեամբ դնալով՝ լայնածավալ բանակով տիրում է  
նրանց աշխարհի կենտրոնը: Բուլղարները անապարանքով  
գրավում են բոլոր նեղ տեղերն ու կիրճերի ճանապարհնե-

<sup>6</sup> Տե՛ս Մալխ. քաղ. 137 (ձ 388-389):

1 Զ՝ սամփելի  
2 Զ՝ սաղաբացի  
3 Ի Տ. պրփուսէր՝ ապու - 2՝ յապու  
4 Զ՝ կայեռոյ  
5 Ի Տ. պրփուսէր՝ ներքինի

6 Տ՝: եւ թէ: 2՝ թէ  
7 Ի Զ. պրփուսէր՝ Վասիլ  
8 Ի Զ. պրփուսէր՝ դրփր  
9 Զ՝: էկի  
10 Ի Զ. պրփուսէր՝ ինք

րի կապանները (որովհետեւ մացառուտ եւ անանցանելի  
վայրեր էին). թագափորին ու նրա զորքերին արգելափա-  
կում են ինչպես բանտում եւ բոլորին սրախողտող անում:  
Իսկ Հայոց Հետեւակազուսնը Հետեւից ու առջևից չըջա-  
պատելով Վասիլ թագափորին՝ ուրիշ՝ լեռնազնաց ճանա-  
պարհով տանում Հասցնում են Մակեդոնիա: Եվ ամբողջ  
Հեծեկազուսնը ավարով ու թագափորական արքունիքով  
մատնվեց նրանց ձեռք:

#### ՉԼՈՒՄ ԻԳ

Թունակալ Վարդի Բաղդասից դուրս գալու  
եւ հոռոմաց՝ երկիրը մտնելու մասին

Այդ նույն տարում, որը Հայոց (նյե) չորս Հարյուր երե-  
սունհինգ թվականն էր, երբ որ Հարջարանքներով մահա-  
նում էր Սեբաստիայի Գարբրիի քահանան. եւ մետրոպոլի-  
տը՝, որը պատճառ էր դարձել նրա սպանութեան<sup>5</sup>, Հարջար  
մահվամբ սատակում էր Բուլղարիայում՝ Աստծո վրեժխնդ-  
րութեանը ենթակա. եւ Վասիլի զորքն էլ Հարձակվեց Բուլ-  
ղարաց երկրի վրա:

Նույն թվականին Վարդ թագափորը դուրս է գալիս  
Բաղդասից եւ մտնում Մնիտինե, որովհետեւ Իրն Խոսրո-  
վը, որի մասին նախօրոք սասի ենք, մահանայիս իր որդուն  
պատվիրել էր կապանքներից արձակել Վարդ թագափորին,  
քանզի նախապես նրա Հետ երդումով դաշինք ուներ կն-  
քած: Նա էլ ազատ է արձակում նրան զենքով՝, Հանդեր-

1 Զ՝ սամփոյ ընդ յոյզ  
2 Զ՝ մասնի յայեարժե յուսոյ  
3 Տ՝: որ էր ի 433 թուին

4 Զ՝ էրջ սերտուու եւ Խոսրոպոլմե  
5 Զ՝ յայլարակ  
6 Ի Տ. պրփուսէր՝ եւ

ձանքով, երիվարներով եւ բոլոր յուրայիններով Հանդերձ, եւ երբ Հանուժ՝ եւ Բաղդատ քաղաքից՝ որոշ Հեռավորության վրա, ամբողջ քաղաքի խառնիճազանը՝ բազմությունը շարժվում է նրանց Հետեւից՝ նրան սպանելու Համար: Սակայն անապատաբանակ արարացիք, ընդդեմ դուրս գալով՝, առնում են թագավորին եւ ամայի ճանապարհներով ամունում պահում են իրենց վրաններում, այնտեղից՝ էլ արագ Հասցնում են Սելյուխին քաղաքը՝ Բարեկոնից (յա) երեսունմեկ օրվա ճանապարհ Հեռավորությամբ: Եվ առՀասարակ աշխարհի (իմա՝ այդ) բոլոր զորքերը եկան նրան Հնազանդության, եւ Ապահույնաց Բաղը, եւ Նփրկերտի ամիրան, եւ այն վայրենաբնակ Արարիկները, որ նրա Հետ էին: Եվ կրկին նախկին խոտովթյունը գլուխ բարձրացրեց Հունաց աշխարհում:

### ՉԼԻՒՆ ԲԵ

#### Փոկաս-Վարդի՝ դուրս գալը, Վարդ՝ քաղաքորին ձերբակալելն ու իր քաղաքը նսեղը

Իսկ Վարդը, որ նույն ինքը՝ Փոկասն՝ է, Վասիլի Հրամանով, Հունաց եւ Վրաց ընդՀանուր զորքերով դուրս է գալիս նրա դեմ պատերազմի: Ապա իր սուրՀանդակների ձեռքով ստապատիր խոսքերով դիր է ուղարկում նրան, ուր ասում է. «Եկ խաղաղություն կնքենք միմյանց Հետ, մեր մեջ բաժանենք Հունաց աշխարհը եւ վերացնենք Վասիլի թագա-

վորությունը»: Դրան Հավատալով Վարդ թագավորը իր մտից ազատ է արձակում տանկական զորքերին, եւ երբ Հանդիպում են միմյանց, Վարդ-Փոկասն ուրանում է իր տված երդումը, յոթն օր Հետո կալանավորում է սիկլաոսս Վարդին եւ Հրամայում է զինակիրների Հսկողությամբ տանել Ժեռավ(ս)՝ բերդը: Իսկ տանկական այն զորքերը, որ արձակված էին սիկլաոսսի կողմից, գնացին իրենց բնակության վայրերը, բայց երբ լսեցին սիկլաոսսի Ժեռավում բանտարկվելու լուրը, Հարավային՝ կողմից Հարձակվեցին ու գերեցին մինչեւ Ապահույնք<94>:

Ապա նույն Փոկաս Վարդը, որ խիստ բռնակալ թագավոր եղավ, (նյե) չորս Հարյուր երեսունհինգ թվականին, Հունաց եւ Վրաց բոլոր զորքերով միասին երկու տարի շարունակ ճակատամարտ է տալիս արքայանիստ Կոստանդնուպոլիս քաղաքի դեմ: Նա թագավորական քաղաքի դեմաց ամրոց է կառուցել տալիս եւ Տլիֆնաս՝ մազիստրոսին՝ զորականներով Հանդերձ պահապան է կանգնեցնում, որպեսզի ոչ մեկը քաղաքից՝ դուրս չգա կամ զբոսից ներս մտնի: Սակայն նավահանգստի պաշտպանները խաղաղության դաջինք Հաստատելով Վասիլ թագավորի Հետ՝ քաղաքում եղած ամրոցը զորքը եւ նրանք էլ, որ արևմտյան կողմում էին, մի գիշերվա մեջ այսկողմն են անցկացնում, սրանք անցնում են ամրոցի թիկունքը եւ այնտեղ ծածկվելով թաքնվում են: Իսկ վաղ առավոտյան պատերազմական նավերը քաղաքի կողմից՝, մոմեղեններով կաղձված-պատրաստված, շարժվում են ամրոցին ընդդեմ, ամրոցում գտն-

1 Ի Բ. պրիվատը, սինոսի ր թուրիցո՝ զիտ ամենայն  
2 Զ.՝ ըստ քաղաքին  
3 Զ.՝ խառնեցանքսի  
4 Զ.՝ կայնայ

5 Տ.՝ սնտուսս  
6 Զ.՝ յաշխարհն  
7 Զ.՝ աստ եւ ի ստորն՝ փոխուսայ վարդայ  
8 Ի Տ. պրիվատը՝ Վարդ  
9 Զ.՝ որ Փոկաս

1 Զ.՝ ձեռու: - Թուր թիֆնայի՝ Տնտուս: -  
Վերքնաս, Բ. 443, սույ 19՝ պիթոյ կո-  
չի Կոստոպոս  
2 Զ.՝ ի Հարոս քաղաքի  
3 Զ.՝ գերեն առի ի Հարոսայ

4 Տ. ամենայն ուրիք՝ սյփինու: - Զ. աստ՝  
տայփինու  
5 Զ.՝ քաղաքին  
6 Զ.՝ կողմն եւ



վողները տեսնելով նրանց՝ դուրս են գալիս նրանց դեմ պատերազմի: Իսկ թաքնված զորքերը թիկունքի կողմից Հարձակվում են նրանց վրա, սրախողխող եւ ծովընկեց են առնում Տրիինասի ամբողջ զորքին, զորքերի զլխավոր Տրիինասին՝ էլ ձերբակալում են եւ տանում ներկայացնում Վասիլ թագավորին. եւ՝ նա դատապարտվեց խաչափայտից կախվելու: Դա տեղի ունեցավ (նյե) չորս Հարյուր երեսուսյոթը թվականին:

**ՊԼՈՒԽ ԻԶ**

**Փոկաս-Վարդի՝ զորհերով ծովի եզերք գալը, Վասիլի դուրս գալն ու նրան սղանելը**

Իսկ Փոկաս-Վարդը՝ ազատ է արձակում իր մոտ եղած վրացական զորքին եւ ինքը Հունական բոլոր զորքերով շարժվում է դեպի ծովի ափը: Ապա Հաջորդ՝ տարվա սկզբին, մինչդեռ՝ զարնանային էր մասնակը, Վասիլ թագավորը, յուր եղբայր Կոստանդինոսի եւ՝ բոլոր զորքերի Հետ դուրս գալով՝ զորքը երկու մասի է բաժանում եւ մի մասին ծովի վրայով ուղարկում է Վարդի բանակի վրա. սրանք գալիս եւ Հրավառ Նյութով Հրդեհում են ծովեզերքին եղած նրա նավերը: Իսկ ինքը՝ թագավորը ցամաքով գալիս ու մտանձուժ է բանակին (իմա՝ Վարդի), եւ երբ Հրդեհով բռնկվում են նավերը (քանզի այդ իրրեւ ազդանշան էր ծառայում), Հրամայում է պատերազմական փողերը Հնչեցնել:

1 Ձ.՝ սրբինայ  
2 Ի Ձ.՝ պոլսուէ՝ եւ  
3 Ձ.՝ փոկաս այն վարդայ  
4 Ձ.՝ մրուսե

5 Ձ.՝ մինչ  
6 Ի Ձ.՝ պոլսուէ՝ եւ  
7 Ձ.՝ նուսցե

ուստի Վարդի բանակը շփոթահար ու ահարեկված փախուստի է մատնվում: Չարաչար մահվամբ մեռնում է նաեւ ինքը՝ բռնակալ թագավոր Վարդը՝ (նյը) չորս Հարյուր երեսուսյոթը թվականին՝:

**ՊԼՈՒԽ ԻԷ**

**Աստղի երեւալու, Կոստանդնուպոլսի երկրաւարժի եւ աղոսամբ Ծորսուանելի՝ մահվան մասին**

Այս նույն տարում, որը (նյը) չորս Հարյուր երեսուսյոթը թվականն էր, Քաղցը ամսին՝, որը (ժե) տասներկուերորդ օրն էր ամսի, ամենատուրը Աստվածածին Կույսի փոխման տոնի օրը նիդակավոր աստղը կրկին անգամ երեւաց՝ երեսւլով արեւեկյան կողմից լուսավոր նշանները դեպի Հարավակողմն էր ուղղում ամբողջ օրը. այնուհետեւ անհետանալով՝ տեսագալտից՝ արեւամուտին դուրս էր գալիս արեւմտյան աշխարհի երկնակամարում եւ նիդակաձեւ ճառագայթները դեպի արեւեկյան՝ կողմը տարածում:

Եվ դրանից քիչ օրեր անց ահարկու զորդամար չարժվեց Հունաց աշխարհը այն աստիճան<95>, որ Հիմնահատակ կործանվեցին բազմաթիվ քաղաքներ, գյուղեր ու գավառներ, ստավիկ եւս՝ Թրակիական եւ Բյուզանդական աշխարհները՝, ծովի Հետ միասին, որը նրանց մեջտեղը

1 Ի Տ.՝ պոլսուէ՝ Ի նյը թուականին  
2 Ձ.՝ չորսուսիթի  
3 Ձ.՝ անեանն

4 Տ.՝ եւ ամփոփայ  
5 Ձ.՝ ընդ յարեւեյս  
6 Ձ.՝ եւս ստու էլ թրակացոց... աշխարհ

գարհուրելի ծփանքով՝ այնկոծվում էր. մինչև անգամ թագավորական քաղաքի՝ Կոստանդնուպոլսի մեծաշուք, բազմապայծառ և շրջատանք զարդաքանդակները<sup>1</sup>, սյուներն ու պատկերները, վիթխարի մեծության եկեղեցիները փլուզվեցին ու քարուքանդ եղան. նույն ինքը՝ Սոֆիան<sup>2</sup>, որը կաթողիկեն է, վերից վար Հերձվեց և երկուսի բաժանվեց: Այդ պատճառով Հուճաջ աշխարհի արհեստավոր ճարտարապետները մեծ ջանք թափեցին այն վերստին նորոգելու համար: Այնտեղ էր գտնվում նաև Հայոց քարազորն ճարտարապետ Տրդատը, որը Հանճարի իմաստությամբ պատրաստվով կառույցի կաղապարը՝ տալիս է շինվածքի նախագիծն ու կառուցման սկիզբը ղնելը, որի Հիման վրա կառուցվեց առավել զեղեցկատեսք, քան նախկինն էր:

Բայց ապստամբներից դեռևս կենդանի էր Փոկա-Վարդի կուսակից, Թոսնիկ արեղայի եղբորորդի Ջորտուանել<sup>3</sup> մազիսորոսը, որը ըռնակալում էր Դերջանի և Տարնիկ կողմերում: Վասիլ թագավորը նրա վրա է ուղարկում Ժան պատրիկին, որը նաև Դոստեճ<sup>4</sup> էր կոչվում: Սա եկավ առաջին անգամ պատերազմեց նրա դեմ. իսկ երկրորդ անգամ զալով սպանեց նրան Դերջան գավառի Բազահաթիճի<sup>5</sup> գաչուում (նյիթ) չորս Հարյուր երեսուներեք թվականին: Այդուհետև խազաղանում է Հուճաջ աշխարհը՝ Վասիլի տիրապետության տակ նվաճված (138)<sup>6</sup>:

\* Մյուրն աղետոված է և կիտա: Սուր՝ 138 րոյ, Նոյնպիս օչին չի ավելացուս:

- 1 Չ: Ծածկոյ
- 2 Տ: քաղաք
- 3 Չ: սփի
- 4 Չ: չիւսուսուս

- 5 Չ: չորսուսանկ
- 6 Չ: պոսոյից
- 7 Տ: յաղաւթոյ
- 8 Չ: երկիր

## ՉԱՌԽ ԻԸ

Մեծասանի՝ Արխաղայի թագավորությունից  
հեռագնելու և Գուրգենի որդի Բագարաշի  
թագավորեցնելու մասին <96>

Բայց այդ իրադարձություններից քիչ տարիներ՝ առաջ աշխարհի մեծամեծները կուրացրին Ափխաղայի Թեոսոս թագավորին և վերցրին նրանից՝ Թագավորութունը: Ապա Տայոց կյուրապաղատ Դավիթն ու Հայոց սրբա Սմբատը Արխաղայի վրա թագավոր կարգեցին Գուրգենի որդի Սմբատին՝ Վրաց Բագարատ՝ թագավորի թոռանը: Սակայն մահանում է նրա (իմս՝ Սմբատի) տատը<sup>1</sup> և նրա պապ Բագարատը ուրիշ կին է առնում, որը Գուրգենի որդի Բագարատին Հայածում է իր Հայրենի երկրից: Այս՝ իսկ պատճառով Գուրգենի որդին՝ Արխաղայի թագավորը անհամար զորքով Սամասական երկրից շարժվում զայիս է՝ Դավիթ կյուրապաղատի և յուր պապ Բագարատի վրա և Կովկասյան լեռներից այս կողմն անցնելով՝ գալիս բանակ է դնում Կուր կոչված գետի ափին: Սակայն՝ Դավիթ կյուրապաղատն ու Վրաց Բագարատ թագավորը [տուրհանդակ] են ուղարկում Հայոց Սմբատ թագավորի մոտ և նրան իրենց օգնություն են կանչում: Վերջինս առնում է Հայոց ամբողջ զորքը, իր եղբայր Դագիկի Հես միասին զնում են նրանց մոտ և<sup>2</sup> բանակ զնում Զավաթի գավառի Դիլվեկ<sup>3</sup> գյուղի մոտ, իրենց Հես տանում են նաև Կարինի<sup>4</sup> թագավոր մա-

- 1 Չ: գիտաս: - Ի տարին՝ գիտաս
- 2 Չ: րոյց ամեն ամառոց
- 3 Ի Տ: պակաւ՝ ի նեակէ
- 4 Չ: Բաղարատ
- 5 Չ: Կառու
- 6 Չ: յայս

- 7 Տ: յայոց
- 8 Ի Տ: պակաւ՝ Տայոց
- 9 Տ: յայնսթիւն
- 10 Ի Տ: պակաւ՝ և
- 11 Չ: գիլեկն
- 12 Չ: կարոյց

նուկ Աբասյան՝ իր կարմրագգեատ զնդով Հանդերձ: Եվ Վրաստանի ու Վասպուրականի բոլոր զորքերը, Մյունխայն ու Արվանդի իշխանները՝ միասնամար Հավաքվում են ընդդեմ արխազական զորքերի: Նրանք վախճանալով խաղաղություն են առաջարկում՝ և բարեկամություն են Հաստատում միմյանց միջև: Դավիթ կուրացադատը Արխազիայի թագավորից խնդրում է Մակուրեթի բերդը և վերցնելով այն տալիս է Հայոց թագավոր Սմբատին՝ իրրև Հաստացում նրա տված օգնության Համար, սակայն Սմբատի մահվանից Հետո Մակուրեթի բերդը Հետ են վերցնում: Բայց այդ ժամանակ միմյանց Հետ խաղաղություն Հաստատելով յուրաքանչյուրը՝ վերադառնում է իր երկիրը: Դա տեղի ունեցավ (նչէ) չորս Հարյուր երեսուցյոթը թվականին:

**ՉԼՈՒՄ ԻՉ**

**Սմբատի շարագործությունների  
և նրա մահվան մասին**

Իսկ երբ որ Հայոց Սմբատ թագավորի թե՛ ներքին և թե՛ արտաքին գործերը շատ Հաջող ընթացան՝, երբ եղավ Հացի խիստ առատություն և գինու լիություն, նա Հույժ անօրինացավ, գոռուգամտացավ Հոգով և ինքը իրենից առավել բարձր Համարեց իրեն: Երեք աՀավոր չարիքներ գործեց, որոնք պատմելն՝ իսկ գծվարին է և արտատաքի են արժանի:

Առաջին՝ կենդանի-կենդանի Հրով այրեց մի անձնը

1 Ձ.՝ իշխանին  
2 Ձ.՝ խնդրելն  
3 Ձ.՝ Հանն

4 Ձ.՝ յուրաքանչյուր  
5 Ձ.՝ յարդալու էր  
6 Ձ.՝ և, գծառաքին ստ ի յանդ

մարդու Հետեւյալ պատճառով, նա (իմա՝ թագավորը) Անի քաղաքում ունեւր բաղում տարիների ընթացքում կուտակած խոտի և ձորտի Հարուստ Համբարանոցներ՝, որն ամբողջութեամբ Հրով այրեցին: Քաղաքացիներեց մեկը՝ ցնորված և մաղասկաթ (իմա՝ այսաՀար, ընկնալոր), որը առավոտյան ժամին եկեղեցում ժողովրդի՝ Հետ միասին աղոթում էր. սա վեր կենալով վերցրեց կրակարանը, որով խուճկե՞ կին ծխում. մարդիկ Հարցրեցին նրան, թե. «Ի՞նչ են անում»: Իսկ նա պատասխանեց. «Գնում եմ թագավորի Համբարանոցն այրելու»: Եկան և այս բանը Հայտնեցին թագավորին. նա էլ Հրամայեց նախ նրա աչքերը փորել, ապա ձգտով ու չոր եղեգներով պատել և կրակին ճարակ դարձնել: Եվ այդպես այրվելով քաղաքից դուրս նետեցին:

Անապատական՝ կրոնավորներից ոմանք քաղաքում գտնվելով՝ լսեցին այդ բանը և շտայեցին այն ողորմելիին տեսնելու, ցանկանում էին Հողին Հանձնել քրիստոնյայի մարմինը, ուստի վերցրին թաղեցին նրան քրիստոնեալայել օրեւթով: Լսելով այդ՝ թագավորը մեծագույն ցատումով արբկացավ, Հրամայեց զիչնրով գերեզմանից Հանել քրիստոնյայի խանձված մարմինն ու նետել շներին իրրև կեր: Հաջորդ օրվա՝ լուսաբացին, երբ կրոնավորները ցանկանում էին դուրս ելնել քաղաքից և գնալ իրենց ընտկություն տեղերը, տեսան նրա զիւարը՝ շներին կեր դարձած, ուստի և սրտակեղեք լաց՝ կին լինում իրենց ցավալի տեսածի վրա, ապա ձայն բարձրացրին և դաժանագույն անձեքներ բարբառեցին թագավորի Հասցեին. և իրենց սրտի դայրույթից

1 Ձ.՝ սմբատը: - և, ի տարեի՝ գամբար  
2 Ձ.՝ լուսաբացին  
3 Ձ.՝ գետնեց  
4 Ձ.՝ յանապատուստ  
5 Ձ.՝ տուրքն  
6 Ձ.՝ գիշորի  
7 Տ.՝ ձայն բարբառալ՝ լացին

ասացին. «Թող այս նույն ձևով նրա ոսկորներն էլ զույս թափվեն գերեզմանից», որը Հետագայում իսկապես կատարվեց:

Չարագործություններից՝ երկրորդն այն է, որ նա ստեցել է ուրացավ Գողթնի ամիրայի Հեստ երդումով Հաստատված իր դաշինքը. վերջինս՝ ինքը, Հեթանոս լինելով Հանդերձ, պահեց, իսկ օտարիտոնեական Հավատ ունենալով՝ չպահեց, այլ ուխտադրուժ եղավ, Հայոց զորքը օգնական ուղարկեց Մալարին՝ Աստծո կողմից մերժվածին և նրան ամիրա Հաստատեց, եթե ոչ չէր կարող խուսափել իր<sup>2</sup> եղբայր Գազիկի նենգավոր մտադրություններից:

Առավել սարսափելի էր երրորդ չարագործությունը, քանզի պիղծ խառնակությունը առավ իր քրոջ աղջկան. և այս բոլոր չարիքներով խիստ զայրացրեց անբարկանայի Աստծուն և այնտեղից Աստված մեծազույն ցասմամբ Հարվածեց նախ այն կնոջն ու սատկացրեց<sup>3</sup>, իսկ թագավորը նրա վրա մեծ սուգ անելով՝ ինքը բռնվեց բողակեց ցավերի ջերմության բորբոքումով: Մեռավ այնտեղ և թաղվեց նույն քաղաքում (նյր) չորս Հարյուր երեսունութ թվականին:

Դրանից Հեստ մի կին նույն քաղաքից բազում օրեր երազ էր պատմում<sup>4</sup>, թե. «Թագավորը թմբեցնող դեղերով է զրվել գերեզմանում, կենդանի է և ևս տեսա»: Այդ լուրը զղբզգացնում էր ամբողջ քաղաքը<sup>5</sup>, մինչև և որ նրա եղբայր Գազիկը Հրամայում է նույն մարդուն<sup>6</sup>, որը այրել էր մահացածի դին, գնալ Հանել. գնում Հանում է, տեսնում և պատմում է ամբողջ քաղաքին ու զորքին, թե ահա՛ մեռած է<sup>7</sup>:

1 Ձ.՝ չարացի

2 Տ.՝ խու: - Ձ.՝ նրա

3 Ձ.՝ ստատկեցու:

4 Տ.՝ կին մի երազ պատմեց ի քաղաքին

5 Տ.՝ գեղօք

6 Ձ.՝ ցորդեր բազուր

7 Ձ.՝ տակ

8 Ձ.՝ մեռալ

Այսպես և ուրիշ այլ՝ պատճառներով կատարեց Տերը կրոնավորների աղաչանքը, քանզի արդարագուտ է՝ մասնավորին այստեղ, ընդհանուրին Հանդերձայում<sup>8</sup> Հատուցելով ամենքին:

1 Ձ.՝ այլ

2 Տ.՝ ու Հանդերձայն

3 Ձ.՝ Հատուցանել

Պագիկի քազավորելու մասին  
և քն ինչեր տեղի ունեցան նրա՝ օրհրուս

Ամբաստեց Հնետ Հնեց նույն՝ օրը (ինձ՝ մահվանից) Անի քաղաքում թագավորում է նրա եղբայր Գազիկը (նր)՝ չորս Հարյուր երեսուներեք թվականին, ձմեռային օրերին: Տիրեց նա քաղմաթիվ ամբողջների և զավառների Վայոց ձորի, Խաչենի՝ և Փառխտի սահմաններից, իր եղբորից առավել շատ. և չեղավ մեկը, որին սարսափ ազդեր ամբողջ Հայաստան՝ այլասրՀում, մինչև իմ այս Հիշատակի խոսքերը շարադրելու ժամանակները: Որովհետև էր այր իմաստուն, պատերազմելու մեջ վարժ և Հմուտ, բայցևելու մեջ առատածեռ, բազում տեղեր ազատեց բաժի Հարկերից, իսկ կիրակի օրերին ցայտալույսի պաշտամունքը սազմոսերգությունը՝ էր կատարում: - Ավա՛ղ մի չար դիպվածի Համար, որն արդելում է ինձ [ներա Համար] գովեստի ավելի շատ խոսքեր չտայլել այս պատմություն մեջ <97>:

[Բանը] Հնետայան է, նրա կինը՝ Կատրամիգե թագուհին, որը զուտարն էր Սյունյաց Վասակ իշխանի, չափազանց բարեպաշտուհի լինելով, կատուցեց է տալիս Ամբաստի Հիմնադրած եկեղեցին՝ ամենաշաքի վայելչությունը, բարձրաբերձ կամարներով գմբեթավորված երկնամասն խորաններով, զարդարված ծիրանածաղիկ զարդաբանդակներով, ոսկեթեթի՞, նկարեն բանվածքներով՝ ընդելուզված, ոսկեղեն

1 Ձ.՝ սուրբ նորա  
2 Ձ.՝ նայե  
3 Ձ.՝ խաչկենդ: - Տ.՝ և Խաչենոյ  
4 Ձ.՝ զՀայաստանսոյս

5 Ձ.՝ և վերաբնեցեց ցայտե պատան  
տալմաներու թեան  
6 Ձ.՝ միտու՞մ ծաղիկ ոսկեթեթի  
7 Ձ.՝ աղուածոց

և արծաթեղեն անոթներով, քաղմաճառապայթ՝ ցոյացող կանթեղների վայելչությունը, որոնցով լուսավորվում էր Անիի սուրբ կաթողիկեն՝ երկնակամարի պայծառությունը:

Իսկ նրանց՝ Ամբաստի և Գազիկի եղբոր՝ Գուրգենի որդի Դավիթը, յուր եղբայր Ամբաստի Հնետ միասին, գրավում է Տաշիրքի և Վրաց դաշտի շրջակայքը, Շամշուտի՝ մեծ քաղաքանիստ դղյակը Դարձնում է իր Համար արքայանիստ, արագորեն տիրում է Դմանյաց քաղաքին, նաև՝ իրեն է ենթարկում Տփլիսի՝ ամիրային՝ մայրաքաղաքով Հանդերձ: Ինձ վաղ պատանկություն՝ տարկեցրեց շքեղաշուք և վայելչաւեպ լինելով իր Հանձարի իմաստունությունը, քաջարիությունը և անհաղթ զորությունը՝ Հաղթող Հանդիսացավ իր բոլոր Հակառակորդներին և խիստ Հանելի Աստուճ ու մարդկանց: Ասկայն Դանձակի ամիրա Փայտունը շատացեց պատերազմի զուրս զայ նրա դեմ, որպեսզի մինչև ավելի հզորանալը նրան խեղճացնի: Բայց Դավիթը արիաբար պատերազմեց նրա դեմ, պարտություն մատնեց և նրա ամբողջ զորքին սրայտոցիտոց ու գետնավժ արեց, միայն ինքը մնալուց՝ փախավ ազատվեց: Այդ նույն ժամանակներում մարզպան Դեմետրը, որ Գաղ բերդի՞ և նրա սահմանների իշխանն էր, կաակաճամտությունը վախենալով նրանից, թողնում է Հարկական Հայրենի Հավատը՞ և իրեն օգնական թիկունք ունենալով Վրաստանը, նրանց՞՝ օրինակով Գուրգ կրկնառեսն է լվանում և իր որդուն Տաշիրքի՞՝ Հյուսնեվանքում

1 Ձ.՝ յաւելոյր սոս՝ և  
2 Ձ.՝ կաթուղիկեն  
3 Ձ.՝ և քոց դաշտի. գլաճուտան  
4 Տ.՝ և Տապաղեկոյսեմ  
5 Ձ.՝ գամբուցե տիկապոց  
6 Ձ.՝ պատանի  
7 Ձ.՝ քաղաքուր թեանք

8 Ին՝ Փայտունը  
9 Տ.՝ Ի Գաղաղ բերդիկ  
10 Ձ.՝ զՀուտան  
11 Ի Ձ. պոլտուէր՝ և  
12 Ձ.՝ Ի նոյս  
13 Ձ.՝ ամբողջ տայրս

մամփուղ (կամ մամփայլ) է Հաստատում (139):

Բայց Դավիթը՝ զեղեկաճաղիկ մանուկն ու նորաոխ՝  
արքան, Հաննարի իմաստությամբ Հանուս-վտարում է  
նրան Գագ՝ բերդից, խլում է նրանից նրա բոլոր բերդերն ու  
ամբողջ երկիրը. իսկ նա թափառական՝ եղած շրջում էր եւ  
չարաչար մահվամբ սատակեցալ, եւ նրա ամբողջ տոհմն էլ  
վերացալ: Եվ Հասկացալ Դեմետրը, թն ովքեր Հեռանում  
են Տիրոջից՝ մեռնում-կորչում են ու իսպառ անհետանում:

**ՉԼՈՒԽ ԼԱ**

**Տեր Խաչիկի մահվան մասին**

Իսկ Հայոց Հայրապետ Տեր Խաչիկի օրերում սիրվում-  
տարածվում է մեր Հայոց ազգը արեւմտյան կողմերում այն-  
քան, որ նա [ստիպված] եպիսկոպոսներ՝ է՛ ձեռնադրում Ա-  
սորիքի Անտիոքի, Կիլիկիայի Տարսոսի, Սուլնդի՝ եւ դրանց  
բոլոր զավատների Համար: Նա խոր ծերութեան Հասած,  
կատարյալ վարքով ապրելով իր կյանքի օրերը՝ փոխվում է  
այս աշխարհից եւ ամփոփվում Արզիխայի եկեղեցու Հյուսի-  
սային կողմում դռնփող իր Հանգստարանում. այն ինքն էր  
կառուցել Հայոց՝ (նյթ)՝ չորս Հարյուր երեսուներեթ թվակա-  
նին, որը Համարելով նրա Հայրապետութեան (ծթ) տասներե-  
ներորդ տարին՝, նրա աթոռակարութեան ժամանակը կազ-  
մում է (ի) քսան տարի (140):

- 1 Ձ.՝ նորաօխ
- 2 Տ.՝ Գագից
- 3 Ձ.՝ թափառայ
- 4 Ձ.՝ եպիսկոպոս

- 5 Ձ.՝ ի բունեղայ, կամ ի սուլնդայ, կամ  
ի յուլնդայ
- 6 Ի Ձ. պարտեր՝ Հայոց
- 7 Տ.՝ ամլ

**ՉԼՈՒԽ ԼԲ**

**Տեր Սարգսի կաթողիկոսութան մասին**

Դրանից Հետո (նիսա) չորս Հարյուր քառասունմեկ թվա-  
կանին Հայոց Գաղիկ արքան Հայաստանի՝ կաթողիկոս է  
Հաստատում Տեր Սարգսին: Սա զեռ մանուկ Հասակից ի  
սրտն նվիրված էր Աստծուն, սնված եւ կրթված էր իր Հո-  
րեղորոք մոտ, առաքինաջան եւ ժիր մշակ էր Քրիստոսի, Հո-  
գով եւ մարմնով աշխարհիկ՝ ոչ մի գործով չէր պարսպում՝,  
այլ մերժած լինելով աշխարհածուփ դրոսներեքի անցա-  
վոր զբաղմունքները, սրբազան պատվիրանի Համաձայն,  
Գեղամա ծոփակի Սեւանա կղզու առաքելական խորանների  
սպասավոր եղալ, որը կառուցել էր Աստու երանելի այր  
Տեր Մաշտոցը: Նա իր սեփական կամքով անապատուսեր  
(իմա՝ ճգնավորական) կյանքն էր գերադասել, սպրում էր  
անմարմին զվարթուն Հրեշտակների օրինակով՝ սաղմոսան-  
վազ ձայնով՝ եւ ժրաջան աղոթքներով, ցյապաւոյշից սկ-  
սած եւ ամբողջ ցերեկը պաշտոնավարում էր Տիրոջ առջև:

Իսկ Գաղիկը յուր մանկութեան օրերում, երբ չըմպա-  
յում էր Գեղամա զավատում, վաճեւ եւ տեղ է տալիս նրան  
եւ բնակավայր՝ վանքերի մոտ, որոնք աստվածային յույսն  
իրենցից ճառագեցու պատճառով Շողազա են կոչվում: Այ-  
նուհետեւ, երբ թագավորից (իմա՝ Գագիկը) ամբողջ Հա-  
յաստան աշխարհի վրա, վարձյալ նույն՝ նրա սնված ու մե-  
ծացած տեղը՝ Սեւանա վանքերը տանելով՝, Հայրապետու-  
թեան եւ առաջնորդութեան պատիփն է տալիս նրան: Եվ նա  
բոլոր բոլորից ընտրելագույնը լինելով՝ բարերուխ վերակա-

- 1 Ի Ձ. պարտեր՝ Հայոց
- 2 Տ.՝ յերկաւորացո
- 3 Ձ.՝ ցրտածու

- 4 Ձ.՝ Լայնից
- 5 Ձ.՝ սծեայ



ցությամբ Հանկի եղալ Աստծո եւ մարդկանց:

Իսկ Տեր Թաշեկից Հետո Հայոց Գագիկ արքան եպիսկոպոսների ժողով է գումարում րնդՀանուր Հայոց աշխարհից եւ նրանք էլ, որ Հունաց կողմերից՝ էին, որոնց պիտավորում էր Արշարունայո եպիսկոպոս Տեր Սահակը եւ մեծաշուք պատրիարքով Հաստատում են նրան կաթողիկոսական աթոռին՝ գատկից Հետո, երեքշաբթի՞ օրը, առանց որեւէ կաշառքի կամ այլ երկրային շողորթութիւթյունների՞. քանզի ոչ թն ինքն էր վագուս փառքի Հետեւից, այլ պատրիկն էր ընթանում նրա Հետեւից: Եվ փառավորությամբ Հասնելով առաքելականի ծայրագույն պատմին, մտքով մտաց նուշնր՝ ըստ իր նախկին խնարհության եւ երբեք իր վարքը չփոխեց. սպրեց ըստ պատկերավորության Աստծո՝ առատաձեռն ողորմածությամբ՝ եւ իրբն զարդ խոնարհության. գիշեր ու ցերեկ ժրջան աղոթքներով կատարում էր կրօնական կանոնների աահմանած կարգը, ամրապինդ ճղով վարում էր նաեւ պահքերի սրբությունները՝ մարմնական ձեւերով՝ սուրբ Բարսեղ Աստվածաբանի ներբողուուն Հանդուսակ՞:

**ՉԼՈՒԽ ԼԳ**

Թն ինչդեա Վասիլ թագավորը նորից՝ արծվեց  
Բուղարաց երկրի վրա եւ գրավեց Վեռնա՞՝ հաղաբը

Դրանից Հետո Հունաց թագավորը, երբ իսպառ անհե-

- 1 Ձ.՝ որ Հայոց յայնպէ՛ն եւ որ յուսայ
- կողմանէն
- 2 Ձ.՝ երկուստե՛ր
- 3 Ձ.՝ յարդարեթանայ
- 4 Ձ.՝ գտակերեսդ առատաձեռն յողորմա-

- ձուրթինս
- 5 Ձ.՝ որդոթնան
- 6 Տ.՝ որ գրւանի
- 7 Ձ.՝ կրկին անգամ յողաւ
- 8 Տ.՝ առա եւ ի ստորե՛ր՝ գնդայ

տացան նրա դեմ զուրս եկած բոլոր՞ ապստամբները, Հարմար եւ ազատ ժամանակ գտնելով՝ (նխ) չորս Հարչուր քառասուն թվականին անհամար բազմությամբ զորք է հավաքում եւ դիմում՝ Բուղարաց երկրի վրա՞ իր վրեժխնդրության Հատուցումը րրանցից պահանջելու: Գնում չընապատում է Վեռ(ն)ա (իմա՝ Վառնա) քաղաքը, զբալում է այն եւ Տարոնի իշխանի որդի Գրիգոր մագիստրոսին զորքերով թողնում է այնտեղ բուղարաներին հսկելու: Նրա Հետ միասին (թողնում է)՞ նաեւ Հանձիթից՝ Հարեյի՞՞ որդի Սահակին, որը բազում ճակատամարտեր է տալիս բուղարաների դեմ, սակայն մի անակնկալ ժամի նրա վրա են Հարձակուում բուղարական զորքերը, որոնց դեմ է զուրս գալիս Գրիգորի որդի պատանի Աշոտը, որը եւ ձերբակալվում է նրանց կողմից: Ապա նրա Հայրը կյանքի եւ մահու կռիվ է մղում, մինչեւ որ ամբողջ զորքի Հետ մեռնում է այնտեղ: Ձերբակալվում է նաեւ Սահակը, որ նրանց՞ Հետ էր (111)\*:

**ՉԼՈՒԽ ԼԳ**

Ժան Դաւրիկի՞ Բուղարաց՞ երկիրն ուղարկվելը  
եւ ձերակալվելը

Այդուհետեւ Վասիլ թագավորը սուրհանդակ է ուղարկում Արեւելք՞, կանչում է Ջորտուանեյին՞՞ սպանող ժան պատրիկին, մագիստրոս կարգում եւ ուղարկում Մակեդոնիա՞՞՞ բուղարաների դեմ: Այնտեղ նա բազմաթիվ անգամ-

\* Տես՝ Մուլի. մեկնաբանութեանը նույն՝ 131 քաղ. (390-391 էջեր):

- 1 Ձ.՝ որ
- 2 Տ.՝ եւ երթնայ
- 3 Թագուր այսպէ՛ն ըստ Տ.
- 4 Ձ.՝ ի Հանձիթայ
- 5 Ձ.՝ Հարիկ
- 6 Տ.՝ ընդ նաեւ
- 7 Ձ.՝ ի բուղարոս
- 8 Տ.՝ յարեւելեայոս
- 9 Տ.՝ յարդարանէն
- 10 Ձ.՝ ի մակեդոն

ներ Հերոսարար մարտնչեց, սակայն Հետո պարտվեց եւ ընկաւ նրանց ձեռքը. նրան առնու՛մ տանու՛մ են իրենց երկիրը, բանտարկու՛մ են բերդերից մեկու՛մ, ինչպէս Սահակին եւ Աշոտին:

Ե՛վ այդպէս բազում տարիներ երկարածգլու՛մ է պատերազմը բուլղարները՝ Հնա:

#### ՊԼՈՒՒՆ ԼԵ

Եգիպտական սաճիկ զորւնի դիմելը Տոմաց երկիրը. առաջին եւ երկրորդ անգամ զոսերազմելը՝ եւ Վասիլ թագաւորի դուր գալը նրանց դեմ

Այս նույն ժամանակներու՛մ Եգիպտոսի ամիրան, որը նստու՛մ էր Բարեկոնու՛մ, Ազազ՝ անու՛նով [մեկին] (Հավանարաբ՝ զորավար) անհամար զորքերով ուղարկու՛մ է Հալեպ քաղաքի վրա եւ անտիրացիներին երկրի կողմերը: Նրանց դեմ է դուրս գալիս Սիկլատոսի որդի Ռոմանոս՝ մագիստրոսը փոքրաբանակ զորքով, բայց չկարողանալով պատերազմել, ամբառու՛մ է լուծներու՛մ: Նրանք էլ սակաւ տեղեր ավարի ենթարկելով վերազառու՛մ են Եգիպտոս:

Ապա երկու տարի անց նույն ամիրան բոցոք մախարապներին՝ (142)\* եւ Երուսաղեմի ու Լիբիայի ամբողջ զորքը՝ ուղարկու՛մ է Հունաց երկրի նույն Անտիոքի կողմերը:

\* Մտերտրոսյիլ բուսի Կամար սես Մախի նույն՝ 142 քաղք (ԱՂ 391):

1 Ձ.՝ եւ այսպիսի բազում  
2 Տ.՝ ընց Բալքարայց  
3 Ձ.՝ որտեղեւոյց  
4 ընթեռնել է՝ Ազից

5 Ձ.՝ ուսմանս  
6 Ձ.՝ կարաց  
7 Տ.՝ Մոխո Արապիս  
8 Ձ.՝ զրսն

Նրանց դեմ է դուրս գալիս Բուռճ մագիստրոսը՝, Վասիլ թագաւորին Հրամանով, (Նխագ) չորս Հարյուր քառասուներեք թիվականին, ճակատամարտ է տալիս Բուրգա դաշտու՛մ, բայց պարտվու՛մ է նրանցից եւ փախուստի մասնվու՛մ: Տաճկաց զորքերը նրանց Հետապնդելով՝ բազմաթիւ մարդկանց սրախտոյտող են անու՛մ, շատ շատերի էլ գերի բռնու՛մ, ինչպէս Խոռասի որդի Ժանակ՝ պատրիկին, բարեպաշտ եւ աստվածասեր Թորոսին՝ Հաշտյանքի գաւառից եւ շատ ուրիշների Հայոց աշխարհի՝ ազատանիներից՝:

Այս բանը լսելով՝ Հունաց թագաւորը բանակով այնտեղ է Հասնու՛մ. եգիպտացիք իմանալով թագաւորի գալուստը, իրենց բանակի ամբողջ ունեցվածքը՝ կրակի են տալիս եւ իրենք զիջնելով փախստական գնու՛մ են իրենց երկիրը: Թագաւորը անցնու՛մ է նրանց աշխարհը, բազում գաւառներ ավարի է առնու՛մ, մեծ ծովի ափին, իր զորքերի սպահովության համար քաղաք է կառուցու՛մ եւ ինքը շտապ այնտեղից վերազառնու՛մ է Կոստանդնուպոլիս:

#### ՊԼՈՒՒՆ ԼԶ

Չորրորդ Տայի երկրաւարմի մասին

Այս նույն ժամանակ, (Նխագ) չորս Հարյուր քառասունչորս թիվականին ուժգնապէս շարժվեց երկիրը (ի՛նձ՝ Հայոց աշխարհը), բայց ամենասաստիկ՝ կերպով Չորրորդ Հայքի սահմանները, Հաշտյանքը, Մոսփը՝, Բաղուն եւ Պաղնա-

1 Ձ.՝ մախարոսն  
2 Ձ.՝ ժանս  
3 Տ.՝ յախարհին  
4 Տ.՝ ալապոց

5 Ձ.՝ գրի  
6 Ձ.՝ սաստվարցի  
7 Տ.՝ ծովիք

տունը: Ամբողջապես քարուքանդ եղան բոլոր շինությունները, հիմնահատակ դրողացին՝, ինչպես զրվածքներում է ասված, թե. «Նորո՞նց ամենախորին ընդերքից՝, և նրա սյունները դողացին»։ կամ թե. «Ո՛ր է նայում՞ երկրին և ստիպում նրան սարսել»:

Մարդարենների փոխարեն Աստված որմերին ստիպեց ազաղակել, և առաքյալների փոխարեն լեռները ձայն արձակեցին, որպեսզի անզգաները ճանաչեն և Հասկանան՝ Աստո՞ռ ահա՞վոր զորությունը. որպեսզի նրանք, որ նույնիսկ բանավոր լուրերից էլ չէին լսել, իրենց աչքով տեսածը փորձեն և իրենց անձերի կրած տառապանքներով Համոզվեն և քանզի բարձրագուհ լեռները Հերձվեցին, քարածայտերը պատռվեցին, բոլորովին ցամաք՝ տեղերում աղբյուրներ ժայթքեցին, մշտաճու գետերի ակունքները ցամաքեցին անհայտացան. դաշտերը Հիմքից ծածանվում էին, սարերը կարծես միմյանց առջև խոռոհարվում էին, բարձրացած փոշին ձխի նման ծածկեց երկնքի բերք: Բարդաքների, գյուղերի և աղարակների ամեն տեսակի շինությունները՝ տապալվեցին ու բնակիչներին իրենց տակը թաղեցին՝ բոլորին մեռած կամ կիսամեռ՝ դարձնելով. կենդանի մնացածների լացն ու ճիչերը, որքն ու վայնասուռը երկիրն էին բռնել՝: Բալուխ բերդի, բոլոր շինվածքներով՝ Հանդերձ, քարերը նույնիսկ փլուզվեցին: Խարխվեցին ճապաղձուրի՞<sup>10</sup>, Դկաթա բերդի, Աթթախայի՞՝ և Ամիրթի քարակոփ և կրաշաղախ բոլոր գեղեցկաչեն եկեղեցիներն ու ապարանքները:

1 Ձ.՝ դողացին  
2 Ձ.՝ գոտ թ ներքուտ  
3 Ձ.՝ որ Հային  
4 Տ.՝ խոսեցին  
5 Տ.՝ լսելիքի  
6 Ձ.՝ շինում

7 Ձ.՝ և մեռաք և կիսամեռ  
8 Ձ.՝ բարձրանայր  
9 Տ.՝ շինումածին  
10 Ձ.՝ ճապաղձուր  
11 Ձ.՝ աթթապայ

Այս բոլորը տեղի ունեցավ Բաղոց ամսի վերջին որը և նույն ձևով տեսեց մնաց շուրջ յոթ ամիս, մինչև նավասարդ՝:

**ՉԼՈՒՄ ԼԷ**

**Եգիպտացիների՝ կրկին անգամ երեսայու, Բարելոյի մասին և Գալասանոսի՝ մահը**

Դարձյալ (նդէ) չորս Հարյուր երեսուցյոթը (143) թվականին նույն Եգիպտոսի ամիրայի՝ Ազալի որդին, իր Հոր մահվանից Հետո, իր Հորից առավել բազմաքանակ զորք է Հավաքում Երուսաղեմից ու՝ Բարելոյից և ուղարկում է Հուճաց երկրի վրա: Այս Բարելոյը այն նույնը չէ, որը գտնվում է քաղեցեցիների՝ աշխարհի Սենեար գավառում, որտեղ որ աշտարակը կառուցվեց, և որը Նարուպալասարի՞ որդի Նարուզդոնտտորը տասնհինգ տարի պարսպապատեց. իսկ այժմ քաղաքի տեղը փոխված է, փորքինչ Հեռու է և կոչվում է Բաղզաատ. այլ սա եգիպտական երկրում մի ամրոց է և կոչվում է Բարելոն, ինչպես որ վկայում է Եպիփանը Ականց զրվածքում, ուր այժմ մեծափառ անվամբ արքունիք է կառուցված. զորքն այնտեղից զուրս ելնելով գալիս՝ և ավարի են ենթարկում Ասորոց Անտիոքի կողմերը:

Հուճաց արքայի Հրամանով նրանց դեմ է դուրս գալիս Գալասանոս՝ մաղխտորը, պատերազմում և պարտության մատնելով՝ փախուստի դարձնում: Նրանց բանակի ամրոցը

1 Ձ.՝ ցուսասարգի  
2 Ձ.՝ եգիպտական  
3 Ձ.՝ զայտնային  
4 Ի Տ. սակամա՞ր և  
5 Ձ.՝ սենեար թ բաղթացոց

6 Ձ.՝ նարուզդոնտոյի - Տ.՝ նարուզդոյ լաստոյ  
7 Տ.՝ գոյ  
8 Ձ.՝ ստո և թ ստորե՞ր զայանու

ունեցվածքը Հունաց զորքին ավար մնաց: Սակայն տաճկական զորքերը կրունկները Հետ են դարձնում նրանց զեմ, քաջածիզ աղեղներով և կորովատեղի՝ նիզակներով սուսերաձար անում Հունաց ամբողջ զորքին: Սպանվում է նաև Դալասանոս մագիստրը, եղբոր և որդու Հետ միասին, իսկ նրա ամբողջ բանակը՝ փախուստի են դիմում:

Նրանցից շատերին ձերբակալում և զերի են տանում. այլոց Հետ տանում են նաև Թոռնիկ արեղայի եղբորորդի Զորտուաննի՝ պատրիկին:

### ՉԼԻԽՆ ԸԸ

Բաս՝ ամիրայի մահվան և Մանագինի գրավման՝ մասին. Մամլանի գալն ու նրա հանդիպումը Դավիթ կյուրաղաղասի՝ հեծ

Վերոհիշյալ զեպերից քիչ տարիներ առաջ Ապահունիքի և Նփրկերտի ամիրա Բասը սպանվում է վայրբանակ արապիկների զեմ պատերազմելիս, իսկ նրա փոխարեն ամիրա է գալիս նրա քրոջ որդի Մրվանի՝ որդին: Իսկ Բասի մեռնելուց Հետո Հայոց կյուրաղաղատ Դավիթը\* պաշարում է Մանագկերտ քաղաքը և՛ սրով ու սովով նեղելով նրան՝ գրավում. այնտեղից՝ դուրս է բերում բոլոր տանկաստանցիներին ու երկրից վտարում և իր իշխանության ներ-

քո առնելով քաղաքը՝ այն լցնում է Հայ և վրացի բնակիչներով: Այս իսկ պատճառով չարանախանձ բարկությամբ զբոջված, բոլոր պարսիկներն ու տաճիկները միացած, պատվիրակ են ուղարկում Դավիթ կյուրաղաղատի մոտ և պահանջում իրենց՝ վերադարձնել գրաված քաղաքը, Հակասակ դեպքում սպառնում են պատերազմի դուրս գալ նրա զեմ:

Իրենց պահանջի մերժման պատասխանը լսելով՝ Ատրպատականի Մամլան ամիրան զորքի մեծ բազմություն է Հավաքում և գալիս է բանակ դնում Մաղկոտն գավառի Կուտյանք կոչված գյուղում: Այնժամ Դավիթ կյուրաղաղատը, Հայոց՝ Գագիկ արքան, նրա Հետ նաև Աբասն ու Վրաստանի թագավոր Բագարատը գալիս են նրանց զեմ Բազրեսանդ գավառը և մեծ բանակով չրջապատում՝ ևս վաղարշակերտ՝ քաղաքը: Բայց պարսից զորքերը վախենալով բաց դաշտում պատերազմի դուրս գալ, ցայգալույսին դուռը-գուռը Հատված Հեռանում են՝ ջահերով ու դամպարներով՝ (իմա՝ կանթիղ, կրակարան) կրակ տալիս այրում Բազրեսանդի ամբողջ չրջակայքը և՛ բազմաթիվ շեներ արհեստյան կողմից և Հեռանում գնում իրենց երկիրը:

\* Տես՝ Մատթ. բաց. 143 ԱՉ 291-392):

- 1 Ձ.՝ կրոյով սեյ
- 2 Ի Ձ. պակասեջ՝ գրքի
- 3 Ձ.՝ չորգու տեղեկ
- 4 Ձ.՝ բատայ
- 5 Տ.՝ աեքուսե

- 6 Ձ.՝ ի պատահուսե կուսպուղալուսի
- 7 Տ.՝ որդի քուսեր նորա Մրվան
- 8 Ի Ձ. պակասեջ՝ և
- 9 Ի Ձ. պակասեջ՝ յարմ

- 1 Ձ.՝ ի տա
- 2 Տ.՝ Տարզիկն
- 3 Ձ.՝ տայոց
- 4 Տ.՝ Տարզիկոյ

- 5 Ձ.՝ վաղարշկերտ
- 6 Ի Ձ. պակասեջ՝ և
- 7 Ձ.՝ գամալուսք
- 8 Ի Ձ. պակասեջ՝ և

ԹՅ ԻՆՉՊԵՆ ԲՈՅԻ ԲՐՈՅ ՈՐՁԻՆ ԱՄԻՐԱ ԽՍԵՆՈՎ՝  
բՈՂՈՐ ՏԱԾԻՉ ԲՆԱԿԻՆՆԵՐԻՆ ՎՏԱՐՈՒՄ Է  
ՆՎԻՔԻՆՏԻՉ ԵՆ ԵՐԱ ՄԱՆԻՐ ԱՄԻՐՈՒՄ

Իսկ երբ Բատի քրոջ որդի Ապուստարը ամիրա է նստում, Նվիրկերտի տաճիկ բնակիչներին կասկածելով ու երկուզ կրելով<sup>1</sup>, նրանց [ազգային] տունի օրը, երբ որ զոհարերություններ<sup>2</sup> են անում, ամսի երեքին, որը նրանց մոտ Ահհեղեն է կոչվում, Հարմարագույնը Համարելով՝ քաղաքի բնակիչներին առաջարկում է, թե. «Քաղաքի բոլոր տղամարդիկ թող դուրս գան եւ պարիսպներից դուրս կատարեն զոհարերություն յարարողությունը, որովհետեւ Հունաց թագավորի մեծ դեսպանն է լինելու»։ Եվ երբ նրանք պարիսպներից դուրս են ելնում, իր եղբորը զորքերով դուրս է բերում, ինքը պարսպի դարպասներն է պահում եւ ուսանց սրախոտոխոզ են անում, շատերին էլ ազատ արձակելով Հեռավոր տեղեր են արտաքսում, այնպես, որ տաճիկներից ոչ մեկը Նվիրկերտում չմնաց, այլ միայն Հայ եւ ասորի բնակիչներ մնացին<sup>3</sup> այնտեղ։

Իսկ տաճիկները ցրվում են տարբեր տեղեր, շատերը նրանցից գնում են Ամիթ՝ քաղաքի բնակիչները այդ պատճառով նրա նկատմամբ քեւն պահելով՝ խարսթություն ամիրային իրենց քաղաքն են Հրավիրում, եւ երբ նա քաղաքի դռնից ներս է մտնում, Նիզակահար են անում եւ սպանում նրան։

1 Ձ. կոչ

2 Տ. քննաւես

3 Տ. Հայք եւ Ասորիք բնակիչ

## Վրացական զորքերի կոտորվելը Խլաքում

Այդ նույն ժամանակաշրջանում, այս բաները լսելով Դավիթ կուրապաղատը՝ վրացական մի մեծ բանակ<sup>4</sup> է ուղարկում պաշարելու Խլաթ քաղաքը։ Նրանք զայն են, երբ օրերը ձմեռային<sup>5</sup> էին, (նիս) չորս Հարյուր քառասունվեց թվականին, սրով եւ սովով խիստ նեղում են քաղաքն ու Հայոց եկեղեցին, որը քաղաքի պարիսպներից դուրս էր, Սուրբ Խնաչն ու Սուրբ<sup>6</sup> Գամաղիելը, որոնք եպիստոպոսարան եւ ուխտատեղի էին եղել Հայերի Համար՝ Հիմնադրման օրերից ի վեր, բայց վրացական զորքերի Համար դարձան անանազամ ու իջնանատուն<sup>7</sup>։ Ուստի տաճիկները պարիսպների վրայից աղաղակում էին, թե. «Մի՞թե՞ն զուք քրիստոնյա էք, երբ քրիստոնեական սրբարանների Հեռ այդպես եք վարվում»։ Եվ վրացիները պատասխանում են, թե՛. «Ա՜նեք Հայոց եկեղեցիներն ու ձեր մզկիթները՝ Հավասար ենք Համարում», որի Համար էլ Աստուծո զայրույթը շարժվեց նրանց վրա։

Մեղվանի որդու փոխարեն նրանց վրա ամիրա է զայն նրա եղբայրը, որը նույնպես Բատի քեռորդին էր, եւ՝ տիրելով Ամիթին՝ փոքրաքանակ զորք է վերցնում եւ զայն Վրաստանի վրա, նրանք պաշարում են Խլաթը (նիս) չորս Հարյուր քառասունչորս թվականին, մեծ զատկի օրը։ Եվ պատերազմը բորբոքվում է նրանց մեջ, որտեղ Տայոց քաշակորով աղեղնավորները նրանցից շատ-շատերին խոցո-

1 Ձ. կուրապաղատին

2 Տ. արսես

3 Ձ. գանձուային

4 Տ. նեցեց

5 Ձ. սուրբ

6 Ձ. ինգուսն

7 Տ. թէ

8 Ձ. մարթն

9 Ի Տ. պոպուսը՝ եւ

առւմ սաստկացնում են ու այնտեղից վերադառնալով Հանգիստ՝ են առնում: Այդ նույն գիշերը, գատիկը Հետո, Աստծո ցատումը Հատալ վրացական զորքերի վրա եւ իրենք իրենց<sup>7</sup>, առանց պատերազմելու, փախուստական եղած՝ Հետառնում են: Այդ բանը տեսնելով՝ ասանկների զորքն՝ ու ժողովուրդը Հետապնդում են նրանց, սաստկաբարձն՝ Հարվածներով Հայածում եւ սրի բերանն առած կոտորում: Այդ փախուստի ժամանակ սպանվում է նաև Թռուռիկ արեղայի (143) որդի Բազարատ մազխարորը. գերի են վերցնում նաև իշխանաց իշխան Բակուրանին եւ նրա Հնա էլ ուրիշ շատ-շատերի<sup>8</sup>:

### ՉԼՈՒՄ ԽՍ

#### Աղախունիի գավառում զարսիկների եւ Բրխսոնրաների միջեւ սեղի ունեցած մեծ զլախերազմի մասին

Այս նույն տարում եւ Հնեց նույն օրերին՝ (նիսէ) չորս Հարյուր բառասունչորթ թվականին Ատրպատականի Ռուվդա ամիրայի՝ Թոռ, Արշահան<sup>9</sup> որդի Մամլանը դարձյալ գորահավաք է անում Դավիթ<sup>10</sup> կուրապալատի զեմ պատերազմի զուրս գալու Համար: Իր մոտ է Համախմբում Պարսկաստանի եւ Մարաստանի բոլոր զորքերի բազմութունը<sup>11</sup>. Խորասանի ամիրայի եւ<sup>12</sup> այլ խուժազուժ ցեղերի օգնու-

թխամբ մտածում է տրեղ Հայաստանին ու Վրաստանին, վերականուցել Կարին՝ քաղաքը, ավարի ենթարկել Տայոց ալխարհը՝ Մանազկերտի փոխարեն, որի աղոթասուները կործանեցին քրիստոնյաները: Եվ ծանրածանր ամբոխով զուրս գալով Հեր գավառի սահմաններից, իր Թավրիզ<sup>13</sup> քաղաքից, ընդարձակածավալ բանակով անցնում է Վասպուրական ալխարհը եւ զայն իջնանում է Ազաւեսչաց գավառում:

Իսկ Դավիթ կուրապալատը ոչ թե ինքն է զեմ մերանց զեմ պատերազմելու. բանցի արդեն ծերացած էր եւ իր օրերն էլ Հաշված էին, այլ բաները է ուղարկում Հայոց արքա Դազիկի եւ Վրաց թագավոր Գուրգենի մոտ, որով Հետևե նրա Հայր Բազարատն արդեն մահացած էր եւ յուր Հոր փոխարեն թագավորում էր Գուրգենը, եւ նրանցից օգնական զորք է խնդրում: Ուսուր Դազիկը Հայոց զորքից ասունանացնում է (զո) վեց Հազար ամենաբարձր<sup>14</sup> ու Բրգենը կառուցող Գրիգոր<sup>15</sup> Պահլավունու որդի իշխանաց իշխան Վահրամի եւ նրա որդի Սմբատ մազխարտոյ ձեռքը, ապա նաև Աշոտ՝ մարզպանի եւ Վանանդի թագավոր Արասի զորքն էլ [չուժարում]: Վրաց թագավոր Գուրգենը ապիս է Հոջիկի որդի, իշխանաց իշխան Փերոսի ձեռք: Եւ Դավիթ կուրապալատի զորքերի այդ ամբողջ բազմութունը զուժարվում է Ուշպնարի որդի Գարբրիկի ձեռքում: Նրանք առաջ են շարվում, անցնում Աուկավ լեռն ու Աղրի ձորի բերանով կու-

<sup>7</sup> Դավիթը Վրաստանի եւ Տայրիքի կուրապալատն էր: Աստ անհրաժեշտն կու կամ պետք է լինի վրաց, կամ ուսուրի Դավիթ է կամ ինչպես ստորագրում է՝ Տայոց:

1 Չ. ինչպես  
2 Չ. ինչպես  
3 Չ. զորացի  
4 Չ. յանկար ասու՝ եւ  
5 Չ. գՀատուածս սաստկաբարձն

6 Չ. սրբազորան... եւ այլս բազմուս  
7 Չ. սրբազորաց ամիրայ  
8 Չ. Արշահանի՝ Չ. Արշահանի  
9 Չ. բազմութուն  
10 Ի Չ. պահուսնը՝ եւ

1 Չ. կարնայ  
2 Չ. ի թարխոյ  
3 Չ. սրբուց ոչ բարձր բարձր  
4 Չ. Մարտարաշեն  
5 Չ. սրբազորի  
6 Չ. սրբուց ուսուր գՀատուածը՝ ինչպես

այդ իշխանին վաճարակ որդուց զգրգորը, եւ սմբատայ մամխարտի որդուց Գահարամայ եւ մազպանին աշուտայ պահուսուց ոչ գահարամային չինեաց, որ զբրդներն չինեաց:



բում պարօք բանակի դեմը՝ կարծելով թե առաջին Հերթին Բագրեւանդ են մտնելու: Այստեղ նրանց հասնում են Հայոց եւ Վրաց ընդհանուր զորքերը եւ միասին շարժվում են դեպի Ապահունյաց գավառը. բանակ են դնում մի ամբարկուտ եւ բարձրավանդակ տեղ. Մեքո՞ գյուղի մոտակայքում, Մամլանի բանակին դեմ հանդիման, եւ բազմաթիվ օրեր նույն տեղում հանդիսե՞ն են առնում: Որովհետեւ պարսկական սպայի\* բազմաբանակությունից զարհուրած էին եւ չէին Համարձակվում անձուկ տեղերից բանակը բաց դաշտ դուրս բերել, այլ միայն իրենց պազատագին աղոթքներն էին առ Աստված վեր առաքում: Նույն ձևով էլ բոլոր՝ քրիստոնյաները (իմա՝ ժողովուրդը) ազբսասխան աղոթքներով եւ արտասուքով սխուժում էին Աստծո առջև՝ նրա ահարկու անունն իրենց անձանց եւ զօրքերին օղնական՝ կանչելով:

Իսկ թագավորները առատաձեռնություններ արգաստե՞րին ողորմություն էին բաշխում եւ Հայրապետի Հետ միասին լուսարացից սաղմոսանվագ երգեբրով՝ պաշտամունքի՞ սրբազան ուխտն էին կատարում:

Բայց պարսկական զորքը երբ հասկացավ, որ նրանք չեն ցանկանում առաջինը իջնել իրենց մոտ եւ սկսել պատերազմը, մանավանդ որ տեսնում էին նրանց սակավաթիվ վի՛նելն իրենց բազմաբանակության համեմատ, այդ ժամանակ Արեգի՞ ամսի Հենց ամսամուտին, երեքաբթի օրը, վաղ լուսարացին ճակատամարտի են պատրաստվում բազ՝

մաշերտ հորինվածքով, դեմաստանյան վահանափակոցներով կարգավորում-հարմարեցնում են ամբողջ դաշտի երեսով մեկ՝ լայնածավալ հարձակման տեցնելու համար. գալիս մոտենում են Հայոց եւ Վրաց բանակատեղի ըրայանջին: Նրանց բազմաբանակության տեսքն անգամ ահ ու սարսափ էր ազդում նայողին. ինչպես վկայել են, թե պարսկական Հետեւակի եւ այլուձիկ՝ թիվը միասին (ճու) Հարյուր Հազարից այնին էր՝: Ապա ձայն են տալիս (իմա՝ Հայոց ու Վրաց բանակին) ճակատամարտի պատրաստվել, առաջ անցնել եւ մոտենալ կռվի սապարեզին ու Հանդիսարանին: Բայց Հայոց ու Վրաց զօրքերը Հանկարծակի դառնով հայտնում են, թե. «Ոչ անպայման այսօր, այլ մեկ ուրիշ՞ օր պատերազմենք»<sup>1</sup>: Իսկ պարսիկներն իրենց բազմաբանակությանը վստահ, նրանց մոտ դետպան են ու շարկում են պարձենում. «Ուղենաք, թե ոչ, այսօր պետք է պատերազմն սկսենք»<sup>2</sup>: Սակայն նրանք Հանձն չառան եւ ոչ էլ երկվարները Հեծան, այլ մնացին իրենց տեղը բանակած. միայն սակավաթիվ մարտիկներ՝ իջնում էին այնտեղ նրանց Հետ մենամարտելու՞: Դրա հետեւանքով վրացի զինվորներից՞ հինգը սպանվեցին: Այնժամ պարսկաստանցիները թողնում են ճակատամարտի պատրաստվածությունը, պատերազմի կարգավորությունն ու ռազմական կառուցվածքը լքում եւ յուրաքանչյուր ուր ձիու գլուխը բաց թողած՝ դիմում են թալանի ու հափշտակության, որպես մեռելոց դիակների կամ փախուստի մասնավաճառի կողոպտիչներ. բոլոր կողմերից հարձակվում են քրիստոնյաների բանակի վրա:

\* Ապա՝ գուեյ, գորք, բանակ (Անտ. Արմ. բառ. 14, 1V, էջ 258), ՆՀԲ 4, 11, էջ 734, ու՛գ. Ապա, որ եւ Ապա՛ն եւ Ապա՛ն... գոր կամ ցորակեմ, գուեյ գորաք, կամ ցինգորակեմ պատուաք... եւ այլն:

1 Տ.՝ ի գեղին  
2 Տ.՝ սինս ան  
3 Տ.՝ յաննայն  
4 Տ.՝ յոցնութին

5 Տ.՝ երգով  
6 Տ.՝ զայցապայառանն  
7 Տ.՝ յարեց

1 Չ.՝ եւ ընդ պրուձիտն  
2 Չ.՝ եւ. ոչ  
3 Տ.՝ պատրաստից  
4 Տ.՝ յայլ  
5 Տ.՝ պատերազմեցարուք

6 Տ Չ. պարսեւք. Հատուանդ, սկսեալ ի բա՛նդիս՝ յոկ գորովկեր  
7 Չ.՝ այլք  
8 Տ.՝ յինէն  
9 Չ.՝ գորուե

Իսկ Հայոց եւ Վրաց զորքերը, քանի որ ոչ մեկն էլ թագավոր չունեին, ամենեցու թագավոր, զուխ եւ օգնական Քրիստոսին ունենալով՝ միաբերան նրան են ուղղում իրենց աղաչանքը եւ իրենք անձամբ պինդապա եղած ասպանդակում են իրենց երիվարներին: Բայց ոչ թի պատերազմական օրենքներով էին ճակատամարտ ստլիս՝ այլ յուրաքանչյուրն ըստ իր տոհմական զնդերի ավազույթյան էին ստեղծանքում եւ առյուծաբար մոնչալով Հարձակվում պարտական բանակի անտասարիս<sup>1</sup> բազմություն վրա: Այնտեղ Հայոց զորքերը կայծակնային արագությունը չափազանցում էին աջ ձեռքով (ամենայն Հայանականություն<sup>2</sup> աջ ու ձախ), խուռներած<sup>3</sup> մեծ խմբով Հասնում էին, բունն՝ ու խորը խոցատում, դաժանորեն սուսերահար՝ անում եւ խուժազուժ դարձնելով, ծանրորեն Հարվածում: Իսկ վրացական զորքերի մեջ իրենց Հակայական ուժով փառաբանված Մնախունի Կամրակկանք<sup>4</sup> եղբայրները կռվի ամենաթեժ տեղը մխրճվելով՝ վիթխարի ուժով Հարվածում էին եւ Հեծյալներին ու երիվարներին միասին երկու կես արած գետին տապալում: Նրանց ահից սարսափած (պարսիկները) ցիրուցան դեռ ու դեն էին փախչում, սակայն Տայոց քաջամարտիկները ամենուրեք, ուր պատահում էին այդ փախստականներին, բոլորին դիմաժապա՝ տանակուր էին անում, այս ամենը ձեռով Հար եւ նման էր ինչպես Հրդեհը անտառում բորբոքվելուն, կամ որպես ահեղապայ<sup>5</sup> արծիվը թռչուններ երամբ խուճապահար անելուն: Այնեւ պետք էր այնտեղ լինել տեսնելու Համար արյան վտակները առյակներ ու

Հորդահոս գետեր<sup>6</sup> դարձած, դիակները թափալված, մեռածներն ու կիսամեռները միմյանց վրա թափված կուտակված: Այնժամ պապանձված եւ սարսափահար Մամյանն ու մնացած պարսիկները շտապում են փախչել<sup>7</sup>, Հեռանալ: Բայց նրանց Հետապնդող Հայոց ու Վրաց մարտիկները Հասնելով աստիկ կերպով Հարվածում էին, սրի եւ սուտերի թերանն առած կտորում էին մինչեւ արեւամուտ ու Հայածում մինչեւ<sup>8</sup> Արճեչ քաղաքի դռները. իսկ այնտեղից Հեռ զատնալով ավարի են առնում նրանց բանակի ամբողջ ունեցվածքը՝ լցված զանձների բազմաքանակությամբ, երիվարների ու պատվական Հանդերձանքների առատությամբ: Եվ առավել ուրախալիս այն էր, որ նախկին՝ մենամարտի ժամանակ սպանված վրացի այն Հինգ մարտիկներից<sup>9</sup> բացի, այլեւս ոչ ոք սրի Հարված չստացավ եւ ոչ էլ սպանված գտնվեց<sup>10</sup> Հայոց ու Վրաց ամբողջ բազմությունից<sup>11</sup>: Ուստի ուրախալից ցնծությամբ յուրաքանչյուրը դարձավ իր երկիրը՝ փառք տալով Աստծուն:

**ԳՆԻՒՆ ԽԲ**

**Երկուրդ անգամ Վասիլ քազալուրի մուսրը  
Տաճկաց աւխարհը՝ Ստոնեսանի կողմերը՝**

Իսկ եզրպատգանների զորքերից Հունաց բանակի կրած պարտությունից Հեռու, որտեղ սպանվեց Դալասանու ձագիսարը. ինքը՝ Վասիլ թագավորն անձամբ գալիս է Ան-

1 Տ.՝ Գախալակն  
2 Չ.՝ Կախալակն  
3 Չ.՝ Խուռ  
4 Չ.՝ Կայծառք խոստ

5 Տ.՝ Կայծառք սաս՝ արտեպ  
6 Չ.՝ Գամրակկան. միտուռներ  
7 Չ.՝ Գիթաուպ  
8 Չ.՝ Գործիւս բազմապայք

1 Չ.՝ արեւն փախու— եւ գեռ  
2 Չ.՝ ցիրուցան  
3 Ի Չ. Կախալակը՝ մինչեւ  
4 Չ.՝ ցրուն

5 Չ.՝ Կախալակը՝ ցոպ  
6 Տ.՝ քաղաքներ  
7 Չ.՝ Ի կողմանս

տիւրք: Երբ անցնում էր Ատրեստանյան Հայեայի դաշտով, այնտեղ ուր կատորվեց Հունական զորքը, Հափաբել է տալիս խաղիսաղախոյտ (իմա՝ որպես ծովատերո՞ւմ կուտակված) ոսկորները, հրամայում է փոս փորել և նույն տեղում բոլորին՝ թաղել՝ 98> . ապա նրա վրա կկեղծվի էլ իննել տալիս: Իսկ ինքը անցնում է այդ տեղից, զբաղվում Շամար քաղաքը, նաև շատ բերդեր, և ասպատակ փոսելով մինչև Արանոս լեռը, այդ ամբողջ երկիրը ավարի է ենթարկում: Եվ ինչպե՞րացի տոնից մինչև Տիրոջ Հայտնության օրը մնում է այնտեղ, ապա Հետ դառնալով՝ գալիս ձմեռում է Կիլիկիայի Տարսոն քաղաքում, որը կառուցված էր Ատրեստանի Սենեբերիմ արքայի կողմից: Այն կառուցված էր Բարեղունի նմանութամբ, քանզի նրա միջով էր անցնում Կիղնոս գետը, ինչպես որ Արամանին է անցնում Բարեղունի՝ միջով: Եվ որ եղավ Հայոց՝ (նխ) չորս հարյուր քառասունյոթը թվականին<sup>1</sup>:

#### ՊԵՐՏԻՆ ԵՎ

### Գավիթ՝ մեծ կյուրաղաղասի մանվան և Նունաց Վասիլ քաղափորի արեւելյան՝ աւխարհը գալու մասին

Ասկայն Դասիթ մեծ կյուրաղաղատի մահվան Համար պարտավոր էի երկարաշունչ՝ ողբով վիպասանել, եթե չցանկանայի կարճել խոսքս երկարաբանությունը, քանզի

1 Տ.՝ գամեհայն

2 Տ.՝ ցարեսու

3 Տ.՝ ապելու գունակ - արքաների ընդ մէջ

Բարեղունի (Տիրոջ):

4 Ի Տ. պակասեր՝ Հայոց

5 Ձ.՝ ի նե՛՛՛, թուրկունի

6 Տ.՝ վրան մեծի կուրաղաղատի Դասիթ

մահուն

7 Ձ.՝ և գալի վասիլ յալիար՝ Նս արկից

8 Ձ.՝ երկարալից

ոչ թե ճառախոսելու ժամանակներ են, այլ ճշմարիտ Հիշատակարաններ շարադրելու: Բայց որովհետեւ նա Հեղ ու մանդարտարարտ տղամարդ էր, առավել քան մեր այս մամանակներում՝ եղած բոլոր թագավորները, ուստի և նա պատճառ Հանդիսացավ խաղաղության և շնեության ամենայն արեւելյան [աշխարհի], մանավանդ Հայաստանի և Վրաստանի: Եվ քանի որ բոլոր կողմերից դադարեցրեց ահեղ պատերազմները, Հաղթող գտնվեց շրջակայքի բոլոր՝ ազգություններին, որով և թագավորներն ինքնակամ ամենքն էլ Հնազանդվում էին նրան: Նա իր օրերը լիուրի ապրելով, խորին ծերության հասկում վախճանվեց փրկչական Մեծ Ջուսուկի օրը, (նխթ) չորս հարյուր քառասունինը թվականին: Բայց քանի որ ինքը չունեւ որ որդի և ոչ էլ եղբայր, որ ժառանգեր նրա թագավորական աթոռը, ուստի յուր ամբողջ ազատագունդն ու աշխարհը՝ կտակել էր Հունաց Վասիլ թագավորին:

Սա՝ Վասիլ թագավորը, Կիլիկիայի Տարսոն քաղաքում, երբ յուսւ է նրա մահվան գույժը, ամեն ինչ թողնում և չուտափոխթ գալիս է մեր երկիրը, գնում-բարձրանում է Սելիտիսինի կողմերը, որտեղ նրան զիմավորում՝ են Սեբաստիայի քահանաները. Հրամայում է նրանց Համարձակ լինել Հափատին վերաբերող ամեն տեսակի արարողություններում, Հնչեցնել ժամասացության ձայնը՝, որն արգելված էր մեարտոպղտի կողմից, ինչպես նախօրը էինք ասել: Եվ թագավորը, Վարդավազի տոնի օրը, անցնելով Հանձիթն ու Բալուն՝ բարձրանում է Կոճերա լեռը, որը Հաշտենքի, Մոսիքի և Խորձենիքի մեջտեղում է, այնտեղից էլ գալիս

1 Տ.՝ ի մամանակս

2 Ձ.՝ ամեհայն

3 Ի Տ. պակասեր՝ և գալիար՝

4 Տ.՝ և ի գալի

5 Ձ.՝ գործ

6 Ձ.՝ Կայի

Հասնում է Արչանույաց գավառի Երիզա քաղաքը: Նիբր-կերտի ամիրան՝ Բատրի բորժ որդին գալիս է նրա մոտ Երիզա քաղաք. [Վասիլը] արքունատուր ընծաներով պատվում է նրան, շնորհում մագիստրոսի կոչում և հրամայում Չորբորդ Հայքի ու Տաքոնի զորքերին՝ անհրաժեշտության դեպքում օգնության ձեռք մեկնել նրան, երբ որ կանչի: Իսկ ինքը այնտեղից շարժվում, գնում Հասնում է Հավճիչ կոչված լեռը, այն քաղաքը (աստ պետք է Հասկանալ Տայոց այլասահլը): Այստեղ նրան ընդատաջ են կելում Ափխազիայի թագավոր Բագարատը և նրա Հայր, Վրաստանի թագավոր Գուրգենը. նրանց առանձնահատուկ մեծարանքով է ընդունում նա (իմա՝ Վասիլ թագավորը), կյուրապաղատություն պաշտոնը տալիս է Ափխազաց թագավորին, իսկ նրա Հորը մագիստր կարգելով՝ ազատ է արձակում գնալու իրենց երկրները՝:

Իսկ նրա գնալու Հենց նույն օրը, մի շատ աննշան պատճառով, սաստիկ կրիվ բռնկվեց Հունաց բանակում. բանն այն է, որ Դավիթ Վյուրապաղատի իշխաններն ու ազատանին եկել և բանակ էին դրել Ռուսական զորքերի մերձավորութեամբ: Ռուզաց՝ (իմա՝ ռուսներ) Հետեւակազնից մեկը կնում և խոտ է վերցնում, որպիսի տանի իր ձիու Համար, բայց վրացիներից մեկը ցանկանում է խել խտրը. բայց նա ազադակ է բարձրացնում և յուրայիններից մեկը՝ գալիս է իրեն օգնության. նույնպես և վրացին է ձայն տալիս յուրայիններին, որոնք՝<sup>5</sup> գալիս և սպանում են առաջին ռուզին: Դրա Համար ռուզաց ամբողջ ազգը՝ այնտեղ գտնվող զինվորները, շարժվում են նրանց դեմ կռվելու (քանզի այն-

տեղ կային զեց Հազար Հետեւակային մարտիկներ, նիզակներով և սազարներով զինված, որոնց Վասիլ՝ թագավորն էր խնդրել ռուսական թագավորից, երբ որ յուր քրոջը նրան կնության էր տվել, և դա նույն ժամանակ էր, երբ որ նրանք Քրիստոսի Հավատն ընդունեցին): Այնժամ Տայոց բոլոր իշխաններն ու աղատանին դուրս են գալիս նրանց դեմ, և նրանցից պարտություն կրելով՝ սպանվում է այնտեղ մեծ իշխանը, որին Պատրիարք էին կոչում, նաև՝ Ոչուլընտրի երկու որդիներ Գարբիելն ու Հովհաննեսը, Ապուհարայի թու Պորտուանելն՝ ու բազմաթիվ ուրիշները, որովհետև Աստծո ցասումն էր շարժվել նրանց վրա՝ իրենց մեծամտության պատճառով:

Այդ դեպքերից փոքր-ինչ առաջ, երբ Վասիլ թագավորը դուրս էր եկել և գալիս էր, նրան ընդատաջ են կելում Վանադի թագավոր մանուկ Արասը, որն իր ձիավարությանը քաջամարտիկի նշաններն էր ցուցադրում՝ այրակուռ զեղեկությունը զարդարված, և Վասպուրականի թագավոր Սենեբերիմը՝ Գուրգենի եղբայրը: Նրանց գալուն չափազանց ուրախացած Վասիլ թագավորը պատվում է նրանց արքունատուր շնորհներով, ընծայում է նրանց ձիեր, ջորիներ, պայծառատեսք Հանդերձանք, անհամար քանակությունով կեղև և նրանցից յուրաքանչյուրին վերադարձնում իրենց տեղերը:

Իսկ ինքը ճգնում անցնում է Հարբի գավառի Մանազկերտ քաղաքը, այնտեղից էլ զեպի Բագրուստեղ և բանակ գնում Վաղարշակերտ քաղաքին մերձակա բաց դաշտում, ուր մնում և սպասում էր Հայոց արքա Գագիկի գալույսան:

1 Չ.՝ յուրաքան

2 Տ.՝ մերձ բանակին

3 Տ. ամենայն ուրիշ՝ Ռուսաց, Ռուսը: -

2.՝ բուզաց, բուզք

4 Տ.՝ մատուցեալ կելաց ցայի, կին ուն

5 Չ.՝ որ

1 Տ.՝ թագավորն Վասիլ

2 Չ.՝ պատրիարքն - յամանել: - Տ.՝ Չոր

գտանել

Բայց Գագիկը իր Համար փոքրությունն է Համարում՝ նրա մոտ դեպքը, եւ նրա քրոջ որդի Ակուսահչը չարախոսում է նրան Վասիլի մոտ: Դրա Համար Գագիկը Հրամայում է իր որդի Հովհաննեսին<sup>1</sup>, նա էլ ամբարի է նկնարելու՝ Ակուսահչին սրատկանող Կոզոհովիս<sup>2</sup> եւ Մաղկոսն զավառները: Բայց Վասիլ թագավորը բանակով շարժվում՝ Հասնում է Ուխթիյաց քաղաքը, իր ձեռքի տակ է նվաճում Տայոց բոլոր բերդերն ու ամրոցները, իրեն Հավատարիմ մարդկանց կարգում է նրանց վրա եւ Տայոց աշխարհի մնացած ազատանիններին իր Հետ առնելով տալու՝ քնակեցնում է Հունաց աշխարհում: Իսկ ինքը վերադառնում է Կարին<sup>3</sup> եւ Ինչոտոհադիճով գնում Կոստանդնուպոլիս (145):

#### ԳԼՈՒԽ ԽԳ

Գուրգենի Տայոց երկիր, իսկ Հունաց գորհերի Բասնիի գավառը գալու մասին

Բայց Վրաստանի թագավոր Գուրգենը յուր Համար խիստ անպատվարներ Համարելով մազխարսություն աստիճանը, որ իրեն էր շնորհել Վասիլ թագավորը, եւ ի ծնն խելպատակից (գլխուղեղի թագանթից, իմա՝ խելքից) թեթեւ լինելով՝ արՀամարհեց նրան եւ մեծ զորաբանակով եկավ տիրեց Տայոց աշխարհին: Հարձակվեց Ուխթիյաց փոքր բերդի վրա, կոխի տվեց, բայց չկարողացավ Հաղթել (աստ՝ ստանալ) եւ ոչ էլ ուրիշ որեւէ բերդի, ուստի Հավաքեց իր

զորքերի բազմությունն ու գնաց բանակ՝ դրեց Մամրուանի ձորաբերանին: Վասիլ<sup>4</sup> թագավորը, երբ լսեց այդ բանը, Հրամայեց իր մազխարներեից մեկին, որին Կանիկ էին կոչում, Հունաց ամրոջը՝ բանակով դուրս գալ նրա դեմ, եւ ինքը՝ թագավորն՝ էլ իսկույննեթ՝ ճանապարհ ընկավ, եկավ բանակ դրեց Բասնիի<sup>5</sup> գավառում, Հայոց (նձ) չորս Հարյուր Հիսուն թվականին. բայց ամրոջը տարին երկու բանակներն էլ մինչեւ ձմեռ մնացին նույն տեղում կանգնած: Այնուհետեւ Կանիկը խաղաղության առաջարկ է անում Գուրգենին եւ թագավորի անունից խոստանում կատարել նրա ցանկությունը: Ապա Գուրգենն ու մազխարը գալիս Հանդուլում են միմյանց Մեծփայջ՝ մայրաքուրանակ (իմա՝ որտեղ մայրի շատ ծառեր են աճում) լեռան մոտ, Սուրբ Աստվածածին գյուղում, որը այդպես է կոչվել այնտեղ եղած եկեղեցու անունով. Հանդիպելով իրար Հետ՝ խաղաղության զաչն ան կնքում եւ յուրաքանչյուրը վերադառնում է իր տեղը:

#### ԳԼՈՒԽ ԽԵ

Թն ինչոյն Գագիկը ավերածության ենթարկեց Տաւիւրն ու Վրագական դահքը

Իսկ Գագիկի եղբորորդի Դավիթը, որին վերելու՞մ Հիշատակեցինք, փոքր-ինչ մեծամտանում է եւ անՀնազանդություն ցուցաբերում իր Հորեղբայր Գագիկի նկատմամբ:

1 Զ. Համարի  
2 Զ. յովանիթի  
3 Զ. զկոզովիսի

4 Զ. գնայ  
5 Ի Զ. գովաւէր՝ ընդ Կարին  
6 Զ. ուրաք

1 Զ. թնակ  
2 Զ. թագաւորն Վասիլ  
3 Զ. յաննայն  
4 ընթեռնել է՝ թաղաւորին:

5 Զ. նոյն ժամ  
6 Զ. Բասնի  
7 Զ. մեծայոց - 30ր. Բր.՝ մեծայոց - 30ր. վեհ. մեծայոց

